

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
Երևանյան մասնաճյուղ

ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2024

**ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
Երևանյան մասնաճյուղ**

**ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2024**

ՀՏԴ 342.537
ԳՄԴ 67.400.621
Բ 412

**Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհա-
ժողովի ժողովրդավարության զարգացման, պաշտպանե-
տարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների
պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
կողմից**

Բեգլարյան Ա., Ալեքյան Մ., Վաղարշյան Ա.

Բ 412 Պաշտպանատարիզմի զարգացումը Հայաստանի
Հանրապետությունում / Ա. Բեգլարյան և ուրիշ.– Եր.:
Հայրապետ հրատ., 2024.– 208 էջ:

Խորհրդարանական կառավարման ձև ընտրած Հայաստանի Հան-
րապետությունում արդիական է պաշտպանատարիզի զարգացման հետ
կապված հարաբերությունների բազմակողմանի ուսումնասիրությունը,
առկա խնդիրների վեր հանումը և պաշտպանատարիզի զարգացման
ուղղված լուծումների ներկայացումը:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ սույն աշխատության շրջանակնե-
րում անդրադարձ է կատարվել պաշտպանատարիզի էությանը, առանձ-
նահատկություններին, երկրի անվտանգության և պաշտպանության
հարցում խորհրդարանական կառավարման ձևի դերակատարությանը,
ինչպես նաև պաշտպանատարիզի զարգացման գործում զանգվածային
լրատվության միջոցների ներգրավվածության հարցերին:

Աշխատությունը կարող է օգտակար լինել քաղաքագետներին, իրա-
վաբաններին, լրագրողներին, ուսանողներին, ասպիրանտներին, բուհե-
րի դասախոսներին և այլ անձանց, ովքեր հետաքրքրվում են ժողովր-
դաիշխանությանը և պաշտպանատարիզին վերաբերող հարցերով:

ՀՏԴ 342.537
ԳՄԴ 67.400.621

ISBN 978-9939-887-46-3

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2024

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական
վեհաժողովի ժողովրդավարության զարգացման,
պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական
իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային
ինստիտուտի երևանյան մասնաճյուղի տնօրեն՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Ավետիսյան

Հեղինակներ՝

Անվտանգության հարցերով փորձագետ,
քաղ. գիտ. թեկնածու Աշխեն Սամվելի Բեգլարյան
(Գլուխ 1)

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ
բանասիր. գիտ. թեկնածու,
դոցենտ Մարինե Վասիլի Ալեքյան
(Գլուխ 2)

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր,
ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր
իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Արթուր Գրիշայի Վաղարշյան
(Գլուխ 3)

Թարգմանիչ՝

ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի
Լեզուների ամբիոնի ավագ դասախոս
Վլադա Լևոնի Ավեդյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ-ՈՒՄ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՏԵՍԼԱԿԱՆ	8
1.1. Պառլամենտարիզմի էությունն ու հիմնական մոտեցումները. հնարավորություններ և մարտահրավերներ.....	8
1.2. Խորհրդարանական կառավարման առանձնահատկությունները. խորհրդարանական կառավարման անցնելու անհրաժեշտությունը Հայաստանում	31
1.3. Խորհրդարանական կառավարման պայմաններում իրավական անվտանգության ապահովումն ու քաղաքացիական վերահսկողությունն անվտանգության ոլորտի նկատմամբ.....	40
ԳԼՈՒԽ 2. ՄԵԴԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ	61
2.1. Ժամանակակից մեդիան և «չորրորդ իշխանության» հասկացությունը. իրավունքներ, ազատություններ, գրաքննություն	61
2.2. Մամուլը խորհրդարանական համակարգի զարգացման գործում. առաջադեմ համաշխարհային փորձ	76
2.3. Պառլամենտարիզմի սկզբունքների ներդրման և զարգացման փորձագիտական առաջարկություններ. տեղեկատվական և իրավական խորհրդատվություն.....	105
ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ.....	139
3.1. Պետական կառավարման ձևը և երկրի պաշտպանության ու անվտանգության հիմնահարցերը	139
3.2. Պաշտպանունակությունը որպես պետական ապարատի կազմակերպագործառնության սկզբունք	146

3.3. Պաշտպանության ոլորտի սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները սահմանադրական կարգի հիմունքների համակարգում	155
3.4. Ազգային անվտանգության հայեցակարգի իրավական կարգավորման ու կառավարման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո և առաջիկա անելիքները.....	160
3.5 Երկրի պաշտպանության սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում՝ խորհրդարանական կառավարման համաշխարհային փորձի համատեքստում.....	172
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	187
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ	197

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման ձևին անցում կատարելն արդիական է դարձրել պառլամենտարիզմի էությանը, առանձնահատկություններին, երկրի անվտանգության և պաշտպանության հարցում խորհրդարանական կառավարման ձևի դերակատարությանը, ինչպես նաև պառլամենտարիզմի զարգացման գործում զանգվածային լրատվության միջոցների ներգրավվածությանը վերաբերող հարցերի բազմակողմանի ուսումնասիրությունը, առկա խնդիրների վեր հանումը և պառլամենտարիզմի զարգացմանն ուղղված լուծումների ներկայացումը:

Կատարված ուսումնասիրությունը փաստում է, որ հետխորհրդային երկրներում ժողովրդավարության ձևավորման և զարգացման գործընթացում պառլամենտարիզմի ընձեռած բոլոր հնարավորություններն անհրաժեշտ չափով չեն օգտագործվում, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման և դրանց տարբեր հասարակական-քաղաքական ինստիտուտների վրա ունեցած ազդեցությունը բավարար չափով գիտական ուսումնասիրության չի ենթարկվել:

Պառլամենտարիզմի նկատմամբ աճող հետաքրքրությունը կապված է նաև այն փոփոխությունների հետ, որոնք տեղի են ունենում ժամանակակից աշխարհում: Երկբևեռ աշխարհակարգի փլուզումից հետո պատմական նոր իրականություն ձևավորվեց՝ հանգեցնելով ուժային վերադասավորումների և արմատական քաղաքական տեղաշարժերի, նախկին սոցիալիստական ճամբարի տարածքում քաղաքական համակարգերի փլուզումը, արագ զարգացող արդիականացման գործընթացները սկսեցին շոշափել հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները: Ներկայումս նորանկախ երկրների քաղաքական էլիտաները ստիպված են մտածել այնպիսի սահմանադրական մոդելների և կառավարման ձևի ընտրության մասին, որոնք հստակ կամրագրեր պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի, այդ թվում խորհրդարանի տեղը քաղաքական համակարգում:

Պետական իշխանության մարմինների կազմակերպական ձևը, տարածքի կառուցվածքային առանձնահատկությունները, իշխա-

նության իրականացման մեթոդները, պետության էական բնութագրերից են, որոնք արահայտվում են կարևոր գործնական քաղաքական նշանակություն ունեցող «պետության ձև» հասկացությամբ: Գործնականում պետության ձևից է կախված պետական կառավարման արդյունավետությունը, իշխանության և հասարակության կայունությունը, քանի որ պետության ձևը նաև քաղաքական ուժերի փոխզիջմամբ որոշվող խնդիր է:

Կարծում ենք, որ վերոգրյալը ընդգծում է վերը նշված խնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը և հրատապությունը:

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ-ՈՒՄ ՊԱՌԱՍՏԵՆՏԱՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՏԵՍԼԱԿԱՆ

1.1. Պաշտամենտարիզմի էությունն ու հիմնական մոտեցումները. հնարավորություններ և մարտահրավերներ

Հետխորհրդային երկրներում ժողովրդավարության ձևավորման և զարգացման գործընթացը ցույց է տալիս, որ գործնականում անհրաժեշտ չափով չեն օգտագործվում պաշտամենտարիզմի բոլոր հնարավորությունները: Այդ երկրներում քաղաքական արդիականացման գործընթացը ենթադրում է պետական իշխանության սահմանափակման արդյունավետ համակարգի ներդրում, դրա նկատմամբ վերահսկողական գործիքակազմի սահմանում, քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացում և այլն:

Պաշտամենտարիզմի հայեցակարգը մշակվել է այն ժամանակաշրջանում, երբ բուրժուական հեղափոխությունների ժամանակակից դարձավ ֆեոդալական կարգերի կործանման փաստը և առաջացավ անհրաժեշտություն որոնելու պետական կառավարման նոր, ավելի ժողովրդավարական ձևեր: Համաձայն այդ հայեցակարգի՝ պաշտամենտարիզմը հասարակության պետական ղեկավարման հատուկ համակարգ է, որը բնութագրվում է օրենսդիր և գործադիր իշխանությունների բաժանման պայմաններում խորհրդարանի քաղաքական և գաղափարախոսական դերի բարձրացում: Այսինքն, ժողովրդավարական պետության կառուցակարգում կարևորագույն տեղը պատկանում է խորհրդարանին, որը դիտվում է իբրև համապետական ներկայացուցչական մարմին և զլխավոր գործառույթն իշխանությունների տարանջատման համակարգում օրենսդիր իշխանության իրականացումն է¹:

Պաշտամենտարիզմն իրենից ներկայացնում է բարդ, համալիր երևույթ, որն իր մեջ ներառում է հասարակական կյանքի բազմաթիվ

¹ Տե՛ս Հակոբյան Հ., Պաշտամենտը և պաշտամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 82:

կողմեր: Հենց այդ պատճառով այն արտացոլվում է տարբեր ձևերով և ուսումնասիրվում է ինչպես քաղաքագետների, այնպես էլ իրավագետների, պատմաբանների, սոցիոլոգների կողմից: Հետևաբար, պառլամենտարիզմի էության վերաբերյալ գոյություն ունեն տարաբնույթ կարծիքներ և գիտական գրականության մեջ չկա դրա սահմանման վերաբերյալ մեկ միասնական մոտեցում:

Իրավաբանական հանրագիտարանում պառլամենտարիզմը (անգլերեն՝ Parliamentarianism) բնութագրվում է որպես պետական իշխանության կազմակերպման հատուկ համակարգ, որը կառուցվածքային և գործառնության տեսանկյունից հիմնված է իշխանությունների բաժանման, օրենքի գերակայության սկզբունքների վրա խորհրդարանի գերակա դերի պայմաններում և ուղղված է սոցիալական արդարության և իրավակարգի հաստատմանն ու զարգացմանը²: Պառլամենտարիզմի դեպքում կառավարությունը, որպես կանոն, կազմավորվում է խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության կողմից և պատասխանատու է նրա առջև:

Պառլամենտարիզմի իրավագիտական սահմանման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ «պառլամենտարիզմ», «կառավարման ձև» և «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունների մեկնաբանմանը, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հասկացությունների փոխգործակցությունը նման է ընդհանուրի և մասնավորի հարաբերակցությանը: «Պառլամենտարիզմ» հասկացությունը բովանդակային առումով ավելի լայն է և ներառում է ինչպես «կառավարման ձև», այնպես էլ «խորհրդարանական կառավարման ձև» հասկացությունները, քանի որ պառլամենտարիզմը հավասարապես կարող է գոյություն ունենալ ինչպես միապետության, այնպես էլ հանրապետության պայմաններում, ուստի այն միայն խորհրդարանական կառավարման ձևի հետ նույնացնելը ճիշտ չէ³: Այն ժողովրդական ներկայացուցչության ձև է, որի հիմքում ընկած է համամարդկային, համաժողովրդական արժեքների համակարգը, ինչը կոչված է ապահովելու բնակչության անուղղակի

² Տե՛ս Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 11:

³ Տե՛ս Горылев А. И., Правовая природа современного парламентаризма, "Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского". Выпуск 1 (5): 2002, էջ 110:

մասնակցությունը պետական և հանրային կյանքի կարևորագույն որոշումների կայացմանը: Այստեղից անհրաժեշտություն է առաջանում պառլամենտարիզմին անդրադառնալիս ցույց տալ վերջինիս ներկայացուցչական բնույթը, որի արդյունքում հնարավոր է դառնում առավել խորը պատկերացում կազմել դրա վերաբերյալ:

Պառլամենտարիզմի տեսության հիմքում ընկած են ժողովրդի ինքնիշխանության և իշխանության միակ աղբյուրը լինելու մասին գաղափարները և դրա կայացումը պատմականորեն կապվում է ներկայացուցչական կառավարման ազատական սկզբունքի հետ: Պետության և իրավունքի տեսությանն ընդհանուր առմամբ հայտնի է ժողովրդի՝ իշխանության իրավունքի իրացման 2 հիմնական ուղի: Առաջին ճանապարհը ժողովրդի կողմից իշխանության իրականացմանն անմիջական մասնակցությունն է, ինչը հնարավոր է ուղղակի դեմոկրատիայի պայմաններում, իսկ երկրորդը՝ այդ իրավունքի փոխանցումն է իր իսկ կողմից ընտրված ներկայացուցիչներին: Առաջին մոտեցման կողմնակիցներից է ֆրանսիական լուսավորության ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ Ժ.-Ժ. Ռուսոն, ով ուղղակի դեմոկրատիան դիտում է որպես քաղաքական իդեալ: Ըստ նրա տեսության՝ օրենսդիր իշխանությունը պետք է ուղղակիորեն պատկանի ժողովրդական ժողովին, որին պետք է մասնակցեն բոլոր քաղաքացիները, իսկ իշխանության մնացած բոլոր մարմինները պետք է ենթարկվեն ժողովրդական ժողովին և պատասխանատու լինեն դրա առջև: Նա գտնում է, որ պատգամավորները չեն կարող լինել ժողովրդի ներկայացուցիչները, քանի որ նրանք սոսկ լիազորված անձինք են, որոնք վերջնական որոշումներ կայացնելու իրավունք չունեն: Հետևաբար՝ օրենքը չի կարող օրենք համարվել, քանի դեռ ժողովուրդն ուղղակիորեն չի հաստատել այն⁴: Միաժամանակ, Ռուսոն չի մերժում այս կամ այն պետական որոշումը մշակելու համար ընտրության ճանապարհով ժողովրդի կողմից ձևավորված որոշակի մարմնի ստեղծման գաղափարը: Մինչդեռ ներկայացուցչական դեմոկրատիայի կողմնակից անգլիացի լուսավորիչների համոզմամբ պետությունում միայն օրենսդիր իշխանությունը կարող է համարվել բարձրագույն: «Զէ՛ որ այն, ինչը մյուսների համար կարող է օրենքներ

⁴ Стіу Руссо Ж. Ж. Об общественном договоре. Трактаты. М.: "Канон-пресс Кучково поле", 1998, С. 209-212

ստեղծել, անպայմանորեն նրանցից բարձր պետք է լինի: Օրենսդիր իշխանությունը պետք է բարձրագույն լինի, իսկ իշխանության մնացած ճյուղերը պետք է բխեն նրանից ու ենթարկվեն նրան»,- գրում էր իշխանությունների տարանջատման սկզբունքի հեղինակ Ջ. Լոկը, ում համոզմամբ, օրենսդիր իշխանությունը պետք է լինե՞ր գերագույնը, իսկ մնացած բոլոր իշխանությունները՝ ի դեմս ինչ-որ անձանց կամ էլ հասարակության հատվածների՝ պետք է բխեին նրանից և ենթակա լինեին նրան⁵:

Հետագայում իշխանությունների տարանջատման հայեցակարգը դարձավ պառլամենտարիզմի զարգացման տեսական հիմքերից մեկը: Իշխանական լիազորությունները ժողովրդական ներկայացուցչության մարմնի խորհրդարանի ձեռքում կենտրոնացնելու մասին գաղափարը զարգացրեց Ը. Մոնտեսքյոն, ով նշում էր՝ քանի որ ժողովրդի կողմից իշխանության ուղղակի իրագործումն անհնար է մեծ պետություններում և դժվար՝ փոքրերում, ապա ի հայտ է գալիս ժողովրդական ներկայացուցչության կարիք: Ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչներն առավել լավ կարող են պետական հարցեր քննարկել և որոշումներ կայացնել: Ը. Մոնտեսքյոն կատարելագործեց նաև Ջ. Լոկի՝ մարդկանց իրավահավասարության մասին գաղափարները, որոնք տեղ գտան համընդհանուր ընտրական իրավունքի գաղափարի մեջ⁶:

Պետական իշխանության բաժանման յուրօրինակ դոկտրին մշակեցին Ամերիկյան հեղափոխության գաղափարախոս հիմնադիր-հայրերը՝ «զապումների և հակակշիռների» մեխանիզմի ներդրմամբ: Թ. Ջեֆերսոնն առաջ քաշեց օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև լիազորությունների հստակ բաժանման գաղափարը: «Չապումների և հակակշիռների» մեխանիզմի մշակման գործում կարևոր ներդրում ունեցավ «Ամերիկյան Սահմանադրության ճարտարապետ», ֆեդերալիստ Ջ. Մեդիսոնը: Նա վստահ էր, որ իշխանության կենտրոնացումը մեկի կամ մի քանի խմբի ձեռքում վաղ թե

⁵ St' u Локк Дж. Два трактата о правлении, Электронная библиотека Гражданское общество в России, с. 78 https://www.civisbook.ru/files/File/Lokk_Traktaty_2.pdf:

⁶ St' u Монтескье Ш. О духе законов, Электронная библиотека Гражданское общество в России, с. 78 https://www.civisbook.ru/files/File/Monteskye_O%20dukhe.pdf:

ուշ հանգեցնում է տիրանիայի, որի դեմ պայքարի միակ միջոցը իշխանության տարանջատումն է: Հետևաբար՝ Ջ. Մեդիսոնն առաջարկում է զսպումների և հակակշիռների մեխանիզմի միջոցով ներքին հսկողության գաղափարը: Ըստ նրա՝ գործադիր իշխանությունը պարզ է, իսկ լիազորությունների շրջանակը՝ նեղ: Ավելի քիչ են դատական իշխանության գործառնությունները: Տիրապետող է օրենսդիր իշխանությունը, որը ոչ միայն օրենքներ է ընդունում, այլև մուտք ունի դեպի գանձարան: Ի տարբերություն Ջ. Մեդիսոնի՝ Ա. Համիլտոնը պետական իշխանության հիմնական կրող է համարում գործադիր իշխանությանը: Ըստ նրա՝ ինչպես գործադիր, այնպես էլ օրենսդիր իշխանության ուզուրպացումը հանգեցնում է տիրանիայի⁷:

Այսպիսով, իրավագետները ևս «պառլամենտարիզմ» երևույթը պարզաբանելիս չեն կարողանում այն դիտարկել քաղաքականությունից և այն վերլուծում են քաղաքական ինստիտուտների իրավական գործունեության համատեքստում, ինչը պայմանավորված է քաղաքականության և իրավունքի սերտ առնչությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ շատ հաճախ հենց քաղաքական իրողություններն են հանդես գալիս իրավանորմատիվային ամրագրումներ թելադրողի դերում:

Քաղաքագիտական գրականության մեջ պառլամենտարիզմի երկու հիմնական ընկալում է առանձնացվում՝ լայն և նեղ: Լայն իմաստով պառլամենտարիզմը դիտվում է որպես տեսություն յուրաքանչյուր քաղաքական համակարգի մասին, որում կենտրոնական դիրք տեղ է զբաղեցնում խորհրդարանը: Նեղ իմաստով այն շատ հաճախ նույնացվում է և կապվում ժողովրդավարության հետ: Նման մոտեցման կողմնակիցների թվում են ավստրիացի իրավագետ Հ. Բեկգենը և ռուս իրավագետ Ե. Հուբները: Ըստ առաջինի՝ ժողովրդավարության գաղափարը կարող է իրականություն դառնալ միայն պառլամենտարիզմի պայմաններում: Երկրորդի համաձայն՝ պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել միայն դեմոկրատական կառավարման համատեքստում⁸: Գերմանացի հետազոտող Պ. Լյոշեն ևս պառլամենտարիզմը սահմանում է լայն և նեղ իմաստներով: Առաջի-

⁷ Տե՛ս Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, ուս. ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2006, էջ 427:

⁸ Տե՛ս Хубнер Е., Парламентаризм и представительная система, «Полис», 1992, №3, с. 40-44:

նի դեպքում այն կապվում է խորհրդարանական պառլամենտարիզմի հետ, որը հիմնված է որոշակի ինստիտուտների, հասարակական կառույցների և քաղաքական մշակույթի վրա: Նեղ սահմանմամբ՝ պառլամենտարիզմ նշանակում է խորհրդարանի՝ որպես ժողովրդի շահերը արտահայտող կառույցի առկայությունը⁹: Այս խմբի ներկայացուցիչները բացարձակացնում են խորհրդարանի դերը, գերաթմուրում դրա ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա, այսինքն՝ այնտեղ, որտեղ կա խորհրդարան, կա նաև պառլամենտարիզմ, և հակառակը՝ չկա պառլամենտարիզմ առանց խորհրդարանի: Ժամանակակից քաղաքական համակարգերում խորհրդարանի դերի գերաթմուրման մոտեցման համաձայն՝ պառլամենտարիզմը սահմանվում է բացառապես որպես բոլոր մնացած քաղաքական ինստիտուտների նկատմամբ խորհրդարանի գերակայություն: Այսինքն՝ օրենսդիր մարմինը հանդես է գալիս պետական կառավարման համակարգի կենտրոնական դերում, իսկ կառավարությունը, իրականացնելով գործադիր իշխանությունը, պարզապես պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Այս առումով անգլիացի հետազոտող Ա. Դայսին գրում է. «Անգլիական պետական կառուցվածքում պառլամենտարիզմն իրավունք ունի ուժի մեջ դնելու և չեղարկելու ցանկացած օրենք: Չկա մի անձ կամ էլ կառույց, որի առջև անգլիական օրենքը կարող է ընկրկել: Խորհրդարանի իրավունքները սահմանափակված են լոկ 2 գործոններով՝ բարոյական նորմերով և հասարակական կարծիքով»¹⁰: Հավելելով՝ Ռ. Մ. Ռոմանովը գտնում է, որ պառլամենտարիզմը ծագում և գործում է այնտեղ, որտեղ խորհրդարանն օժտված է օրենքներ ընդունելու, կառավարություն ձևավորելու, վերջինիս և գործադիր իշխանության այլ մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասություններով¹¹: Ամփոփելով կարելի է նշել, որ մեթոդաբանական այս մոտեցման շրջանակում պառլամենտարիզմը սահմանվում է որպես տեսական հայեցակարգ, որը զբաղվում է օրենսդիր իշխանությամբ:

⁹ St' u Леше П., Опыт парламентаризма в Германии, "Роль парламента в демократическом государстве", материалы науч.-практ. конф. Барнаул, 1999, с. 53-59:

¹⁰ St' u Дайси А. Основы государственного права Англии. М., 1905, с. 445:

¹¹ St' u Романов Р. М. Парламентаризм: теория, история и современность. М., 2002, с. 276:

յան ուղղակի հետազոտմամբ: Ըստ այսմ՝ պառլամենտարիզմը հանդես է գալիս որպես ժողովրդի կողմից խորհրդարանի միջոցով իշխանության իրականացման գաղափարների և փորձի ամբողջություն: Սակայն հարկ է նշել, որ նման մոտեցումն ամբողջական չէ, քանի որ պառլամենտարիզմն ավելի լայն երևույթ է, քան գուտ տեսություն խորհրդարանի և խորհրդարանական կառավարման ձևի մասին: Ավելին, այս մոտեցումը չի ներառում պառլամենտարիզմի սոցիալ-մշակութաբանական կողմը և համալիր բնույթը: Ինստիտուցիոնալ բաղադրիչների գոյությունը դեռևս չի երաշխավորում տվյալ պետությունում և հասարակությունում պառլամենտարիզմի առկայությունը:

Հետազոտողների երկրորդ խումբը վստահ է, որ պառլամենտարիզմի պայմաններում խորհրդարանը իշխանության մնացած մարմիններին համահավասար իրավասությունների է տիրապետում, քանի որ վերջիններիս վերահսկողական լիազորությունների շնորհիվ է գործառում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր մարմինը: Այսպես, օրինակ, գերմանացի հետազոտող Գ. Յելինեկը թեպետ խորհրդարանը դիտում է որպես պառլամենտարիզմի միջուկ, սակայն այն չի դասում պետության կարևորագույն մարմինների թվին: Խորհրդարանը, ըստ նրա, այնպիսի երկրորդային մարմին է, որի ծագումը, գոյությունը և անհետացումը չեն կարող արմատական ազդեցություն ունենալ պետության բնականոն գործառության վրա¹²: Նման մոտեցման կողմնակից է նաև Հ. Հակոբյանը: Վերջինս գտնում է, որ պառլամենտարիզմը լոկ ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի առկայությունը կամ օրինաստեղծ աշխատանքի տեխնոլոգիան չէ¹³: Ի. Վ. Գրանկինը նշում է, որ պառլամենտարիզմը պետական իշխանության մարմինների ձևավորման և կազմակերպման համակարգ է, որը հիմնված է իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի վրա, ինչը երաշխավորում է իշխանության առանձին ճյուղերի անկախությունը և ինքնուրույնությունը: Այսինքն՝ պառլամենտարիզմի գլխավոր չափանիշը խորհրդարանի գերակայության սկզբունքը չէ, այլ այդ մարմնի ձևավորումն ու գործառությունը իշ-

¹² Տե՛ս Ազատյան Խ., «Պառլամենտարիզմ» հասկացության ըմբռնման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի: Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Երևան, 2018, էջ 72-81:

¹³ Տե՛ս Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 68-69:

խանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի պայմաններում¹⁴:

Ամփոփելով տեսաբանների մոտեցումները՝ կարելի է նշել, որ առավել նպատակահարմար է շեշտը դնել «պառլամենտարիզմ» երևույթի համալիր բնույթի վրա՝ այն դիտարկելով գործող քաղաքական համակարգի ամբողջության մեջ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխկապվածության և փոխկախվածության համատեքստում: Նման դիրքորոշման կողմնակից է ֆրանսիացի քաղաքագետ Գ. Բյուրդոն, ով պնդում է, որ պառլամենտարիզմը հիմնված է 3 սկզբունքների՝ իշխանության օրենսդիր և գործադիր ճյուղերի հավասարության, դրանց միջև համագործակցության և միմյանց փոխվերահսկելու մեխանիզմների առկայության վրա: Ըստ նրա՝ ո՛չ կառավարությունը, ո՛չ խորհրդարանը չպետք է օգտվեն անսահմանափակ լիազորություններից, դրանց հավասարակշռությունը պետք է երաշխավորվի հասարակական կարծիքի վերահսկողությամբ: Շատ հաճախ խորհրդարանական համակարգը սահմանվում է որպես հասարակական կարծիքի դրսևորում: Այս դեպքում, փաստորեն, պառլամենտարիզմը պետական իշխանության իրականացման մեթոդ է, որը երաշխավորում է իշխանության ճյուղերի իրական փոխզսպում և հակակշռում: Ինքնատիպ մոտեցում է առաջ քաշում ամերիկացի հետազոտող Ա. Ջենինգսը, որը նշում է, որ խորհրդարանի գործառույթը ոչ թե կառավարելն է, այլ քննադատելը: Այդ քննադատությունը ոչ միայն պետք է ուղղված լինի կառավարության քաղաքականության էական փոփոխմանը, այլև պիտի նպատակ հետապնդի ձևավորել հասարակական կարծիք: Խորհրդարանի գլխավոր գործառույթն այն է, որ այնտեղ հնչած ճառերը արձագանք գտնեն երկրում: Ըստ էության, Ջենինգսն այս սահմանմամբ ցույց է տալիս խորհրդարանի կախվածությունը հասարակական կարծիքից¹⁵:

Ժողովրդավարական արժեքների հետ պառլամենտարիզմի նույնացմանն անդադարձել է նաև Օ.Օ. Միրոնովը, ով պառլամենտարիզմը մեկնաբանում է որպես բարդ և բազմաչափ երևույթ, սոցիալա-

¹⁴ St' u Гранкин И. В., Парламент России, https://www.studmed.ru/view/grankin-iv-parlament-rossii_34751dc8bad.html:

¹⁵ St' u Jennings I., Cabinet Government. Cambridge: Cambridge University Press, 1959, p. 472:

կան արժեքների որոշակի մասշտաբ, «որտեղ գերակայում է օրենքը, հաստատվել են իրավունքի գերակայության և իշխանությունների տարանջատման սկզբունքները, որտեղ քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է ժողովրդավարությամբ և բարձր քաղաքաիրավական մշակույթով»: Դ.Վ. Տիխոմիրովը պառլամենտարիզմը սահմանում է որպես «հասարակության պետականորեն կազմակերպված ընդհանուր ժողովրդավարական, ընդհանուր քաղաքականության արժեքների մասին պատկերացումների համակարգ»¹⁶:

Պառլամենտարիզմը երբեմն նշանակում է «քննարկումների վրա հիմնված կառավարում»: Խորհրդարանի կարևոր խնդիրը հանրային քննարկումն է, որտեղ ներկայացված են տարբեր քաղաքական կարծիքներ: Մեծամասնությունն ու փոքրամասնությունը, իշխանամետ կուսակցություններն ու ընդդիմությունը պետք է ճիշտ լուծում փնտրեն քաղաքական երկխոսության մեջ: Քանի դեռ ողջ ժողովրդի խոհեմությունն ու ինտելեկտը ներկայացված են խորհրդարանում, ապա կարող է տեղի ունենալ ազատ բանավեճ: Խաղաղ քննարկումը բռնապետության և բռնության հակառակն է:

Փաստորեն, քաղաքական տեսության տեսանկյունից պառլամենտարիզմը ներկայացուցչական ժողովրդավարության ձև է, որը նույնացվում է ժողովրդավարական արժեքների հետ, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում, ինչպիսիք են՝ իրավական մշակույթի բարձր աստիճան ունեցող քաղաքացիական հասարակությունը, իրավունքի գերակայության գաղափարի հաստատումը, օրենքի գերակայությունը, անհատի իրավունքների առաջնահերթությունը պետության հետ հարաբերություններում (պետական ինստիտուտների ձևավորման գործում որոշիչ է ժողովրդի կամքը), արժեքների համապատասխան սանդղակի ստեղծումը, որը կբացառի հանրային և անձնական շահերի հակասությունը պետական իշխանության իրականացման ժամանակ: Այսպիսով, պառլամենտարիզմը հիմնված է կառուցողական երկխոսության վրա, ինչպես նաև ընդհանուր ժողովրդավարական, համամարդկային արժեքների համակարգ է, որը նախատեսված է ապահովելու ժողովրդի ուղղակի մասնակցությունը պետական և հասարակական կյանքի կարևորագույն խնդիրների

¹⁶ St' u Керимов, А. А., Понятие парламентаризма в российской политической науке, с 2-5. <https://elar.urfu.ru/bitstream/10995/20939/1/iuro-2012-103-05.pdf>:

վերհանման և լուծման գործում: Այստեղ պառլամենտարիզմը հիմնականում դիտարկվում է որպես պետական կառավարման ձև, որի գոյությունն ու զարգացումը կապվում են հասարակության մեջ առկա այնպիսի ինստիտուցիոնալ բաղադրիչների հետ, ինչպիսիք են խորհրդարանը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների համակարգը, կուսակցական համակարգը և այլն:

Պետության մեջ պառլամենտարիզմի զարգացումը կախված է ոչ միայն քաղաքական, այլ նաև կոնկրետ պատմական պայմաններից, որի ամենավառ դրևորումն ստացվել է Մեծ Բրիտանիայում: Պառլամենտարիզմի էությունը որոշվել է նրա պատմական գործառույթների փոփոխություններով և կառուցվածքով, «հաճախ դա արտահայտվում էր դրա առանձին տարրերից որևէ մեկի որոշակիորեն մեկուսացման և շեշտադրման միջոցով»¹⁷: Ի սկզբանե պառլամենտարիզմ հասկացությունը կապվում էր խորհրդարանի սահմանադրական և օրենսդրական իշխանության հետ: Դա նշանակում էր, որ սահմանադրությունը և մյուս օրենքները, որոնք ընդունվում էին խորհրդարանի կողմից, կոչված են սահմանափակելու դեկավարների կամքը: Հետագայում պառլամենտարիզմի էության արտահայտումը դարձան ինքնիշխանության և խորհրդարանի կողմից բարձրագույն իշխանության տիրապետման գաղափարները, ինչպես նաև կառավարման համակարգի հաշվետվողականությունն ու պատասխանատվությունը խորհրդարանի նկատմամբ¹⁸:

Ծթ. Մարշալը ժամանակակից պառլամենտարիզմի հիմքում դնում է մի շարք բաղադրիչներ¹⁹.

● Պլուրալիստական ներկայացուցչություն: Պառլամենտարիզմը հիմնված է ոչ միայն լիբերալ ներկայացուցչության և ժողովրդավարության, այլև պլուրալիզմի գաղափարի վրա, որը բխում է հասա-

¹⁷ St' u Современный парламент: теория, мировой опыт, российская практика / под общ. ред. О.Н. Булакова, М.: Эксмо, 2005. С. 45:

¹⁸ St' u Е.Л. Сысолятина, современный парламентаризм: институционально-правовая парадигма, с. 28.

<https://cyberleninka.ru/article/n/sovremennyy-parlamentarizm-institutsionalno-pravovaya-paradigma/viewer/>:

¹⁹ St' u Ազատյան Խ., Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 6(11)/2020, էջ 124-126:

րակության մեջ շահերի բազմազանության գաղափարից: Այս առումով Է. Փրանկելն ասել է. «Անձը չի կարող արտահայտել բնակչության տարասեռությունը, քանի որ պյուրալիզմը և նեոպյուրալիզմը ենթադրում են, որ հասարակության մեջ առկա են տարբեր լեզվախմբի շահեր»:

- Ընտրություններ: Պաշլամենտարիզմի պայմաններում իշխողներին վերահսկելու, ինչպես նաև ներկայացուցչականության երաշխավորման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունեն ընտրությունները: Ժողովրդավարական երկրներում խորհրդարանը ժողովրդին ներկայացնող մարմին է՝ ձևավորված ազատ, գաղտնի, հավասար, ուղղակի ընտրությունների արդյունքում: Այն խորհրդարանները, որոնք ձևավորվել են կեղծ ընտրությունների միջոցով, չեն կարող արտահայտել հասարակական տրամադրությունները: Ընտրության հանգամանքը կարևոր է նաև հետադարձ կապի ու պատասխանատվության երաշխավորման տեսանկյունից:

- Քննարկում և բանավեճ: Դեկլիբերատիվ ժողովրդավարության պայմաններում քաղաքական որոշումների կայացման արդյունավետ ուղիներ են քննարկումներն ու փաստարկված բանավեճերը, որոնց համար լավագույն հարթակը խորհրդարանն է: Քննարկումների հանձնարարականը հանրության կողմից տրված է որոշումներ ընդունելու լիազորություն ունեցող մարդկանց խմբերին՝ կուսակցություններին:

- Ազատ մանդատի գաղափար: Պատգամավորներին անհրաժեշտ է հնարավորություն տալ իր պարտականություններն իրականացնելու առանց սահմանափակումների և ենթարկվի միայն իր խղճին: Այս դիրքորոշումը բրիտանական խորհրդարանականության մասին իր պատկերացումների հիմքում է դրել նաև Է. Բյորքը: Ներկայացուցչական ազատ մանդատի էությունն այն է, որ պատգամավորները ներկայացնում են ոչ թե ու ոչ միայն իրենց ընտրողներին, այլ ընդհանրական սուբյեկտ՝ ժողովրդին, ում կամքը գերակա է տեղական ընտրազանգվածի կամքի նկատմամբ:

- Պաշլամենտարիզմի գաղափարական հիմքերից մեկն էլ իշխանությունների տարանջատման սկզբունքն է: Իշխանությունների բաժանման գաղափարը, կախված պատմական ժամանակահատվածից ու կառավարման ձևերից, տարբեր դրսևորումներ է ունեցել:

20-րդ դարի վերջին քառորդին խորհրդային տարածությունում մեկնարկած վարչակարգային փոփոխություններն ազդեցին աշխարհի քաղաքական պատկերի վրա: Մոցիալիստական համակարգի փլուզումից հետո հետխորհրդային փոխակերպման հիմնախնդիրները քաղաքական տեսության հետազոտության կենտրոնական առարկա դարձան:

Քաղաքական փոխակերպման գործընթացների բազմակողմանիությամբ և բազմաշերտությամբ էլ պայմանավորվեցին պառլամենտարիզմի առանձնահատկությունները տարածաշրջանում: Հարկ է նշել, որ հետխորհրդային յուրաքանչյուր պետություն փոխակերպման ուրույն ուղով է ընթացել: Ըստ այդմ՝ այս տարածաշրջանի պետություններում պառլամենտարիզմի զարգացման ընթացքը, քաղաքական մշակույթի առանձնահատկություններով պայմանավորված, մի շարք ընդհանրություններ և տարբերություններ ունի: Մի շարք գործոնների շարքում հարկավոր է անդրադառնալ բոլոր երկրներում տնական ժամանակահատված մեկ միասնական գաղափարախոսության տիրապետման փաստը, մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների բացակայությունը, խորհրդային շրջանում հաստատված նույնանման ինստիտուցիոնալ մոդելները, որոնք հիշեցնում էին խորհրդարանական հանրապետություններ, սակայն իրականում իրենցից կուսակցապետությունների տարբեր ձևեր էին ներկայացնում: Տարածաշրջանի երկրներին միավորում էր նաև քաղաքական մշակույթի որոշ բաղկացուցիչների՝ քաղաքական հաղորդակցության, կուսակցական դպրոցների նմանությունը: Չնայած առկա ընդհանրություններին՝ արդիականացման, ժողովրդավարացման և պառլամենտարիզմի կայացման արդյունքների տեսանկյունից տարածաշրջանի տարբեր երկրներում տարբեր պատկերներ են արձանագրվել²⁰: Միաժամանակ, պառլամենտարիզմի առանձնահատկությունների ուսումնասիրումը հնարավորություն է տալիս վեր հանել մի շարք միտումներ: Այս տեսանկյունից ինստիտուցիոնալ կայացվածության, ինչպես նաև փոխակերպման գործընթացի հաջողության գնահատման կարևոր ցուցիչ է խորհրդարանի

²⁰ Տե՛ս Ազատյան Խ., Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում, Ատենախոսություն, Երևանի պետական համալսարան, Երևան, 2022թ., էջ 72-80:

իրավասությունների սահմանը, այսինքն, թե տարածաշրջանի այս կամ այն երկրում ինչպիսի դերակատարություն ունի խորհրդարանը և ինչպիսի փոխգործակցության մեջ է իշխանության մյուս ճյուղերի հետ:

Նախագահական հանրապետություններ են Բելառուսը, Ադրբեյջանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղրղզիստանը, Ղազախստանը, Տաջիկստանը: Ռուսաստանի Դաշնությունը նախագահական-խորհրդարանական հանրապետություն է: Խորհրդարանական-նախագահական հանրապետություն է Ուկրաինան: Խորհրդարանական հանրապետություններ են Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան:

Նշված երկրների կառավարման համակարգերի կատարելագործման էվոլյուցիայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանել առանձին երկրների մի շարք առանձնահատկություններ:

Հետխորհրդային շրջանում ՌԴ-ի ընտրական օրենսգրքերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ տարիների ընթացքում դրանք հետևողականորեն փոփոխվել և կատարելագործվել են: Ընդ որում, միտումն ուղղված է եղել համամասնական ընտրակարգի զարգացմանը²¹: Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև կուսակցական համակարգի կայացման ուղղությամբ, զարգացել են խորհրդարանական ընթացակարգերը²²: Որպես օրենսդիր մարմին ռուսական խորհրդարանը հսկայական քանակությամբ օրենքներ է ընդունել հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների կարգավորման հետ կապված, սակայն հետխորհրդային շրջանում ՌԴ-ում պառլամենտարիզմի կայացման և զարգացման ընթացքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն այստեղ դեռևս բավականին խնդիրներ ունի: Առանցքային խնդիր է իշխանության թևերի անհավասարակշռությունը: Չնայած սահմանադրությամբ հռչակված իշխանությունների հստակ բաժանմանը՝ հասարակության քաղաքական կյանքում նախագահի ինստիտուտն է գերիշխող դիրք զբաղեցնում: Բացի

²¹ Ст'ю Избирательная система в России: История и современность, <https://www.prlib.ru/collections/467235>, 24.05.2020:

²² Ст'ю Ревина С., Суркова О., Виленский Н., Парламентаризм в России: проблемы истории, современности, перспектив развития, Вестник Волжского университета имени В.Н. Татищева № 1, том 2, 2017, էջ 6:

դրանից՝ նախագահը, այսպես կոչված, «իշխանության կուսակցության»²³ միջոցով վերահսկողություն է իրականացնում մի կողմից կառավարության, մյուս կողմից խորհրդարանի նկատմամբ՝ գործնականում հնարավորություն ունենալով ընդունել իրեն անհրաժեշտ օրենքները:

Ի տարբերություն ՌԴ-ի՝ Բելառուսում անկախության առաջին տարիներին խորհրդարանի դերակատարությունը բավականին մեծ էր: Բելառուսական ժամանակակից պառլամենտարիզմի կայացման սկզբնական փուլում՝ 1990-1994 թթ., ինքնիշխան պետությունը քայլեր էր կատարում որպես խորհրդարանական հանրապետություն:

Ներկայումս Բելառուսում խորհրդարանը նվազագույն չափով է իրականացնում կառավարության նկատմամբ իր վերահսկողական գործառնությունը: Պառլամենտարիզմի կարևորագույն հիմքերից մեկը հանդիսացող խորհրդարանական քննարկումներն ու բանավեճերը ևս այստեղ հազվադեպ են հանդիպում: Խորհրդարանի նիստերն ուղիղ կապով չեն հեռարձակվում: Ինչպես վերին, այնպես էլ ստորին պալատներում բացակայում են կուսակցական ֆրակցիաները, ինչը վկայում է երկրում կուսակցական համակարգի անկատարության, ընդդիմադիր կուսակցությունների թուլության մասին, որոնց բնակչությունը չի վստահում Ազգային ժողովում ներկայացուցչական գործառնություններ իրականացնողի դերը: Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովը չի կատարում ժամանակակից պետությունների խորհրդարաններին բնորոշ մի շարք կարևորագույն գործառնություններ: Ըստ ուսումնասիրությունների՝ Նախագահը զսպում է պառլամենտարիզմի զարգացումը երկրում, քանի որ սպառնալիք է տեսնում իր մենաշնորհած իշխանության նկատմամբ:

Հետխորհրդային տարածության հաջորդ պալմոնական երկիրը՝ Ուկրաինան, ևս 1990-ական թթ. սկզբներին կանգնած էր տարածաշրջանի մնացած պետություններին հուզող միևնույն հարցի ա-

²³ Բաղադրագիտական գրականության մեջ առանձնացվում են «իշխանության կուսակցություն» և «իշխող կուսակցություն» հասկացությունները: «Իշխանության կուսակցություն» հասկացությամբ են բնորոշվում գործող իշխանության կողմից իրենց քաղաքականությանն ինչպես ընտրական դաշտում, այնպես էլ խորհրդարանում աջակցելու համար ստեղծված կուսակցությունները:

ռաջ՝ ինչպիսի քաղաքական մոդել ընտրել և զարգացնել երկրում²⁴։ Փոխակերպման սկզբնական տարիները Ուկրաինայի համար արմատական տեղաշարժերի, ժողովրդավարության վերելքների և վայրէջքների շրջան էին։ Ներկայումս էլ քաղաքական, սոցիալական, տնտեսական համակարգային բնույթի լրջագույն խնդիրներ շարունակում են մնալ չուծված։ Եթե ՌԴ-ում և Բելառուսում սահմանադրություններն ընդունվեցին համապատասխանաբար 1993 և 1994 թթ., ապա Ուկրաինայում իրավական ճգնաժամը շարունակվեց մինչև 1996 թ., երբ խորհրդարանի և նախագահի միջև երկարատև վեճերից հետո ընդունված սահմանադրությամբ երկրում հաստատվեց կառավարման նախագահական-խորհրդարանական համակարգ²⁵։ 1996թ. Սահմանադրության ընդունմամբ առավել նշմարվեցին իշխանության ավտորիտարացման միտումները։ Լ. Կուչմայի վերընտրվելը նախագահի պաշտոնում հանգեցրել էր հականախագահական խմբավորումների ձևավորմանը։ Գլխավոր դժգոհությունը նախագահի՝ սահմանադրական փոփոխությունների գործընթաց նախաձեռնելու և խորհրդարանի իրավասությունների կրճատման հաշվին իր լիազորությունների շրջանակը ընդլայնելու հանգամանքի հետ էր կապված, ինչն առավել խորացրեց նախագահի և խորհրդարանի միջև հակադրությունները²⁶։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հեղափոխության ճանապարհով տեղի ունեցող զարգացումն իր հետ բազմաթիվ խնդիրներ է բերում։ Եվրոմայդանից հետո՝ 2015 թ. աշնանը տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեի արդյունքում խորհրդարանին մեծ լիազորություններ վերադարձվեցին։ Մասնագետների կողմից դրական փոփոխություն էր համարվում սահմանադրական գործընթացին վերջ դնելու, կուսակցական համակարգի բարեփոխման, բնակչության քաղաքական գիտակցության մակարդակի բարձրաց-

²⁴ Տե՛ս Геннадиевна К., Роль Президента Украины в политических процессах, file:///C:/Users/Hovo/Downloads/32-31-1-PB.pdf

²⁵ Տե՛ս 19 лет скитаний Конституции, https://www.bbc.com/ukrainian/ukraine_in_russian/2015/06/150628_ru_s_constitution_ukraine_history

²⁶ Տե՛ս Ազատյան Խ., Պաշլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում, Ատենախոսություն, Երևանի պետական համալսարան, Երևան, 2022թ., էջ 72-80։

ման ուղղությամբ գործողությունները, սակայն նշված բարեփոխումները դեռ բավարար չեն, որպեսզի Ուկրաինայում քաղաքական փոխակերպումը համարվի ավարտված: Ավելին, «Նարնջագույն հեղափոխությունից» հետո ժողովրդավարության զարգացումը երկրում այն անհրաժեշտ քաղաքական կայունություն չապահովեց և ճգնաժամը գնալով խորացավ՝ հասնելով կոնֆլիկտի սրման հարևան երկրների հետ:

Հետխորհրդային տարածաշրջանի հաջորդ խումբ՝ կենտրոնասիական երկրները՝ Թուրքմենստանը, Ղազախստանը, Ղրղզխստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը, անկախացումից հետո որդեգրեցին ավտորիտար քաղաքական վարչակարգեր՝ հայրիշխանական մոդելին համապատասխան: Կենտրոնական Ասիայի հինգ հանրապետություններում սուպերնախագահական կառավարման ձևեր հաստատվեցին: Քաղաքական լիդերներն այս երկրներում ժողովրդի կողմից դիտարկվում են որպես ազգի հայր և խանական ողջ համակարգը կառուցված է այս սխեմայի վրա: Տարածաշրջանում հայրիշխանական համակարգերի ձևավորման պատճառներից մեկը կլանային ավանդույթների արամատավորվածությունն է դեռևս մինչև խորհրդային տարածությունում հայտնվելը: Կլանային համակարգը խորը արմատներ ունի ոչ միայն էլիտայի, այլև հասարակության մակարդակում²⁷:

Կենտրոնասիական երկրներում գործադիր իշխանությունն ամբողջությամբ պատկանում է նախագահին, իսկ խորհրդարանական ընտրությունները մրցակցային չեն: Այս երկրները գտնվում են իսլամական, ինչպես նաև ամբողջատիրական-կոմունիստական քաղաքական մշակույթների ազդեցության ներքո և պահպանել են ավանդական պատրիարխալ հասարակության մնացորդները: Այս երկրներում իրատեսական է ոչ թե ժողովրդավարացման, այլ արդիականացման գործընթացների խթանումն ու քաղաքական բազմակարծության արմատավորումը:

Հետխորհրդային հաջորդ պետության՝ Մոլդովայի օրինակը ցույց է տալիս, որ տարածաշրջանի որոշ պետություններում պառլա-

²⁷ Sté. Абашии С., Культурные процессы и транскультурные влияния в современной Центральной Азии, с. 1-10 https://www.opensocietyfoundations.org/uploads/9b2d81a4-074e-4ef9-a086-31b972bc79bc/russian_20090515_0.pdf:

մենտարիզմի զարգացման վրա բացասական ազդեցություն են ունեցել Խորհրդային Միությունից ժառանգություն ստացած տարածքային վեճերը՝ տվյալ պարագայում Մերձդնեստրի խնդիրը²⁸։ Նման ժառանգություն են ստացել նորանկախ մի շարք այլ երկրներ ևս։ Որոշներում դրանք պատերազմների պատճառ դարձան։ Վրաստանում, օրինակ, ժողովրդավարացման գործընթացները ինչ-որ առումով խաթարվել են Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նկատմամբ վերահսկողության կորստից հետո, իսկ Հայաստանում պառլամենտարիզմի շարունակական զարգացմանը խոչընդոտել է Արցախյան հիմնախնդիրը, չդադարող պատերազմը։ Մոլդովայում պառլամենտարիզմի կայացման խոչընդոտներից են նաև սոցիալ-տնտեսական ճգնաժամը, իրավական նիհիլիզմի ավանդույթները։

Այսպիսով, հետխորհրդային տարածությունում պառլամենտարիզմի զարգացման միտումները հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ընդգրկող երկրների առանձնահատկություններն ու դրանցում արձանագրված անցումային գործընթացները։ Այստեղ պառլամենտարիզմի բնորոշ գծերից, միևնույն ժամանակ զարգացմանը խոչընդոտող առավել սուր խնդիրներից է իշխանության ճյուղերի կախվածությունը գործադիր թևից, մասնավորապես՝ նախագահից։ Տարիներ շարունակ նախագահի դոմինանտ դերը, քաղաքական կյանքը՝ վերջինիս ձեռքում կենտրոնացնելը թուլացրել է իշխանության մյուս ճյուղերի նշանակությունը և որոշակիորեն խոչընդոտել ժողովրդավարության զարգացման գործընթացին։

Հետխորհրդային տարածության հաջորդ ենթատարածաշրջանի՝ Հարավային Կովկասի մաս Ադրբեջանում խորհրդային կարգերի տապալումից հետո լիբերալ ավանդույթների բացակայության պայմաններում ժողովրդավարական արժեքների հռչակումը ձևական էր։ Ուստի արևմտյան կառուցակարգերի ներդրումը մեխանիկական բնույթ էր կրում։ 1995 թ. ընդունված Սահմանադրության բովանդակության վրա էապես ազդեցին քաղաքական անկայունությունից հանրային դժգոհությունները, պարտությունը պատերազմում, պետական դավաճանությունները։ Արդյունքում նախագահի լիազո-

²⁸ St'iu Костакі Г., Мишин С., Парламентаризм в Республике Молдова: условия и особенности становления, https://ibn.idsi.md/sites/default/files/imag_file/Parlamentarizm%20v%20RM_uslovia%20i%20osobennosti%20stanovlenia.pdf, 14.11.2023:

րությունները չափազանց ընդլայնվեցին: Ադրբեջանական խորհրդարանը՝ Միլլի Մեջլիսը, նախագահի ինստիտուտին հակակշռելու և զսպելու լուրջ դերակատարություն չի իրականացնում: Այն նախագահի կամքն արտահայտողն է և հասարակական կյանքը կարգավորող կանոններ սահմանողը: Ադրբեջանում ձևական բազմակուսակցական համակարգ է գործում, իսկ խորհրդարանում ընդդիմադիր կուսակցություններ չկան: Գործող օրենսդրության համաձայն՝ նախագահի իշխանությունը չունի զսպման գործուն մեխանիզմներ: Այստեղ գործ ունենք անձնիշխանական վարչակարգի հետ, որի մեկնարկը տրվել է 1995 թ. հուլիսի 15-ին Հ. Ալիևի իշխանության գալով: 2003 թ. վերջինիս որդի՝ Ի. Ալիևի՝ երկրի դեկը ստանձնելուց հետո արդեն բոլոր հիմքերն առկա էին ժառանգական իշխանության համար, ինչպես նաև ընդլայնվել է Նախագահի լիազորությունները: Օրինակ, վերջինս նաև դատական իշխանության անկախության երաշխավորն է և Միլլի Մեջլիսի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեն: Ներկայումս Ադրբեջանում գործում է 1995 թ. Սահմանադրությունը որոշ փոփոխություններով²⁹: 2009 թ. մարտին անցկացված հանրաքվեի արդյունքում հանված է նախագահի՝ երկու անգամից ոչ ավելի պաշտոնավարելու արգելքը³⁰: Վերջինիս կառավարման տարիները աչքի են ընկնում նաև ընդդիմության նկատմամբ հալածողական քաղաքականության խորացմամբ, այլակարծության ճնշումներով: Ի. Ալիևի իշխանությունը անընդհատ երկարաձգելու հնարավորություններ են ստեղծվել: Մատնանշված գործողությունները լուրջ խոչընդոտներ են երկրում պառլամենտարիզմի զարգացման համար:

Հետխորհրդային տարածությունում ավտորիտար վարչակարգերը հեղափոխությունների միջոցով փոփոխելու միտում է նկատվում, ինչի մասին կարելի է փաստել Վրաստանում 2003 թ. «Վարդերի հեղափոխությունը», Ուկրաինայում 2004թ. «Նարնջագույն հեղափոխությունը», Դրոգիստանում 2005թ. «Վարդակակաչների հեղափոխությունը», Հայաստանում 2018թ. «Թավշյա հեղափոխությունը», Ղազախստանում 2022թ. տեղի ունեցած գունավոր հեղափոխության փորձն ուսումնասիրելու արդյունքում: Վրաստանում Մ.

²⁹ Ст'у Конституция Азербайджанской Республики,
<https://wipo.lexres.wipo.int/edocs/lexdocs/laws/ru/az/az057ru.pdf>, 13.03.2024:

³⁰ Ст'у նույն տեղում:

Սահակաշվիլիի արմատական քայլերի արդյունքում, օրինակ, պետական ապարատն ամբողջությամբ բարեփոխվեց, մասնավորապես՝ ուշագրավ են կադրային փոփոխությունների կատարումը, ուժային կառույցներում բարեփոխումների անցկացումը, սակայն Սահմանադրական փոփոխություններից հետո նրա վարչակարգը ավտորիտար գծեր որդեգրեց: 2008 թ. հունվարի 5-ի արտահերթ նախագահական ընտրություններում նա ստացավ ձայների 56 տոկոսը, իսկ ընտրություններն անցան բողոքի մեծ ալիքի պայմաններում: Մ. Սահակաշվիլին ոչ միայն չլրճատեց, այլև ընդլայնեց նախագահի լիազորությունները, ինչը նրա համար քաղաքական համակարգում գերիշխող դիրք երաշխավորեց³¹:

Ինչ վերաբերում է Հայաստանում պառլամենտարիզմի գործընթացի զարգացման գործընթացին, ապա հարկ է նշել, որ անկախության շրջանում հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող գործոններից է խորհրդարանական ուժեղ ընդդիմության բացակայությունը: Ինչպես ցույց է տվել զարգացած ժողովրդավարությունների փորձը, կայացած ընդդիմության առկայությունը իշխանության օրենսդիր մարմնում դրական, կայունացնող ազդեցություն է ունենում հասարակության քաղաքական կյանքի վրա և կանխում է քաղաքական սուր ճգնաժամերի ու կոնֆլիկտների կամ էլ ոչ պակաս վտանգավոր՝ հասարակության ապատիկ տրամադրությունների հավանականությունը: Ուժեղ ընդդիմության ներկայացվածությունը խորհրդարանում պառլամենտարիզմի կարևորագույն հատկանիշներից է³²:

ՀՀ-ում խորհրդարանական ընդդիմության ինստիտուտի թուլացման վրա էապես ազդել են ձևական կոալիցաները և կոնսենսուսի բացակայությունը ընդդիմադիր կուսակցությունների միջև: Պառլամենտարիզմի կարևորագույն սկզբունքներից մեկը օրենքի գերակայությունն է, ինչը ՀՀ-ում երաշխավորված է սահմանադրությամբ, սակայն իրականության մեջ երբեմն անտեսվում է: Որպես պառլամեն-

³¹ Стів Государственность и безопасность: Грузия после "революции роз", Редакторы Карл Кейзен, Джон Стейнбрюнер и Мартин Б. Мейлин, https://carnegieendowment.org/files/9601statehood_russian.pdf:

³² Стів Доклад «О роли оппозиции в демократическом парламенте», [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)025-rus](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)025-rus):

տարիզմի լրջագույն խնդիր ՀՀ-ում հարկ է ընդգծել բնակչության վստահության ոչ բարձր մակարդակը ներկայացուցչական իշխանության նկատմամբ, ինչն ի թիվս այլ գործոնների պայմանավորված է նրանով, որ 1995 թ. հետո ընկած ժամանակահատվածում գրեթե բոլոր ընտրությունների արդյունքների վերաբերյալ հակասական կարծիքներ են հնչել, ընտրությունները միշտ չէ, որ հասարակության նախապատվությունների արտահայտությունն են եղել: Քանի որ խորհրդարանը ձևավորվում է ընտրությունների արդյունքում բնակչության կողմից, ուստի մեծ նշանակություն ունի քաղաքացիների վերաբերմունքը խորհրդարանի ինստիտուտի նկատմամբ: Ըստ միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) 2024թ. հարցումների արդյունքների՝ ՀՀ-ում պետական ինստիտուտներից ամենամեծ վստահելիքն ԱԺ-ն է³³:

Հայկական պառլամենտարիզմի զարգացման վրա ազդել է խորհրդարանականների՝ իրենց աշխատանքին ոչ որպես մասնագիտության վերաբերվելը: Պատգամավորների՝ ԱԺ-ի նիստերից պարբերաբար բացակայելու ավանդույթը դրվել է 1-ին գումարման ԱԺ-ի կազմավորումից ի վեր: Խորհրդարանական գործունեությանը միայն ֆիզիկական ներկայությամբ մասնակից լինելու գիտակցումը ևս խոչընդոտել է խորհրդարանի ինստիտուտի զարգացմանը: Երկու պարագայում էլ խոսքը գնում է ներկայացուցչական, օրենսդրական գործառույթների ոչ լիարժեք կատարման մասին: Անկախության տարիների ընթացքում տարբեր խորհրդարանական սովորույթներ և ավանդույթներ են ձևավորվել: Ակնհայտ է, որ օրենսդրական գործունեության արդիականացումը և մասնագիտացումը մեծապես հարստացրել են խորհրդարանական ավանդույթները: 2018 թ. ընտրություններից անմիջապես հետո ԱԺ-ի որոշ պատգամավորներ կարևորում էին համագործակցությունը զանգվածային լրատվության միջոցների, քաղաքացիական հասարակության սեկտորի հետ, աչքի էին ընկնում օրենսդրական գործունեությամբ զբաղվելու ունակություններով, լավ կազմակերպվածությամբ, սակայն վերջին 3 տարիներին իշխող ուժի ներկայացուցիչները ՉԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ անբարեհավ վերաբերմունք են ցուցաբերել, մասնավոր-

³³ Տե՛ս IRI Armenia Poll, <https://www.iri.org/news/iri-armenia-poll-increasing-negative-views-of-russia/>, 12.04.2024:

րապես՝ 2022-2023թթ. ընթացքում աչքի են ընկել հատկապես իշխող խմբակցության պատգամավորները՝ Վահագն Ալեքսանյանը, Խաչատուր Սուքիասյանը, Քրիստինե Պողոսյանը, ինչպես նաև՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը և այլոք: Լրագրողների հետ միջադեպեր են գրանցվում նաև ԱԺ վարչական շենքում, մասնավորապես՝ 2022թ. Ազգային ժողովում կոնֆլիկտ է առաջացել իշխող խմբակցության պատգամավորների և խորհրդարանում հավատարմագրված որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև, որից հետո ԱԺ նախագահն իրավապահներին հրահանգել է նրանց հեռացնել խորհրդարանի շենքից, ինչն իրականացվել է ուժի կիրառմամբ: Լրագրողական 11 կազմակերպություններ այս միջադեպի առիթով հանդես են եկել դատապարտող հայտարարությամբ³⁴:

Նկատվում է խորհրդարանականների երիտասարդացման միտում, որն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Ներկայիս խորհրդարանի պատգամավորների տարիքային շեմը ամենացածրն է համեմատած մյուսների հետ: Միաժամանակ, որոշ քաղաքական գործիչներ չեն անցնում իշխանության աստիճանակարգությամբ, ինչը երբեմն հանգեցնում է պատգամավորների կադրային քաղաքականության խորը իմացության պակասի: Մյուս կողմից երիտասարդ նոր կադրերը, չանցնելով քաղաքական սոցիալականացման բնականոն գործընթացը, չունենալով բավարար փորձ, որոշակի ռիսկայնություն են առաջ բերում քաղաքական որոշումների կայացման տեսանկյունից³⁵: Կանանց ներգրավվածության առումով ևս ամենամեծ ներկայացվածությունը ապահովված է այս գումարման ժամանակ³⁶:

2020 թ. պատերազմը չէր կարող չանդադառնալ քաղաքական համակարգի գործառնության վրա, մասնավորապես՝ պատերազմի ընթացքում և դրան հաջորդած ժամանակահատվածում պառլամենտարիզմի կայացման վրա մեծ ազդեցություն ունեցող կուսակցությունները խորհրդարանում քաղաքական որոշումների կայացման և

³⁴ Տե՛ս «Հայաստանում խոսքի ազատության վիճակի եվ լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների 2022թ.խախտումների մասին» զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, էջ 14-20

³⁵ Տե՛ս Սարգսյան Ա., Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում, Ե., 2019, էջ 143:

³⁶ Տե՛ս <http://www.parliament.am/>

վերահսկողության գործընթացում որևէ լուրջ դերակատարություն չունեն։ Խորհրդարանը մինչ այժմ երբեմն օգտագործվում է գործադիր իշխանության կայացրած որոշումներին լեգիտիմություն հաղորդելու հարթակ։ Այս համատեքստում ուշադրության է արժանի այն, որ ՀՀ Սահմանադրության և միջազգային պայմանագրերի մասին օրենքի համաձայն՝ քաղաքական, ռազմական, ինչպես նաև մարդու իրավունքներին առնչվող որևէ փաստաթուղթ ստորագրվելու պարագայում նշված փաստաթուղթը պետք է վավերացվի ՀՀ խորհրդարանում³⁷։ Այնինչ, նոյեմբերի 9-ի համաձայնագրի դրույթների մասին խորհրդարանի ընդդիմադիր խմբակցությունները տեղեկացել էին ստորագրումից հետո միայն, ինչը նշանակում է, որ գործնականում շարունակվում է պառլամենտարիզմին հակասող միանձնյա որոշումների կայացման պրակտիկան՝ շրջանցելով սահմանադրորեն խորհրդարանին վերապահված լիազորությունները։

Ըստ մասնագետների՝ նորանկախ Հայաստանի առաջին խորհրդարանը՝ Գերագույն խորհուրդը, պատգամավորների կրթական մակարդակով, ինչպես նաև քննարկումների արդյունավետությամբ շարունակում է մնալ անգերազանցելի։ Այն համալրված էր հիմնականում 1988թ. շարժումը նախաձեռնող մտավորականներից, որոնք գաղափարախոսություններ էին դնում շրջանառության մեջ, համախմբված էին գաղափարների շուրջ։

Պառլամենտարիզմի զարգացումը ՀՀ-ում ձգտում էր ունենալ որոշակիորեն եվրոպական միտումներ, ինչը պայմանավորված է արևմտյան աջակցությամբ և միջխորհրդարանական կապերով։ Սահմանադրության փոփոխությունները Հայաստանում ի թիվս այլ գործոնների պայմանավորված են եղել Եվրոպայի առջև ստանձնած որոշ պարտավորություններով։ Հարկ է նկատել, սակայն, որ ժամանակակից պառլամենտարիզմի համար անհրաժեշտ լիբերալ արժեքների ձևավորումն ու արմատավորումը արևմտյան զարգացած ժողովրդավարություններում տեղի են ունեցել աստիճանաբար, իսկ ՀՀ-ում սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր իրադրության, տարածաշրջանային կոնֆլիկտների պայմաններում դեռ որոշ ժամանակ կպահանջվի։

³⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը միջազգային պայմանագրերի մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120816>, 10.03.2024:

Ամփոփելով կարելի է փաստել, որ պառլամենտարիզմի կայացումն ու զարգացումը հետխորհրդային տարածության երկրներում տեղի է ունենում ոչ թե կայուն, այլ փոխակերպվող քաղաքական գործընթացի պայմաններում, որին հատուկ է անկայունությունն ու անսպասելիությունը, իսկ երբեմն էլ ռազմական գործողությունների առկայությունը:

Քաղաքական գիտակցության ցածր մակարդակի պայմաններում կարճ ժամանակահատվածում ժողովրդավարանալու ճգնումը հաճախ հակառակ ազդեցության է հանգեցրել: Պառլամենտարիզմը զարգանում է այնտեղ, որտեղ կայուն ժողովրդավարական, իրավական, մշակութային ավանդույթներ և սոցիալ-տնտեսական ու քաղաքական նպաստավոր պայմաններ կան: Հետևաբար՝ պատահական չէ, որ թուլացած խորհրդային կառուցակարգերի և երբեմն սկզբունքորեն դրանց հակասող արևմտյան մոդելների միախառնումից ձևավորվել են հիբրիդային համակարգեր:

Պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող խնդիրների լուծումը հնարավոր է միայն իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության համատեղ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ: Նշված կողմերը պետք է պատրաստ լինեն համագործակցել միմյանց հետ և գիտակցել հասարակության զարգացման գործում ունեցած պատասխանատվությունը:

Բացի դրանից՝ անհրաժեշտ է զսպումների և հակակշիռների այնպիսի համակարգ, որի պայմաններում իշխանության ճյուղերից և ոչ մեկը չի կարողանա իր կամքը թելադրել մյուսին: Այս դեպքում անցում կկատարվի որակապես նոր քաղաքական համակարգի, քաղաքական վարքի և մշակույթի: Իշխանությունների տարանջատման տեսությունը բխում է իշխանության երեք ճյուղերի հավասարության սկզբունքից, այսինքն՝ պառլամենտարիզմը իշխանության բոլոր ճյուղերի փոխգործակցությունն է հանուն ժողովրդի բարօրության և պետության կայուն զարգացման: Այն օրենքի և օրենսդիր իշխանության զարգացումն է իշխանության մյուս՝ գործադիր և դատական ճյուղերի ինքնուրույնության և պատասխանատվության բարձր մակարդակի պայմաններում: Հետևաբար, նպատակահարմար է բարձրացնել իշխանության տարբեր թևերի միջև համագործակցությունը, օրենսդրական գործընթացի արդյունավետությունը, որտեղ առանձնահատուկ դերակատարում կարող է ունենալ իշխանությունների

տարանջատման տեսության ներկայացուցիչների կողմից բազմիցս ընդգծված խորհրդարանը, քանի որ այն մարմին է, որն արտահայտում է ժողովրդի կամքը:

**1.2. Խորհրդարանական կառավարման
առանձնահատկությունները. խորհրդարանական
կառավարմանն անցնելու անհրաժեշտությունը Հայաստանում**

2015թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունն անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևի: Կառավարման ձևի նման փոփոխությունը մի կողմից՝ նոր նախադրյալներ է ստեղծում պառլամենտարիզմի զարգացման համար, մյուս կողմից՝ նոր մարտահրավերներ առաջադրում արդյունավետ խորհրդարանական կառավարման համակարգ ունենալու հարցում:

Ինչպես արդեն նշվել է նախորդ գլխում, հետխորհրդային պետություններն անկախացումից հետո հայտնվեցին մի վիճակում, երբ որոշակի ժամանակ էր անհրաժեշտ կողմնորոշվելու, թե պետական կառավարման որ ձևը կարող է արդյունավետ գործել, և միևնույն ժամանակ լուծել գործող իշխանության առջև ծառացած քաղաքական խնդիրները: Այդ պետությունների մեծ մասն ընտրեց կառավարման նախագահական կամ կիսանախագահական ձև, իսկ որոշ պետություններ՝ խորհրդարանական (Լատվիա, Մոլդովիա, Էստոնիա), սակայն ժամանակի ընթացքում մի շարք պետություններում ի հայտ եկան որոշակի գործընթացներ, որոնք պետական կառավարման ձևի փոփոխության հիմք դարձան: Այդ պետություններում պետական կառավարման ձևի փոփոխությունը հիմնականում հիմնավորվում էր հանրապետության նախագահի ձեռքում պետական իշխանության կենտրոնացմամբ և պետական իշխանության ճյուղերի միջև զսպման ու հակակշռման մեխանիզմների անկատարությամբ, որոնք հանգեցնում են գերնախագահական կառավարման մոդելի արմատավորման կամ դրա վտանգի: Որոշ հետխորհրդային պետություններ, հենց նշված հիմնավորումներով պայմանավորված, կառավարման ձևը արմատական փոփոխության ենթարկեցին. օրինակ՝ Հայաստանը, Ղրղզստանը, որոշ առանձնահատկություններով՝ նաև Վրաստանը, անցում կատարեցին կառավարման խորհրդարանա-

կան ձևին, որը նորույթ է այդ պետությունների համար: Ի դեպ, հետխորհրդային պետություններից Ղազախստանում ևս ակտիվ քննարկումներ եղան կառավարման խորհրդարանական ձևին անցնելու հնարավորության վերաբերյալ:

Կառավարման խորհրդարանական ձևն առավելապես բնորոշ է Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի պետություններին, որտեղ կայուն ժողովրդավարական ինստիտուտները ձևավորվել են պատմական զարգացման ընթացքում (Բելգիա, Միացյալ Թագավորություն, Դանիա, Նորվեգիա, Շվեդիա), իսկ որոշ եվրոպական պետություններում պառլամենտական կառավարման ձևը հաստատվել է ռեժիմի փլուզման հետևանքով (Իտալիա, Գերմանիա, Ճապոնիան, Իսպանիա): Կան նաև խորհրդարանական որոշ պետություններ, որտեղ կառավարման խորհրդարանական ձևը հաստատվել է սոցիալիզմի փլուզումից հետո (Լատվիա, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա, Մոլդովա, Էստոնիա), իսկ որոշ հետխորհրդային պետություններում՝ պետական կառավարման ձևի փոփոխության արդյունքում (Վրաստան, Ղրղզստան, Հայաստան): Ուսումնասիրությունները թույլ են տալիս նշել, որ հետխորհրդային պետություններում գործող կառավարման նշյալ ձևը, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որոշակիորեն անկայուն է, ժողովրդավարական արժեքները՝ թերզարգացած, հետևաբար՝ կառավարման խորհրդարանական ձևի գործառնության արդյունավետությունը բավականին ցածր է, քանի որ կառավարման խորհրդարանական ձևը կարող է արդյունավետ գործել այն պետություններում, որտեղ առկա է զարգացած և կայուն քաղաքական համակարգ: Մինչդեռ հետխորհրդային պետություններում քաղաքական և կուսակցական համակարգերը անհրաժեշտ չափով կայուն չեն³⁸: Այդ հանգամանքը տեսական հարթությունում տարբեր տեսանկյուններից դարձել է քննարկման և քննադատության առարկա, և մի շարք հեղինակներ գտնում են, որ դրանով պայմանավորված՝ հետխորհրդային պետություններում կառավարման խորհրդարանական ձևին անցումը վտանգավոր է: Այսպես, Չ. Չոտաևը նշում է, որ Ղրղզստանում պառլամենտական կառավարման ձևին անցումը

³⁸ Տե՛ս Կեսոյան Հ., Պետական կառավարման ձևվի ընտրության (փոփոխության) հիմնախնդիրը անցումային փուլում գտնվող պետություններում, էջ 53-54, https://www.old.ysu.am/files/04H_Kesoyan-1593417144-.pdf, 07.11.2023:

եղել է վաղաժամ, քանի որ ձևավորված չի եղել քաղաքական էլիտա, ինչը բացասական ազդեցություն է ունենում պետական կառավարման համակարգի վրա, քանզի խորհրդարանական կառավարման համակարգին բնորոշ են անկայունությունը և քաղաքական ճգնաժամեր առաջացնելու հնարավորությունը³⁹: Բ. Մուհամեդջանովը, քննարկելով Ղազախստանում կառավարման խորհրդարանական ձևին անցնելու հեռանկարները, պնդում է, որ այն վտանգավոր է, քանի որ չկան ո՛չ քաղաքական և ո՛չ էլ իրավական հիմքեր՝ ազատական-ժողովրդավարական պառլամենտական ավանդույթներ, սոցիալ-տնտեսական զարգացածության բավարար մակարդակ և այլն: Ա. Մեդուշևսկին նշում է, որ կառավարման խորհրդարանական ձևի դեպքում բարդանում է արագ որոշում ընդունելու հնարավորությունը, ինչը հետխորհրդային պետություններում կարող է հանգեցնել կառավարման ճգնաժամի⁴⁰:

Խորհրդարանը և պառլամենտարիզմը մշտապես գտնվում են զարգացման ու փոփոխման մեջ: Հասարակության առաջընթացի պայմաններում անընդհատ ծագում են բազմաթիվ հիմնահարցեր, որոնք ոչ միայն դառնում են գիտական ուսումնասիրության նյութ, այլև պահանջում են պրակտիկ լուծումներ և օրենսդրական հիմնավորումներ: Գնալով մեծանում է խորհրդարանի դերը որպես հասարակության հետաքրքրությունների և շահերի արտահայտման ինստիտուտ: Ներգործելով հասարակական հարաբերությունների վրա՝ խորհրդարանը ևս կրում է հասարակության ու ժողովրդի ազդեցությունը: Եվ որքան ազատ, ժողովրդավարական կանոններին ու պահանջներին համապատասխան է ձևավորվում խորհրդարանը, այնքան մեծ է նրա օգտակար գործողության գործակիցը, նրա արդյունավետության մակարդակը, այնքան մեծ է նրա ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական գործընթացների վրա:

Ինչպես ցանկացած այլ խորհրդարանական մոդելում, Հայաստանում նույնպես իշխանության կենտրոնը խորհրդարանն է: Հենց խորհրդարանի կողմից կամ խորհրդարանի ակտիվ մասնակցությամբ

³⁹ Стен Чотаев З. Д., Парламентская форма правления в Кыргызстане: проблемы и перспективы, Баку, 2012, էջ 40:

⁴⁰ Տես Կեսոյան Հ., Պետական կառավարման ձևի ընտրության (փոփոխության) հիմնախնդիրը անցումային փուլում գտնվող պետություններում, էջ 50-54, https://www.old.ysu.am/files/04H_Kesoyan-1593417144-.pdf, 07.11.2023:

յամբ են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերի, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածով նախատեսված ինքնավար մարմինները: Այս առումով օրինաչափ է, որ փոփոխություններից հետո պետական մարմինների համակարգում Սահմանադրության մեջ նախ ամրագրվեցին Ազգային ժողովի ինստիտուտը կազմող նորմերը: Ազգային ժողովի կենտրոնական դերը պետական իշխանության համակարգում առանձնակի արդիականություն է հաղորդում այդ մարմնում կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդրին, ինչը խորհրդարանական կառավարման բոլոր մոդելների համար կարևորություն ունի: Այդպիսի կայունությունն Ազգային ժողովի կողմից իր գործառնությունների արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախապայման է: Բացի դրանից՝ խորհրդարանի կայունությունը պարտադիր նախապայման է գործադիր իշխանության ամբողջ⁴¹ համակարգի, ներառյալ՝ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության կայունության ապահովման համար: 2015թ. փոփոխված Սահմանադրության 89-րդ հոդվածի մի քանի նորարարական դրույթների նպատակը հենց Ազգային ժողովում կայուն մեծամասնության ձևավորումն էր: ՀՀ –ի փոփոխված Սահմանադրության մի շարք հոդվածներով նախատեսվում են Ազգային ժողովի կողմից օրենքների, որոշումների, հայտարարությունների և ուղերձների ընդունման տարբեր կարգեր: Ազգային ժողովի գործառնությունների արդյունավետ իրականացման համար կայուն մեծամասնությունը պետք է բաղկացած լինի պատգամավորների ընդհանուր թվի երեք հինգերորդից: Սակայն կարևոր է հաշվի առնել, որ սահմանադրական օրենքների ընդունման համար, ինչպես նաև առանձին բարձրագույն պաշտոններում նշանակման կամ սահմանադրական մարմինների կազմավորման համար ձայների որակյալ մեծամասնության սահմանումը ոչ թե ինքնանպատակ է, այլ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության միջոց: Ըստ Գ. Հարությունյանի՝ մինչև 2015 թ. սահմանադրական բարեփոխումները «օրգանական /սահմանադրական/ օրենքների ինստիտուտի բացակայությունը փոքրամասնությանը զրկել է օրենսդրական քաղաքականության վրա որևէ իրական ներազդեցությո-

⁴¹ Стів Шайо А. Самоограничение власти: краткий курс конституционализма. М., 2001, էջ 12, 112:

յունից»։ Հետևաբար, առավել ընդունելի է համարվում այնպիսի մեծամասնության առկայությունը, որը մի կողմից Ազգային ժողովին հնարավորություն է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառնությունները, իսկ մյուս կողմից սահմանադրական օրենքների ընդունման և սահմանադրական կարևորագույն մարմինների ձևավորման ժամանակ ստիպում է խորհրդարանական կայուն մեծամասնությանը հաշվի առնել նաև ընդդիմության դիրքորոշումները։

Կա նաև դրա բացասական կողմը, այն է՝ խորհրդարանական մեծամասնության ավելի մեծ «կայունությունը» կարող է հանգեցնել մեկ կուսակցության կամ խորհրդարանական մեծամասնություն կազմող մի քանի կուսակցությունների դիկտատուրայի հաստատման։

Խորհրդարանի՝ ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինը լինելու հանգամանքից են բխում Ազգային ժողովի մի շարք սահմանադրորեն ամրագրված նոր գործառնությունները։ Հիմնվելով տվյալ ընդհանուր տեսական դրությունների վրա՝ հնարավոր է առանձնացնել Ազգային ժողովի հիմնական գործառնությունների, ինչպես նաև դրանց իրականացման ապահովմանն ուղղված համապատասխան լիազորությունների համակարգերը։ Ազգային ժողովի հիմնական գործառնություններն են՝ ա) օրենսդիր իշխանության իրականացման գործառնությո՞ւնը, բ) գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառնությո՞ւնը, գ) ֆինանսական գործառնությո՞ւնը, դ) կազմակերպչական գործառնությո՞ւնը, ե) արտաքին գործառնությո՞ւնը։

Ազգային ժողովի օրենսդիր գործառնությո՞ւնը Խորհրդարանի կարևորագույն գործառնությո՞ւնն է։ Մասնավորապես, ըստ Գ. Դանիելյանի՝ «Խորհրդարանի ողջամիտ կարգավիճակը ենթադրում է, որպեսզի այն հիրավի դիտարկվի օրինաստեղծ գործունեության քաղաքականությունը որոշող և իրականացնող կառույց»։ Այդ գործառնությո՞ւնի իրականացման գործընթացը կարգավորող սահմանադրական նորմերում 2015թ. կատարվել են որոշակի փոփոխություններ. ա) օրենսդրական նախաձեռնության իրավունք է վերապահվել Ազգային ժողովի խմբակցություններին (հոդ. 109, մաս 1), ինչպես նաև ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստո՞ւն հազար քաղաքացիներին (հոդ. 109, մաս 6), բ) ներմուծվել է սահմանադրական օրենքների ինստիտուտը (հոդ. 103, մաս 2), գ) Ազգային ժողովի նախագահին իրավազորություն է վերապահվել՝ ստորագրելու և հրապարակելու

այն օրենքները, որոնք ըստ Սահմանադրական դատարանի որոշման՝ համապատասխանում են Սահմանադրությանը, սակայն հնգօրյա ժամկետում չեն ստորագրվում և չեն հրապարակվում Հանրապետության նախագահի կողմից⁴²:

Խորհրդարանական կառավարման ցանկացած մոդելի օբյեկտիվ բնութագրման համար առանցքային նշանակություն ունի խորհրդարանի՝ գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթի բազմակողմանի և խորը վերլուծությունը:

Խորհրդարանական վերահսկողությունը կարելի է բնորոշել որպես կառավարության կողմից վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրի նկատմամբ վերահսկողություն: Այլ կերպ ասած՝ խորհրդարանական կառավարման ձևում կառավարության ստեղծումն ու գոյատևումը կախված են խորհրդարանի վստահությունից: Խորհրդարանական վերահսկողության նպատակը կառավարության գործունեության թափանցիկության և պատասխանատվության բարձրացումն է: Արդյունավետ խորհրդարանական վերահսկողությունը կարող է նպաստել կառավարության կողմից իրականացվող ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև խորհրդարանի կողմից հաստատվելով՝ դրանց հաղորդել լեգիտիմության ավելի բարձր աստիճան: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու գործառույթը ուղղակիորեն ամրագրված է 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասում⁴³:

Խորհրդարանական վերահսկողության առավել հաճախ կիրառվող գործիքակազմը միտված է գործադիր իշխանության գործունեության վերաբերյալ պատշաճ և համակողմանի տեղակացվածությո-

⁴² Տե՛ս Հարությունյան Ա, Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ատենախոսություն, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2016 https://etd.nla.am/4403/1/Atenaxosutyun_Alexander_Harutyunyan.pdf:

⁴³ Տե՛ս Հարությունյան Ա, Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ատենախոսություն, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2016, https://etd.nla.am/4403/1/Atenaxosutyun_Alexander_Harutyunyan.pdf 15.11.2023:

յան ապահովմանը: Այս նպատակին են ուղղված մի շարք այնպիսի գործիքներ, ինչպիսիք են⁴⁴

- մշտական և ժամանակավոր հանձնաժողովները (Սահմանադրություն, հոդվածներ 106 և 107),
- պատգամավորների բանավոր և գրավոր հարցերը (Սահմանադրություն, հոդված 112),
- հարցապնդումները (Սահմանադրություն, հոդված 113), որոնք, կախված արդյունքից, կարող են հանգեցնել կառավարության առանձին անդամների պաշտոնավարման նպատակահարմարության հարցի բարձրացմանը կամ վարչապետին անվստահություն հայտնելուն,
- խորհրդարանական լուումները (ԱԺ կանոնակարգ, հոդված 125):

Գործադիր իշխանության արդյունավետության ընդհանուր վերահսկողությանն են ուղղված պետական բյուջեի ընդունումը և դրա կատարման նկատմամբ հետագա վերահսկողությունը (Սահմանադրություն, հոդված 88, մաս 3, և հոդված 111): Պատմականորեն խորհրդարանների ձևավորման առաջնահերթ նպատակներից է եղել գործադիրին ֆինանսական միջոցներ տրամադրելը և այդ միջոցների օգտագործման արդյունավետությունը վերահսկելը: Ընդհանուր վերահսկողությանն են ուղղված նաև կառավարության ծրագրի կատարման վերահսկողությունը, պետական մարմինների տարեկան զեկույցները (ԱԺ կանոնակարգ, հոդված 126-133): Օրենսդրական կարգավորման արդյունավետության հետագա վերահսկողությունը թույլ է տալիս գնահատել ընդունված օրենքների ազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա և շտկել թերությունները: Խորհրդարանը իր վերահսկողական գործառնությունները իրականացնելու համար ձևավորում է նաև կառավարության ազդեցությունից դուրս գտնվող անկախ մարմիններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Կենտրոնական բանկը: Այս մարմինները իրենց գործունեության

⁴⁴ Տե՛ս «Լույս հիմնադրամ», «Խորհրդարանական վերահսկողություն. գործիքակազմն ու մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում», էջ 9-13, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=210>, 09.11.2023:

մասին տարեկան հաղորդում ներկայացնելով Ազգային ժողով՝ հնարավորություն են տալիս վեր հանել և արդյունավետ կերպով վերահսկել գործադիր իշխանության գործունեությունը: Խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանն է նպաստում նաև հասարակությունից անմիջական հետադարձ կապ ստանալու հնարավորությունը:

Ինչպես արդեն նշվել է, 2015 թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունների կարևորագույն ուղղություններից է անցումը կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի: Այդպիսի անցման տեսական հիմք դարձան ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի մշակած և «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում տեղ գտած դրույթները կիսանախագահական կառավարման ձևի «անհաղթահարելի» թերությունների և խորհրդարանական կառավարման ձևի առավելությունների մասին: Միաժամանակ, այլ հեղինակներ ևս առավելություն են տալիս խորհրդարանական կառավարման ձևին՝ համարելով այն պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քան նախագահականը և կիսանախագահականը: Այս դրույթը հիմնավորելու համար նշում են խորհրդարանական կառավարման ձևի մի շարք առավելություններ և արձանագրում կառավարման այլ ձևերում այդ հատկանիշների բացակայության հանգամանքը:

Խորհրդարանական կառավարմանն անցնելու անհրաժեշտություններից է համարվել խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը, կուսակցությունների կողմից իրենց բուն գործունեության իրականացման, կառավարության կայունության ապահովումը: Ըստ ՀՀ նախագահի ներկայացուցիչ, սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Վարդան Պողոսյանի՝ խորհրդարանական կառավարման համակարգում մեծանում է կուսակցությունների դերը, և փոքրանում է այն վտանգը, որը կա կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգում, այսինքն՝ անձնավորված կամ գերանձնավորված քաղաքականության չեզոքացում: Խորհրդարանական կառավարման համակարգին անցում կատարելու դեպքում առավելություն է համարվում նաև կառավարության կայունության ապահովումը: Մասնավորապես նշվում է, որ եթե զարգացած երկրներն իրենց երկարատև խորհրդա-

րանական ավանդույթներով և ձևավորված կուսակցական համակարգով իրենց կարող են հաճախակի թույլ տալ կառավարությունների փոփոխություն, ապա Հայաստանի դեպքում դա կարող է խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Փորձելով խորհրդարանական կառավարման ձևով ստեղծել կայուն ժողովրդավարական համակարգ՝ մինևույն ժամանակ չի կարելի ընկնել մեկ այլ ծայրահեղության՝ այն է անարխիայի մեջ: Կառավարության կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք հաջողության են հասել միջազգային պրակտիկայում, որոնք ամրագրված են սահմանադրության մեջ՝ կոնստրուկտիվ անվստահության քվեն, վարչապետի ընդգծված ղեկավար դերը կառավարության մեջ, խորհրդարանի արձակման բարդեցումը: Կառավարության կայունությունն ու ժողովրդավարական կառավարման ապահովող կարևոր գործոն է անհրաժեշտության դեպքում նաև խորհրդարանի ընտրությունը երկու փուլով: Խորհրդարանական կառավարման ձևին անցնելու դեպքում հատկապես կարևոր նշանակություն ունեն նաև խորհրդարանի վերահսկողական լիազորությունների, խորհրդարանական փոքրամասնությունների, ինչպես նաև հանրապետության նախագահի գործառնությունների և ընտրության կարգի հիմնախնդիրները⁴⁵: Վարդան Պողոսյանը նշել է. «Խորհրդարանը ժողովրդավարական լեգիտիմություն է հաղորդում մնացած բոլոր պետական մարմիններին՝ մասնակցելով դրանց կազմավորմանը: Ազգային ժողովը, ըստ ներկայացված նախագծի, ունի գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության լուրջ և գործուն լծակներ»: Այդպիսով՝ պետական կառավարման ժամանակակից բոլոր ձևերին բնորոշ դրական և բացասական հատկանիշների առկայությունը հետազոտողների համար լայն հնարավորություններ է ստեղծում հիմնավորելու ցանկացած ձևի առավելությունները՝ շեշտադրելով համապատասխան ձևի դրական հատկանիշները:

Խորհրդարանական կառավարման ձևին անցնելիս հաճախ նաև հղում են կատարում Արևմտյան Եվրոպայի խորհրդարանական

⁴⁵Տե՛ս Կառավարման խորհրդարանական համակարգի առավելություններից է կայուն կառավարության ապահովումը. Վարդան Պողոսյան, <https://armenpress.am/arm/news/818697>, 21.11.2023:

դրական փորձին և Լատինական Ամերիկայի պետությունների անհաջող նախագահական փորձին: Թերևս նույն մեթոդաբանությամբ և նույն հաջողությամբ կարելի է հիմնավորել, որ հենց կիսանախագահական կառավարման ձևն է պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քանի որ այն ունի առավելություններ, որոնք խորհրդարանական կառավարման համակարգում բացակայում են: Օրինակ, կիսանախագահական կառավարման ձևն ունի ավելի բարձր կայունության աստիճան քաղաքական ոչ հասուն համակարգերի պայմաններում և ճգնաժամային իրավիճակներում: Ինչ վերաբերում է պատմական փորձին, ապա այն չափազանց բազմազան է: Մանավորապես, կարելի է հղում կատարել Գերմանիայի, հետպատերազմյան Ֆրանսիայի, Իտալիայի փորձին, որոնցում խորհրդարանական կառավարման համակարգը հանգեցրեց կա՛մ տոտալիտար ռեժիմի հաստատմանը (նացիստական Գերմանիա), կա՛մ կառավարական և խորհրդարանական երկարատև ճգնաժամերի⁴⁶:

Քանի որ կառավարման տարբեր ձևեր ի հայտ են եկել կոնկրետ պատմաքաղաքական պայմաններում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության հետևանքով, ապա յուրաքանչյուր կառավարման ձևի ժողովրդավարական ներուժը, իրավական պետության ձևավորման հիմնախնդրին համապատասխանության աստիճանը և արդյունավետությունը պայմանավորված են հենց այդ նույն գործոններով՝ քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության վիճակով, քաղաքական մշակույթի և հասարակության իրավագիտակցության զարգացածության մակարդակով և այլն:

1.3. Խորհրդարանական կառավարման պայմաններում իրավական անվտանգության ապահովումն ու քաղաքացիական վերահսկողությունն անվտանգության ոլորտի նկատմամբ

Քաղաքացիական վերահսկողություն, ընդհանուր առմամբ, հնարավոր է իրականացնել լիարժեք և գործուն ժողովրդավարության պայմաններում, որի համար անհրաժեշտ է ունենալ կայացած, նախաձեռնող և լավ կազմակերպված քաղաքացիական հասարա-

⁴⁶ Տե՛ս նույն տեղում:

կություն, որն էլ պետք է ունենա հասարակական լեզվափոխության բարձր մակարդակ, ներկայացուցականություն և համապատասխան փորձ: Միաժամանակ, անհրաժեշտ է պետական իշխանության մարմինների պատրաստակամությունը՝ նպաստելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացմանը, ինչպես նաև վերջիններիս դիտարկելու որպես վստահելի գործընկերներ, ովքեր իրենց նպաստն են բերում քաղաքական և օրինաստեղծ գործընթացին: Դրան հասնելու համար երկու կողմերից էլ պահանջվում է բարեփոխումներ իրականացնել և կատարելագործել համագործակցության ձևերը՝ ապահովելու ազգային անվտանգությունը, այդ թվում՝ իրավական անվտանգությունը: Այս համատեքստում, անհրաժեշտություն է առաջանում դիտարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների միջև համագործակցության իրավական և ինստիտուցիոնալ հնարավորությունները Հայաստանում՝ ուղղված օրինաստեղծ գործունեությանը, որոշումների նախապատրաստման և վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը՝ դրանով իսկ նպաստելով պառլամենտարիզմի զարգացմանը:

Քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունը բավականին բարդ հարց է, որը որոշակի լարում է պարունակում, ինչն ակնհայտ կամ լատենտ առկա է նույնիսկ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում ձևավորված համագործակցային հարաբերություններում⁴⁷: Լարումը բխում է հենց այս կառույցների էությունից, հանդիսանում այդ հարաբերությունների որոշիչ հատկանիշը, քանի որ փոխադարձ վերահսկողություն և սահմանափակում է ենթադրում:

Պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունն ուսումնասիրողների մի մասն իր հայեցակարգերը ձևավորում է՝ հիմք ընդունելով Ա. Թոքվիլի, Ռ. Պատնեմի և այլ գիտնականների դիրքորոշումները: Իրենց աշխատություններում նրանք ելնում են այն բանից, որ քաղաքացիական հասարակության հիմքն անձն է,

⁴⁷ Stéu Anjum T. “From Confrontation to Collaboration: Contemporary Discourse on the State-Civil Society Relational Models”, Journal of Political Studies, p. 95 : <http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue-pdf/State%20Relational%20Models.pdf>

որը, հանդիսանալով այս կամ այն խմբի մասը, իր բազմակողմ պահանջմունքները բավարարում է, իրավունքները պաշտպանում է այդ միավորումների, ասոցիացիաների և այլ տիպի կազմակերպությունների միջոցով: Դրա համար քաղաքացիական հասարակությունը հնարավորություն է ստանում ազդել պետության ներսում ժողովրդավարական նորմերի կայացման և տարածման վրա: Նման հասարակության գործունեությունը հիմնված է այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսին է վստահությունը, համագործակցությունը, հանդուրժողականությունը, հանրային փոխօգնությունը և այլն, որոնց ամբողջությունը հանդիսանում է «սոցիալական կապիտալ»՝ նպաստելով անվտանգ և զարգացած ժողովրդավարական պետության կայացմանը:

Պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերության մոդելներին անդրադարձել են մի շարք տեսաբաններ: Սունգուրովն առանձնացրել է պետություն–քաղաքացիական հասարակություն փոխհարաբերության 4 մոդել՝ կախված այս երկու դերակատարների քաղաքականությունների նպատակների ու միջոցների համընկնումից կամ հակառակը.

- համագործակցություն (cooperation – նման նպատակներ, նման միջոցներ),
- բախում (confrontation – տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ),
- փոխլրացում (complementarity – նման նպատակներ, տարբերվող միջոցներ)
- կոոպտացիա (co-optation – տարբերվող նպատակներ և նման միջոցներ)⁴⁸:

Առանձնացվում է նաև էտատիստական մոդելը՝ համաձայն որի քաղաքացիական հասարակությունը, չնայած ֆորմալ կերպով առանձին է պետությունից, սակայն իրականում ենթարկվում է նրան: Մինչդեռ լիբերալ դեմոկրատական մոդելի դեպքում քաղաքացիական հասարակությունն անկախ է պետությունից (մինչև որոշակի սահման) և որոշ ոլորտներում նրա նկատմամբ առաջնահերթություն ու-

⁴⁸ Сунгуров А. “Модели взаимодействия структур гражданского общества и органов власти: российский опыт”, В сб. Модернизация экономики и глобализации/ Отв.ред. Е.Г.Ясин. В 3-х кн. Книга 3. - М., Изд.дом ГУ-ВШЭ, 2009, с. 503:

նի: Այս մոդելում պետությունն ստեղծում է բավականին լայն իրավական դաշտ, որը պաշտպանում է այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք արտահայտում են քաղաքացիական հասարակության կարծիքը, ինչպես նաև առանձին անհատների կամ արտահայտման համար պայմաններ է ստեղծում:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ պետության և քաղաքացիական հասարակության հարաբերությունները կարող են կառուցվել տարբեր հարթություններում: Այսպես, որոշակի գործոններով պայմանավորված՝ քաղաքացիական հասարակությունը և պետությունը միմյանց հակադիր ինստիտուտներ են, և այս դեպքում պետությունն օտարված է բնակչության մեծամասնության մասնավոր շահերից, ավելին՝ խիստ վերահսկողություն է իրականացնում և նույնիսկ ճնշում է գործադրում դրանց նկատմամբ: Իր հերթին, քաղաքացիական հասարակությունը թշնամաբար է տրամադրված պետության և նրա ինստիտուտների նկատմամբ՝ պատրաստ լինելով դրանք վերափոխել հեղափոխական ճանապարհով, ինչը կարող է խաթկել երկրի անվտանգությունը: Այնինչ, ժողովրդավարության պայմաններում քաղաքացիական հասարակությունը և պետությունը ներդաշնակ կերպով համագոյակցում են, այսինքն՝ պետությունն արտահայտում է բնակչության մեծամասնության շահերը, իսկ քաղաքացիական հասարակությունը, որպես կանոն, բոլոր հարցերում աջակցում է պետությանը: Մեկ այլ ձևաչափ է այն, որ քաղաքացիական հասարակությունը և պետությունը գտնվում են մշտապես փոփոխվող կոնֆլիկտային և ներդաշնակ համագոյակցման պայմաններում:

Այնուամենայնիվ, ցանկացած մոդել ենթադրում է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է կանխարգելիչ ուժ լինի, որը պետության հետ ակտիվ համագործակցության արդյունքում պաշտպանում է քաղաքացիների իրավունքներն ու շահերը՝ ապահովելով անհատի անվտանգությունը, որը ենթադրում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը և պահանջմունքների բավարարումը:

Քաղաքացիական հասարակության դերը հնարավոր է ձևակերպել նաև՝ որպես գոյություն ունեցող և մշտապես ձևավորող տարբեր մակարդակի հասարակական կառույցների ամբողջություն, որն իրականացնում է ընդհանուր քաղաքացիական և իրավական անվտան-

գության գործառնություն, որոնց դերը որոշվում է մի շարք այլ գործառնությունների իրականացման հնարավորությամբ:

Իրավական անվտանգության գործառնության իրականացման համատեքստում ուշադրության է արժանի այն, որ ՀՀ-ն չունի իրավական անվտանգության հայեցակարգ՝ չնայած վերջինիս սահմանադրաիրավական երաշխիքներն ամրագրված են ՀՀ, իսկ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում իրավական անվտանգության հիմնախնդիրը Սահմանադրության մեջ արտացոլում ստացավ մի շարք ուղղություններով, որի հիմնական նպատակը պայմանավորված էր իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը նախատեսելու և կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու, հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից: Մասնավորապես, Սահմանադրությամբ ամրագրվում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման պահանջը (հոդված 4), այն, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, իսկ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը առանձնացվում են որպես հանրային իշխանության պարտականություններ (հոդված 3)⁴⁹:

Իրավական անվտանգության հիմնահարցերը քննարկման առարկա են դարձել նաև մասնագիտական գրականության մեջ: Հաճախ շեշտադրվում է, որ «անվտանգություն» հասկացությունը ունի լայն բովանդակություն, և այն ենթադրում է անվտանգության բոլոր բաղկացուցիչ մասերի սերտ համագործակցություն, իսկ իրավական անվտանգությունը անվտանգության որոշիչ, ինքնուրույն տեսակ է⁵⁰:

Իրավական անվտանգությունը ենթադրում է անձի, հասարակության և պետության սահմանադրական և օրինական շահերի

⁴⁹ Տե՛ս ՀՀ իրավական անվտանգության հայեցակարգի նախագիծ /տեղադրված 2017թ.-ին/, <https://www.e-draft.am/projects/259/about>, հասանելի 15.10.2023:

⁵⁰ Տե՛ս Шабуров А.С. "Правовая безопасность в системе национальной безопасности." Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Право 15, N^o. 3, 2015, էջ 24, էջ 28:

պաշտպանվածությունը՝ իրավական կարգավորման միջոցով: Ընդ որում, լայն իմաստով իրավական անվտանգությունը իր մեջ ներառում է համապատասխան վտանգներից իրավական համակարգի, օրենսդրության և իրավունքի պաշտպանվածությունը, իսկ նեղ իմաստով՝ իրավաստեղծ գործունեության ընթացքում իրավական սպառնալիքների բացառումը⁵¹:

Մասնագիտական գրականության «իրավական անվտանգություն»-ը մի դեպքում ներկայացվում է որպես ներքին և արտաքին սպառնալիքներից անհատի, հասարակության և պետության կենսական կարևոր շահերի (քաղաքական, տնտեսական, հոգեբանական-բարոյական, տեղեկատվական, բնապահպանական, սոցիալական և այլն) իրավական միջոցներով պաշտպանվածության վիճակ: Մեկ այլ դեպքում այն բնորոշվում է որպես անհատի իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության, նրա բնականոն կենսագործունեության՝ օրենքով սահմանված իրավական երաշխիքների համակարգ:

Լայն իմաստով իրավական անվտանգությունը դիտարկվում է որպես իրավունքի սուբյեկտների (անհատ, պետություն, հասարակություն) կենսականորեն կարևոր շահերի իրավական պաշտպանվածության (ապահովվածության, երաշխավորվածության) վիճակ, սուբյեկտիվ և օբյեկտիվ բնույթ կրող ներքին և արտաքին սպառնալիքներին իրավական միջոցներով դիմակայելու և խախտված շահերի ու իրավունքների վերականգնման հնարավորություն:

Նեղ իմաստով իրավական անվտանգությունը բուն իրավական համակարգի ներքին պաշտպանվածության, կայունության երաշխավորումն է: Իրավական անվտանգության խնդիրն է ոչ միայն պաշտպանել սուբյեկտիվ շահերը, նվազեցնել, կանխարգելել, վերացնել վտանգներն ու սպառնալիքները, այլ նաև երաշխավորել առաջընթաց զարգացում:

Իրավական անվտանգությունը կարևորվում է նաև սուբյեկտների խախտված շահերի վերականգնման գործունե կառուցակարգերի առկայությամբ: Իրավական անվտանգությունը առաջին հերթին ենթադրում է իրավական որոշումների կանխատեսելիություն, որը վե-

⁵¹ Ст'ю Галузин, А.Ф. "Правовая безопасность как самостоятельный вид безопасности." Право и политика 2, 2008, <http://www.center-bereg.ru/m2964.html>:

րաբերում է թե ողջ իրավական համակարգին, թե առանձին բաղադրիչներին⁵²:

Ուսումնասիրության հիման վրա կարելի է փաստել, որ իրավական անվտանգության ոլորտում քաղաքացիական հասարակության նպատակը ոչ միայն քաղաքացիների շահերի և պահանջմունքների արտահայտումն ու նրանց միավորումն է, այլ նաև պետության կողմից դրանց բավարարման հասնելը: Եվ քանի որ քաղաքացիական հասարակությունը հանդես է գալիս՝ որպես անձի իրավունքների և ազատությունների երաշխավոր, այն ստիպում է պետությանն իր իշխանական գործունեության մեջ մշտապես շտկումներ իրականացնել, ինչպես նաև պետությանը թույլ չի տալիս մենաշնորհայնացնել կառավարչական գործառնությունը: Քաղաքացիական հասարակությունը զսպում է այդ գործառնության ծայրահեղ կենտրոնացման և բյուրոկրատացման միտումը: Նման գործողությունը կարևոր է այնտեղ, որտեղ պետության իշխանական գործառնությունը դուրս են գալիս անհրաժեշտ նպատակահարմարության սահմաններից, վերածվում են աղմինիստրատիվ նկրտումների և սկսում են ակնհայտ սահմանափակել քաղաքացիների իրավունքները, որն էլ բացասական ազդեցություն է ունենում նրանց անձնական անվտանգության վրա:

Այսպիսով, ժողովրդավարության պայմաններում քաղաքացիական հասարակության գործառնություններից կարելի է առանձնացնել սոցիալական վտանգների, կոնֆլիկտների, ճգնաժամային իրավիճակների և սպառնալիքների առաջացման նախագուշացումը, քաղաքացիների և կազմակերպությունների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, հասարակական կարծիքի ձևավորումը և դրա վրա ազդեցությունը, պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, իր անդամների մոբիլիզացումը՝ անվտանգության ոլորտում խնդիրների լուծման գործընթացի վրա ազդելու համար, քաղաքացիական գիտակցության զարգացումը, սոցիալական համերաշխության և համաձայնության հաստատումը, քաղաքացի-

⁵² Տե՛ս Գ.Հարությունյան, Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական

<http://www.concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan-02-2017.pdf>:

ների քաղաքական ակտիվության և իրավական մշակույթի բարձրացումը, ընտրությունների կազմակերպման և իրականացման վրա հասարակական վերահսկողության զարգացումը: Բացի այդ, քաղաքացիական հասարակությունն ազդում է պետական քաղաքականության իրականացման և որոշումների կայացման վրա:

Ինչպես արդեն նշվել է, որ չափազանց կարևոր է քաղաքացիական հասարակության վերահսկողական գործառույթը, որն ուղղակիորեն ազդում է պառլամենտարիզմի զարգացման վրա: Քաղաքացիական հասարակությունը բազմաթիվ միջոցներով վերահսկողություն է իրականացնում պետության գործունեության նկատմամբ՝ դրանով իսկ կատարելով այն մեխանիզմի դերը, որն ապահովում է հասարակության և պետության ուժերի միջև հավասարակշռությունը: Քաղաքացիական հասարակությունը «զսպումների» և «հակակշիռների» համակարգում կարևոր և գործուն ինստիտուտներից մեկն է քաղաքական իշխանության՝ բացարձակ տիրապետության ձգտման ճանապարհին: Այդ առաքելությունն իրականացնելու համար կան որոշակի միջոցներ՝ ընտրական գործընթացներին և հանրաքվեներին ակտիվ մասնակցությունը, հասարակական կարծիքի ձևավորման մեծ հնարավորությունները, զանգվածային լրատվամիջոցներով հասարակական կարծիքի ձևավորումը և այլն:

Ընդհանուր համագործակցության, երկխոսության, համաձայնողական խորհրդատվությունների միջոցով քաղաքացիական հասարակությունը ստեղծում և աջակցում է ամբողջ սոցիալական համակարգի ներքին հավասարակշռությանը: Իդեալական ձևում սոցիալական սուբյեկտների՝ անձի, պետության և քաղաքացիական հասարակության միջև պետք է լինի քաղաքակիրթ հարաբերությունների եռամիասնություն: Արդյունքում պետությունն ու անձը, որոնք ի սկզբանե թվում են անհամատեղելի սոցիալական միավորներ, զարգացած քաղաքացիական հասարակության պայմաններում դառնում են մեկ արժեքավոր մեծություն: Իսկ դա, իր հերթին, նպաստում է ազգային անվտանգության համակարգի ամրապնդմանը:

Այսպիսով, քաղաքացիական հասարակությունը միանշանակ ազդում է ինչպես առանձին անհատի, այնպես էլ ամբողջ պետության անվտանգության վրա: Ժամանակակից աշխարհում այն հանդիսանում է անվտանգության սուբյեկտ և իր շուրջը ձևավորում նոր սոցիալ-քաղաքական տարածություն՝ պաշտպանելով իր շահերն ու

պահանջմունքները: Եթե պետության և քաղաքացիական հասարակության համագործակցությունը խախտված է և չունի հստակ իրավական մեխանիզմ, իսկ նրանց հակասությունը չի լուծվում ժողովրդավարական ինստիտուտների միջոցով, ապա իրավիճակը դուրս է գալիս իրավական դաշտի շրջանակներից, և ելք են հանդիսանում բռնի ակցիաները: Դրա հետ մեկտեղ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության և պետության գործընկերային համագործակցության մոդելի և ժողովրդավարական մեխանիզմների մշակումը կարող են արդյունավետ լուծել ազգային անվտանգության խնդիրներն անհատների և քաղաքացիների տարբեր ձևերի ինքնակազմակերպվող համակարգի միջոցով:

Խորհրդադարանական կառավարման համատեքստում ուշադրության է արժանի օրինաստեղծ գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության վերաբերյալ ուսումնասիրությունը, որը ցույց է տալիս, որ վերջին տարիներին մեծացել է այդ հնարավորությունը, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես, ՀՀ գործող սահմանադրությամբ «Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը»⁵³, ինչպես նաև նշված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք⁵⁴: Այնինչ 2015թ. ՀՀ սահմանադրության փոփոխված տարբերակով «Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք ունի ընտրական իրավունք ունեցող առնվազն հիստուն հազար քաղաքացի»⁵⁵, ինչը մեծացնում է ժողովրդի մասնակցությունն ու ազդեցությունը օրենսդիր գործընթացի վրա: Հանրությունն առաջին անգամ օգտագործել է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունքը «ՀայաՔվե» նախաձեռնության միջո-

⁵³ Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հոդ. 75, <http://www.president.am/hy/constitution/>:

⁵⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրություն, հոդ. 27 կետ 1, <http://www.president.am/hy/constitution/>:

⁵⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագիծ, հոդ 109 կետ 4:

ցով 2023թ.: «Հայաքվե» նախաձեռնության էությունը կայանում է նրանում, որ այն փաստացի Արցախի ինքնորոշման մեթոդը քրեականացնող օրենքի նախագիծ է, որը կյանքի է կոչվելու Հայաստանի քաղաքացիների կամարտահայտության միջոցով: Դրանով ծանր պատիժ է նախատեսվում Հայաստանի Հանրապետության անունից Արցախին Ադրբեջանի մաս ճանաչող և Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնող գործողությունների համար: Նախաձեռնողները հիմք են ընդունում ՀՀ Անկախության հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ Գերագույն Խորհրդի՝ 1992թ. հուլիսի 8-ի որոշումը⁵⁶:

Վերջին տարիներին Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպություն – Ազգային ժողով համագործակցությունը և հանրային խորհրդակցությունները հիմնականում համակարգվում են գործող հուշագրերով, ժամանակավոր նախաձեռնություններով, մշտական հանձնաժողովների միջոցով:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություն-ԱԺ փոխհարաբերության մեկ այլ ձևաչափ է հանդիսանում խորհրդարանի մշտական հանձնաժողովների միջոցով գործելակերպը: Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կանոնակարգերի⁵⁷ ուսումնասիրությունը թույլ է տալիս նշել, որ չնայած որոշ թեթև տարբերություններին, հանձնաժողովներն ունեն քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցության և խորհրդակցության միատեսակ գործելաոճ: Հարկ է նշել, որ այդ կանոնակարգերում ևս չի նշվում այն անձանց կամ կազմակերպությունների ցանկը, ովքեր կարող են մասնակցել հանձնաժողովի նիստերին:

Ինչ վերաբերում է խորհրդարանական լուսմներին, ապա այն ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների և քաղաքացիական հասարակության համագործակցության ամենատարածված ձևն է: Ըստ ՀՀ ԱԺ կանոնակարգի՝ հանձնաժողովները յուրաքանչյուր հերթական նստաշրջանում առնվազն մեկ անգամ կազմակերպում են խորհրդա-

⁵⁶ Տե՛ս ՈՐԾ Է «ՀԱՅԱՔՎԵ» ՆԱԽԱԶՆԵՈՒՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, «Հրապարակ օրաթերթ» <https://hraparak.am/post/6dee043123d3b4ae4f667df832e18a6b>, հասանելի 10.11.2023:

⁵⁷ Տե՛ս «Քաղաքացիական հասարակությունը և համագործակցությունը պետական կառույցների հետ» խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012, էջ38:

րանական խումներ: Անդրադառնալով խորհրդարանական խումներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավվածության ու անվտանգության ոլորտի հարցերի քննարկման ընթացքում մասնակցության մեխանիզմին՝ հարկ է նշել, որ այս միջոցառման մասին տեղեկացվում է զանգվածային լրատվամիջոցներին⁵⁸ և քանի որ լրացուցիչ աշխատանք չի իրականացվում որոշակի, այդ թվում անվտանգության տարբեր ասպեկտներին վերաբերող օրենքների նախագծերի քննարկման ընթացքում տվյալ ոլորտում գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ կապ հաստատելու ուղղությամբ, վերջիններիս մասնակցությունը նիստերին կախված է հանձնաժողովի նախագահից և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնողականությունից: Ավելին, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին նիստին և որոշակի օրենքի նախագծի քննարկմանը մասնակցելու հնարավորություն տրամադրվում է, եթե նրանք նախատեսում են առաջարկություններով հանդես գալ նախագծի վերաբերյալ: Ինչ վերաբերում է հանրային խումներին, ապա դրանց մասնակցելու համար կարող է դիմել ցանկացած շահագրգիռ անձ: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այն ներկայացուցիչները, որոնք մասնակցում են հանդիպումներին կամ խումներին, մեխանիզմներ չունեն իրենց մասնակցության արդյունքը պարզելու համար⁵⁹: Այսինքն, սահմանափակումներ չեն դրվում, սակայն նախաձեռնողականություն չի ցուցաբերվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ներգրավելու համար, իսկ մասնակցության դեպքում էլ բացակայում է հետադարձ կապի ապահովումը: Այս խնդիրները կարող են բացասական ազդեցություն ունենալ խորհրդարանի նկատմամբ հանրության վստահության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հեղինակության վրա:

⁵⁸Տե՛ս ՀՀ ԱԺ կանոնակարգ, հոդ. 32 կետ1, 2, <http://www.parliament.am/parliament.php?id=bylaw#4>:

⁵⁹Տե՛ս Մարգարյան Տ., Հակոբյան Ա. «ԲՀ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ», Երևան, 2015, էջ 46-48:

Քաղաքացիական վերահսկողության համատեքստում ուշադրության է արժանի 2020թ. փետրվարի 27-ին մեկնարկած ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի՝ ԵԱՀԿ աջակցությամբ ստեղծված Անվտանգության ոլորտի ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի աշխատանքը, որին մասնակցել են պատգամավորներ, պետական գերատեսչությունների, ՀՀ-ում դիվանագիտական առաքելությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հարթակի ստեղծման շուրջ ինտենսիվ աշխատանքները սկսվել են 2019թ-ից: Հարթակի ստեղծումը հիմնվել է Հայաստանի՝ բարեփոխումներ իրականացնելու պարտավորությունների վրա՝ որպես բարձր հարթակ փորձարկելու ժողովրդավարական կառավարման նորարական մոտեցումն անվտանգության ոլորտում: Հարթակի հետաքրքրության հիմնական ուղղություններն են՝ մարդու իրավունքներն ու բանակը, համագգեստով քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, ոստիկանության կողմից ուժի/ բռնության կիրառման նկատմամբ վերահսկողությունը, տեղեկատվության մատչելիությունը, տեղեկատվության ազատությունն ու գաղտնիությունը, անվտանգության ոլորտի ներսում ներքին վերահսկողության մեխանիզմները, պայքարը կոռուպցիայի դեմ, արդարադատության մատչելիությունը: Հարթակը, համախմբելով քաղաքացիական հասարակությանը, խորհրդարանականներին և անվտանգության ոլորտում հանրային ծառայություն մատուցողներին մի սեղանի շուրջ, միտված էր՝ նպաստելու ինչպես քաղաքացիական, այնպես էլ խորհրդարանական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը՝ ապահովելով համապարփակ և պահանջված բարեփոխումների իրականացում անվտանգության ոլորտում: Աշխատանքների ընթացքում բարձրացված հարցերը քննարկվել են խորհրդարանում՝ լսումների, հարցապնդումների և օրենսդրական նոր կարգավորումների տեսքով: Հարթակի հետևողական քննարկումներն ու աշխատանքային հանդիպումների արդյունքը պետք է լինեի օրենսդրական բարեփոխումները, անվտանգության համակարգում հաշվետվողականության բարձրացումը: Հարթակի գործունեությանն աջակցել է նաև ԵԱՀԿ-ն: ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների գրասենյակի մարդու իրավունքների բաժնի ղեկավար Ջենիֆեր Քրոֆթը հարթակի

ստեղծումը համարել է պատմական ոչ միայն Հայաստանի, այլ նաև ԵԱՀԿ ողջ տարածաշրջանի համար⁶⁰:

Այսպիսով, ժողովրդավարական վերահսկողությունն անվտանգության ինստիտուտների հանդեպ բարձրացնում է այդ կառույցների արդյունավետությունը և կարողությունները:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտությունը, համաձայն որի՝ ՀՀ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո⁶¹:

Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օգնությամբ է քաղաքացիական հասարակությունն իր ներգրավվածությունն ապահովում անվտանգության ոլորտի նկատմամբ: Ոլորտի առանձնահատկությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր երկրում այդ հարաբերությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով տվյալ երկրի պատմական փորձը, ժողովրդավարության ավանդույթները, քաղաքական համակարգը, քաղաքացիական հասարակության զարգացվածության աստիճանը և այլ գործոններ:

ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի շարունակական բարելավումը և պաշտպանական ներուժը արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին համապատասխանեցնելը պաշտպանության ոլորտում գործունեության գերակա ուղղություն է:

Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ ամենալայն տարածում գտած և ազդեցիկ հայեցակարգը մշակել է Ս. Հանթինգթոնը: Նա քաղաքացիական վերահսկողությունը դիտարկում է երկու՝ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության և օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության տեսանկյուններից⁶²: Սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը հիմնվում է քաղաքացիական իշխանության ուժեղացման հաշ-

⁶⁰ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=12731&year=2020&month=2&day=27:

⁶¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով 06.12.2015), հոդված 8.2:

⁶² Տե՛ս Сэмюэль. П. Хантингтон “Вооруженные силы и демократия: реформирование военно-гражданских отношений”, “Русский журнал”, 29/04/1999, http://old.russ.ru/ist_sovr/99-04-29/hantin.htm:

վին զինվորական իշխանությունը նվազագույնի հասցնելու, իսկ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը՝ ռազմական պրոֆեսիոնալիզմն առավելագույնի հասցնելով նույն նպատակին հասնելու սկզբունքների վրա: Հանտինգտոնի տեսության մեջ գերակայությունը տրվում է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությանը, քանի որ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դեպքում զինվորականի նկատմամբ քաղաքացիական իշխանության մեծացումը նշանակում է ոչ թե ամբողջ քաղաքացիական հասարակության, այլ առանձին քաղաքացիական խմբի կամ խմբերի իշխանության մեծացում, մինչդեռ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունն արդյունքի է հասնում՝ զինվորականների գործունեությունը սահմանափակելով մասնագիտական շրջանակում, նրանց դարձնելով գուտ պրոֆեսիոնալներ, որպեսզի հեռու մնան քաղաքական խնդիրներին և քաղաքական որոշումների ընդունմանը միջամտելուց, քանի դեռ պետությունը չունի քաղաքականության մեջ նրանց մասնակցության ակտիվացման կարիքը: Հանտինգտոնն սպայական կազմի պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացումը համարում է զինված ուժերի նկատմամբ արդյունավետ քաղաքացիական վերահսկողության հիմնական միջոց:

Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մեկ այլ տեսաբան՝ Մ. Յանովիչը, Հանթինգթոնի տեսության հակառակորդն է, սակայն խնդրին վերաբերող նրանց տեսանկյունները որոշ առումներով համընկնում են: Նա նույնպես առանցքային է համարում սպայական կազմի և արհեստավարժության հասկացությունը, սակայն շատ ավելի մեծ կարևորություն է տալիս պատմաքաղաքական զարգացումներին և խնդիրը դիտարկում է սառը պատերազմի պրիզմայով, երբ միջուկային դարաշրջանի սպառնալիքները հարկադրում էին զինվորականներին՝ ստանձնելու իրենց ոչ հատուկ նոր դերեր, ինչը ենթադրում էր ազգային անվտանգության խնդիրների շուրջ համախմբում քաղաքացիական գործադիր ճյուղի ներքո: Այսինքն, Յանովիչի հայեցակարգը հիմնված է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միջոցների և մակարդակների ընդլայման վրա և առաջարկում է քաղաքացիական վերահսկողության երեք հիմնական մեխանիզմներ՝ բյուջետային գործընթաց, ուժերի ու

առաքելությունների հատկացում և արտաքին քաղաքականության խնդիրներին վերաբերող խորհրդատվություն Նախագահին⁶³:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ոլորտի շատ մասնագետներ, դիտարկելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պրոբլեմը, այն համարում են գործադիրի նկատմամբ պետական քաղաքական վերահսկողության խնդիր, ոմանք՝ խորհրդարանական վերահսկողության, և միայն շատ քչերն են կարծում, որ դա ամբողջ հասարակության խնդիրն է: Այնուամենայնիվ, այդ հարցի պատասխանը կախված է պետական հաստատությունների կայացածության և հասարակության ժողովրդավարացման ու իրավագիտակցության աստիճանից: Որքան բարձր է այդ աստիճանը, այնքան հասարակության ավելի ստվար շերտերն են մասնակցում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությանը:

Քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է զինված ուժերի նկատմամբ, մի կողմից, ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների ու նրանց նշանակած պաշտոնատար անձանց (այսպես կոչված «պետական-քաղաքական վերահսկողություն»), մյուս կողմից՝ հասարակական կառույցների՝ միավորումների, իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների, անհատ քաղաքացիների վերահսկողությունը⁶⁴: Դրանք կոչվում են զինված ուժերի նկատմամբ, համապատասխանաբար, քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն և քաղաքացիական հասարակական վերահսկողություն: Այս դեպքում կարևոր դեր ունի խորհրդարանը՝ որպես հանրության կողմից ուղիղ մանդատ ստացած կառույց:

Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողության ինստիտուտներ են հանդիսանում քաղաքացիական հասարակության կառույցները: Եվ հիմք ընդունելով այն սահմանումը, համաձայն որի՝ քաղաքացիական հասարակությունը դիտարկվում է որպես պետությունից համեմատաբար մեկուսի կամա-

⁶³Տե՛ս Ավետիսյան Ա. «Ժողովրդավարությունն ու Չինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը», Երևան, 2013, էջ 140-142:

⁶⁴Տե՛ս Գալկո Մ. “Гражданский контроль над вооруженными силами России”, Обзоратель. 1-2007, с.16

http://observer.materik.ru/observer/N1_2007/014_021.pdf:

վոր ընկերակցությունների համախումբ, որոնք գործում են ինքնագործունեության հիմունքներով, կարելի է ասել, որ զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության ինստիտուտներ են համարվում հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվամիջոցները, քաղաքացիների հասարակական նախաձեռնությունները, քաղաքացիական ոչ կառավարական միավորումները, ինչպես նաև անհատ քաղաքացիները:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության պարագայում զինված ուժերի նկատմամբ վերահսկողության արդյունավետ միջոց կարող է լինել այդ գործընթացում նաև քաղաքացիների (անհատ անձանց) ներգրավվածությունը: Չնայած քաղաքացիներն իրենց ընդհանուր սահմանադրական իրավունքներն իրականացնելիս ակամա հանդես են գալիս քաղաքացիական վերահսկողության իրականացնող սուբյեկտի դերում, բայց որոշ երկրներում սահմանվում են անմիջական վերահսկողության այլ մեխանիզմներ: Օրինակ՝ Լատվիայի ՉՈՒ-ի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության շրջանակներում քաղաքացիները համապատասխան կարգով իրավունք ունեն այցելելու գորամասեր՝ ծանոթանալու զինծառայողների կյանքի պայմաններին⁶⁵:

ՀՀ քաղաքացիները զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնց անդամն են հանդիսանում, ներկայացուցչական մարմինների պատգամավորների միջոցով, ինչպես նաև անմիջականորեն՝ դիմելով Մարդու իրավունքների պաշտպանին և այլ պետական մարմիններին, այդ թվում զինված ուժերին՝ ստանալու ցանկացած տեղեկատվություն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Գործունեության թափանցիկությունը նպաստում է հանրային կառավարման մարմինների նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը, իսկ հասարակության մեջ բանակի նկատմամբ

⁶⁵St' u Edmunds T., Cottey A., Forste A. "Civil-Military Relations in Post-Communist Europe: Reviewing the Transition", USA, 2006, p. 52:

վստահությունը այդ ինստիտուտի գործունեության արդյունավետության չափանիշներից է⁶⁶:

ՊՆ գործունեության թափանցիկությունը նպաստում է Չինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարման և պաշտպանական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը, միջանձնային հարաբերություններում արդարության սկզբունքի պահպանմանը, հետևաբար, նաև Չինված ուժերում կարգապահության ամրապնդմանը: Իր հերթին, կարգապահության ամրապնդումը ոչ միայն մեծացնում է բանակի նկատմամբ հասարակության վստահությունը, այլև կանխում կամ առնվազն սահմանափակում է հասարակությունից արատավոր երևույթների ներթափանցումը բանակ: Հիմնվելով այդ վստահության վրա՝ ՊՆ ղեկավարությունը կարող է ավելի արդյունավետորեն բարեփոխել համակարգը և այնտեղ ներբերել Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ավելի գործուն մեխանիզմներ, ինչն ի վերջո կրկնապատկելու է ՊՆ գործունեության թափանցիկության աստիճանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Չինված ուժերում կոռուպցիոն երևույթների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, դրանց դեմ ձեռնարկվող միջոցառումների, կարգապահական խախտումների դեմ պայքարի վերաբերյալ հենց ՊՆ նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակումը նպաստում է բանակի նկատմամբ հասարակության վստահության մեծացմանը: Այդ պատճառով ՀՀ Չինված ուժերում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ ՀՀ ՊՆ-ի կողմից տրամադրվող տեղեկատվությունը պետք է հնարավորինս մատչելի լինի: Իր հերթին, այդ տեղեկատվությունն ավելի մեծ հնարավորություն կընձեռի Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի արդյունավետ վերահսկման համար:

Այս համատեքստում կարևորվում է Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը, որը քաղաքացիական վերահսկողության օղակներից է: Տարբեր երկրներում այն ունի տարբեր անվանումներ. Սկանդինավյան պետություններում այն կոչվում

⁶⁶Տե՛ս Աթանեսյան Ա. «Բանակի և զինձառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում», Երևան, 2013, էջ 277:

է «օմբուդսմեն», Իսպանիայում և Կոլումբիայում՝ «ազգային պաշտպան», Ֆրանսիայում՝ «միջնորդ» և այլն⁶⁷: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը վաղուց իր ուրույն տեղն ունի կայուն ժողովրդավարությամբ մի շարք երկրների իրավական համակարգերում: Փաստաբանների միջազգային ասոցիացիան ընդունել է «օմբուդսմեն» հասկացության հետևյալ սահմանումը. «Սահմանադրությամբ կամ օրենսդիր իշխանության ակտով նախատեսված, խորհրդարանին հաշվետու բարձրաստիճան հասարակական պաշտոնատար անձի կողմից ղեկավարվող ծառայություն, որը տուժած անձանցից ընդունում է պետական մարմինների, ծառայողների, գործատուների դեմ ուղղված դիմում-բողոքներ կամ գործում է սեփական նախաձեռնությամբ և իրավասու է հետաքննություն իրականացնելու, առաջարկելու ուղղորդվող քայլեր և ներկայացնելու գեկույցներ»⁶⁸:

Որոշ երկրներ զարգացրել են մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ ստեղծելով զինվորական օմբուդսմենի հաստատություն: Չինվորական օմբուդսմենի հաստատությունը գործում է նաև Գերմանիայում (այլ անվանմամբ), Նիդերլանդներում, Չեխիայում, Նորվեգիայում և այլ երկրներում, ում գործունեության հիմնական առանձնահատկություններն են՝ գործադիր իշխանության մարմիններից, պաշտպանության նախարարությունից և զինվորական կառավարման այլ մարմիններից անկախությունը, օրենսդրության ճշգրիտ պահպանումն ու կիրառումը, զինվորական կառավարման մարմինների գործունեության վրա ներգործելու իրական իշխանական ու իրավական լիազորությունները⁶⁹:

Փաստորեն, զինվորական օմբուդսմենի ինստիտուտը պաշտպանական ոլորտի գործունեության նկատմամբ վերահսկողական գործառնություններ իրականացնող մարմին է, որը նպաստում է այդ ոլոր-

⁶⁷ Տե՛ս «Энциклопедический юридический словарь», изд. 2, Москва, 1998, с. 210:

⁶⁸ Տե՛ս Քոչարյան Տ. «Ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտները ՀՀ զինված ուժերում», «Լրաբեր հասարակական գիտությունների» քառամսյահանդես, Երևան, 2013, էջ 100
[http://lraber.asj-oa.am/6131/1/2012-4_\(94\).pdf](http://lraber.asj-oa.am/6131/1/2012-4_(94).pdf):

⁶⁹ Տե՛ս Труппель К. Б. “Уполномоченный Бундестага ФРГ по обороне как пример деятельности военного омбудсмена”, Правоведение, № 4 ,1998, с. 36,
<http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=147043>:

տում ժողովրդավարության ընդհանուր սկզբունքների և արժեքների պահպանմանն ու իրականացմանը: Չինվորական օմբուդսմենը քննում է զինված ուժերում մարդու իրավունքների խախտման հետ կապված բողոքները, ներկայացնում է առաջարկություններ խախտումների ու չարաշահումների վերացման վերաբերյալ: Միևնույն ժամանակ զինվորական օմբուդսմենը չի մասնակցում զինված ուժերի ընդհանուր քաղաքականության մշակմանը և չի կարող ազդել օպերատիվ բնույթ ունեցող հարցերի լուծման վրա⁷⁰: Եվ չնայած Հայաստանում այդ հաստատության ձևավորման անհրաժեշտությանը, որի մասին բարձրաձայնվում է տարբեր մասնագետների կողմից, այնուամենայնիվ ՀՀ Սահմանադրության փոփոխություններով տարբերակում նման դրույթը բացակայում է: Այդ գործառույթը որոշակիորեն իրականացնում է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանը, ով օժտված է լայն լիազորություններով, մասնավորապես, իրավասու է անարգել այցելել զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատագրկման վայրեր, ստանալ իրեն հասցեագրված բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր և պարզաբանումներ: Պետական մարմինները, այդ թվում՝ զինված ուժերի ստորաբաժանումները, պարտավոր են պահանջվող նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն տրամադրել պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է զինծառայողների և քրեադատավարական իրավունքների վերականգնման խումբ, որը, համապատասխան ահագանգեր ստանալով, մեկնում է համապատասխան զորամասեր, տեղում ուսումնասիրում է իրավիճակը⁷¹: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2007 թ. ստեղծվել է նաև զինծառայողների և զինվորական հարցերով խորհրդականի պաշտոն, որը մարդու իրավունքների պաշտպանին օգնում է զինծառայողների ի-

⁷⁰ Տե՛ս Քոչարյան Ս. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության համատեքստում», ԵՊՀ, Երևան, 2012, էջ 222:

⁷¹ Տե՛ս «2013թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին», Տարեկան զեկույց, Երևան, 2014, էջ 358, http://www.parliament.am/draft_docs5/481.pdf:

րավունքների պաշտպանության գործում: Սկզբում միտում է եղել ստեղծելու առանձին զինվորական օմբուդսմենի հաստատություն, սակայն, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ, ի տարբերություն որոշ պետությունների (Լեհաստան, Լիտվա և այլն), մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն չի նախատեսվում, ստեղծվել է նշված խորհրդականի հաստիքը⁷²: Չինձառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անձի կարգավիճակի այս փոփոխությունն արտացոլում է վերջին տարիներին զինձառայողների իրավունքների պաշտպանության հարցում քաղաքացիական հասարակության դերի մեծացումը:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան որոշ գործոններ, որոնք ազդում են այդ ոլորտում գործունեության արդյունավետության վրա: Այդ աշխատանքին էականորեն խոչընդոտում է զինձառայողների իրավագիտակցության ցածր մակարդակը: Բացի այդ, նրանց մոտ ձևավորվել է արժեքային յուրահատուկ համակարգ, ըստ որի՝ իրավունքների պաշտպանությունը տարրական «մատնություն» է համարվում: Որոշ հրամանատարներ մարդու իրավունքներին վերաբերվում են՝ որպես երկրորդական երևույթի՝ ոչ պատշաճ արտահայտություններով պիտակելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

Փաստորեն, ՀՀ ՊՆ և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը համագործակցում են՝ բողոքները քննարկելու, առկա խնդիրները լուծելու և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկության աստիճանը բարձրացնելու նպատակով:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը լայնորեն համագործակցում է նաև հասարակական կազմակերպությունների հետ: Իսկ խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչության ստեղծումից հետո այդ համագործակցությունը նոր փուլ թևակոխեց. 2011թ. ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի գրա-

⁷² Տե՛ս Մախմուդյան Ռ. «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում», «Հայկական Բանակ», թիվ 2 (64), Երևան, 2010, էջ 54:

սենյակի արագ արձագանքման խումբը՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այն կոչված է ցանկացած պահի յուրաքանչյուր դիմումի և ահազանգի ընթացք տալ, այցելել գորամաս, կատարել համապատասխան զննումներ և այլն:

Այսպիսով, այսօր առավել քան արդիական է անվտանգության ոլորտի նկատմամբ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության դերը, որը դառնում է ավելի ու ավելի ազդեցիկ: Ընդ որում, քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմները բավականին զարգացած են, և այդ մեխանիզմների արդյունավետությունն առայժմ տեսանելի է: Չնայած դրան դեռևս արդիական է պետական կառավարման համակարգի՝ գործունեության թափանցիկության բարձրացումը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության գործուն մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև այդ կազմակերպությունների կարողությունների զարգացումն ու քաղաքացիական հասարակության, ինչպես նաև անվտանգության ոլորտի ներկայացուցիչների իրավագիտակցության բարձրացումը:

Ամփոփելով կարելի է աճանագրել, որ քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է անվտանգության ոլորտի նկատմամբ, մի կողմից, ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների, այն է՝ խորհրդարանի ու նրանց նշանակած պաշտոնատար անձանց (այսպես կոչված «պետական-քաղաքական վերահսկողություն»), մյուս կողմից՝ հասարակական կառույցների՝ միավորումների, իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների, անհատ քաղաքացիների վերահսկողությունը⁷³: Դրանք կոչվում են անվտանգության ոլորտի նկատմամբ, համապատասխանաբար, քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն և քաղաքացիական հասարակական վերահսկողություն:

⁷³Сте́н Гацко М. “Гражданский контроль над вооруженными силами России”, Обозреватель. 1-2007, с. 16

http://observer.materik.ru/observer/N1_2007/014_021.pdf

ԳԼՈՒԽ 2. ՄԵԴԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԱՌԱՄԵՆՏԱՐԻՉՄԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

2.1. Ժամանակակից մեդիան և «չորրորդ իշխանության» հասկացությունը. իրավունքներ, ազատություններ, գրաքննություն

Ժամանակակից հասարակության առանձնահատկությունը լսարանի հատուկ տիպի ձևավորումն է, որը պայմանավորված է թվային միջավայրի զարգացմամբ և ընդլայնմամբ, մեդիահաղորդակցական տարածքի էվոլյուցիայով: Թվային տեխնոլոգիաները փոխակերպում են հասարակական կյանքի բոլոր սեգմենտները տարբեր մակարդակներում: XXI դարի մեդիամիջավայրը, որը բաղկացած է ավանդական ՉԼՄ-րից, բլոգոսֆերայից (սոցիալական ցանցեր, բլոգեր, վիդեո հոստինգներ, մեսենջերներ), ինտերնետում տարբեր տեղեկատվական ռեսուրսներից, ձևավորում է նոր սոցիալական կարգ, հասարակա-քաղաքական փոխգործակցության և հաղորդակցության նոր տեսակներ:

Պ. Բերգերի և Թ. Լաքմանի⁷⁴ դասական սոցիալական տեսության համաձայն՝ նախկինում ենթադրվում էր, որ լրատվամիջոցներն արձանագրում էին իրականությունը, սոցիալական աշխարհի օբյեկտիվ պատկերը, փոխանցում էին փաստեր, նկարագրում էին իրադարձություններն ու պատմությունը, վերլուծում առկա իրողությունը, սպասարկում էին հանրային շահը, ապահովում էին հավասարակշռություն և կայունություն հասարակության մեջ, ընդհանուր առմամբ հասարակական կարգը, որի բնական մասն էին կազմում ՉԼՄ-ները: Սակայն **հետազոտողներ Ն. Քաուլդրիի և Ա. Հեփփի**⁷⁵ **կարծիքով թվայնացման և մեդիատիզացիայի պայմաններում, որպես ժամանակակից աշխարհի զարգացման հիմնական գործոնների, հիմնովին փոխվում են հասարակության գործունեության բոլոր ոլորտները և սոցիալական կենսաձևը:** Օբյեկտիվ իրա-

⁷⁴ Sté'u Berger P.L., Luckmann T. The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge. 1966, New York: Doubleday & Company:

⁷⁵ Sté'u Couldry N., Hepp A. The Mediated Construction of Reality. 2016, Cambridge: Polity:

կանությունը լսարանի համար գոյություն ունի մեդիայի դիտադաշտով: Ըստ էության, մեդիան ոչ միայն սուբյեկտիվության այս կամ այն աստիճանով վերարտադրում է օբյեկտիվ իրականության իրողությունները, այլև ինքն է լսարանի գիտակցության մեջ ստեղծում այդ օբյեկտիվ, իսկ իրականում՝ սուբյեկտիվ իրականության նոր տեսակը: Վիրտուալ իրականությունը կամ մեդիաիրականությունն իրենց հերթին ձևավորում են նոր սոցիալական աշխարհ՝ հասարակաքաղաքական և մշակութային արժեքների, նորմերի և գիտելիքների արտադրության և տարածման իրենց հատուկ կանոններով: Այսօրվա դրությամբ հետազոտողները մեդիատիզացիայի գործընթացը համարում են հասարակության նոր վիճակ, այլ ոչ թե դրա ժամանակավոր բնութագիր, ինչը մեդիային տալիս է հատուկ կարգավիճակ՝ կապված ՉԼՄ-ների վերահսկողական և կարգավորող գործառնությունների հետ:

Լրագրության տեսաբան Ս.Գ. Կորկոնոսենկոն, հասարակական կյանքը բաժանելով չորս սոցիենտալ համակարգերի՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր, սահմանեց մամուլի մի քանի հիմնական գործառնություններ՝ արտադրա-տնտեսական, կարգավորող, տեղեկատվա-հաղորդակցական և հոգևոր-գաղափարական⁷⁶: Գիտնականի բնորոշմամբ՝ հասարակության կառավարումը վստահված է քաղաքական համակարգին, որն իր մեջ ներառում է պետական և հասարակական ինստիտուտներ, մարմիններ և կազմակերպություններ, որոնք ակտիվորեն օգտագործում են ՉԼՄ-ները որպես հասարակության վրա ազդելու միջոց, իրենց քաղաքականության իրականացման գործիք: Այսպիսով, զանգվածային լրատվամիջոցները կարգավորող դեր են կատարում, պահպանում են հասարակության և իշխանության միջև կապը, մասնակցում են սոցիումի կառավարման և հասարակական ինքնակառավարման գործընթացներին: Ս.Գ. Կորկոնոսենկոն, մեջբերելով մամուլի, պետության, հասարակության և կապիտալի փոխգործակցության սխեման, նշում է, որ դա կարող է առաջացնել այն գաղափարը, որ ՉԼՄ-ները հավասար են տվյալ մոդելի երեք այլ բաղադրիչներին: Լրագրության ռուս տեսաբանը քննադատական գնահատական է տալիս նման հայեցակարգին և այն տերմիններին, որոնք մամուլը նկարագրում են որպես «չորրորդ իշխա-

⁷⁶ St'u Корконосенко С.Г. Основы журналистики. Москва, 2006, с.182:

նություն»⁷⁷: Նմանատիպ դիրքորոշում ունի նաև Տ.Վ. Նաումենկոն. «Տեղեկատվական հոսքերի գործունեությունը, որը ժամանակակից հասարակության մեջ ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում, հաղորդում է հասարակության կազմակերպչական և կառավարման ոլորտին վերաբերվող զանգվածային հաղորդակցական գործունեությանը ավելի նշանակալի դեր»: Չանգվածային տեղեկատվության միջոցով ազդելով հասարակական կարծիքի վրա, որպես զանգվածային գիտակցության վիճակի, զանգվածային հաղորդակցությունը դրանով իսկ նպաստում է սոցիալական շահերի սուբյեկտների նպատակների լավագույն իրականացմանը: Այս փաստը հիմք հանդիսացավ «չորրորդ իշխանություն» տերմինի առաջացման համար, որը զանգվածային հաղորդակցություններին օժտում է որոշակի հատուկ իշխանական լիազորություններով: Ի հայտ գալով որպես փոխաբերություն, ինչի մասին վկայում են այս տերմինի օգտագործման ժամանակ կիրառվող չափերտները, «չորրորդ իշխանությունը» քաղաքագետների և սոցիոլոգների լուրջ հետազոտությունների առարկա չդարձավ և քննարկվում էր միայն լրագրողների և լրագրության տեսաբանների շրջանում: /.../ «Չորրորդ իշխանության» դեպքում խոսքն ընդհանուր առմամբ իշխանության մասին չէ, ոչ էլ ընդհանուր առմամբ քաղաքական իշխանության, այլ նրա կորիզի՝ պետական իշխանության մասին, քանի որ «չորրորդ իշխանություն» տերմինը միանշանակ «ակնարկում» է պետական իշխանությունը կազմող երեք իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, ավելի ճիշտ՝ իշխանության այսպես կոչված «երեք ճյուղերի» մասին, քանի որ իշխանությունը, որպես այդպիսին, միասնական է: Միանգամից ասենք՝ լրագրությունը պետական իշխանության չորրորդ ճյուղը չէ, որքան էլ հակառակ պնդումը շոյող հնչի զանգվածային հաղորդակցության որոշ ներկայացուցիչների համար»⁷⁸:

⁷⁷ St' u Podrobnее о роли СМИ в демократической системе автор писал в другом своем труде: Корконосенко С.Г. Журналистика в системе демократии: структурно-функциональные связи // Социально-политическое функционирование журналистики / Под ред. В.А. Сидорова. СПб., 2005:

⁷⁸ St' u Т.В. Науменко. «Четвертая власть» как социологическая категория. ИНТЕЛРОС, №2, 2007. // http://www.intelros.ru/2007/07/06/print:page,1,tv_naumenko_chetvertaja_vlast_kak_sociologicheskaja_kategorija.html:

ՉԼՄ-ների իշխանական գործառույթների հարցի շուրջ գիտական բանավեճը, ըստ որոշ հետազոտողների, ծավալվում է «իշխանություն» և «ազդեցություն/ ներգործություն» հասկացությունների ոչ ճշգրիտ սահմանումների հետևանքով: Այսպիսով, Է. Դենիսին և Դ.Մերիլը նշել են, որ տեղեկատվության տարածումը դա մի իշխանություն է, տեղեկատվության ազդեցությունը գիտակցության վրա՝ իշխանության մեկ այլ ձև է, դրա ազդեցությունը վարքի մոդելի վրա՝ բոլորովին այլ տեսակի իշխանություն է: Նշվում է, որ այս բոլոր սահմանումները հաճախ լողվում են, իսկ իշխանության տեսակների միջև տարբերությունները հաշվի չեն առնվում կամ նվազագույնի են հասցվում⁷⁹:

Սակայն մամուլը «չորրորդ իշխանություն» ճանաչելու ավանդույթը ոչ մի կերպ չի դրվել XX-րդ դարի հետազոտողների, մասնավորապես՝ ամերիկացիների կողմից: Դեռևս XVIII-րդ դարում անգլիացի քաղաքական գործիչ Է. Բերկը խորհրդարանական ավանդույթների ձևավորման պայմաններում խորհրդարանի հատուկ պատկերասրահում նստած լրագրողներին անվանեց «չորրորդ դաս»: Նկատի ունենալով, որ խորհրդարանում օրինականորեն ներկայացված են երեք հիմնական դասեր՝ արխատկրատիա, հոգևորականություն և բուրժուազիա: Լիբերալ-դեմոկրատական ավանդույթների զարգացմամբ, հատկապես XX-րդ դարի աղմկահարույց լրագրողական հետաքննություններից հետո, որոնք ազդել էին քաղաքական և պետական գործընթացների վրա, տարբեր ժամանակակից տեսական և մեդիա հասկացություններում/կոնցեպցիաներում և նույնիսկ ՉԼՄ-ների ներկայացուցիչների սովորական բառապաշարում մեդիա հասկացությունը՝ որպես «չորրորդ իշխանություն», արդեն ամրապնդվել էր և ոչ որպես փոխաբերություն:

Հետազոտող Կ.Ա. Խլոպկովն իրավացիորեն նշում է. «Այսօր աշխարհը գտնվում է տեղեկատվական հասարակության ձևավորման փուլում: Տրամաբանական տեղեկատվության և դրա վրա հիմնված տեխնոլոգիաների բոլոր նոր առաջընթացներն արդեն գրեթե ամբողջությամբ միավորված են մեկ տեղեկատվական պուլի՝ և մոլորակի մեկ տեխնոլոգիական համակարգի մեջ: Մրան համապատասխանում է երկրագնդի տարբեր շրջաններում գտնվող անհատների նմանատիպ միավորումը: Տեղեկատվության առաջատար դերն այս գոր-

⁷⁹ St' u Дэннис Э., Мэррил Д. Беседы о масс-медиа. М., 1997, с. 153-154:

ծընթացում ակնհայտ է և ապացույց չի պահանջում»⁸⁰: Նրա կարծիքով, մեդիան ժամանակակից հասարակության կյանքում նույնիսկ վտանգավոր դեր է խաղում, քանի որ այն փոխարինում է բնակչությանը տեղեկացնելու իր սկզբնական գործառույթը որոշակի կարծիքների, գաղափարների և տեսակետների ձևավորման առաջադրանքների կատարմամբ:

Թվային դարաշրջանում մեդիայի՝ որպես չորրորդ իշխանության մասին խոսելիս առաջին հերթին նկատի ունեն ոչ միայն ՁԼՄ-ների անկախությունն իշխանությունից, կառավարությունների գործողությունները քննադատելու իրավունքն ու ազատությունը կամ պարզապես քաղաքացիական հասարակության ազդեցությունը: Խոսքը «հրատարակիչների» (publisher) ժամանակակից լսարանի զարմանալի ֆենոմենի մասին է, որը ծնվել է հենց նորագույն մեդիա տեխնոլոգիաների և հարթակների շնորհիվ: Այսօր համացանցը հասանելի է ավելի քան 3,2 միլիարդ օգտատերերին, որոնք ունեն բոլոր տեխնիկական հնարավորությունները՝ հանդես գալու որպես հեղինակներ և ակտիվորեն մասնակցելու տեղեկատվական հոսքերի ձևավորմանը՝ անկախ կրթության աստիճանից, ինտելեկտից և տաղանդից, ավելին, նրանք ի վիճակի են ապահովել լրատվամիջոցների բովանդակության որակը: Նման հեղինակներին լրագրության ժամանակակից տեսության մեջ հաճախ անվանում են «հրատարակիչներ», և սա անձի սոցիալականացման սկզբունքորեն նոր տեսակ է: Այսօր հրատարակիչների թիվը ճգտում է հավասարվել ընթերցողների, հեռուստադիտողների, ունկնդիրների թվին, տեղի է ունենում հեղինակային հասարակության ձևավորում, որը փոխակերպում է զանգվածային տեղեկատվության արտադրության և տարածման տիպօրինակ մոդելը, տեղեկատվական հոսքերի ձևավորումը⁸¹: Նման պայմաններում այս կամ այն հայտնի մեդիահարթակում նույնիսկ շաքային օգտատիրոջ արտադրած կոնտենտի ազդեցության աստիճանը կտրուկ աճում է: Ըստ էության, եթե նախկինում միայն ավանդական ՁԼՄ-ները հնարավորություն ունեին կարգավորում և

⁸⁰ St' u Хлопков К.А. Значение средств массовой коммуникации в процессе манипуляции массовым сознанием. // Вестник Красноярского государственного педагогического университета им. В. П. Астафьева, 2009, с.71:

⁸¹ St' u М.В. Алекаян, М.Р. Тадевосян. Современный медиатекст: от информационных потоков к созданию контента. Учебно-методическое пособие. Ереван, 2023:

վերահսկողություն իրականացնել իշխանության երեք ճյուղերի նկատմամբ, ապա այժմ դա կարող է անել ցանկացած օգտվող, և այդպիսի հրատարակիչների հանրությունն իսկապես ուժեղացնում է լրատվամիջոցների դերը:

Լրագրության հայտնի տեսաբան Ե.Պ. Պրոխորովը, խոսելով ՉԼՄ-ների գործունեության մասին, նշել է. *«Քաջի հասարակական կարծիքի սոցիալական ինստիտուտների վրա ճնշումից, նրանց վրա ուղղակիորեն ազդում է լրագրությունը: Իսկ դա նշանակում է, որ լրագրությունը որպես «չորրորդ իշխանություն» պետության մեջ կառավարչական դեր է խաղում ոչ միայն զանգվածային գիտակցության, այլ նաև սոցիալական ինստիտուտների նկատմամբ»⁸²*: *Գիտնականի բնորոշումն էլ ավելի է խորանում՝ հաշվի առնելով «լսարան» հասկացության նոր բովանդակությունը և «մեդիա» տերմինի ընդլայնումը:*

Ժամանակակից ցանցային լսարանի համար հաճախ պարզապես կարևոր չէ տեղեկատվության աղբյուրը, դրա հեղինակության աստիճանը: Այսօր, եթե այս կամ այն հեղինակի կոնտենտը (հնարավոր է նույնիսկ կեղծ) օգտատերերի համար հետաքրքիր/սենսացիոն, ապացուցողական, հավաստի և բավականին համոզիչ թվա, ապա նրանք չեն զբաղվի փաստչեքինգով (փաստերի ստուգում), նյութի հաստատում չեն փնտրի ավանդական ՉԼՄ-ներից կամ պետական, սոցիալական ինստիտուտների ռեսուրսներում: Մեծ թվով հրատարակիչներ, որոնք պատրաստ են միաժամանակ, զանգվածաբար և առանց միմյանց հետ համաձայնեցնելու, վերարտադրել և տարածել այդ կոնտենտը՝ առանց տվյալ պետության սահմաններին կապելու, նոր իրողություն է, որի հետ տարբեր երկրների իշխանությունները պետք է հաշվի նստեն: *Ցանցային հանրությունը (կամ տեղեկատվական հանրությունը), տարաբնույթ, ոչմիանշանակ, բաղկացած տարբեր խմբերից (պատվերներ կատարող օգտատերերի համույթներ; պատահական հրատարակիչներ; կարծիքի առաջնորդներ՝ քաղաքական, հասարակական գործիչներ, շոու բիզնեսի աստղեր; բլոգերներ; լրագրողներն և այլն), կարող է առաջացնել քաղաքացիական ակտիվություն, ձևավորել այնպիսի հասարակական կարծիք, որը կարող է խթան դառնալ, հիմք հանդիսանալ պետական տարբեր կառույցներում, սոցիալական ինստիտուտներում այս*

⁸² Стéу Прохоров Е. П. Введение в теорию журналистики, М., 1995 с.68:

կամ այն որոշումներ կայացնելու համար: Ավելին, նման «հասարակական կարծիքի ուժը ոչ միայն այսրոպետական բնույթ է կրում, այն կարող է ազդել նաև իշխանությունների ապագա ընտրությունների վրա, ընդհուպ մինչև ընդդիմադիր ուժերի հաղթանակն ու իշխանության գալը»⁸³: Այս առումով արժե ևս մեկ անգամ հիշել է. Դենիսի տեսությունը, ըստ որի «լրատվամիջոցները «ձևավորում են» մեր մտածողությունը, «ազդում» մեր կարծիքների և վերաբերմունքի վրա, «մղում» մեզ որոշակի վարքագծի, օրինակ՝ որոշակի թեկնածուի օգտին քվեարկելը»⁸⁴:

Այսպիսով, *չորրորդ իշխանություն, քննվ ոչ փոխաբերական իմաստով, մեդիան դառնում է մի շարք պատճառներով. դրանք կատարման համար պարտադիր որոշումներ են փոխանցում օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին, հետևում է տարբեր ինստիտուտների կողմից այդ որոշումների կատարման գործընթացին, ոչ միայն հեռարձակում, այլև իրենք են ձևավորում հանրային պահանջարկ, որոշակի օրենսդրական ակտերի, որոշումների ընդունման/չեղարկման պահանջ և այլն: Արդյունքում, ժամանակակից ժողովրդավարական պետությունում մեդիայի դիրքը հաշվի առնելը ըստ էության պարտադիր միջոց է դառնում իշխանության երեք հիմնական ճյուղերի որոշումների կայացման ժամանակ: Իսկ պոպուլիստական ռեժիմներ ունեցող պետություններում այդ դիրքորոշումը մեդիայում հաճախ ձևավորվում է նպատակային, իսկ իշխանությունների որոշումների ընդունումը, անգամ դատական, կողմնորոշված և մոտիվացված է լինում հենց մեդիառեսուրսների փոխանցած ազդանշաններով, մեխիզներով:*

Այս համատեքստում էապես փոփոխվում է նաև «խոսքի ազատություն» և «գրաքննություն» հասկացությունների բովանդակությունը: «*Խոսքի ազատություն*» հասկացությունն, ընդհանուր իմաստով, մարդու իրավունքն է՝ ազատորեն արտահայտել կարծիք, անարգել (առանց նախնական և/կամ հետագա, պատժիչ գրաքննության, առանց տարատեսակ պատժամիջոցների, անկախ պետական սահմաններից) ստանալ և տարածել տեղեկատվություն, հաղորդակցվելու, քննարկումներին մասնակցելու, իշխանություններին՝ առանց իրենց կյանքը և ազատությանը վտանգելու, քննա-

⁸³ Տե՛ս նույն տեղում, c.80:

⁸⁴ Տե՛ս Деннис Э. Беседы о масс-медиа. М.: Вагриус, 1997, c.139:

դատելու իրավունքն է: Խոսքի ազատության ապահովումը համարվում է առաջադեմ ժողովրդավարական հասարակության զարգացման անհրաժեշտ նախապայման: Այս սկզբունքը թույլ է տալիս խաղաղ համագոյակցել տարբեր քաղաքական, կրոնական և գաղափարական հայացքներ ունեցող քաղաքացիներին և խմբերին, հակամարտությունները լուծել ոչ բռնի ճանապարհով, մասնակցել պետության կառավարմանը: Ժողովրդավարական հասարակության մեջ այդ ազատությունների իրականացումը կարգավորվում է միջազգային նորմատիվ իրավական ակտերով, ազգային օրենսդրությամբ, որոնք հաշվի են առնում քաղաքացու իրավունքները (անձնական տեղեկատվության, անձնական կյանքի, պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանություն, բժշկական, առևտրային, բանկային գաղտնիք ներկայացնող տեղեկատվության հրապարակման արգելք, որդեգրման գաղտնիք և այլն), ազգային և պետական անվտանգության շահերը, հասարակական կարգը (հանցագործությունների կանխարգելում, բնակչության առողջությանը և բարոյականությանը սպառնացող երևույթների քարոզչություն և այլն):

Խոսքի ազատությունը երաշխավորող նորմատիվ իրավական ակտերը բավականին շատ են, սակայն առավել նշանակալի և ընդհանրացված սկզբունքներն ամրագրված են հետևյալ միջազգային փաստաթղթերում.

1. **«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»:** 19-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք, այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրազեկում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»⁸⁵:

2. **«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա»:** Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետա-

⁸⁵ St`u Vseobshaya deklaratsiya prav cheloveka (10 dekabrya 1948) (rus.). // <https://www.un.org/ru/about-us/universal-declaration-of-human-rights:>

կան մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում: Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»⁸⁶:

3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագիր: 19-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով հավատարիմ մնալ իր կարծիքներին: Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը: Մույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը դնում է հատուկ պարտականություններ և հատուկ պատասխանատվություն: Հետևաբար, այն կապված է որոշ սահմանափակումների հետ, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ. ա/ այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար բ/ պե-

⁸⁶ St' u Конвенция о защите прав человека и основных свобод (ETS N 005) (рус., англ.). Конвенция от 04 ноября 1950 года №005. Редакция, действующая с 1 февраля 2022 года. Действие настоящего документа прекращено в отношении Российской Федерации с 16 марта 2022 года - Федеральный закон от 28 февраля 2023 года N 43-ФЗ. // <https://docs.cntd.ru/document/1000003045>:

տական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության համար»⁸⁷:

Ժողովրդավարական երկրների մեծ մասը փոխառել է այդ փաստաթղթերում նշված սկզբունքներն ու նորմերը՝ դրանք դնելով ազգային օրենսդրությունների հիմքում: Այնուամենայնիվ, խոսքի ազատության մասին օրենքների կիրառումը անբակտելիորեն կապված է բազմաթիվ սահմանափակումների հետ, որոնց մի մասը կրում է օբյեկտիվ անհրաժեշտության բնույթ (օրինակ՝ թմրանյութեր կամ հանցավոր վարքագիծ քարոզող, ազգային կամ պետական անվտանգությանը վնաս հասցնող, քաղաքացիների այլ հիմնարար իրավունքներին և ազատություններին վերաբերող տեղեկատվության տարածման արգելքը), իսկ մյուս մասը իրենից ներկայացնում է գրաքննության պատժամիջոցներ: ***Խոսքի և կարծիքի արտահայտման ազատության մասին օրենքների կիրառման գործընթացում կարևոր է, որ տվյալ իրավական ակտերով նախատեսված սահմանափակումները մեկնաբանվեն նեղ իմաստով, իսկ իշխանության միջատությունը խոսքի և կարծիքի արտահայտման ազատության իրավունքի իրացման գործընթացին թույլ տրվի ոչ թե պարտադիր, այլ բացառիկ անհրաժեշտության դեպքում: Այնուամենայնիվ, ամենատարբեր պետություններում, այդ թվում՝ խորհրդարանական կառավարման մոդել ունեցող, խոսքի ազատության սահմանափակումների կիրառումը հաճախ գործնականում մեկնաբանվում է բավականին լայնորեն և սերտորեն կապված է գրաքննության ինստիտուտի հետ:***

Այսպիսով, Ջոն Միլթոնը 1643 թվականի հունիսի 16-ին անգլիական խորհրդարանին ուղղված ուղերձում առաջին անգամ հրապարակավ քննադատեց Վատիկանի արգելված գրքերի ինդեքսը («Index Librorum Prohibitorum»), որն ընդունվել է Հռոմի պապ Պողոս IV-ի օրոք 1557 թվականին ինկվիզիցիոն տրիբունալների համար և վերջնականապես չեղարկվել է միայն 1966 թվականին: Միլթոնը իր «Արեոպագիտիկա. Անգլիայի խորհրդարանին ուղղված գրաքննություն-

⁸⁷ St' u Mezhduнародный пакт о гражданских и политических правах. Принят резолюцией 2200 А (XXI) Генеральной Ассамблеи от 16 декабря 1966 года. // https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pactpol.shtml:

նից մամուլի ազատության մասին ելույթը»⁸⁸ տրակտատում հատուկ դիտարկեց գրաքննության՝ որպես հասարակական ինստիտուտի, ներդրման հետևանքները: Այս աշխատությունը ոչ միայն մոտեցրեց 1695 թվականին Անգլիայում նախնական գրաքննության չեղարկումը, այլև համարվում է բոլոր ժամանակակից նորմերի հիմքը, որոնք ուղղված են ընդհանուր առմամբ նախնական և պատժիչ գրաքննության ինստիտուտների դեմ: XIX-րդ դարի կեսերին եվրոպական պետությունների մեծ մասում վերացվեց նախնական գրաքննությունը⁸⁹:

Այնուամենայնիվ, գրաքննության պաշտոնական չեղարկումը ամենևին չի նշանակում այս երևույթի լրիվ վերացումը: Հաճախ տեղեկատվությունը սահմանափակելու, այն թաքցնելու ցանկությունը թելադրված է անարդյունավետ կառավարման իրողություններով, իշխանությունը պահպանելու փորձերով, կոռուպցիայի աճով: Ժամանակակից աշխարհում շատ կառավարություններ նախընտրում են գաղտնիության մթնոլորտ ստեղծել իրենց գործունեության շուրջ, նույնիսկ ժողովրդավարական երկրներում հաճախակի են իշխանությունների փորձերը՝ իրենց աշխատանքի հիմնական մասը իրականացնել հասարակության և մեդիայի զգոն վերահսկողությունից դուրս, հանրային քննարկումներից հեռու: Ավելին, կառավարությունները միշտ կարող են գտնել հարմար պատրվակ, ռացիոնալ բացատրություն խոսքի և տեղեկատվության ազատության սահմանափակման փորձերի, այս կամ այն տվյալները թաքցնելու միջոցառումների համար, օրինակ՝ ազգային և պետական անվտանգության, հասարակական կարգի ապահովում, հասարակության պաշտպանություն ահաբեկիչներից և ֆեյքերից, պայքար համացանցում ամենաթողության դեմ և այլն: Հատկանշական է, որ պետական կառույցները հաճախ պաշտոնական տեղեկատվությունը համարում են ոչ թե տարածման համար պարտադիր կոնտենտ, այլ իրենց անվիճելի և անքակտելի սեփականությունը, որը կարող են տնօրինել իրենց հայեցողությամբ:

Խոսքի և կարծիքի աշտահայտման ազատության իրավունքն իսկապես բացարձակ չէ, սակայն միջազգային ամենաբարձր չա-

⁸⁸ St' u Джон Мильтон. Ареопagitика. Речь о свободе печати от цензуры, обращенная к парламенту Англии (1644). // Современные проблемы. Выпуск № 1. Москва — Новосибирск, 1997:

⁸⁹ St' u Левченко И. Е. Проблема цензуры в истории зарубежной общественно-политической мысли // Социально-политический журнал. М., 1996. Вып. 6. С. 179-192:

փանիշները նախատեսում են չափազանց խիստ պահանջներ ցանկացած, նույնիսկ առավել մոտիվացված սահմանափակումների և գրաքննության կիրառման համար: Միջազգային իրավունքը և ազգային օրենսդրությունը պետություններին պարտավորեցնում են հստակ հիմնավորումներ տալ խոսքի և Տեղեկատվության ազատության սահմանափակման ցանկացած փորձի վերաբերյալ:

Հետագոտող Ա. Բ. Էկտումանը, ուսումնասիրելով մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում խոսքի ազատության ապահովման խնդիրը և վերլուծելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի համապատասխան նորմերի մեկնաբանման վերաբերյալ ՄԻԵԴ-ի պրակտիկան, հանգում է հետևյալ էական եզրակացություններին.

1) «Դատարանն իր պրակտիկայում կոնվենցիայի 10-րդ հոդվածում բացահայտում է լայն բովանդակություն, որն իրականում ապահովում է ազատ հաղորդակցության պաշտպանությունը որպես այդպիսին: 10-րդ հոդվածը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իր մեկնաբանությամբ, պաշտպանություն է տրամադրում հաղորդակցական գործունեության բոլոր փուլերին՝ սկսած հաղորդագրության ստեղծումից մինչև ստացումը, ներառյալ դրա փոխանցման բոլոր փուլերը:

2) Դատարանի մեկնաբանությունը խոսքի ազատության մասին կոնվենցիոն նորմերին տալիս է էական ճկունություն, որն անհրաժեշտ է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բարձր տեմպերի և համապատասխան հասարակական հարաբերությունների պայմաններում:

3) Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված խոսքի ազատությունը դատարանի կողմից դիտարկվում է որպես համալիր, կենտրոնական իրավունք: Պատահական չէ, որ դատարանը որպես խոսքի ազատության իրավունքի («freedom of expression») հոմանիշ օգտագործում է «Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունք» («right secured by Article 10 (art.10) of the Convention») կամ «Կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանված իրավունք» («the right protected by Article 10 (art. 10) of the Convention») հասկացությունները:

4) Խոսքի ազատությունը սինթետիկ խոսքի իրավունքներ, ինչպիսիք են կարծիք ունենալու ազատության իրավունքը, տեղեկատվություն տարածելու ազատության իրավունքը և տեղեկատվություն և գաղափարներ ստանալու ազատությունը (10-րդ հոդվածի 1-ին մաս): Պետք է ընդգծել, որ Դատարանը չի ձգտում տարանջատել այդ իրավունքները: Այս բոլոր իրավունքները, Դատարանի հասկացողությամբ, կազմում են միայն խոսքի ազատության իրավունքի կազմի իրավասությունները»⁹⁰:

Առավել ուշագրավն այն է, որ ՄԻԵԴ-ի պրակտիկայում Ձեռք բերված մեկնաբանության համաձայն, Կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է քաղաքացու իրավունքը ստանալու ցանկացած հաղորդագրություն, որը որևէ մեկը ցանկանում է փոխանցել իրեն, փոխանցում է նրան կամ տարածում է անսահմանափակ թվով անձանց համար: Տվյալ Հոդվածը նաև պաշտպանում է նամակագրություն, էլեկտրոնային փոստով ուղարկված հաղորդագրություններ, SMS հաղորդագրություններ, հեռախոսագանգեր և այլն ստանալու ազատությունը: Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը ոչ միայն պարտավորեցնում է մամուլին հայտնել հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունն ու գաղափարները, այլև երաշխավորում է հանրության պատշաճ տեղեկացված լինելու իրավունքը: Եվ, որ ամենակարևորն է, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնվենցիայի մեկնաբանման մեջ հանգել է այն եզրակացության, որ 10-րդ հոդվածն արգելում է կառավարություններին սահմանափակել, ինչպես նաև խոչընդոտել անձին ստանալու այն տեղեկությունները, որոնք այլ անձինք ցանկանում են կամ կարող են ցանկանալ փոխանցել նրան:

Ելնելով վերոգրյալի վերլուծությունից՝ կարելի է փորձել սխեմատիկորեն ներկայացնել խոսքի ազատության ապահովման և ճնշման հիմնական հնարավոր հետևանքները (Աղյուսակ 1): Դրական և բացասական կողմերի ըմբռնումը (իսկ աղյուսակից ակնհայտ է դառնում, թե որ դեպքում, այնուամենայնիվ, ավելի շատ բացասական հետևանքներ կան) հատկապես կարևոր է պաշտամենտարիզմի զարգացման գործում մամուլի դերը դիտարկելիս:

⁹⁰ St'iu Էктумаев А.Б. Свобода слова в решениях Европейского суда по правам человека. Вестник Пермского университета, 2011. Юридические науки Выпуск 3(13), с.57:

Աղյուսակ 1.

Խոսքի ազատության ապահովման հնարավոր արդյունքները	Խոսքի ազատության ճնշման հնարավոր հետևանքները
☒ Ժողովրդավարական, իրավական պետության զարգացման պայմանների ստեղծում ☒ Առաջադեմ, կրթված հասարակություն ☒ Քաղաքացիների, ՉԼՄ-ների, կազմակերպությունների իրավունքների և ազատությունների ապահովում ☒ Պետական ապարատի և հասարակության միջև կապ ☒ Իշխանության ճյուղերի նկատմամբ վերահսկողություն և հասարակության համար հաշվետվողականության ապահովում ☒ Ինքնաարտահայտում, ինքնաիրացում ☒ Ցանկացած տեսակի տեղեկատվության հասանելիություն ☒ Ամենաթողություն (ատելության, պատվի և արժանապատվության, համբավի վիրավորանքի, հետապնդման և հալածանքի տարածում, թրոլինգ և բուլինգ, զրպարտություն և սուտ) ☒ Ազգային և պետական անվտանգության սպառնալիքներ	☒ Տոտալիտարիզմի և բռնապետական ռեժիմների ձևավորման միտումներ ☒ Հասարակության հետընթաց և դեգրադացիա ☒ Քաղաքացիների, ՉԼՄ-ների, կազմակերպությունների իրավունքների և ազատությունների խախտումներ ☒ Պետական ապարատի և հասարակության միջև անկայուն կապը, անվստահության մթնոլորտ ☒ Իշխանության վերահսկողության բացակայություն կամ սահմանափակում, հասարակության անտեղյակություն և հաշվետվողականության սկզբունքի մերժում ☒ Անձնական աճի և զարգացման հնարավորությունների սահմանապակում ☒ Ազիտացիայի և քարոզչության աճ ☒ Սահմանափակ ընտրության պայմաններում հանրային կարծիքի մանիպուլյացիայի համար բարենպաստ պայմանների ստեղծում ☒ Գրաքննության ի հայտ գալը, ոչ միայն պատժիչ, այլև նախնական ☒ Ազգային և պետական անվտանգության սպառնալիքներ

Առաջին հայացքից կարող է թվալ, որ խոսքի ազատության ապահովման բացասական արդյունքները նույնպես քիչ չեն: Այնուամենայնիվ, եթե նայենք խոսքի ազատության ճնշման հետևանքների համընդհանրությունը, ապա ակնհայտ է դառնում, որ ազգային և պետական անվտանգությանը սպառնացող վտանգների, քաղաքացիների իրավունքների ոտնահարման մասին փաստարկը հեշտությամբ կարելի է բերել երկու դիրքերը պաշտպանելիս: Իսկ ահա քաղաքական համակարգի և ինստիտուտների բարձր մշակույթի զարգացման հնարավորություններ ստեղծում է բացառապես խոսքի ազատության ապահովումը, այլ ոչ թե դրա ընկճումը, գրաքննությունը և ճնշումը մամուլի վրա: *Մեղիայի՝ որպես «չորրորդ իշխանության» ցանկացած սահմանափակում, մեր օրերում ձևավորվող տեղեկատվական/թվային հասարակության խոսքի և արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումները պետք է իրականացվեն բացառապես օրենքի շրջանակներում, ազգային նորմատիվ իրավական ակտերում (որոնք իրենց հերթին «գրախոսվում» և վերահսկվում են բազմաթիվ միջազգային լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, վարկանիշներով և այլն⁹¹), խորհրդարանների և դատարանների որոշումներում համապատասխան նորմերի ամրագրման դեպքում: Սահմանափակումները պետք է ձևակերպվեն հստակ, իրավաբանորեն ճիշտ, առանց երկիմաստությունների և ազատ մեկնաբանման հնարավորությունների, պետք է կարողանան դիմակայել իրավական գրագիտության ստուգմանը, ինչպես նաև կանխատեսելի լինեն:* Զաղաքացիները, մեղիահանրության ներկայացուցիչները պետք է հստակ հասկանան և կանխատեսեն այս կամ այն տեղեկատվության տարածման իրավական հետևանքները՝ կամայական մեկնաբանություններից և չարաշահումներից խուսափելու համար: Սակայն մինևույն ժամանակ նրանք չպետք է խուսափեն խոսքի ազատության և կարծիքի արտահայտման իրենց իրավունքի իրացումից՝ գրաքննության սահմանափակումներից և պատժիչ միջոցներից խուսափելու համար:

⁹¹ Вопрос ангажированности или объективности этих организаций и рейтингов представляет собою отдельную тему для глубинного исследования.

Ժողովրդավարական պետություններում խոսքի ազատության սահմանափակումները, հատկապես պաշտամենտարիզմի զարգացման պայմաններում, կարող են թելադրվել բացառապես օրինական նպատակներով, ազգային և պետական անվտանգության պահանջներով (օրինակ, ըստ պաշտոնական տեղեկատվության, հենց այս նկատառումներով է պայմանավորված Ռուսաստանում ՉԼՄ-ների օտարերկրյա գործակալների մասին օրենքի ընդունումը⁹²), լուրջ հասարակական պահանջարկով և սոցիալական անհրաժեշտությամբ: ***Բայց գլխավորն այն է, որ նման գրաքննչական նորմերը, խոսքի և կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումները ամեն դեպքում պետք է նվազագույնի հասցվեն: Չափազանցումն ու արտակարգ միջոցների ընդունումն այս դեպքում հակառակ է-ֆեկտ կունենան և կհանգարեն սոցիալ-քաղաքական, տնտեսական և մշակութային առաջընթացին, մեղիացի զարգացմանը և ընդհանրապես պաշտամենտարիզմի ավանդույթներին:***

2.2. Մամուլը խորհրդարանական համակարգի զարգացման գործում. առաջադեմ համաշխարհային փորձ

Մամուլը և խորհրդարանը քաղաքացիական հասարակության առանցքային և կարևորագույն ինստիտուտներն են, որոնց ձևավորումը ճանաչվում է որպես ժողովրդավարական, իրավական պետության կայացման հիմնական չափանիշներից մեկը՝ խորապես գիտակցված և իմաստավորված քաղաքական զարգացման ռազմավարությամբ: Այստեղ կարևոր է նշել մեկ առանցքային կետ՝ եթե խորհրդարանն, ահիներշուտ, համարվում է քաղաքական ինստիտուտ, ապա լրատվամիջոցների մասով, Ինչպես արդեն նշվել էր նախորդ պարագրաֆում, միանշանակ գիտական դիրքորոշում չի ձևավորվել: Սակայն

⁹² В данной работе мы не будем касаться специально норм и требований как данного российского закона, так и аналогичного американского закона – FARA, поскольку эти задачи не продиктованы целями нашего исследования. Отметим лишь, что подобные нормативно-правовые акты неоднозначно принимаются в разных странах, гражданским обществом, зачастую служат объектом критики. Собственно Реестр иностранных средств массовой информации, выполняющих функции иностранного агента, можно посмотреть на сайте Министерства юстиции Российской Федерации (minjust.gov.ru).

ակնհայտ է, և մենք հիմք ենք ընդունելու նույն այն մոտեցումը, որ մամուլը ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական ինստիտուտ է, որի գլխավոր գործառնություններից է հասարակության և իշխանության միջև կապի ապահովումն ու միջնորդությունը, իսկ դա չափազանց կարևոր է պետության գործունեության համար: Այս ինստիտուտի հզորության մասին են վկայում բազմաթիվ պատմական փաստեր, երբ հենց ՉԼՄ-ներն են այս կամ այն պետական և քաղաքական համակարգի համար կործանարար դեր խաղացել (օրինակ՝ ԽՍՀՄ փլուզումը, Արաբական գարունը և այլն): Ահա թե ինչու մեղիա ուսումնասիրող ժամանակակից գիտություններում աստիճանաբար սկսում է գերակշռել ՉԼՄ-ները որպես քաղաքական ազդեցության սուբյեկտ և օբյեկտ, հասարակական և քաղաքական գործընթացների մասնակից, լիարժեք սոցիալ-քաղաքական ինստիտուտ դիտարկելու միտումը⁹³:

Մամուլի և խորհրդարանի ուսումնասիրությունը նրանց փոխգործակցության մեջ հնարավոր է միայն միջառարկայական մոտեցմամբ⁹⁴: Եվ դրա համար պետք է որպես յուրատեսակ արքիոմ ընդունել, որ *երկու այնպիսի սոցիալ-քաղաքական ինստիտուտների զարգացումը, ինչպիսիք են ազատ մեղիան և պաշտամենտարիզմի մարմինները, անհրաժեշտ և որոշիչ չափանիշ է ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման համար*: Այս ուսումնասիրության մեջ մենք ելնելու ենք հենց այն թեզից, որ այդ ինստիտուտների փոխգործակցության բովանդակությունից, բնույթից և առանձնահատկություններից, խորհրդարանների կողմից լրատվամիջոցների գործունեության համար հարմարավետ միջավայրի ձևա-

⁹³ Ст'у Прохоров Е.П. Журналистика и демократия: Учебное пособие / Е.П. Прохоров. – 2-е изд., перераб. и доп. – М.: Аспект Пресс, 2004, с. 268:

⁹⁴ Լրատվամիջոցների և խորհրդարանական գործընթացի փոխգործակցության և փոխազդեցության խնդիրները քննարկվում են ժամանակակից լրագրողական բազմաթիվ ուսումնասիրություններում: Գիտնականներն մի կողմից ընդգծում են մեղիա ոլորտի քաղաքականացումը, մյուս կողմից՝ քաղաքական գործընթացների միջնորդականացումը: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս. Ковалева М.М. Журналистика как социально-политический институт // Журналистика и политика. Сборник статей. / Екатеринбург, 2004; Вершинин М.С. Политическая коммуникация в информационном обществе. СПб., 2001.; Прохоров Е.П. Журналистика и демократия. – М., 2001; Засурский И.И. Реконструкция России. Масс-медиа и политика в 90-е годы. М., 2001; Корконосенко С.Г. Основы журналистики: учебник для вузов. М., 2001.

վորումից հաճախ կախված է պետության ոչ միայն ներկան, այլև ապագան: Այդ իսկ պատճառով այս խնդիրը խիստ արդիական է ինչպես գիտական ճանաչողության, այնպես էլ սոցիալական և քաղաքական պրակտիկայի տեսանկյունից:

Պաշամենտարիզմի ավանդույթները, ինչպես հայտնի է, թույլ են տալիս ապահովել հասարակության զարգացման էվոլյուցիոն ուղին: Խորհրդարանները, իսկ ըստ էության՝ ժողովրդական ներկայացուցչությունը հետ մղելու, կառավարման բոլոր լծակները գործադիր իշխանության ձեռքում կենտրոնացնելու փորձերը կարող են հանգեցնել հետընթացի և սոցիալական կոնֆլիկտների՝ անկանխատեսելի հետևանքներով: Այնուամենայնիվ, շատ ժամանակակից ժողովրդավարական պետություններում գործադիր իշխանությունները, հաշվի առնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, ունեն այնքան նշանակալի վարչական, իրավական, ֆինանսական, տեխնիկական, նյութական և մարդկային ռեսուրսներ, որ դա նրանց թույլ է տալիս հնարավորինս արագ և ակտիվ արձագանքել հասարակության ցանկացած իրավիճակին: Այս ամենի արդյունքում, հասարակական գիտակցության մեջ հաճախ ձևավորվում է «ամենագոր» գործադիր իշխանության խեղաթյուրված պատկերը, այսինքն՝ որոշակի կառավարող ուժի, որը ոչ միայն օրենքներ է իրականացնում, այլ նաև ստեղծում: Այս ընկալման արդյունքում կարելի է դիտարկել «խորհրդարանի վերածումը յուրատեսակ խորհրդատվական մարմնի, որը գրանցում է համընդհանուր ընտրությունների արդյունքները և ընդունում նրան քննարկման ներկայացված գրեթե ցանկացած օրենք»⁹⁵: Այս պարագայում օրինաստեղծ գործունեությունը դուրս է մնում հանրության և լրատվամիջոցների ուշադրության շրջանակից դուրս, արձանագրվում է նրա դերի նվազում, իսկ պետական բոլոր որոշումները վերագրվում են բացառապես գործադիր իշխանությանը:

Ժամանակակից պաշամենտարիզմի շատ հետազոտողներ այն կարծիքին են, որ խորհրդարանի և քաղաքական ուժերի հարաբերությունները հաճախ կառուցված են այնպես, որ քաղաքական կուսակցություններն են գերիշխող դիրք ստանում հասարակության կյանքում:

⁹⁵ Ст'ю Кин Д. Демократия и гражданское общество / Д. Кин. – М., Прогресс – Традиция, 2001, с.280:

«Չանգվածային գիտակցության մեջ պառլամենտարիզմի նշանակության նվազեցման և գործադիր իշխանության դրական կերպարի ամրապնդման գործում զգալի դեր են խաղում գործադիր իշխանություններից անմիջականորեն կախված լրատվամիջոցները: /.../ Ակնհայտ է, որ խորհրդարանական ընթացակարգերը գրեթե բոլոր զարգացած երկրներում լիովին վերահսկվում են քաղաքական կուսակցությունների կողմից, ինչը զգալիորեն բարձրացնում է դրանց նշանակությունն ու հեղինակությունը: Կուսակցությունների համագումարները, կոնֆերանսները և ֆորումները ավելի մեծ ուշադրության են արժանանում լրատվամիջոցների կողմից, քան խորհրդարանական հաստատությունները: Այս առանձնահատկությունը դրսևորվում է նաև իշխող վերնախավի ներսում տարբեր խմբերի շահերը ներկայացնող տարբեր ճնշումների խմբերի կողմից խորհրդարանի վրա ազդելու պրակտիկայի միջոցով, որոնք ձգտում են խորհրդարանի միջոցով իրենց համար շահավետ օրինագծերի անցկացմանը»⁹⁶:

Այս կապակցությամբ գիտնականները, այդ թվում՝ ռուս գիտնականները, պառլամենտարիզմը զարգացնելու, թերությունները վերացնելու և այս ինստիտուտը բարեփոխելու նպատակով առաջարկում են մի շարք միջոցառումներ, որոնց իրականացումը կապված է լրատվամիջոցների հետ: Օրինակ, Ա. Ա. Զերինովը նշում է խորհրդարանի առավելագույն տեղեկատվական թափանցիկության անհրաժեշտությունը, նրա համագործակցությունը լուրջ ՉԼՄ-ների հետ, որոնք պետք է օբյեկտիվորեն լուսաբանեն օրենսդիր մարմնի գործունեությունը:

Եվ դա է պատճառը, որ շատ տեսաբաններ պառլամենտարիզմի ավանդույթների ձևավորման գործում հատկապես նշում են **խորհրդարանական լրագրության դերը**, չնայած ոչ բոլոր հետազոտողներն են հակված այս ուղղությունը առանձնացնել որպես առանձին և ինքնուրույն: Այսպիսով, Լ.Ն. Տիմոֆեևան խորհրդարանական լրագրությունը ճանաչում է որպես քաղաքական լրագրության մասնագիտացումներից մեկը՝ մի ուղղություն, որի օբյեկտը քաղաքականությունն է որպես ամբողջություն (քաղաքական հարաբերություններ,

⁹⁶ Տե՛ս А. А. Керимов. Современный парламентаризм: особенности и проблемы развития. // Известия Иркутского государственного университета. Серия «Политология. Религиоведение». 2015. Т. 11. С. 30-36:

դիվանագիտություն, իշխանություն), քաղաքական գործիչները և տարբեր քաղաքական ինստիտուտները⁹⁷:

Այնուամենայնիվ, գիտության մեջ աստիճանաբար ամրագրվում է այն դիրքորոշումը, ըստ որի **խորհրդարանական լրագրությունը ճանաչվում է որպես լրագրողական գործունեության լիովին անկախ մաս, և այս մոտեցումը հիմնավորվում է առաջին հերթին մեդիայի դերի ուժեղացմամբ և պառլամենտարիզմի ավանդույթների զարգացմամբ**: Հետխորհրդային տարածքում այս թեմայի հիմնարար ուսումնասիրություններից է «Խորհրդարանական լրագրություն. հետահայաց, տեսություն, պրակտիկա»⁹⁸ ուսումնական ձեռնարկը Ի.Ն. Թագուշևի խմբագրությամբ: Մոտեցումն այս դեպքում կարելի է հակիրճ ձևակերպել հետևյալ կերպ. «խորհրդարանական լրագրություն» տերմինը օգտագործվում է տարբեր իմաստներով, ամենաընդհանուր ձևով որպես լրագրողական գործունեության տեսակ (տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, լրատվական գործակալություններ, առցանց հրապարակումներ)՝ լուսաբանելու ներկայացուցչական (անկախ մակարդակից) կառավարման համակարգի աշխատանքը: Հաճախ խորհրդարանական լրագրություն ասելով հասկանում են «ներկայացուցչական իշխանություն» թեմային նվիրված բոլոր մեդիապրոդուկտները:

Այնուամենայնիվ, այսօր խորհրդարանական լրագրությունը հակված են առանձնացնել որպես առանձին ուղղություն ինչպես գիտնականները, այնպես էլ ՉԼՄ-ների ներկայացուցիչները: Մասնավորապես, պետերրուրքյան «Հասարակություն և Էկոլոգիա» պարբերականի գլխավոր խմբագիր Ս.Ա. Լիսովսկին դիտարկում է անգամ խորհրդարանական լրագրության տարածաշրջանային առանձնահատկությունները⁹⁹: Ավելին, նա նշում է, որ խորհրդարանական լրագրությունն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու տեսա-

⁹⁷ Ст'ю Тимофеева Л.Н. Парламентская журналистика как вид политической журналистики // Журналистика в 2005 году: трансформация моделей СМИ в постсоветском информационном пространстве. – М., 2006, с.570:

⁹⁸ Ст'ю «Парламентская журналистика: ретроспектива, теория, практика». Отв. ред. И.Н. Тхагушев. Учебное пособие, М., 2000.

⁹⁹ Ст'ю Лисовский С.А. Региональные особенности парламентской журналистики // Журналистика в 2005 году: трансформация моделей СМИ в постсоветском информационном пространстве. – М., 2006, с.563:

կի՝ պասիվ, որն իրենից ներկայացնում է խորհրդարաններում իրադարձությունների և փաստերի միայն արձանագրում, և ակտիվ, որը տեղեկատվական բաղադրիչից բացի արտացոլում է նաև ՉԼՄ-ների ներկայացուցիչների քաղաքացիական դիրքորոշումը, այսինքն՝ լուսմներին, կյոր սեղաններին նրանց մասնակցության արդյունքները:

Խորհրդարանական լրագրությունը, ինչպես գիտության մեջ, այնպես էլ գործնականում, հետևողականորեն ճանաչվում է որպես մեղիագործությունության լիովին անկախ տեսակ, քանի որ այն իշխանական հարաբերությունների համակարգում կայունորեն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Ռուս հետազոտողների կարծիքով, տեղեկատվական միջավայրի կառավարումը թույլ է տալիս կառավարել հասարակությունը, իսկ խորհրդարանական լրագրությունը նույնիսկ «ինքնուրույն մեղիա ինստիտուտ է, որի ազդեցությունը ընթերցող հասարակության վրա համեմատելի է հենց խորհրդարանական մարմինների հասարակական ազդեցության հետ, իսկ որոշ իրավիճակներում (ավելի հաճախ՝ ճգնաժամային) նույնիսկ կարող է գերազանցել այն:»¹⁰⁰:

Այնուամենայնիվ, գաղափարական ապարատի և ընդհանրապես գիտական փաստարկության հետ կապված խնդիրը լուծված չի համարվում: Այսօր «խորհրդարանական լրագրություն» տերմինը կիրառվում է տարբեր իմաստներով և միշտ չէ, որ ստանում է միանշանակ բովանդակություն: Հաճախ, այս հասկացության ամենալայն մեկնաբանության մեջ, տվյալ տերմինը կիրառվում է լրատվամիջոցների նկատմամբ, որոնց բովանդակությունը նվիրված է խորհրդարանների գործունեությանը, ընդհանուր առմամբ օրենսդիր իշխանությունը: Ընդ որում, նման մեղիաները կամ մեղիապրոդուկտը կարող են պատկանել նաև օրենսդիր մարմիններին (օրինակ՝ խորհրդարանական հատուկ հրատարակություններ՝ «Պառլամենտական թերթ», «Ռուսաստանի Դաշնությունն այսօր» ամսագիր, կայքեր և այլն, հեռուստատեսային հաղորդումներ, ինչպես «Ռոսիա» ալիքում՝ «Պառլամենտական ժամ» և «Սենատ», ռադիոհաղորդումներ՝ «Պառլամենտական ձայն», «Պառլամենտական շաբաթ. իրադար-

¹⁰⁰ Ст'е Шлосберг Л.М. Псковская парламентская журналистика как зеркало современного регионального парламентаризма // Псковская парламентская журналистика 2001–2007. – Псков, 2008, с.2:

ձույթուններ և փաստեր ռադիոյում», այս նյութերը պատրաստում են օրենսդիր մարմինների մամուլի վարչությունները):

Բացի այդ, որոշ ՉԼՄ-ներ նույնիսկ կարող են իրենց թույլ տալ հաստիքային խորհրդարանական թղթակից, ունեն օրենսդիր իշխանությանը նվիրված մշտական խորագիր, որի շրջանակներում թողարկվում են խորհրդարանի և խորհրդարանականների մասին տարբեր ժանրի և ձևաչափի նյութեր, ընդունված օրենքներ, փորձագետների մեկնաբանություններ և հարցազրույցներ այս կամ այն օրենսդրական գործընթացների վերաբերյալ, հրապարակվում է վերլուծություն և նույնիսկ պոլեմիկա:

Հետագոտող Պ.Ի. Ակայումովն իր «խորհրդարանական լրագրության պատմությունն ու դերը Պետական Դումայի և զանգվածային լրատվական միջոցների փոխգործակցության մեջ»¹⁰¹ հոդվածում առանձնացնում է խորհրդարանական լրագրության մի քանի հիմնական գործառնություններ.

② **տեղեկատվական** (հանրությանը տեղեկացնել քննարկվող օրենքների մասին, մեկնաբանել ընդունված կարևոր որոշումները և հայտարարությունները, պարզել պատգամավորների կարծիքները երկրում և արտերկրում նշանակալի իրադարձությունների վերաբերյալ և այլն)

② **քարոզական** (կախված խմբագրական քաղաքականությունից՝ ստեղծել խորհրդարանի, ընդհանուր առմամբ օրենսդիր իշխանության դրական կամ բացասական իմիջ, մեկնաբանել և ներկայացնել ընդունված օրենքն այս կամ այն լույսի ներքո)

② **ներկայացուցական** (օպերատիվ ստանալով հավաստի տեղեկատվություն ընդունման պատրաստվող օրինագծերի մասին, որոնք որևէ կերպ կարող են վտանգ ներկայացնել հանրային շահերի, որոշակի խմբերի շահերի համար, խորհրդարանի հետ աշխատող լրագրողներն ու մեդիան կարող են հանդես գալ կոնկրետ դիրքորոշմամբ, նախապես տեղեկացնել իշխանության հետ կոնֆլիկտի հնարավորության, այս կամ այն միջոցների ձեռնարկման անհրաժեշտության մասին)

¹⁰¹ Ст'ю Акаёмов П.И. История и роль парламентской журналистики во взаимодействии Государственной Думы и средств массовой информации. // Журнал «Преподаватель XXI век», Филологические науки, 2009, с. 364:

❷ **կորպորատիվ** (լինելով կոնկրետ կոլեկտիվ շահերի կրողներ՝ լրագրողները կարող են խմբային համերաշխություն դրսևորել այս կամ այն օրինագծերի լուսաբանման, իրենց գործընկերներին հետապնդումներից պաշտպանվելու գործում և այլն)

❷ **գովազդային** (ՉԼՄ-ները կարող են մշտապես լուսաբանել խորհրդարանական կոնկրետ խմբակցությունների գործունեությունը, ներկայացնել այն կուսակցական աշխատանքի համատեքստում, ինչպես նաև կարող են իրականացնել կոնկրետ խորհրդարանականների PR, օրինակ՝ ցույց տալ քաղաքական գործչին ոչ միայն պատգամավորի դերում, այլև որպես ընտանիքի մարդ, բարերար, մարզիկ և այլն)

❷ **իրավական** (իրականացնել վերահսկողության գործառույթ խորհրդարանի և հասարակության, խորհրդարանականների, ընտրագանգվածի հետ պատգամավորի թեկնածուների հարաբերություններում, օրենքների ընդունման և կատարման գործընթացների նկատմամբ):

Այս դասակարգումը կարելի է համարել առավել ընդգրկուն, և հենց դա դարձավ այս հետազոտության շրջանակներում անցկացված փորձագիտական հարցման հիմնական կետերից մեկը: Բացահայտված գործառույթները նաև հնարավորություն են տալիս բացահայտել այն երկրները, որոնք ունեն պառլամենտարիզմի առավել հետևողականորեն զարգացող ավանդույթներ:

Պառլամենտարիզմի զարգացումն անբաժան է տեղեկատվական բաղադրիչից: «Խորհրդարան» տերմինն ինքնին (լատիներեն «parlare» նշանակում է խոսել, քննարկել) ապրիորի ընդգծում է օրինաստեղծ, հանրային և տեղեկատվական-հաղորդակցական գործունեության համակեցությունը: Հանրային քննարկումների, քաղաքական գործընթացների նկատմամբ հրապարակային մոտեցման, ժողովրդի կամքի արտահայտման անհրաժեշտությունը խորհրդարանները դարձնում են ժողովրդավարության զարգացման և արդար օրենսդրության ապահովման, խոսքի ազատության երաշխիքների, ընդհանուր առմամբ ներկայացուցչության առանցքային օղակ: Եթե խոսենք կատարելության մասին, ապա խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետությունում հասարակությունը ոչ միայն պետք է տեղեկացված լինի, այլև պետք է ձայնի իրավունք ունենա օրինաստեղծ գործընթացում, որն էլ ապահովվում է մամուլի միջոցով,

պետք է հնարավորություն ունենա մասնակցելու իրավական ակտերի քննարկումներին, օրինակ՝ առցանց քվեարկության, հարցումների և այլնի միջոցով:

Զնայած հին Հունաստանում և Հին Հռոմում գոյություն ունեին ժամանակակից խորհրդարանների «նախորդներ», այնուամենայնիվ, այնպիսի ներկայացուցչական և օրենսդիր մարմին, որն արտացոլում է «խորհրդարան» տերմինի էությունը իր այսօրվա իմաստով, ձևավորվել է միջնադարյան Անգլիայում: Բրիտանական պառլամենտա-րիզմի ավանդույթների ծագումը, ինչպես գիտենք, վերաբերում է XIII-XIV դարերի ժամանակաշրջանին, երբ Անգլիայում թագավորի իշխանությունը սահմանափակվում էր խոշոր ֆեոդալների, արիստոկրատների, բարձրագույն հոգևորականների, քաղաքացիների և գյուղացիների (համայնքների) ժողովով: Հենց բրիտանական խորհրդարանի համայնքների Պալատում այդ ժամանակվանից տեղի է ունենում կարծիքների հրապարակային փոխանակում հասարակության և երկրի համար կարևորագույն հարցերի շուրջ, խորհրդարանական տարեգրության միջոցով արդեն այն ժամանակ հաշվի է առնվել «հասարակական» կարծիքը: Հենց բրիտանական քաղաքական մշակույթում է առաջացել «հանրային ոլորտ» հասկացությունը, որն օգտագործվում է հաղորդակցման գործընթացների հետ կապված բոլոր գիտություններում (տերմինն ավելի խորը ձևակերպել է գերմանացի փիլիսոփա Յու. Հաբերմասը): Ըստ էության, արդեն այն ժամանակ խորհրդարանը դադարեց պարզապես հարթակ հանդիսանալ էլիտաների հարցումները հնչեցնելու համար, այլ սկսեց աշխատել նաև բնակչության ավելի լայն շերտերի համար, ինչն էլ հանգեցրեց ընդհանուր առմամբ ՉԼՄ-ների համակարգի և մասնավորապես խորհրդարանական լրագրության զարգացմանը:

Մեծ Բրիտանիան աշխարհի ամենահին ժողովրդավարություններից մեկն է, որտեղ ավելի քան 140 օրենսդրական փաստաթղթեր նվիրված են ՉԼՄ-ների համակարգին¹⁰², իսկ խոսքի ազատության սահմանափակումները խորհրդարանի կողմից սահմանվել են նախադեպային իրավունքով: Միևնույն ժամանակ,

¹⁰² Տարբեր երկրներում ժամանակակից մեդիա ոլորտի վիճակի վերաբերյալ սույն պարբերությունում ներկայացված թվային և փաստացի տվյալները բերված են հետևյալ աղբյուրից. «Энциклопедии мировой индустрии СМИ». // Учебное пособие под ред. Е.Л. Варгановой, М., 2019:

Բրիտանիան ճանաչում է ԵՄ առանցքային փաստաթղթերը, որոնք վերաբերում են կարծիքի արտահայտման ազատությանը, խոսքի ազատությանը և անձնական կյանքի իրավունքին: 2016 թվականից Մեծ Բրիտանիայում գործում են տեսալսողական մեդիա ծառայությունների Համաեվրոպական դիրեկտիվի դրույթները: Հարկ է նշել նաև, որ Մեծ Բրիտանիայի գլխավոր հեռարձակողի՝ բրիտանական հեռուստառադիոհեռարձակման BBC կորպորացիայի գործունեությունը կարգավորվում է Թագավորական խարտիայով, որը շտկվում և ճշգրտվում է յուրաքանչյուր 10 տարին մեկ: Այս փաստաթուղթը նախատեսում է տվյալ լրատվամիջոցի ֆինանսավորման համար հեռուստադիտողների բաժանորդային վճարի սահմանում, ինչը պետք է ապահովի BBC անկախությունը քաղաքական շահերից և ազատությունը գովազդից¹⁰³:

Խոսելով ՉԼՄ-ների վերահսկողական գործառնության զարգացման մասին, այդ թվում՝ պառլամենտարիզմի ավանդույթների համատեքստում, չի կարելի չհիշատակել 1996 թվականի Հեռարձակման մասին օրենքը, որը սահմանեց հակամենաշնորհային կարգավորման կարգը, այդ թվում՝ ՉԼՄ-ների խաչաձև սեփականության սկզբունքը և մեդիադոմինում գործարքների նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովումը: Սակայն, իրական հեղաշրջումը կատարվեց 2003-ին՝ բուռն քննարկումներից հետո, Հաղորդակցության մասին օրենքի ընդունմամբ, որը մինչ օրս ծառայում է որպես բրիտանական ՉԼՄ-ների գործունեության կարգավորման հիմնական իրավական ակտ: Այս օրենքը ոչմիանշանակ ընդունվեց մի շարք կազմակերպությունների կողմից, քանի որ այն փոխարինեց մի քանի կարգավորող մարմին մեկով, թույլ տվեց իրականացնել հեռահաղորդակցության և հեռարձակման համակարգի կարգավորման կենտրոնացում, չնայած որ մեղմացրել էր մեդիակոնտենտի բովանդակության նկատմամբ պահանջները: Առավել սուր ընկալվեց այն դրույթը, որի համաձայն օտարերկրացիները, այդ թվում՝ ոչ Եվրամիության երկրներից, հնարավորություն էին ստացել դառնալ բրիտանական մե-

¹⁰³ Մանրամասն տե՛ս՝ Беглов С.И. Четвертая власть: Британская модель. М., 2002. А также: Любимов Б.И. Семьдесят лет британского вещания: Краткая история радиовещания и телевидения Великобритании. М., 1995:

դիարևկերությունների սեփականատերեր¹⁰⁴: Ավելին, պետությունն իրավունք էր ստացել միջամտել ՉԼՄ-ների աշխատանքին այն դեպքերում, երբ նյութերի բովանդակությունը վտանգ է ներկայացնում հանրային շահերի համար:

Հենց այս օրենքն է հանգեցրել հաղորդակցության վարչության (Office of Communications, Ofcom, Օֆքոմ) ձևավորմանը, որն իրականացնում է մի քանի առանցքային գործառնություններ.

1. լիցենզիաների տրամադրում հեռարձակողներին, օպերատորներին, ծառայություններ մատուցողներին
2. հեռարձակման որակի վերահսկում
3. հեռահաղորդակցության համակարգի ընդհանուր կառավարում:

Օֆկոմի ի հայտ գալը Բրիտանական պետության կողմից ՉԼՄ-ների գործունեության կարգավորման նոր տեսակ սահմանելու հայտ էր, որի շրջանակներում պետք է ապահովվի պետական միջամտության նվազագույնի հասցնումը մեդիաինդուստրիայում, բազմակարծության և մեդիաբովանդակության բազմազանությունը:

2005 թվականին Տեղեկատվության ազատության մասին օրենքի ընդունմամբ Մեծ Բրիտանիայում աստիճանաբար ձևավորվեց հակամենաշնորհային կարգավորման հետագա ազատականացման պահանջարկ, որը հատկապես արդիական դարձավ 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո: 2009-2010 թթ. ձևավորվեց երկու տարբեր մոտեցումներ ճգնաժամից և ՉԼՄ-ների գովազդային եկամուտների կրճատումից տուժածներին աջակցելու ուղղությամբ: Մի կողմից, պահպանողական թեև խորհրդարանականներն առաջարկեցին մեղմել կամ ընդհանրապես վերացնել մեդիադրստում խաչաձև սեփականության հնարավորությունների սահմանափակումները: Մյուս կողմից, լեյբորիստ պատգամավորներն առաջարկում էին ուժեղացնել պետական միջամտության մեխանիզմները մեդիատնտեսագիտություն, պայմաններ ստեղծել տարածաշրջանային և տեղական ՉԼՄ-ներին աջակցելու համար, այդ

¹⁰⁴ ՉԼՄ-ների սեփականության կառուցվածքի հետ կապված կատարվել են նաև այլ փոփոխություններ: Օրինակ, լրատվամիջոցներից մեկը կարողացավ ունենալ միաժամանակ և՛ հեռուստատեսային, և՛ ռադիոընկերությունների սեփականատեր. Ցանկացած կոնցերն է բաժնետոմսեր գնել «Channel 5» առևտրային ազգային հեռարձակողի և մյուսների բաժնետոմսերում:

թվում՝ խոշոր հեռարձակողի հետ նրանց համագործակցության զարգացման միջոցով՝ ի դեմս BBC: Սակայն, ի հեճուկս զանգվածային հանրային քննարկումների, կառավարությունն ի վերջո պահպանեց ՉԼՄ-ների կարգավորման նախկին մոտեցումը, ըստ որի բավականին մեղմ օրենսդրական վերահսկողությունը (light touch control) գուցորդվում է ազատ շուկայի հետևողական զարգացման հետ:

Այս համատեքստում ուշագրավ է նշել բրիտանական մամուլի աշխատանքային պրակտիկայի, էթիկայի, մշակույթի հարցերով հետաքննությունը, որը հարուցվել էր հայտնի մարդկանց և հանցագործության գոհերի հեռախոսները կոտրելու հետ կապված սկանդալի արդյունքում՝ Ռ.Մերդոկի «News of the World» պարբերականի լրագրողների կողմից:

Ավելի քան մեկ տարի տևած հասարակական հետաքննությունից հետո, որի շրջանակն ընդլայնվեց՝ ներառելով BBC-ն և սոցիալական ցանցերը, 2012 թվականի նոյեմբերի 29-ին պարոն Բրայան Հենրի Լևեսոնը (պաշտոնաթող դատավոր, որը ծառայում էր որպես թագավորական աթոռի բաժնի նախագահ և քրեական արդարադատության ղեկավար) հրապարակեց ամփոփիչ զեկույց¹⁰⁵, որն առաջարկում էր օրենսդրական վերահսկողություն սահմանել մամուլի գործունեության նկատմամբ: Չնայած խորհրդարանականների և տարբեր քաղաքական խմբերի կողմից այդ առաջարկին լայն աջակցությանը, Քեմերոնի կառավարությունը հրաժարվեց նման սցենարից: Բրիտանական հասարակությունում էլ Լևեսոնի զեկույցը, որը հստակ ցույց էր տվել քաղաքացիների դժգոհությունը մամուլի աշխատանքից, նույնպես միանշանակ չի ընդունվել: Արդյունքում կառավարությունը պաշտոնական ընդդիմության հետ համատեղ մշակեց ՉԼՄ-ների ինքնակարգավորման զարգացման առաջարկներ, որոնք հիմնված էին հանրությանը դրանց հաշվետվողականության սկզբունքի վրա:

Ակտիվ հանրային քննարկումներից հետո ի հայտ եկան ՉԼՄ-ների ինքնակարգավորման նոր մարմիններ. «Մամուլի ստանդարտների անկախ կազմակերպություն» (Independent Press Standards

¹⁰⁵ Տե՛ս «Запрос Левесона: культура, практика и этика прессы». Материалы Национального архива. // https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/229039/0779.pdf:

Organisation, IPSO), որը փոխարինելու է եկել մինչ այդ գործող Մամուլի դեմ բողոքների հանձնաժողովին (Press Complaints Commission), ինչպես նաև «Մամուլի անկախ մոնիտոր» (IMPRESS) ընկերությունը, որն ամբողջությամբ համապատասխանում է «Լևեսոնի հարցում» (Leveson Inquiry) պահանջներին: Չնայած այն համագամանքին, որ ՉԼՄ-ների վերաբերմունքը այս երկու կարգավորիչների նկատմամբ տարբեր է, հենց նրանց պահանջների և Բրիտանական լրագրողների միության էթիկայի կանոնների վրա են հիմնականում հենվում մեղիադրոտի ներկայացուցիչները:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ *Մեծ Բրիտանիայում՝ պառլամենտարիզմի բարձր զարգացած ավանդույթներ ունեցող երկրում, առկա է լրատվամիջոցների գործունեությանը պետական միջամտությունը նվազագույնի հասցնելու ձգտում, գրաքննության խիստ սահմանափակումների գործնական բացակայություն, իսկ առաջնահերթությունը տրվում է ՉԼՄ-ների ինքնակարգավորման սկզբունքներին: Իսկ հասարակությանը ՉԼՄ-ների հաշվետվողականության պահանջը բարենպաստ պայմաններ է ստեղծում ընդհանուր առմամբ մեղիափնդուստրիայի և մասնավորապես խորհրդարանական լրագրության զարգացման համար:*

Պառլամենտարիզմի ավանդույթների զարգացման համատեքստում տեղեկատվական և հաղորդակցական գործընթացների ուսումնասիրության համատեքստում ամենաուշագրավ դեպքերից մեկը համարվում է ԱՄՆ Կոնգրեսի աշխատանքը: Այսպիսով, Ն.Ա. Սախարովը անցյալ դարի վերջին, ԽՍՀՄ-ում հայտարարված հրապարակայնության դարաշրջանի պայմաններում, գրել էր Կոնգրեսի աշխատանքում այս սկզբունքի կարևորության մասին. «Օրինագծերի հեղինակների անունների գրանցումը և անվանական ֆիքսված քվեարկությունը, որն անմիջապես հասանելի է դառնում հանրության համար, հանդիսանում են ամերիկյան Խորհրդարանի գործունեության հրապարակայնության կարևոր տարրեր: Բացի այդ, Կոնգրեսի երկու պալատների նիստերի ճնշող մեծամասնությունը բաց է հանրության համար: Դա հիլիններում առանձնացված են հատուկ սրահներ՝ առանձին հանրության և առանձին մամուլի ներկայացուցիչների համար: 1978 թվականին ներկայացուցիչների պալատն առաջինը համաձայնեց իր նիստերի ուղիղ հեռարձակմանը, իսկ 1980-

ականներին նրա օրինակին հետևեց Մենատը: Այս հեռարձակումները տանը կարող են տեսնել բոլոր ցանկացողները, նրանք, ում հեռուստացույցները միացված են կաբելային հեռուստատեսության համակարգին: Երբեմն կարելի է տեսնել պալատների կոմիտեների ամենադրամատիկ նիստերը: Նիստերը, որտեղ քննարկվում է ռազմական քաղաքականությունը, անցնում են փակ: Ամերիկացի որոշ քաղաքագետներ կարծում են, որ ԱՄՆ-ի հասարակությունը բավականաչափ տեղեկացված չէ Կոնգրեսում շատ կարևոր որոշումների մասին, որոնք ընդունվում են փակ դռների հետևում: Այնուամենայնիվ, հրապարակայնության մակարդակը ԱՄՆ Կոնգրեսի աշխատանքում, անկասկած, շատ բարձր է: Այդ մասին է վկայում նաև այն, որ Կոնգրեսի նիստերի սղագրական զեկույցները հաջորդ օրը իսկ հրապարակվում են «Կոնգրեշնլ ռեկորդ» պաշտոնական տեղեկագրում: Հանձնաժողովներում խումբների նյութերը նույնպես ամբողջությամբ հրապարակվում են և հաճախ կազմում են ոչ միայն հատորներ, այլ հատորների շարք: Բացի այդ, ցանկացած օրենսդիր կարող է մամուլի ասուլիս անցկացնել և հանդես գալ այս կամ այն հայտարարությամբ: Վերջապես, կոնգրեսականներն ու սենատորները հաճախ նամակներ և հոդվածներ են ուղարկում առաջատար թերթեր՝ ներկայացնելով իրենց սեփական դիրքորոշումները, և թերթերը պատրաստակամորեն հրապարակում են դրանք: Այնուամենայնիվ, Կոնգրեսի անդամները չունեն ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ թերթերով խոսելու հատուկ համաձայնեցված իրավունքներ, քանի որ ԱՄՆ-ում բոլոր լրատվամիջոցները մասնավոր ձեռքերում են, և սեփականատերերն իրենք են որոշում, թե որ նյութերը պետք է հեռարձակվեն կամ տպագրվեն: Պարզ է, սակայն, որ օրենսդիրները մշտապես գտնվում են ամերիկյան մամուլի ուշադրության կենտրոնում»¹⁰⁶: Որպես կարևոր պարամետր՝ Սախարովն ընդգծում է նաև այն, որ ամերիկացի օրենսդիրները հենվում են «Կոնգրեսին կից ստեղծված հզոր տեղեկատվական-վերլուծական համակարգի վրա»:

ԱՄՆ-ի օրինակը ուշագրավ է ոչ միայն վերը նշվածի պատճառով: Այստեղ, ի տարբերություն զարգացած երկրների մեծամասնության, ՉԼՄ-ների և լրագրողական գործունեության լայնածավալ

¹⁰⁶ Տե՛ս Н.А. Сахаров. Конгресс США: практика парламентаризма. //«Зарубежное военное обозрение», №8, 1989 // http://war1960.ru/usa/congress_usa.shtml:

օրենսդրական կարգավորման ավանդույթ չի ձևավորվել, իսկ վիճելի հարցերը (գրապարտություն, միջամտություն մասնավոր կյանքին, ազգային անվտանգություն և այլն) լուծվում են առաջին հերթին նախադեպային իրավունքի միջոցով, որի հիմքում ընկած են տարբեր ատյանների դատարանների որոշումները: Ընդ որում, էլեկտրոնային մեդիաների գործունեությունը կարգավորվում է Դաշնային կապի հանձնաժողովի կողմից (Federal Communications Commission): Կարևոր է, որ ԱՄՆ-ում չկա նաև ՉԼՄ-ների գրանցման հատուկ ընթացակարգ, մեդիան գործում է ինչպես ցանկացած այլ բիզնես: Միայն եթերային ռադիո- և հեռուստաընկերությունների համար է սահմանված հեռարձակման լիցենզիա ստանալու կարգը: Մնացածը՝ տպագիր մամուլը, կաբելային ալիքները, առցանց մեդիան և լրատվամիջոցների այլ խմբեր, որոնց համար նման ընթացակարգ սահմանված չէ, ինչպես նաև տնտեսության այլ ճյուղերի սուբյեկտները, ենթարկվում են բացառապես հակամենաշնորհային օրենքներին (օրինակ՝ Շերմանի Օրենքը 1890 թ-ից): Իսկ 1996թ. Կապի մասին օրենքը (Telecommunications Act 1996), որը հիմնականում վերաբերում է մեդիասեփականության և հեռահաղորդակցության օպերատորների աշխատանքին, պարբերաբար թարմացվում է՝ հաշվի առնելով տեխնոլոգիական և այլ փոփոխությունները:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ ***ԱՄՆ-ում, ինչպես Մեծ Բրիտանիայում, ձևավորվել են խորհրդարանական լրագրության զարգացմանը նպաստող պայմաններ, քանի որ կարևորվել են հանրային գործընթացները, հանրային վերահսկողության և իշխանության հաշվետվողականության սկզբունքները, իսկ պետական միջամտությունը ՉԼՄ-ների գործունեության կարգավորմանը հասցվել է նվազագույնի:***

Դիտարկենք մեկ այլ առաջադեմ ժողովրդավարական երկրի փորձը, որը մեծությամբ երկրորդն է աշխարհում՝ Ռուսաստանից հետո՝ Կանադայի: Չնայած երկիրը պաշտոնապես կոչվում է Դոմինիոն Ազգերի Համագործակցության կազմում, և պետության ղեկավարը պաշտոնապես գեներալ-նահանգապետն է, որը նշանակվում է բրիտանական միապետի կողմից վարչապետի առաջարկությամբ 5 տարի ժամկետով, բայց իրականում դա բացարձակապես անկախ պետություն է, որտեղ իշխանությունը պատկանում է երկպալատ խորհրդարանին: Ընդ որում, վարչապետ է դառնում և կառավարությո-

յուն ձևավորում մի քաղաքական գործիչ, որը ներկայացնում է ընտրությունների արդյունքում Համայնքների պալատում մեծամասնություն ստացած կուսակցությունը:

Կանադայում ՉԼՄ-ների մասին միասնական օրենք չկա, մեղիան առավելագույն անկախ է իշխանություններից, և գրաքննություն, համապատասխանաբար, գոյություն չունի: Այս ամենը հաստատվում է 1982 թվականի իրավունքների և ազատությունների Խարտիայի դրույթներով, ինչպես նաև մի շարք դաշնային և տարածաշրջանային օրենքներով, որոնք ենթարկվում են համակարգված վերանայման: Ժողովրդավարական սկզբունքների ապահովման գործում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում 1982թ. Տեղեկատվության հասանելիության մասին օրենքը, որը իշխանություններին, տարբեր մակարդակների պետական հիմնարկներին պարտավորեցնում է ժամանակին և ողջամիտ վճարի դիմաց որոշակի տեսակի տեղեկատվություն տրամադրել նույնիսկ մասնավոր անձանց՝ ինչպես Կանադայի քաղաքացիներին, այնպես էլ երկրի տարածքում մշտապես բնակվող անձանց: Օրենքով կարգավորվող պետական փաստաթղթերին հասանելիություն տրամադրելու անօրինական մերժման դեպքում քաղաքացիների բողոքներով կարող է զբաղվել ***տեղեկատվության հարցերով Հանձնակատարը: Սա շատ ուշագրավ ինստիտուտ է. խորհրդարանին հաշվետու մարդու իրավունքների պաշտպանն իրավունք ունի գործել առանց իրավական ձգձգումների և ձևակա-
նությունների, ինչը թույլ է տալիս օպերատիվ և արդյունավետ ար-
ձագանքել հանրությանը հուզող խնդիրներին և քաղաքացիների
բողոքներին:***

1991 թ. հեռուստառադիոհեռարձակման մասին Օրենքը սահմանեց երկրի համար հիմնարար սկզբունք. հեռարձակման համակարգը պետք է պատկանա կանադացիներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Կանադայի հանրային հեռարձակման կորպորացիայի (Canadian Broadcasting Corporation, CBC) գործունեությանը և ֆինանսավորմանը: Իր հերթին, Ռադիոյի, հեռուստատեսության և հեռավար կապի հանձնաժողովը (CRTC) հեռարձակման լիցենզիաներ է տալիս և կարգավորում Կանադայի բոլոր հեռարձակողների աշխատանքը: Ընդ որում, լիցենզավորման հարցում կարևոր է նաև այն ասպեկտը, որ հեռահաղորդակցության մասին 1991 թ. Օրենքը լիցենզիաներ ստանալիս կանադական ընկերություններին առաջնա-

հերթություն է նախատեսում օտարերկրյա ընկերությունների նկատմամբ:

Կանադայում քաղաքական ինստիտուտների, խորհրդարանի և ՉԼՄ-ների փոխհարաբերություններում առանձնահատուկ տեղ են գրավում վերլուծական կենտրոնները, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես իրականացվող աշխատանքների սպեկտրով, այնպես էլ գործիքակազմով: «Եթե, օրինակ, վերլուծական կենտրոնը ձգտում է երկարաժամկետ ազդեցություն ունենալ Կանադայի արտաքին քաղաքականության նպատակների ձևավորման վրա, ապա այն կարող է հրավիրել Կանադայի խորհրդարանի կամ կառավարության անդամներին մասնակցել քաղաքական սեմինարների, այլ ոչ թե փորձել հասնել այդ նպատակին ՉԼՄ-ներում հրապարակումների և զանգվածային լսարանի համար նախատեսված այլ մեդիառեսուրսների ներգրավման միջոցով: Եվ հակառակը, եթե վերլուծական կենտրոնի հիմնական նպատակն է օգնել ձևավորել արդիական օրակարգ և լայն քննարկում անցկացնել երկրի վարած արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ, ապա կենտրոնը կարող է առաջնահերթություն տալ զանգվածային լրատվության միջոցներին հասանելիություն ստանալուն, քան խորհրդարանի պատգամավորների և կառավարության անդամների համար վերլուծական նյութեր գրելուն»¹⁰⁷: Այսինքն, հաճախ հենց այդպիսի կենտրոնները կարող են նպաստել պառլամենտարիզմի և խորհրդարանական լրագրության զարգացմանը, քանի որ դրանք իրականացնում են ՉԼՄ-ների և հանրության համար վարվող քաղաքականության և օրենքների պարզաբանումն ու մեկնաբանումը: Հաճախ դրանք շատ ավելի հաջող են տարածում կառավարության ներսում, քաղաքական էլիտայի, մեդիայի և հասարակության շրջանում հետազոտությունների արդի արդյունքները: Ահա թե ինչու նրանց համագործակցությունը մեդիայի հետ կարելի է դիտարկել որպես առանձին ծավալուն հետազոտության թեմա:

Սակայն վերջերս Կանադայի օրենսդրությունը տեղեկատվության հասանելիության հարցում հայտնվել է միջազգային մակարդակի քաղաքական և մեդիա սկանդալների էպիկենտրոնում:

¹⁰⁷ St' u Журбей Е.В. Мозговые центры и внешнеполитический процесс Канады: современное состояние и перспективы. // Ойкумена. 2016. № 4, с. 161:

Խոսքը գնում է 2023 թ. առցանց նորությունների վերաբերյալ օրենքի ընդունման մասին (Online News Act): Օրենքն ուղղված է Կանադայում ՉԼՄ-ների ֆինանսավորման նոր միջոցի ներդրմանը և պահանջ է ներկայացնում տեխնոլոգիական հսկաներին, ինչպիսիք են Meta-ն (Ռուսաստանում ճանաչվել է ծայրահեղական կազմակերպություն) և Google-ը: Վերջիններս պետք է պայմանավորվեն կանադական մեդիաընկերությունների հետ իրենց լրատվական նյութերը որոշակի վճարի դիմաց տեղադրելու մասին: Այսպիսով, **Կանադայի իշխանությունները ցանկանում են աջակցել տեղական լրատվամիջոցներին, որոնց արտադրանքից, օրենսդիրների կարծիքով, օգտվում են տեխնոլոգիական ընկերությունները:** Դրան կտրուկ բացասաբար են արձագանքել ՏՏ ոլորտի հսկաները: Այսպես, Meta ընկերությունում հայտարարել են, որ հենց առցանց նորությունների մասին օրենքն ուժի մեջ մտնի, Facebook և Instagram սոցցանցերի վարչակազմերը որոնողական համակարգերից կհեռացնեն կանադական նորությունների հղումները: Google-ը նաև կարծում է, որ այսպես կոչված «հղումների մասին օրենքը» անսահմանափակ ֆինանսական պատասխանատվություն է դնելու ընկերության վրա «ուղղակի կանադացիներին տեղական տեղեկատվությանը հասանելիություն տրամադրելու համար»: Ընկերության ներկայացուցիչ Քենթ Ուոքերի խոսքով՝ տեղեկատվական ոլորտում կանադական իշխանությունների նոր քաղաքականությունը «խախտում է որոնողական համակարգերի և ընդհանուր առմամբ Ինտերնետի աշխատանքի սկզբունքները»: Այդ պատճառով 2023 թվականի ամռանը Google-ը որոշում է կայացրել իր որոնողական համակարգում չցուցադրել Կանադայի տեղական առցանց հրատարակությունների նորությունների հղումները¹⁰⁸: Անշուշտ, նույնիսկ մեդիահանրությունում այս օրենքի դրույթները միանշանակ չեն ընկալվում. փորձագետները նշում են, որ այս օրենսդրական նախաձեռնությունը մի կողմից խախտում է կանադացի օգտատերերի իրավունքները, իսկ մյուս կողմից՝ կարող է շահավետ չլինել տեղի մեդիաընկերությունների համար (վարկանիշի, տրաֆիկի, հանրահայտության, մեջբերումների կորուստ և այլն):

¹⁰⁸ Տե՛ս Google закроет пользователям Канады доступ к местным новостям.// ТАСС, 30.06.2023// <https://tass.ru/ekonomika/18156965>:

Այս թեմայի ուսումնասիրության մեկ այլ հաջող օրինակ կարող է լինել այնպիսի խորհրդարանական հանրապետության փորձը, ինչպիսին Ֆինլանդիան է: Այս երկիրը մինչև 1809 թվականը Շվեդիայի մի մասն էր, բայց նապոլեոնյան պատերազմների արդյունքում այն դարձավ Ռուսական կայսրության մաս՝ պահպանելով անկախ պետության շատ ատրիբուտներ՝ իր Սահմանադրությունը, բանակը, ազգային արժույթը, իսկ 1865 թվականից սկսեց գործել Ֆինլանդիայի խորհրդարանը: 1917 թվականին Ֆինլանդիան դարձավ անկախ պետություն, որը ներկայումս համարվում է աշխարհում ամենահաջողվածներից մեկը տնտեսության, սոցիալական բարեկեցության և բնակչության սոցիալական ապահովության տեսանկյունից (անվճար կրթություն, բժշկություն և այլն): Ֆինլանդիան առաջատար դիրքեր է զբաղեցնում ամենաքիչ կոռումպացված երկրների, խոսքի ազատության և քաղաքացիների իրավունքների պաշտպանության վարկանիշներում: Հենց Ֆինլանդիայում կանայք աշխարհում առաջին անգամ հավասար ընտրական իրավունք են ստացել տղամարդկանց հետ:

Ֆինլանդիայի Սահմանադրությունը 1919 թ. խոսքի ազատության սկզբունքը ճանաչեց որպես կարևորագույն սահմանադրական ազատություն, և հենց այդ դրույթի վրա են հիմնվում երկրում ընդունված ՉԼՄ-ների և մեդիահաղորդակցությունների գործունեությունը կարգավորող բոլոր 25 օրենքները: Ուշագրավ է 2004 թվականին ընդունված ՉԼՄ-ներում արտահայտվելու ազատության մասին Օրենքը, որը լրացնում է խոսքի ազատության ապահովման վերաբերյալ իրավական ակտերը: Ծնորհիվ այս փաստաթղթի Ֆինլանդիան առաջիններից մեկն է Եվրոպայի զարգացած երկրների շարքում, որը ինտերնետ մատակարարների համար պատասխանատվություն է սահմանել առցանց տիրույթում փոխանցվող բովանդակության համար:

Լրագրության բոլոր ուղղությունների զարգացմանը՝ այդ թվում խորհրդարանական, նպաստում են նաև մի շարք այլ հանգամանքներ՝ առցանց մեդիայի պարտադիր կարգավորումը, մեդիաընկերությունների հարկման առանձնահատկությունները, մամուլի ինստիտուտի տնտեսական աջակցությունը: Ֆինլանդիայում մեդիաարդյունաբերության ոլորտում օտարերկրյա սեփականության իրավունքի որևէ սահմանափակումներ չկան: Մամուլին,

այդ թվում նաև կուսակցական, պետական սուբսիդիաների տրամադրման կարգը, սահմանվել է դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին՝ ոչ շահութաբեր, բայց սոցիալական նշանակություն ունեցող հրատարակություններին աջակցելու, բազմակուսակցական մամուլի սկզբունքը պահպանելու և քաղաքական մշակույթում բազմակարծություն ապահովելու համար:

Միայն 2008 թվականի ճգնաժամով պայմանավորված ֆինանսական աջակցությունը կրճատվեց, հիմնականում պահպանվեցին ազգային փոքրամասնությունների հրատարակություններին, մշակութային և վերլուծական ուղղվածության մամուլին տրվող սուբսիդիաները: Բացի այդ, ճգնաժամի և ՉԼՄ-ների պետական ֆինանսավորման կրճատման պայմաններում 2012 թվականին տպագիր մամուլի շուկայի համար մտցվեց 9% ԱԱՀ, որը նախկինում ամբողջությամբ ազատված էր նման հարկից:

Տեսալսողական լրատվամիջոցների կարգավորումը հիմնված է հեռուստառադիոհեռարձակման մասին օրենքների վրա, լիցենզիաների տրամադրումն իրականացվում է պետության կողմից, կառավարությունը սահմանում է նաև հանրային հեռուստառադիոհեռարձակման բաժանորդային վճարի և հարկի չափը: Այստեղ հարկ է նշել հանրային հեռարձակողի Yleisradio (Yle) ֆինանսավորման ընթացակարգում կատարված մեկ կարևոր փոփոխություն: 2012 թվականին Ֆինլանդիայի խորհրդարանը հանրային հեռարձակման ավանդական լիցենզավորման փոխարեն սահմանել է հեռուստառադիոհեռարձակման կարգը: Այս օրենքի հիման վրա 2013 թվականից հեռուստառադիոհեռարձակման հարկը զանձվում է նրանց եկամուտներին համապատասխան, և այդ միջոցներն ուղղվում են Yle-ի ֆինանսավորմանը:

«Ֆիննական քեյսը» կարելի է նշել ևս մեկ առանցքային կետով. **2011 թվականին խորհրդարանն ընդունեց օրենք Մեդիակրթության կենտրոնի ստեղծման մասին, որը կոչված է հասարակության մեջ, հատկապես անչափահասների շրջանում, բարձրացնել մեդիագրագիտության մակարդակը՝ նրանց անվտանգությունը նոր տեղեկատվական և թվային տարածքում ապահովելու համար:**

Ֆիննական փորձի ուսումնասիրության արդյունքների հիման վրա եզրակացություն է առաջանում, որ պառլամենտարիզմի ավանդույթների զարգացումը և պետության գործունեության ժողովրդա-

վարական հիմքերը ընդհանուր առմամբ անքակտելիորեն կապված են մեդիաարդյունաբերության, ՉԼՄ-ների գործունեության կարգավորման մասին օրենքների նկատմամբ պետության հատուկ վերաբերմունքի հետ:

Հետխորհրդային տարածքում պառլամենտարիզմի և ազատ մամուլի ձևավորման ավանդույթների ուսումնասիրությունը հնարավոր է առաջին հերթին ռուսական փորձի հիման վրա: Չնայած այն հանգամանքին, որ 1917 թ-ին այդ ավանդույթների զարգացման էվոլյուցիոն ուղին ընդհատվեց, և շուրջ 70 տարի սահմանվեցին օրենսդիր մարմինների և մամուլի միջև փոխգործակցության այլ կարգեր, 1991 թ-ին ՌԳ վերադարձավ այն գործընթացին, որի սկիզբը դրվել էր դեռևս Ռուսաստանի կայսրության ժամանակաշրջանում: Հասարակական կառուցվածքի ժողովրդավարական սկզբունքների, այդ թվում՝ պառլամենտարիզմի զարգացման գործընթացը սկսվել է դեռևս 1905 թվականի հոկտեմբերի 17-ին, երբ հրապարակվեց ցարական մանիֆեստը, ըստ որի բնակչությանը տալիս է «քաղաքացիական ազատության անսասան հիմքեր՝ անձի իրական անձեռնմխելիության, խղճի, խոսքի, հավաքների և միությունների ազատության հիման վրա»¹⁰⁹: Ռուսաստանի Դաշնության 1993 թվականի Սահմանադրությունը փաստորեն ամրագրեց ժողովրդավարության անցման այս հիմնական, համակարգաստեղծ և առանցքային պարամետրերը:

Ռուսաստանյան հետազոտողները մեծ ուշադրություն են դարձնում պառլամենտարիզմի ավանդույթների ուսումնասիրությանը և մամուլի հետ Դոմայի փոխգործակցության խնդիրներին: Այսպիսով, Ե.Պ. Սոկոլովան իր «Մամուլը և պառլամենտարիզմը Ռուսաստանի քաղաքական գործընթացում» աշխատությունում գրում է. «Ներկայիս Պետդոմայի շատ խնդիրներ պայմանավորված են պատմականորեն: Եթե մի շարք երկրներում խորհրդարանական ավանդույթները ձևավորվել են դարեր շարունակ, ապա Ռուսաստանում առաջին Պետդոման իր գործունեությունը սկսեց միայն 1906 թվականին: Բայց նախահեղափոխական Պետական Դոմաների գործունեության փորձը ուսանելի է և արժանի է հետագա ուսումնասիրության: Հատուկ հետաքրքրություն է առաջացնում նաև հանրային քննար-

¹⁰⁹ Стéу Власть и пресса в России: К истории правового регулирования отношений: (1700-1917): Хрестоматия. – М., 1999, с. 179:

կումների հմտությունների ձևավորման գործընթացը, որոնք տեղի էին ունենում խորհրդարանում և մամուլի շնորհիվ ակտիվորեն ազդում քաղաքական գործընթացի վրա: Ավելին, մամուլը բանավեճեր էր հրահրում խորհրդարանականների և կառավարության միջև, որի հետևում կանգնած էր պետության առաջին դեմքը: Օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև կառուցողական հարաբերություններ կառուցելու համար այս անհրաժեշտ փորձը բավարար չափով ուսումնասիրված չէ և քիչ պահանջարկ ունի այսօր: Ցավոք, հաճախ հաշվի չի առնվում նաև այն, որ խորհրդարանում բանավեճեր նրա ներկայացուցչականությունն իրացնող բաղադրիչներից մեկն է, որը սկսվում է ընտրողների կողմից իրենց լիազորությունները պատգամավորներին պատվիրակելուց: Երկրի զարգացման խնդիրների շուրջ հանրային քննարկումներ կազմակերպելու փոխարեն, որոնք անհնար են առանց ՉԼՄ-ների, մենք տեսնում ենք բոլորովին այլ մոտեցում»¹¹⁰: Ինչպես նշում է հետազոտողը, խորհրդարանի խոշոր խմբակցության նկատմամբ արդեն իսկ «իշխանական կուսակցություն» կամ «իշխող կուսակցություն» ձևակերպումը հանգեցնում է նրան, որ մեղիդրոտում ձևավորվում է մոտեցում խորհրդարանի կողմից ընդունվող որոշումների և օրենքների որոշակի կանխորոշվածության վերաբերյալ: Այս ամենի հետևանքով որոշ լրատվամիջոցներ գրեթե հեռացել են օրենքների քննարկումներից՝ նախընտրելով միայն հանրությանը տեղեկացնել ընդունվող որոշումների մասին, մյուսներն ուղղակի հանդես են գալիս քննադատությամբ, իսկ ընտրողը գրեթե ոչինչ չգիտի Դումայի գործունեության, խորհրդարանականների աշխատանքի արդյունավետության մասին և, իհարկե, ակտիվ մասնակցություն չի ունենում քաղաքական գործընթացներին:

Մինչդեռ նույն մեղիան է քաղաքական գործընթացներում քաղաքացիներին ներգրավելու, իշխանության և հասարակության միջև երկխոսություն հաստատելու ամենաարդյունավետ գործոնը: Ռուսական պառլամենտարիզմի հետազոտողները համակարծիք են այն հարցում, որ քաղաքական կյանքում ՉԼՄ-ների դերի բարձրացման

¹¹⁰ St' u Соколова Е.П. Пресса и парламентаризм в политическом процессе России. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук. // Уральский государственный университет им. А.М. Горького. Екатеринбург, 2005 г., с. 7:

գլխավոր պայմանն այն փաստն է, որ առաջին հերթին մեղիա գործիքի միջոցով իշխանությունը և այլ քաղաքական սուբյեկտները ոչ միայն հասարակությանը տեղեկացնում են իրականացվող քաղաքականության նպատակների և խնդիրների, իրենց նախաձեռնությունների մասին, այլև, ըստ էության, հարաբերություններ են կառուցում և մոդելավորում քաղաքացիների (ընտրողների) հետ: **Այս համատեքստում առավել ակնառու է դառնում այն փաստը, որ պառլամենտարիզմի զարգացումն ուղղակիորեն կախված է մեղիայի զարգացումից՝** ի հեճուկս ՉԼՄ-ների քաղաքական և սոցիալական անպատասխանատվության մասին հաճախ գոյություն ունեցող կարծիքների:

Ռուսաստանի Դաշնությունում խոսքի և տեղեկատվության ազատության մասին օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս ոչ միայն պետության ռազմավարական վերաբերմունքը մամուլի ինստիտուտի նկատմամբ, այլև թույլ է տալիս տեսանելի դարձնել մեղիայի դերն ու նշանակությունը հանրային դիսկուրսում, ցույց տալ տեղեկատվական գործընթացներին պետության մասնակցության աստիճանը և հնարավորությունները, ուրվագծել պառլամենտարիզմի զարգացման հեռանկարները մի երկրում, որտեղ լրատվամիջոցները 2014 թվականից հետո զգում են հակառուսական պատժամիջոցների և հավաքական Արևմուտքի քաղաքականության, ինչպես նաև ձեռնարկված պատասխան բազմաթիվ միջոցների հետևանքները:

Այսօր Ռուսաստանում ՉԼՄ-ների գործունեությունը կարգավորվում է մի շարք դաշնային օրենքներով, որոնք իրենց դրույթներում հիմնված են ՌԴ Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջների վրա. «1. Յուրաքանչյուրին երաշխավորվում է մտքի և խոսքի ազատությունը: // 2. Չի թույլատրվում պրոպագանդա կամ քարոզչություն, որը հարուցում է սոցիալական, ռասայական, ազգային կամ կրոնական ատելություն և թշնամանք: Արգելվում է սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական կամ լեզվական գերազանցության քարոզչությունը: // 3. Ոչ ոք չի կարող հարկադրվել արտահայտել իր կարծիքներն ու համոզմունքները կամ հրաժարվել դրանցից: // 4. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն որոնել, ստանալ, փոխանցել, արտադրել և տարածել տեղեկատվություն ցանկացած օրինական եղանակով: Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների

ցանկը որոշվում է դաշնային օրենքով: // 5. Երաշխավորվում է զանգվածային լրատվության ազատությունը: Գրաքննությունն արգելվում է»¹¹¹:

ԶԼՄ-ների համար հիմնարար է նաև «Զանգվածային լրատվամիջոցների մասին» Դաշնային օրենքը, որը թեև բազմիցս փոփոխվել է 1991 թ. ընդունման պահից, սակայն հիմնարար սկզբունքները պահպանվել են: Սույն օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է լրատվամիջոցների ոլորտում հիմնական հասկացությունները, 3-րդ և 4-րդ հոդվածները սահմանում են գրաքննության և զանգվածային տեղեկատվության չարաշահման արգելքը, 47-րդ և 49-րդ հոդվածները սահմանում են լրագրողների իրավունքներն ու պարտականությունները, 38-40-րդ հոդվածները սահմանում են տեղեկատվություն հայցելու և ստանալու կարգը: Նույն օրենքով սահմանված են ԶԼՄ-ների գործունեության կազմակերպման, գրանցման, լիցենզավորման, օտարերկրյա մասնակցության սահմանափակման կարգը, տարբեր խախտումների, այդ թվում՝ լուծարման համար պատասխանատվության կարգը:

Բացի այդ փաստաթղթից, ԶԼՄ-ների գործունեությունը կարգավորվում է մի շարք Դաշնային օրենքների դրույթներով՝ «Պետական գաղտնիքի մասին» (1993), «Պետական զանգվածային լրատվության միջոցներում պետական իշխանության մարմինների գործունեության լուսաբանման կարգի մասին» (1995), «Անձնական տվյալների մասին» (2006), «Կապի մասին» (2003), «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին» (2006), «Գովազդի մասին» (2006), «Երեխաների առողջությանը և զարգացմանը վնաս պատճառող տեղեկատվությունից պաշտպանության մասին» (2010), «Ծայրահեղական գործունեությանը հակազդելու մասին» (2002) և այլ նորմատիվ իրավական ակտե-

¹¹¹ Ст'а Конституция Российской Федерации. Принята всенародным голосованием 12 декабря 1993 года с изменениями, одобренными в ходе общероссийского голосования 1 июля 2020 года. В текст Конституции РФ вносились поправки Законами Российской Федерации о поправке к Конституции Российской Федерации от 30 декабря 2008 года № 6-ФКЗ, от 30 декабря 2008 года № 7-ФКЗ, от 5 февраля 2014 года № 2-ФКЗ, от 21 июля 2014 года № 11-ФКЗ, от 14 марта 2020 года № 1-ФКЗ, от 4 октября 2022 года № 5-ФКЗ, от 4 октября 2022 года № 6-ФКЗ, от 4 октября 2022 года № 7-ФКЗ, от 4 октября 2022 года № 8-ФКЗ. // <http://duma.gov.ru/news/55446/>:

րով, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահի հրամանագրերով, որոնք վերաբերում են մեդիաձեռնարկությունների (հատկապես հեռարձակվող ՉԼՄ-ների) աշխատանքի կազմակերպչական և իրավական նորմերին, ինչպես նաև համապատասխան օրենսգրքերին:

Հարկ է հատուկ նշել մի քանի առանցքային պահեր: 2014 թվականին փոփոխություններ են կատարվել «Չանգվածային լրատվամիջոցների մասին» օրենքում, համաձայն որի օտարերկրյա պետություններին, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպություններին, այլ երկրների քաղաքացիություն ունեցող ռուսաստանցիներին, ինչպես նաև 20% ավելի օտարերկրյա կապիտալով ռուսական կազմակերպություններին արգելվում է հանդես գալ որպես ՉԼՄ-ների հիմնադիր կամ խմբագրություն, կառավարել ՉԼՄ-ի հիմնադրի կամ խմբագրության կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ավելի քան 20%-ը: Բացի այդ, 2016 թ-ին ընդունվեց այսպես կոչված «Յարովայայի փաթեթը»՝ երկու օրինագիծ, որոնք փոփոխություններ են մտցրել մի շարք նորմատիվ իրավական ակտերի մեջ՝ ահաբեկչությանը հակազդելու և հասարակական անվտանգության ապահովման լրացուցիչ միջոցառումների ներդրման վերաբերյալ: Այդ միջոցառումներն անդրադարձել են նաև ինտերնետ-մատակարարների, փոստային կապի օպերատորների գործունեությանը և ընդլայնել իրավապահ մարմինների լիազորությունները թվային ուղիներով տվյալների փոխանցման գործընթացների վերահսկման գործում: Ռուսաստանում մեդիաարդյունաբերության վերաբերյալ մեծ թվով նորմատիվ իրավական փաստաթղթեր խոսում են ենթակայության առանձնահատկությունների մասին՝ ՉԼՄ-ների գործունեությունը վերահսկվում է պրոֆիլային նախարարություններից բացի, նաև մի շարք խոշոր պետական կառույցների կողմից, որոնց թվում են «Ռոսսվյագ»-ը, «Ռոսկոմմադոր»-ը, ՌԴ մամուլի և զանգվածային հաղորդակցության դաշնային գործակալությունը:

Ռուսաստանի Դաշնությունում լրատվամիջոցների կարգավորման համակարգի բարդությունը հաճախ լրացվում էր օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև մրցակցությամբ: Այսպիսով, 1992-1993 թվականներին ռուսական պառլամենտարիզմի զարգացման նոր փուլի սկզբում իշխանության երկու ճյուղեր փորձում էին

ՉԼՄ-ներին իրենց կողմը գրավել խոսքի և տեղեկատվության ազատության սկզբունքներին հավատարմության մասին հայտարարություններով: Ինչպես նշում է Ա.Գ. Ռիխտերը, եթե Դաշնային Ժողովն օրենք էր ընդունում խոսքի ազատության երաշխիքների մասին, ապա ՌԴ առաջին նախագահ Բորիս Ելցինն անմիջապես հրամանագիր էր ստորագրում մամուլի պաշտպանության մասին, եթե օրենսդիր մարմինը դիտորդական խորհուրդներ էր ստեղծում խոսքի ազատության ապահովման համար, ապա նախագահը հրամանագիր էր ստորագրում Դաշնային տեղեկատվական կենտրոն և մամուլի և զանգվածային տեղեկատվության ազատության պաշտպանության պետական տեսչություն ստեղծելու մասին¹¹²: Ըստ ռուսական պառլամենտարիզմի շատ հետազոտողների, Բ.Ն. Ելցինի ելույթներում լրատվամիջոցների անկախության թեման նախասիրված էր, և հենց նրա քաղաքականության արդյունքում էր, որ մեդիադաշտում գերիշխանության հիմնական լծակները հայտնվեցին գործադիր իշխանության ձեռքում:

Խոսելով ռուսական պառլամենտարիզմի զարգացման հեռանկարների մասին, քաղաքական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր պետական ծառայության Ռուսաստանի ակադեմիայի պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության 1-ին դասի պետական խորհրդական Ռոման Ռոմանովը գրում է Ռուսաստանի խորհրդարանին ավելի լայն վերահսկողական գործառնություններ օժտելու անհրաժեշտության մասին, որպեսզի գործադիր իշխանության մարմինների գործունեությունը հաշվետու լինի և գտնվի խորհրդարանի ամենօրյա ուշադրության ներքո: «Աշխարհի զարգացած երկրների մեծ մասի սահմանադրություններն իրենց խորհրդարաններին օժտում են վերահսկողական գործառնությունով: Ռուսաստանի ներկայիս Սահմանադրությունը նախատեսում է խորհրդարանի վերահսկողական լիազորությունները: Օրինակ՝ Պետական Դոման համաձայնություն է տալիս վարչապետի նշանակմանը: Սակայն Սահմանադրության տեքստն այս հարցով այնպիսին է, որ հատուկ մեկնաբանության կարիք ունի՝ արդյոք Նախագահն ի-

¹¹² St'u Средства массовой информации постсоветской России: Учебное пособие / Я.Н. Засурский, Е.Л. Вартамова, И.И. Засурский и др.; Под ред. Я.Н. Засурского. – М., 2002, с. 158:

րավունք ունի երեք անգամ նույն թեկնածությունն առաջարկել, թե նա պարտավոր է վարչապետի թեկնածությունը հերթական անգամ մերժելու դեպքում առաջարկել նորը: Խորհրդարանի վերահսկողական գործառույթը ենթադրում է լիազորությունների լայն շրջանակ՝ կառավարության ղեկավարի պաշտոնի համար թեկնածության հաստատումից, նրա առաջարկած նախարարների կազմից մինչև անբավարար աշխատանքի դեպքում նրանց պաշտոնանկությունը: Մի շարք երկրներում խորհրդարաններն իրավունք ունեն անցկացնել անկախ խորհրդարանական հետաքննություն և արգելքներ սահմանել գործադիր մարմինների որոշ գործողությունների վրա՝ դրանից բխող հետևանքներով: Խորհրդարանների վերահսկողական իրավունքները հաստատվում են համապատասխան օրինական երաշխիքներով և պատասխանատվության պատժամիջոցներով: Խորհրդարանների տրամադրության տակ են գտնվում պետական վերահսկողության անհրաժեշտ մարմինները: Մի խոսքով, արտերկրում խորհրդարանների վերահսկողական գործառույթը խորհրդարանի կողմից ուղղորդված կենդանի, եռանդուն աշխատող օրգանիզմ է: Նման գործառույթի առկայության դեպքում, որն ապահովված է կազմակերպչական և իրավական մեխանիզմներով, խորհրդարանը դառնում է պետական իշխանության լիարժեք և լիիրավ ճյուղ: Որպեսզի Ռուսաստանում պառլամենտարիզմը գործնականում դառնա պետական կառավարման կազմակերպչական սկզբունք (եղնելով աշխարհի առաջատար երկրների փորձից), անհրաժեշտ է Դաշնային Ժողովի վերահսկիչ գործառույթի ներդրում: Խորհրդարանը և ըստ տրամաբանության, և ըստ էության պարտավոր է վերահսկել օրենքների կատարումը: Անհրաժեշտ է, մասնավորապես, որ իրապես գործեն խորհրդարանական վերահսկողության այնպիսի աշխարհում ճանաչված ձևեր, ինչպիսիք են կառավարության, ընդհանուր առմամբ գործադիր իշխանության մարմինների հաշվետու լինելը խորհրդարանին, խորհրդարանական հետաքննություններն առանց հարցերի սահմանափակման: Աշխարհի խորհրդարանների մեծ մասում առանձնանում են երեք հիմնական գործառույթներ՝ ներկայացուցչական, օրենսդրական և վերահսկիչ: Վերջինը թույլ է ներկայացված ռուսական քաղաքական պրակտիկայում: Մինչդեռ զարգացած խորհրդարանական ավանդույթներ ունեցող շատ երկրներում հենց օրենսդիր մարմիններն են վերահսկում կառավարությունների և ընդ-

հանրապետ գործադիր իշխանության գործունեությունը¹¹³», - նշում է Ռոմանովը:

Ռուսական պառլամենտարիզմի զարգացման գործընթացների ուսումնասիրության ընթացքում չի կարող ուշադրություն չգրավել գործող իշխանության վերաբերմունքը դրա նկատմամբ: ՌԴ Դաշնային Ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոն «Ռոսիյսկայա գագետա» - ին տված ծավալուն հարցազրույցում (2023 թվականի ապրիլի 27-ի Դաշնային թողարկում) նշել է պառլամենտարիզմի ինստիտուտի շարունակական զարգացման կարևորությունը. «Ժամանակակից ռուսական պառլամենտարիզմի սկիզբը մենք համարում ենք 1993 թվականը: 30 տարի առաջ, դարաշրջանների բեկման ժամանակ, նոր Ռուսաստանի ստեղծողների առջև շատ բարդ խնդիր էր դրված: Մոցիալիստական համակարգը սպառել էր իրեն, անհրաժեշտ էր հիմնովին այլ կառուցվածք կառուցել մեր կյանքի կազմակերպման համար: Այս պատմական մարտահրավերի պատասխանը, առանց չափազանցության, ճակատագրական որոշումն էր՝ վերածնված Պետական Դումայից երկպալատ խորհրդարանի և հատուկ հիմնած Դաշնության Խորհրդի ստեղծումը: Այսպիսով, ծնվեց նոր ռուսական պառլամենտարիզմը, որն իսկապես ներկայացուցչական է և պաշտպանում է ինչպես մարդկանց, այնպես էլ ամբողջ տարածաշրջանների շահերը, որոնք այդքան տարբեր են մեր մեծ երկրում: Ես լավ ծանոթ եմ արտասահմանյան երկրներում օրենսդիր մարմինների գործունեությանը, համեմատելու բան ունեմ: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսաստանի Դաշնության խորհրդարանը մոլորակի ամենաերիտասարդներից մեկն է, թափանցիկության առումով, ընդունված օրենքների որակով, կարծում եմ, շատ առումներով գերազանցում է այլ պետությունների խորհրդարաններին, ներառյալ նրանց, որոնք դարավոր պատմություն ունեն: Այնպես որ, կարող եմ վստահաբար պնդել, որ Ռուսաստանի խորհրդարանն աշխարհում ամենաժողովրդավարականներից ու արդյունավետներից մեկն է: Ինչի վրա է հիմնված նման արդյունավետությո-

¹¹³ Ст'ю Р.М. Романов. Перспективы развития российского парламентаризма. // Сайт Законодательной Думы Томской области // https://duma.tomsk.ru/content/9_perspektivy_razvitiya_rossijskogo_parlamentarizma#org:

յունը: Առաջինը՝ պառլամենտարիզմի համակարգում ներդրված մշտական զարգացման նրա ունակությունն է:»¹¹⁴

Ըստ Մատվիենկոյի, հակառուսական պատժամիջոցների և Արևմուտքի քաղաքականության պայմաններում, Ռուսաստանի խորհրդարանի աշխատանքի արդյունավետ մեխանիզմների շնորհիվ, այդ մարտահրավերներից ոչ մեկը չի հանգեցրել պետական կարևորագույն որոշումների ընդունման, երկրի կառավարման համակարգի խափանմանը: Այս կապակցությամբ նա չափազանց կարևոր անվանեց այնպիսի եզակի ինստիտուտի ստեղծումը և իսկապես արդյունավետ աշխատանքը, ինչպիսին Օրենսդիրների խորհուրդն է, որը նպաստում է բոլոր մակարդակների օրենսդիր իշխանությունների գործունեության համակարգմանը, ներգրավում է նաև գործադիր իշխանության ներկայացուցիչներին՝ մարմնավորելով ամբողջ պետական համակարգի կապվածության և հավասարակշռվածության գաղափարը: Որպես ապագայի առանցքային և հրատապ խնդիրներից մեկը՝ Մատվիենկոն նշել է հասարակության հետ կապերի ամրապնդումը: «Առանց դրա անհնար է, մենք պետք է հասկանանք բոլոր սոցիալական խմբերի կարիքները, բիզնեսի, տարածաշրջանների շահերը: Մենք տեսնում ենք, որ իշխանության բաց լինելու, արձագանքելու պահանջը շատ մեծ է, որքան մեծ է մեր ժողովրդի ստեղծարար ներուժը, որը, կարծում եմ, պետք է պահանջված լինի ոչ միայն տեղական ինքնակառավարման մակարդակում, այլ ցանկացած, նույնիսկ ամենաբարձր մակարդակներում», - նշել է Դաշնության խորհրդի նախագահը, կարևորելով նաև միջխորհրդարանական դիվանագիտության զարգացումը, օրինաստեղծ գործունեության մեջ փորձագիտական ներուժն առավել արդյունավետ ներգրավելու անհրաժեշտությունը, գիտական շրջանակների հետ ավելի սերտ համագործակցություն հաստատելու՝ երկրի ներսում և աշխարհում զարգացման նորագույն միտումները բացահայտելու և, համապատասխանաբար, կայացվող որոշումների հետևանքները կանխատեսելու և վերլուծելու համար: Ամփոփելով՝ ԴԽ նախագահը նշում է. «Կարևորն այն է, որ երեսուն տարվա ընթացքում մենք կառուցել ենք իսկապես ժողովրդավարական պետական և քաղաքական համա-

¹¹⁴ Ст'я Российский парламентаризм: постоянное развитие. Интервью В. Матвиенко «Российской газете» // <http://www.council.gov.ru/events/chairman/144527/>:

կարգ: Այսօր պառլամենտարիզմը մեր երկրի համար բազային արժեք է, և դրա ներուժն իսկապես հսկայական է: Մենք ամեն ինչ ունենք վաղը վստահորեն նայելու համար»:

Ալենհայտ է, որ Վալենտինա Մատվիենկոյի թվարկած գործընթացներից ոչ մեկը և պառլամենտարիզմի նման հիմնական արժեքի կենսագործունեության ապահովումը հնարավոր չէ լիարժեք իրականացնել առանց ՉԼՄ-ների ներուժի ներգրավման, և դա Ռուսաստանում քաղաքական կամքը հասկանալու բանալին է: ՉԼՄ-ների գործունեության սահմանափակման այլ միջոցները նպատակահարմար է դիտարկել հավաքական Արևմուտքի կողմից իրականացվող հակառուսական քաղաքականությանը պատասխան գործողությունների համատեքստում:

Ամփոփելով դիտարկված երկրների խորհրդարանական համակարգերի փորձը՝ կարելի է եզրակացնել, որ ***պառլամենտարիզմի ինստիտուտի զարգացումը անքակտելիորեն կապված է մեդիա-դաշտի կատարելագործման, մամուլի ինստիտուտի գործունեության առավել իմաստայից և չքարդացված պայմանների ապահովման, ինչպես նաև խոսքի ազատության հիմնարար սկզբունքների ապահովման հետ:***

2.3. Պառլամենտարիզմի սկզբունքների ներդրման և զարգացման փորձագիտական առաջարկություններ. տեղեկատվական և իրավական խորհրդատվություն

Արագ զարգացող սոցիալական մեդիայի, նոր ՉԼՄ-ների և թվային բովանդակության դարաշրջանում շատ երկրներում խորհրդարանականներն ավելի ու ավելի են փորձում աշխատել հանրության արձագանքի համար, իրենց գործողություններով, հաղորդակցման ձևով և վարքագծով, հայտարարությունների բնույթով հաճախ հիշեցնում են թոք-շոուների հերոսներին: Այս ամենը կարելի է բացատրատրել նրանով, որ ընտրությունները մնում են կարևորագույն քաղաքական իրադարձություն պետության և հասարակության կյանքում, իսկ խոսքի ազատությունն այս համատեքստում առաջին հերթին տեղեկատվության տարածման առավելագույն հնարավորությունն է, որը կարող է ազդել ընտրական գործընթացների, այդ թվում՝ խորհրդարանական ընտրությունների ելքի, ինչպես նաև օրենսդիր և

գործադիր իշխանությունների վրա: **Խորհրդարանական լրագրության զարգացումը շատ տեսաբաններ դիտում են որպես լրատվամիջոցների և հենց խորհրդարանի վերահսկողական գործառնության ուժեղացմանը հասնելու հեռանկար**, այնպես անել, որ հասարակությունը բավականաչափ տեղեկացված լինի ընտրությունների նախօրեին, ծանոթ լինի տարբեր քաղաքական և քաղաքացիական մոտեցումներին, իսկ ընտրություններից հետո շարունակի ակտիվորեն հետևել բոլոր արդիական գործընթացներին: Նման պրակտիկան, հասարակության առջև իշխանությունների հաշվետվողականությունն ապահովող ժողովրդավարական այլ ընթացակարգերի հետ համատեղ, դառնում է պետության զարգացման, հասարակական և քաղաքական համակարգերի առաջընթացի և կայունության ապահովման, մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն գործիքներից մեկը:

Ելնելով վերոգրյալից՝ մենք անց ենք կացրել ոլորտի առաջատար փորձագետների հարցում (հարցագրույց)՝ նպատակ ունենալով բացահայտել մեդիայի նշանակությունը ժողովրդավարության և պառլամենտարիզմի զարգացման գործում, ինչպես նաև ստանալ տեղեկատվական և իրավական խորհրդատվություն ՁԼՄ-ների դերը ուժեղացնելու համար: Հարցերին պատասխանել են 9 առաջատար փորձագետներ, որոնք գիտականորեն և գործնականում զբաղվել են սույն հետազոտության առարկա դարձած խնդիրներով: Որպես փորձագետներ հանդես են եկել.

1. «Հենակետ» վերլուծական կենտրոնի հիմնադիր, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Տիգրան Աբրահամյանը,

2. «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Ալավերդյանը,

3. «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը,

4. ԱԺ աշխատակազմի լրատվության և հանրության հետ կապերի վարչության նախկին ղեկավար Կնյազ Սարոյանը,

5. Փաստաբան, լրագրող-հետաքննող Տաթևիկ Գալստյանը,

6. ՀՀ Նախագահի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, «Profil Media» ընկերության հիմնադիր, քաղաքական մեկնաբան Արմեն Մինասյանը,

7. Մեղիափորձագետ, Հայ-ռուսական համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս, սոցիոլոգ Վահագն Սարոյանը,

8. Հայ-ռուսական համալսարանի գիտահետազոտական աշխատանքների պլանավորման, կազմակերպման և ուղեկցման զլխավոր մասնագետ, մեղիափորձագետ, Հայ-ռուսական համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Թադևոսյանը,

9. Մոսկվայի և ազգերի մշակույթի հայկական թանգարան պարբերականի պրոնակագիր, Հայ-ռուսական համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս Հասմիկ Յերիցյանը:

Հարցազրույցի ընթացքում փորձագետները պատասխանել են հետևյալ հիմնական հարցերին.

1. Ինչպիսի՞ն կրնոթագրեք ժամանակակից մեղիայի (ՉԼՄ, բլոգոսֆերա, տեղեգրամյան ալիքներ) դերը ժողովրդավարության և պառլամենտարիզմի ավանդույթների զարգացման գործում Արևմուտքում և հետխորհրդային տարածքում: Արդյոք դրանք կարող են ազդել պետության որոշումների կայացման գործընթացի վրա:

2. Կարող է արդյո՞ք մեղիան վերահսկողական գործառույթ իրականացնել պետական կառույցների նկատմամբ պառլամենտարիզմի պայմաններում, և եթե այո, ապա ինչպես կարելի է ուժեղացնել այդ ազդեցությունը:

3. Օրենսդիր մարմինների համապատասխան գերատեսչությունների համար ի՞նչ հանձնարարականներ կարող եք տալ խորհրդարան-մեղիա-հասարակություն սեզմենտում համագործակցության ընդլայնման համար:

4. Ի՞նչ հանձնարարականներ կարող եք տալ ՉԼՄ-ներին, բլոգերներին, թվային բովանդակության հեղինակներին՝ խորհրդարանի և այլ պետական կառույցների նկատմամբ մեղիավերահսկողությունը խթանելու և ուժեղացնելու նպատակով:

5. Հաշվի առնելով թվային դարաշրջանում հանրային կարծիքի ձևավորման գործում մեղիայի աճող դերը՝ կառավարման համապատասխան ձևեր ունեցող պետությունների համար անհրաժեշտություն համարո՞ւմ եք հատուկ զարգացնել խորհրդարանական լրագրությունը:

6. Խորհրդարանական լրագրության հետևյալ գործառնություններից ո՞րն եք առավել կարևոր համարում (ընտրեք երեք տարբերակ և դասավորեք ըստ նշանակության նվազման աստիճանի)։

☐ **տեղեկատվական** (հանրությանը տեղեկացնել քննարկվող օրենքների մասին, մեկնաբանել ընդունված կարևոր որոշումները և հայտարարությունները, պարզել պատգամավորների կարծիքները երկրի ներսում և արտերկրում նշանակալի իրադարձությունների վերաբերյալ և այլն)

☐ **քարոզական** (կախված խմբագրական քաղաքականությունից՝ ստեղծել խորհրդարանի, ընդհանուր առմամբ օրենսդիր իշխանության դրական կամ բացասական իմիջ, մեկնաբանել և ներկայացնել ընդունված օրենքն այս կամ այն լույսի ներքո)

☐ **ներկայացուցչական** (օպերատիվ ստանալով հավաստի տեղեկատվություն ընդունման պատրաստվող օրինագծերի մասին, որոնք որևէ կերպ կարող են վտանգ ներկայացնել հանրային շահերի, որոշակի խմբերի շահերի համար, խորհրդարանի հետ աշխատող լրագրողներն ու մեդիան կարող են հանդես գալ կոնկրետ դիրքորոշմամբ, նախապես տեղեկացնել իշխանության հետ կոնֆլիկտի հնարավորության, այս կամ այն միջոցների ձեռնարկման անհրաժեշտության մասին)

☐ **կորպորատիվ** (լինելով կոնկրետ կոլեկտիվ շահերի կրողներ՝ լրագրողները կարող են խմբային համերաշխություն դրսևորել այս կամ այն օրինագծերի լուսաբանման, իրենց գործընկերներին հետապնդումներից պաշտպանվելու գործում և այլն)

☐ **գովազդային** (ՀԼՄ-ները կարող են մշտապես լուսաբանել խորհրդարանական կոնկրետ խմբակցությունների գործունեությունը, ներկայացնել այն կուսակցական աշխատանքի համատեքստում, ինչպես նաև կարող են իրականացնել կոնկրետ խորհրդարանականների PR, օրինակ՝ ցույց տալ քաղաքական գործչին ոչ միայն պատգամավորի դերում, այլև որպես ընտանիքի մարդ, բարերար, մարզիկ և այլն)

☐ **իրավական** (իրականացնել վերահսկողության գործառնություն խորհրդարանի և հասարակության, խորհրդարանականների, ընտրագանգվածի հետ պատգամավորի թեկնածուների հարաբերություններում, օրենքների ընդունման և կատարման գործընթացների նկատմամբ)։

Վերլուծելով փորձագետների պատասխանները՝ հարկ է նշել, որ նրանք բոլորը միահամուռ կերպով ընդգծել են ժամանակակից մեդիայի (ինչպես ավանդական ՉԼՄ – ների, այնպես էլ ընդհանրապես բոլորաֆերայի՝ մեսենջերների, սոցցանցերի) անող դերը ամբողջ աշխարհում ժողովրդավարության և պաշտամենտարիզմի ավանդույթների զարգացման գործում՝ ընդգծելով, որ դրանք, անշուշտ, փոխկապակցված գործընթացներ են: Նրանք վստահ են, որ մեդիան կարող է լուրջ ազդեցություն ունենալ պետության որոշումների կայացման գործընթացների վրա, ընդ որում՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական: Որպես առանձնահատուկ խնդիր՝ փորձագետներն առանձնացրել են պոպուլիստական երևույթների աճը՝ լրատվամիջոցների ազդեցության ուժեղացման ֆոնին:

Այսպես, մեդիոլորտում աշխատանքի մեծ փորձ ունեցող ԱԺ պատգամավոր Տիգրան Աբրահամյանը նշեց, որ ստեղծված իրողություններում և ներկա դարաշրջանում, որը համարվում է տեղեկատվական դարաշրջան, մեդիայի դերը չափազանց մեծացել է, և դրանք փաստացի զգալի ազդեցություն են ունենում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա: Ելնելով տվյալ հանգամանքով պայմանավորված ռիսկերից կամ առավելություններից՝ այդ որոշումները կարող են ենթարկվել փոփոխությունների, դրանց ընդունման ժամանակ կարող են հաշվի առնվել այնպիսի գործոններ, որոնք հակառակ դեպքում հաշվի չէին առնվի: Նա ընդգծեց, որ հավաքական Արևմուտքում դրան ոչ միայն լուրջ նշանակություն է տրվում, այլև, թերևս, վերագրվում է առաջնային դեր, և ցանկացած գործընթաց նախաձեռնելիս իրականացվում է երկարատև տեղեկատվական պլանավորում: «Հետխորհրդային տարածքը բնութագրվում է տեղեկատվական կառավարման ավելի կոշտ ձևերով, շատ դեպքերում՝ չարդարացված կտրուկությամբ, ինչը ընթացիկ գործընթացներն ու դրանց ընկալումն ավելի խնդրահարույց է դարձնում», - կարծում է խորհրդարանականը:

Այս առումով խնդիրներ է տեսնում նաև «Մեդիամաքս»-ի գլխավոր խմբագիր Դավիթ Ալավերդյանը. «Ժամանակակից մեդիայի դերը հսկայական է, բայց ՉԼՄ-ների զարգացմանը և ժողովրդավարության և պաշտամենտարիզմի դերի վրա դրանց ազդեցության աճին զուգահեռ մենք տեսնում ենք մեդիամանիպուլյացիաների և ֆեյքնյուզի հնարավորությունների աճ: Այստեղ ոչմիանշանակ իրավիճակ է

ստեղծվում: Մի կողմից՝ մեղիայի՝ որպես չորրորդ իշխանության դերը ցանկացած ժողովրդավարական պետությունում շատ մեծ է, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է տարանջատել մեղիան այն ամենից, ինչը քարոզչական գործիք է այս կամ այն քաղաքական ուժերի ձեռքում: Հայաստանի օրինակով մենք տեսնում ենք, որ շատ լրատվամիջոցներ ավելի շատ մեղիամանիպուլյատորների և քարոզիչների դեր են կատարում, քան տեղեկատվություն փոխանցողների: Եվ մենք տեսնում ենք, թե դրանք ինչ մեծ ազդեցություն են ունենում մեր երկրի բնակչության վրա: Մյուս կողմից, բոլոր սոցիալացումները ցույց են տալիս, որ ՉԼՄ-ների վարկանիշը Հայաստանում շատ է ընկել, և վստահության վարկանիշում մեղիան զբաղեցնում է վերջին տեղերից մեկը բոլոր հասարակական ինստիտուտների շրջանում: Սա չի կարող չանհանգստացնել մեզ և որպես լրատվամիջոցների ներկայացուցիչների, և որպես տարբեր համալսարաններում լրագրություն դասավանդող մարդկանց»:

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը կիսում է գործընկերների մտահոգությունները: Նրա խոսքով՝ ավանդական ՉԼՄ-ների դերը ժողովրդավարության և պառլամենտարիզմի ավանդույթների զարգացման գործում այնքան էլ մեծ չէ, սակայն սոցիալական ցանցերն իսկապես զգալի ազդեցություն են ունենում, իսկ դա իր հերթին ազդում է ընդունվող պետական որոշումների որակի վրա: Նա նաև նշեց. «Քանի որ սոցիալական ցանցերում կոնտենտի որակը բավականին ցածր է, դա հաճախ իշխանություններին դրդում է պոպուլիզմի»:

ԱԺ աշխատակազմի լրատվության և հանրության հետ կապերի վարչության նախկին ղեկավար Կնյազ Սարոյանը նաև կարծում է, որ ՉԼՄ-ները զգալի դեր ունեն ժողովրդավարության և պառլամենտարիզմի զարգացման գործում, առաջին հերթին՝ վերահսկողական գործառույթի, ապա՝ ճիշտ հանրային դիսկուրսների ձևավորման գործառույթի միջոցով: Ընդ որում, ըստ մեր փորձագետի, երկրորդ գործառույթի մասով շատ ավելի լուրջ աշխատանք կա անելու, քանի որ հասարակական-քաղաքական թեմաները լուսաբանելիս մեղիան անուղղակիորեն կատարում է նաև քաղաքացիական դաստիարակության գործառույթը (civic education, democratic citizenship): «Սակայն, դիտարկելով ժամանակակից միտումները, կարելի է նկատել ժողովրդավարական ընթացակարգերի և դրանց արդյունավետության հետընթացը ինչպես Արևմուտքում, այնպես էլ հետխորհրդային տարա-

ծաշրջանում, որի պատճառը պոպուլիստական քաղաքական կուրսերի աճն է, ինչին, ցավոք, մեծապես նպաստել են հենց լրատվամիջոցները, քանի որ դրանք դարձել են պոպուլիստական քաղաքական գործիչների ձեռքում կառավարման հիմնական և գրեթե միակ գործիքը: Այս առումով մեդիահոսքերը դարձել են հանրության վրա ազդելու և հասարակության ցանկալի վարքագիծ ձևավորելու միջոց, սակայն դրա հիմքում ընկած են պսևդոդեմոկրատական օրակարգերը: Եվ եթե, դասական տրամաբանության համաձայն, մեդիան ունի քաղաքական որոշումների կայացման գործընթացների վրա ազդելու լծակներ, ապա ներկա պայմաններում մեդիան շատ դեպքերում կորցնում է այդ գործառնությունը, քանի որ դառնում է գուտ հաղորդակցման և ցանկալի քաղաքական թեզեր միակողմանի հասցնելու գործիք», - նշեց Կնյակ Սարոյանը:

Փաստաբան Տաթևիկ Գալստյանը, ով երկար ժամանակ զբաղվում էր հետաքննական լրագրությամբ, նույնպես մատնանշեց ժամանակակից աշխարհում մեդիայի աճող դերը: Փորձագետն անվճիտելի է համարում այն փաստը, որ զանգվածային լրատվության միջոցներն ուղղակի և անուղղակի ազդեցություն են ունենում երկրի հասարակական և քաղաքական կյանքում, սոցիալական ցանցերը և սոցիալական մեդիակայքերը, ինչպիսիք են Facebook-ը, Instagram-ը, Twitter-ը, նրա կարծիքով, հզոր գործիքներ են տեղեկատվության տարածման և քաղաքական, սոցիալական լուրջ որոշումների կայացման գործում: «Ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրներում ՉԼՄ-ն տարբեր քաղաքական ուժերի ձեռքին ցավոք դառնում է լուրջ գործիք նպատակաուղղված քարոզչություն իրականացնելու համար: Հաճախ այն օրենքները, որոնք պետք է Ազգային ժողովում քննարկման դրվեն հանրության վերաբերմունքն ու արձագանքը ստուգելու համար, նախ տարածվում են զանգվածային լրատվության միջոցներով, իսկ օրենքի հեղինակները, ստուգելով հասարակության «արձագանքը», մարդկանց վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ, որոշում են, թե արդյո՞ք եկել է պահը տվյալ օրենքը շրջանառության մեջ դնելու համար: Երբեմն, արձանագրելով հանրային բացասական վերաբերմունքը, իրականացվում է կամ տարածված տեղեկատվության հերքում, կամ օրինագծում համապատասխան փոփոխություններ են կատարվում՝ հաշվի առնելով սոցիալական ցանցերում քննարկումները: Այլ կերպ ասած, իր քաղաքական շահերի շրջանակն ապահովելու և ցանկալի օրենսդրական նախաձեռ-

նություններն իրականացնելու համար Օրենսդիր իշխանությունը հասանելի մեղիագործիքների միջոցով տևական ժամանակ հանրությանը նախապատրաստում է օրենսդրական նոր փոփոխությունների: Միևնույն ժամանակ եթե կա որևէ օրենք ընդունելու քաղաքական «ցուցում» այստեղ արդեն բարձրացված աղմուկն ու դժգոհությունները հաշվի չեն առնվում: Որպեսզի լռեցնեն այս աղմուկը օրակարգ է մցվում հերթական սենսացիոն լուրը, որը հասարակության ուշադրությունը շեղում է խնդրի էությունից: Ինչպես արդեն նշվեց, այս գործիքակազմը կիրառվում է շատ երկրներում: Ավելի վաղ Հասարակական կարծիքի ուսումնասիրման համառոտաստանյան կենտրոնը (BIIOM) հարցում էր անցկացրել, որի շրջանակներում Ռուսաստանի բնակչությունը 5 բալանոց սանդղակով ՉԼՄ-ների ազդեցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա գնահատել էր 3,64 բալլ: Այդ ցուցանիշը 2000 թվականին կազմել է 3,09 բալլ, այսինքն՝ այն աճում է : Վստահ եմ, որ սոցիալական մեդիայի նման սրբնթաց զարգացման պայմաններում այս ցուցանիշը կաճի ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում: Ուստի համարում եմ, որ անհրաժեշտ է կատարելագործել ՉԼՄ-ների ազատության մասին օրենսդրությունը և մշակել դրա իրականացման արդյունավետ մեխանիզմներ: Հակառակ դեպքում մենք կարող ենք ժողովրդավարությունը հռչակել գերակա ուղղություն, բայց օգտագործել այն որպես հասարակական կարծիք ձևավորելու և տարբեր քաղաքական և անձնական շահեր ու հավակնություններ կյանքի կոչելու քաղաքական «գործիք», - մեկնաբանեց փորձագետը:

ՀՀ Նախագահի աշխատակազմի Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի նախկին տնօրեն Արմեն Մինասյան էլ չի կասկածում, որ մեդիան ազդում է քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա, ընդ որում դա տեղի է ունենում ոչ միայն ժողովրդավարական երկրներում, այլև ցանկացած տիպի պետություններում: Փորձագետի խոսքով՝ մեդիան՝ որպես հանրային կարծիքն արտացոլող գործիք, ազդում է քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա: «Բնականաբար, ժողովրդավարական երկրներում այդ ազդեցությունը շատ ավելի ուժեղ և բազմակողմանի է, քան ավտորիտար կամ տոտալիտար պետություններում, որտեղ մեդիայի օրակարգը շատ ավելի սահմանափակ է, բայց ամեն դեպքում ազդեցություն կա: Եվ հետխորհրդային երկրները, որպես, ասենք, ոչ զուտ ավտորիտար, բայց և ոչ զուտ ժողովրդավարական պետություններ,

ունեն որոշակի առանձնահատկություն, որն արտահայտվում է նրանով, որ մեդիան այստեղ շատ ուժեղ ազդեցություն է ունենում, բայց միևնույն ժամանակ կախված է կոնկրետ իշխանական խմբերից, տարբեր ֆինանսատնտեսական խմբերից, այդ թվում՝ պետական», - նշում է մասնագետը:

Ընդհանուր առմամբ, հասարակության կենսագործունեության ձևավորման, վերափոխման կամ փոփոխությունների կողմնորոշման վրա զանգվածային լրատվության միջոցների էական ազդեցությունը նշեց նաև սոցիոլոգ Վահագն Սարոյանը: «Ընդհանրապես, համաշխարհային հասարակությունն այսօր այլևս հետադյուրաբերական հասարակություն չէ, այլ տեղեկատվական հասարակություն է, ուստի կարծում եմ, որ մեդիան, բացի վերը նշված ազդեցությունից, նաև դաստիարակչական դեր է կատարում հասարակության կյանքում: Հետևաբար, մեդիան լուրջ ազդեցություն ունի ինչպես պաշտամունտարիզմի և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, այնպես էլ որոշումների կայացման գործընթացի վրա, քանի որ հասարակությունն արդեն տեղեկատվական է, ապրում է տեղեկատվությամբ՝ այն ավելի ու ավելի գործածելով: Ինչ վերաբերում է արևմտյան ՉԼՄ-ներին և հետխորհրդային երկրներում մեդիատարածքի զարգացմանը, ապա կարելի է ասել, որ տեխնոլոգիական զարգացումը և գլոբալ ինտերնետայնացումը առավելագույնս հեշտացրել և արագացրել են մեդիոլորտի ընդլայնումն ու կատարելագործումը», - նշեց փորձագետը:

Լրագրության վերաբերյալ բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակ Մերի Թադևոսյանը ժամանակակից մեդիայի գործունեության ողջ էությունը տեսնում է ակտիվ հասարակական կարծիք ձևավորելու ձգտման մեջ, իսկ ՉԼՄ-ները և PR տեխնոլոգիաները հանդիսանում են այդ նպատակի իրականացման հիմնական գործիքները: Փորձագետի խոսքով՝ զբաղվելով զանգվածային մասշտաբով տեղեկատվության հավաքագրմամբ, մշակմամբ, մեկնաբանմամբ և տարածմամբ՝ նրանք այդպիսով որոշում են հասարակական հայացքները, պատկերացումները, պարտադրում իդեալներ և սահմանում վարքի նորմեր: «Փաստերի, իրադարձությունների և, ի վերջո, իրականության նպատակաուղղված խեղաթյուրումն անմիջականորեն կապված է քաղաքական միֆաստեղծ գործունեության հետ: Քաղաքական լրատվամիջոցներին շատ հաճախ գլխավոր դեր է տրվում նման առասպելների մշակման և զանգվածային գիտակցությո-

յան մեջ ներդրման գործում: Չանգվածային լրատվամիջոցների ստեղծած քաղաքական միջերը հաճախ դառնում են գործող իշխանության լեգիտիմության հիմնավորման գլխավոր միջոցը: Դրանք օգտագործվում են գոյություն ունեցող սոցիալական կարգը և սոցիալական կյանքի պայմանները բացատրելու, արդարացնելու և երբեմն փառաբանելու համար: Քաղաքական գործընթացում ՉԼՄ-ների՝ որպես հատուկ սոցիալական ինստիտուտի կայացումը հիմք և պայմաններ ստեղծեց հասարակական գիտակցության «զանգվածականության» համար: Լրատվամիջոցների ծրագրավորման ռեզերվը ուժեղանում է վերջին տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման շնորհիվ: Իրենց գործունեության մեջ մասս մեդիան մշակում է որոշակի պատկերացումներ աշխարհի և այս աշխարհում մարդու տեղի մասին՝ պարտադրելով անհրաժեշտ արժեքներ և գաղափարներ: Այս ամենով հանդերձ, նրանք նույնպես մասնակցում են այդ արժեքները «կործանման» գործընթացին, եթե ժամանակի ընթացքում դրանք դառնան գործող քաղաքական ուժի համար ոչ պիտանի: «Անհրաժեշտ» հաղորդագրությունների բազմակի կրկնությունը, ինչպես նաև այս կամ այն փաստերը հատուկ մշակման, մոնտաժման, դրանց բարելավման կամ վատթարացման ենթարկելու հնարավորությունը ՉԼՄ-ներին թույլ են տալիս հանրությանը համոզել իրենց հաղորդած տեղեկատվության իսկության մեջ: Իհարկե, կարելի է թվարկել մի շարք օրինակներ և դեպքեր, երբ ՉԼՄ-ների գործունեությունը հանգեցրել է պետական կառավարման կառուցվածքի կոնկրետ փոփոխությունների, պառլամենտարիզմի համակարգի փոփոխությունների ինչպես Արևմուտքում, այնպես էլ հետխորհրդային տարածքում, սակայն դրանք մասնավոր դեպքեր են, և այստեղ ամենևին չարժեք ընդհանրացնել», - նշեց փորձագետը:

Գիտական հետազոտություններով զբաղվող լրագրող, հրապարակախոս Հասմիկ Երիցյանն իր հերթին ընդգծեց, որ ժամանակակից մեդիայի ազդեցությունը ցանկացած սոցիալական և պետական վերափոխումների վրա այժմ իսկապես տպավորիչ է: Մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է նոր մեդիաներին և այլ ցանցային սոցիալական հարթակներին: «Սակայն որոշակի թերահավատություն կա պետության որոշումների կայացման գործընթացի վրա ՉԼՄ-ների ազդեցության հարցում (ինչպես հետխորհրդային տարածքում, այնպես էլ Արևմուտքում): Ներկայումս նկատվում է հակառակ գործալ

միտում՝ ՉԼՄ-ների վերածումը գլոբալ դիմակայության գործիքի», - մեկնաբանեց է մասնագետը:

Առանց բացառության բոլոր փորձագետներն ընդգծել են գործադիր իշխանության նկատմամբ մեղիայի վերահսկողական գործառույթի իրականացման կարևորությունը, ընդ որում, նրանք դա համարում են ոչ միայն պաշտամենտարիզմի զարգացման, այլև, ընդհանուր առմամբ, խորհրդարանի գոյության ժողովրդավարական հիմքերի պահպանման գլխավոր պայմաններից մեկը: Փորձագետները նշում են, որ ՉԼՄ-ների այս գործառույթի ուժեղացումն ուղղակիորեն կապված է նաև խորհրդարանի վերահսկողական գործունեության իրականացման հետ: Այս ջանքերի միավորումը կարող է օգնել կանխել խուսքի և մամուլի ազատության սահմանափակման փորձերը, շտկել պաշտոնյաների և ընդհանրապես պետական կառույցների վարքագծի մոդելը: Այս գործառույթի զարգացման գործում շատ փորձագետներ մատնանշում են հետաքննական լրագրության դերը:

Տիգրան Աբրահամյանը նշում է, որ պաշտամենտարիզմն ինքնին ունի պետական կառավարման տարրեր կառույցների և գործընթացների նկատմամբ վերահսկողության գործառույթ, բայց առանց մեղիայի ներկայության և ակտիվ գործունեության կապահովվի այդ վերահսկողության արդյունավետության բոլորովին այլ մակարդակ: Փորձագետի կարծիքով, մեղիայի արդյունավետությունը, ընդհանուր առմամբ, ուղիղ համեմատական է տարրեր կառույցների և պաշտոնատար անձանց գործունեության մակարդակին և վարքագծի կոռեկտությանը:

Դավիթ Ալավերդյանը նաև ընդգծում է այս գործառույթի բացառիկ կարևորությունը՝ հիշեցնելով ՉԼՄ-ների նկատմամբ կիրառվող «watchdog» («պահակային շուն») եզրույթը: «Այս եզրույթը կարելի է թարգմանել նաև որպես «շուն, որը դիտում և վերահսկում է»»: Վոչ-դոգի գործառույթը ոչ ոք չեղյալ չի հայտարարել: Իհարկե, այստեղ մեծ թերություն կա, որը նկատվում է նաև Հայաստանում և Ռուսաստանում: Պետք է զարգացնել հետաքննական լրագրության ավանդույթը: Բայց նման հետաքննություններով ոչ բոլոր լրագրողները կարող են զբաղվել, անհրաժեշտ են լուրջ գիտելիքներ, մեծ փորձ: Ցավոք, Հայաստանում նման փորձ ունեն ոչ բոլոր լրատվամիջոցները, այլ շատ փոքր մասը, և մենք կարող ենք մատների վրա թվարկել մեղիայի այն ներկայացուցիչներին, ովքեր զբաղվում են հետաքննա-

կան լրագրությամբ, զբաղվում են տվյալների մշակմամբ (այսինքն այն տվյալները, որոնք կառավարությունը և տարբեր պետական կառույցներ հրապարակում են իրենց կայքերում), ստուգում են՝ արդյոք ամեն ինչ ճիշտ է արվել կամ ում են հատկացվել այս կամ այն միջոցները: Սա, իհարկե, կոռուպցիայի դեմ պայքարի շատ լուրջ գործիք է՝ ամենաբարձր մակարդակում: Ցավոք, Հայաստանում, թեև բոլոր հնարավորություններն օրենսդրորեն առկա են, սակայն չկան մասնագետներ, որոնք կարող են դրանով զբաղվել», - նշում է մեդիափորձագետը:

Արամ Աբրահամյանն իր հերթին գտնում է, որ իշխանությունների իրական տարանջատման բացակայության պայմաններում այդ գործառնությունը դժվար է իրականացնել, իսկ խորհրդարանի ներկայացուցիչները, հատկապես իշխող ուժից, հաճախ շահագրգռված չեն պետական կառույցների նկատմամբ որևէ վերահսկողությամբ:

Կնյազ Սարոյանն էլ այն կարծիքին է, որ վերահսկողությունը պետք է լինի մեդիայի հիմնական գործառնությունը: Սակայն այս գործառնությունն արդյունավետ իրականացնելու համար մեդիան պետք է հզորացնի իր հնարավորությունները: «Այս առումով նախ և առաջ կարևորվում է մասնագիտական կարողությունների զարգացումը մեդիապրեստիանների և լրագրողների մոտ, և առաջին հերթին դրանք քննադատական մտածողության և լրագրողական հետաքննություն անցկացնելու հմտություններն են: Առանց այդ հմտությունների լրագրողական համայնքը չի կարող արդյունավետ վերահսկողություն իրականացնել, քանի որ գուտ գործընթացը մի բան է, և բոլորովին այլ բան է կոնկրետ թեմաներով կայացված քաղաքական որոշումների կամ օրենսդրական փաթեթների հետևողական, համապարփակ ուսումնասիրությունն ու դրանց հետևանքների գնահատումը: Մեդիայի վերահսկողական գործառնությունը հենց այսպիսի հետևողական լուսաբանման մեջ է», - ընդգծել է մասնագետը:

Տաթևիկ Գալստյանն այն կարծիքին է, որ զանգվածային լրատվության միջոցների կողմից վերահսկողական գործառնության իրականացումն ուղղակիորեն կապված է ժողովրդավարության սկզբունքի կենսունակության հետ: Նա անհերքելի է համարում այն փաստը, որ ազատ և արդյունավետ գործունեության ապահովման պայմաններում զանգվածային լրատվության միջոցները կարող են իրականացնել իրենց վերահսկողական գործառնությունը: Սակայն, ըստ նրա, այդ գործառնությունն ամրապնդելու և օրենսդրական հենարան ձևավորելու

համար նախ և առաջ պետք է քաղաքական կամք, կամք՝ ժողովրդավարական զարգացման բարդ և պատասխանատու ճանապարհով անցնելու համար, ճանապարհ, որը ամուր հիմք կստեղծի խոսքի ազատության համար: «Խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության ամենակարևոր հիմքերից մեկն է, հասարակության առաջընթացի և յուրաքանչյուր մարդու զարգացման հիմնական պայմանը: Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ներառում է ոչ միայն «տեղեկատվություններ» կամ գաղափարներ, որոնք բարեհաճությամբ են ընդունվում կամ համարվում են անվտանգ, այլ նաև տեղեկատվություններ կամ գաղափարներ, որոնք վիրավորում են, ցնցում կամ մտահոգում: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց ժողովրդավարական հասարակությունը չի կարող գոյություն ունենալ: Ինչպես սահմանում է 10-րդ հոդվածը, խոսքի ազատությունն ունի բացառություններ, որոնք, սակայն, պահանջում են նեղ մեկնաբանություն, իսկ սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ հիմնավորվի (տես, ի թիվս այլոց, Հենդիսայդն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործը [Handyside v. Royaume-Uni], 1976 դեկտեմբերի 7, §49, Series A, No.24: Plon հրատարակչությունը ընդդեմ Ֆրանսիայի [Editions Plon v. France], № 58148/00, §42, ՄԻԵԴ 2004-IV: Լենդոն, Օչակովսկի-Լորան և ժյուլի ընդդեմ Ֆրանսիայի [Lindon, Otchakovsky-Laurens and July v. France], № 21279/02 և 36448/02, §45, ՄՊ, ՄԻԵԴ, 2007 IV): Բացի այդ, Եվրոպական Դատարանը բազմիցս ընդգծել է զանգվածային լրատվության միջոցների կարևոր դերը ժողովրդավարական հասարակությունում: Թեև ՉԼՄ-ները չպետք է գերազանցեն որոշակի սահմաններ, այդ թվում՝ այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանության սահմանները, այնուամենայնիվ, իրենց պարտականությունների և պատասխանատվության շրջանակներում նրանք պետք է տրամադրեն տեղեկատվություն և գաղափարներ հանրային նշանակություն ունեցող բոլոր հարցերի վերաբերյալ: Նման հարցերի վերաբերյալ տեղեկություններ և գաղափարներ տարածելու նրանց գործառնությունն գումարվում է նաև դրանք ստանալու հանրության իրավունքը: Հակառակ դեպքում ՉԼՄ-ները չեն կարողանա կատարել «պահակային շան» իրենց կարևոր դերը (Բլեդ և Տրոմսյո և Ստենսասսա ընդդեմ Նոռվեգիայի [Blad et Tromsø et Stensaas v. Norvège], ՄՊ, № 21980/93)», - նշում է մասնագետը:

Արմեն Մինասյանն իր հերթին միանգամայն բնական է համարում այն հանգամանքը, որ պառլամենտարիզմի պայմաններում մեդիային իսկապես ստանում է առավել արդյունավետ վերահսկողական գործառույթ: Նրա խոսքով, պետական կառույցների գործունեությանը հետևելու, բոլոր գործընթացները լուսաբանելու անհրաժեշտությունը, հատկապես հետաքննական լրագրության դեպքում, լուրջ ներուժ են ապահովում վերահսկողական գործառույթ իրականացնելու համար, ինչն էլ, ըստ էության, իրականացնում են ՉԼՄ-ները: «Բայց ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ հետխորհրդային տարածքում կատարյալ պառլամենտարիզմ չի ձևավորվել: Եվ, մեծ հաշվով, հետխորհրդային տարածքի երկրների մեծամասնության խորհրդարանների գործունեության մեջ, որոշ բացառություններով, պառլամենտարիզմի պայմաններում վերահսկողական գործառույթը բավականին աննշան դեր է խաղում, և, հետևաբար, նույնը վերաբերում է մեդիայի վերահսկողական գործառույթին», - ընդգծել է փորձագետը:

Վահագն Սարոյանը, անդրադառնալով այն հանգամանքին, որ մեդիան կատարում է ոչ միայն տեղեկատվական, հաղորդակցական, դաստիարակչական, այլև վերահսկողական գործառույթ, նշեց, որ հենց վերջինը իսկապես կարող է ստեղծել հնարավորություն պետական կառույցների և հասարակության միջև առավել արդյունավետ կապ ապահովելու համար: Որպես խորհուրդ՝ փորձագետը վերահսկողական գործառույթն ուժեղացնելու համար մեդիայի ներկայացուցիչներին առաջարկել է իրականացնել երկու հիմնական և կարևոր քայլ.

1. Քարոզչությունից բացի հանրությանը բացատրել իշխանական կառույցների գործունեության արդյունավետությունը, ընդունված որոշումների ու օրինագծերի օգուտը՝ ցույց տալով նաև ռիսկերը:

2. Իրականացնել պետական կառույցների գործունեության մոնիթորինգ, մշտական հիմունքներով ստուգել արդեն գոյություն ունեցող և առաջացող բոլոր խնդիրներն ու ռիսկերը, հետևողականորեն իրագնել հանրությանը դրանց լուծման կամ չլուծման ընթացքի մասին:

Մերի Թադևոսյանը, իր հերթին, ընդգծել է, որ լրագրության գործառույթներից մեկը այսպես կոչված «չորրորդ իշխանության» գործառույթն է, որը կոչված է վերահսկելու և կարգավորելու պետական

կառույցների և հասարակական ինստիտուտների գործունեությունը: Սակայն, նրա խոսքով, ստեղծված պայմաններում մասս մեղիան ազդում է երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակի վրա՝ «միայն» ձևավորելով հասարակական և քաղաքական հայացքները, պատկերացումները, իդեալներն ու հասարակության վարքագծի նորմերը: Փորձագետը հիշեցրեց Ու. Էկոյի խոսքերը. «Մամուլը իշխանության գործիք է, այսինքն՝ կուսակցությունների և տնտեսական լոբբիների: Նրա հիմնական զենքը արտահայտությունների իմաստի միտումնավոր մթագնումն է»: Բացի այդ, զանգվածային լրատվական միջոցները նույնպես քննադատության են ենթարկվում իշխանության ավանդական ճյուղերի կողմից, միայն այն պատճառով, որ գտնվել քննադատությունից դուրս նրանք չեն կարող, դա նրանց ապահովում է «շահավետ ալիքի» («ռեպրեսիվ հանդուրժողականություն» Գ. Մարկուզեյի սահմանում): Իսկ իրենց «գոհ» որակելով՝ լրատվամիջոցները ինքնակատարելագործման և զարգացման անհրաժեշտություն չեն տեսնում: Նրանք, ըստ մասնագետի կարծիքի, շարունակում են ճաշակ ու նախասիրություններ դաստիարակել՝ սահմանելով որոշակի հաղորդագրությունների մեկնաբանման անհրաժեշտ սխեմա, որի համաձայն լսարանը սկսում է ընտրել և արձագանքել դրանք հաստատող «ազդանշաններին»:

Հասմիկ Երիցյանն իր հերթին համոզմունք հայտնեց, որ հենց խորհրդարանական համակարգն է լավ հիմք հանդիսանում մեղիայի վերահսկողական գործառնության իրականացման համար: Սակայն, ցավով նշեց փորձագետը, ժամանակակից իրողություններում և գլոբալ դիմակայության պայմաններում ՉԼՄ-ների նման գործառնությունները երկրորդ պլան են մղվում:

Հարցված բոլոր փորձագետները, ի պատասխան խորհրդարան-մեղիա-հասարակություն հատվածում համագործակցության ընդլայնման վերաբերյալ օրենսդիր մարմինների համապատասխան գերատեսչությունների համար առաջարկություններ ներկայացնելու խնդրանքին, միաձայն խոսեցին հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմ ստեղծելու և ռազմավարական խնաստալից տեղեկատվական քաղաքականություն վարելու կարևորության և անհրաժեշտության մասին: Նրանք համակարծիք են, որ խորհրդարանն ու նրա ներկայացուցիչները քաղաքականության սուբյեկտներ են, որոնք մյուսներից ավելի հաճախ են շփվում հանրության հետ և առանց մեղիայի հետ համագործակցության չեն կարող ապահովել ի-

րենց գործառույթների լիարժեք կատարումը: Ժամանակակից աշխարհը թելադրում է իր կանոնները, որոնց շրջանակներում դժվար է պատկերացնել որևէ լուրջ գործընթաց առանց մեդիայի և դրանց գլխավոր դերի՝ լուսաբանման:

Դավիթ Ալավերդյանը, կարևորելով խորհրդարանի հետադարձ կապը հասարակության հետ, որպես օրինակ բերեց հայաստանյան իրողությունները: «Եթե մենք խոսում ենք Հայաստանի մասին, ապա այդ կապը նոր իշխանության օրոք գրեթե գրոյացել է, և մենք տեսնում ենք մի գործընթաց, երբ խորհրդարանի ղեկավարության և լրագրողների միջև ինչ-որ անտագոնիզմ է առաջացել՝ չհաշված, իհարկե, որոշ լրատվամիջոցներ, որոնք պատկանում են մեր խորհրդարանի ղեկավարությանը կամ առանձին խորհրդարանականներին: Հայաստանում մեդիադաշտի յուրահատկությունն այնպիսին է, որ սեփական ռեսուրսների ստեղծումը ֆինանսական առումով բավականին մատչելի գործընթաց է, և գրեթե բոլոր քաղաքական ուժերն ու նույնիսկ առանձին քաղաքական անձինք ունեն իրենց սեփական լրատվամիջոցները, որոնք արտացոլում են կոնկրետ այդ մարդկանց տեսակետները: Այդ պատճառով մենք այսօր բավականին լուրջ անտագոնիզմ ունենք լրագրողների, հատկապես խորհրդարանական գործունեությունն արտացոլող, և խորհրդարանի ղեկավարության միջև: Իհարկե, իրավիճակի շտկման առաջին քայլը պետք է կատարեն օրենսդիրները: Ցավալի է խոստովանել, որ տվյալ դեպքում, կոնկրետ Հայաստանում, խորհրդարանականների մեջ շատ են նախկին լրագրողները, նրանք շատ չարացած են իրենց նախկին գործընկերների նկատմամբ, մեկուսացել են նրանցից, ասում են, որ իրենք լրագրողների հետ հիմա բարիկադների տարբեր կողմերում են: Ըստ երևույթին, նրանք սպասում են, որ լրագրողներն անընդհատ իրենց գովեն, ինչ-որ ճառեր ասեն, շնորհավորական խոսքեր և այլն: Բայց իրականում երկրում տիրող իրավիճակը ոչ մի կերպ չի հուշում, որ ամեն ինչ պետք է լինի հենց այդպես: Ուստի կարծում եմ, որ առաջին հերթին լրագրողական հատվածի հետ այդ համագործակցությունը պետք է վերականգնել: Երկրորդ՝ մեզ շատ է պետք ՉԼՄ-ների մասին նոր օրենքը, որովհետև գործող օրենքը գրվել է 20 տարի առաջ՝ 2003 թվականին, և ոչ մի կերպ չի արտացոլում ներկա իրողությունները: Եվ ոչ մի քայլ, ոչ մի առաջընթաց դեռ չի գգացվում այն ուղղությամբ, որ մենք կարող ենք միասին մշակել այդ օրենքը: Մյուս կողմից, վախենում եմ, որ նրանք կհավաքվեն և կմշակեն այս օրենքը առանց

լրագրողական հանրության մասնակցության, և դա կլինի ամենասարսափելին, որ կարող է տեղի ունենալ», - ասել է «Մեդիամաքսի» գլխավոր խմբագիրը:

Ազգային ժողովի և մեդիայի միջև կապի բացակայությունից դժգոհություն է հայտնել նաև Արամ Աբրահամյանը. «Չգիտեմ ինչպես այլ երկրներում, բայց Հայաստանում խորհրդարանը համագործակցում է ոչ թե լրատվամիջոցների ու լրագրողների, այլ լրագրողական հասարակական կազմակերպությունների հետ: Իսկ վերջիններս ունեն որոշակի կողմնորոշում, այդ թվում՝ քաղաքական: Որպես խմբագիր աշխատելուս 30 տարիների ընթացքում օրենսդիրներն ինձ հետ ոչ մի հարց չեն քննարկել»:

Կնյազ Սարոյանը այս հարթությունում իրավիճակը օպտիմալացնելու համար, առաջարկեց որդեգրել մեդիայի հետ հաղորդակցության ավելի բաց, թափանցիկ և երկկողմանի ոճ: Նրա խոսքով՝ կարևոր է հավատարմագրված լրագրողների համար մասնագիտական լուսաբանման դասընթացների անցկացումը: «Հասարակության համար խորհրդարանի գործունեության լուսաբանման համապատասխան օղակները (օղակը) պետք է կարողանան հստակ տարանջատում իրականացնել օրենսդիր մարմնի աշխատանքի լուսաբանման և պատգամավորների գործունեության լուսաբանման միջև, քանի որ, որպես կանոն, համապատասխան դեպարտամենտի խնդիրն է ապահովել հենց օրենսդիր մարմնի գործունեության մատչելիությունն ու հասկանալիությունը հասարակության համար, այլ ոչ թե առանձին պատգամավորների մասնավոր գործունեությունը: Անհրաժեշտ են նաև հանրային հաղորդակցության գործընթացներում թվային գործիքների ավելացում, մուլտիմեդիա հարթակների մեկնարկում», - ասաց փորձագետը:

Տարեկիկ Գալստյանն իր հերթին ցավով փաստեց, որ այսօր լրագրողներ-խորհրդարան-պետական մարմիններ համագործակցությունը, մեղմ ասած, դեֆորմացված է, իշխող քաղաքական ուժը խորհրդարանում մեծամասնություն է կազմում և գործում է «յուրայինների հետ աշխատելու» ձևով՝ պատասխանելով միայն լոյալներին, իսկ ընդդիմադիր լրագրողները սուր հարցերի և բացահայտումների համար հաճախ «ֆեյքերի կողմից հարձակումների» են ենթարկվում կամ դատարանի առաջ են կանգնում պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու մեղադրանքով: «Ներկայումս ոչ մի ընդդիմադիր հեռուստաալիքով, ցավոք, հնարավոր չէ տեսնել մասնագիտա-

կան բանավեճեր տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ, հատկապես իշխող քաղաքական ուժի կողմից: Բայց չէ որ ժողովրդավարության հիմնական բնութագրիչներից մեկը հենց հանրային բանավեճերի միջոցով խնդիրները լուծելու առաջարկվող հնարավորությունն է: Ժողովրդավարությունը զարգանում է խոսքի ազատության շնորհիվ և անհրաժեշտ է առավելագույն ջանքեր գործադրել ժողովրդավարական հասարակության արժեքների պահտպանության համար, ինչպիսիք են բազմակարծությունը, հանդուրժողականությունը և լայն մտածելակերպը», - որպես գլխավոր հանձնարարական նշել է փորձագետը:

Արմեն Մինասյանի խոսքով՝ հանձնարարականներ կարելի է, իհարկե, տալ, բայց դրանք կարող են կյանքի կոչվել և նշանակություն ունենալ միայն այն ժամանակ, երբ խորհրդարանների դերը քաղաքական համակարգում փոխվի: «Այսինքն, դա հնարավոր կլինի այն ժամանակ, երբ հանրային ազդեցությունը խմբակցության ձևավորման գործընթացի վրա ավելի ուժեղ կլինի, քան խմբակցության դեկավարության ազդեցությունը: Այդ դեպքում հնարավոր կլինի մադիայի և հասարակական կարծիքի ազդեցության ուժեղացումը: Իսկ եթե հաշվի առնենք այսօրվա իրողությունները, գլխավոր հանձնարարականը կարող է լինել այն, որ խորհրդարանում այս կամ այն կերպ հայտնված տարբեր անձինք, այդ թվում՝ օրենսդիր մարմնի վարչակազմը, ավելի բաց լինեն լրատվամիջոցների նկատմամբ, ավելի շատ աշխատեն ՉԼՄ - ների հետ», - նշել է մեդիափորձագետը:

Վահագն Սարոյանն ընդգծեց, որ *նոյն մեղիան է առավել սերտ և արդյունավետ դարձնում խորհրդարանի և հասարակության միջև կապը, այդ իսկ պատճառով պետական կառույցները պետք է ավելի ակտիվ աշխատեն ՉԼՄ-ների հետ*: Սակայն, տվյալ դեպքում խոսքը գնում է խորհրդարանի մասին, որը առավելագույնս շահագրգռված է հասարակության հետ դրական և ցանկալի հարաբերություններ հաստատելու մեջ, որպեսզի ապահովի ցանկալի իմիջ և հեղինակություն հանրային ընկալման և կարծիքի մեջ: Այդ իսկ պատճառով մեդիայի հետ աշխատանքը պետք է կազմակերպվի հասարակայնության հետ կապ ձևավորող PR-դեպարտամենտների, մամուլի ծառայությունների և, որ ամենակարևորն է, որակյալ մասնագետների միջոցով, որոնք պետք է լուրջ և պատասխանատու աշխատանք տանեն հանրային կարծիք ձևավորող լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Մասնագետը նաև նշեց, որ ՉԼՄ-ներում

պետք է լինեն այնպիսի մասնագետներ, որոնք տիրապետում են խորհրդարանական գործունեության նրբություններին, այսինքն՝ պատրաստ են լուսաբանելու կոնկրետ խորհրդարանական ուղղվածության քաղաքականությունը:

Խորհրդարան-մեդիա-հասարակություն փոխգործակցության ընդլայնման համար Մերի Թադևոսյանն առաջարկել է իրականացնել հետևյալ հիմնական քայլերը.

✓ Երկրի տեղեկատվական քաղաքականության ռազմավարության կատարելագործում (կամ մշակում), որը կարգավորում է պետության տեղեկատվական համակարգը և ներառում է նպատակներ, խնդիրներ և դրա գործնական իրականացման հիմնական միջոցառումների շարք: Տեղեկատվական քաղաքականությունը պետք է լինի պետական մարմինների և բոլոր մակարդակներում ղեկավարության պատասխանատվության առարկան: Տեղեկատվական քաղաքականությունը հասարակության հետ կայուն կապերի ձևավորման գործիք է, որը կոչված է ապահովելու պետական կառավարման գործընթացի թափանցիկությունը և չկիրառվի գրաքննության նպատակներով:

✓ Տեղեկատվական քաղաքականության իրավական, նորմատիվ-մեթոդական, գիտատեխնիկական և կազմակերպչական աջակցության արդիականացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում, այդ թվում՝ առաջին հերթին դրանց ընթացիկ իրադարձությունների հիման վրա երկրի տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական բազայի կատարելագործում, տեղեկատվական անվտանգության հայեցակարգերի դրույթների էական թարմացում (ուսումնասիրելով այլ երկրներում համապատասխան հայեցակարգերի առանձնահատկությունները):

✓ Տեղեկատվական անվտանգության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործում պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգում:

Ընդ որում, ***մեդիափորձագետը ՉԼՄ-ների, բյուրոների, թվային կոնտենտի հեղինակների համար այնպիսի առաջարկություններ է ձևակերպել խորհրդարանի և այլ պետական կառույցների նկատմամբ մեդիավերահսկողությունը խթանելու և ուժեղացնելու համար, որոնք իրենց պատասխաններում ընդգծել են նաև հարցված մյուս մասնագետները: Այսպես, ըստ Մերի Թադևոսյանի,***

անհրաժեշտ է. Պատվամենտարիզմի և տեղեկատվական անվտանգության բնագավառում հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների զարգացում; պատվամենտարիզմի, տեղեկատվական քաղաքականության, տեղեկատվական անվտանգության ոլորտում կադրերի պատրաստման միասնական համակարգի մշակում ու կատարելագործում; տեղեկատվական և մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված պարտադիր ծրագրերի տարածում և ներդրում երկրի կրթական համակարգում:

Գործընկերոջ հետ համակարծիք է նաև Հասմիկ Երիցյանը, ով, ինչպես և մյուս փորձագետները, ընդգծեց պետական և քաղաքական գործընթացները հասկացող պրոֆեսիոնալ մեդիամասնագետների պակասը: Նրա կարծիքով, մեդիա և բլոգոսֆերայի ներկայացուցիչներին անհրաժեշտ է համապատասխան տեսական և գործնական պատրաստվածություն:

Տիգրան Աբրահամյանի փորձն ու գնահատականները կոչված են նույնպես հաստատելու այս փաստը: «Որպես մարդ, ով տևական ժամանակ աշխատում է պետական կառավարման համակարգում և շփվում է որոշումների կայացման գործընթացում ներգրավված անձանց հետ, կարող եմ լիակատար վստահությամբ ասել, որ անկախ հիմնական մասնակիցների ցանկությունից և կամքից՝ յուրաքանչյուրը հստակ գիտակցում է մեդիայի դերը ինչպես ընթացիկ գործընթացների, այնպես էլ ռազմավարական պլանավորման համատեքստում: Ցանկացած քայլ կամ գործողություն քննարկելիս կարևոր նշանակություն ունի դրա լուսաբանման գործընթացը, հանրության համար հասկանալիության ապահովման գործոնը, իսկ որոշ գործընթացների դեպքում նաև միջազգային գործընկերների համար, իսկ դա իրականացվում է մեդիայի միջոցով», - նշեց փորձագետը՝ ընգծելով մասնագիտական պատրաստվածության կարևորությունը:

Դավիթ Ալավերդյանն իր հերթին ընդգծեց պրոֆեսիոնալ կադրերի պատրաստման կարևորությունը, որոնք ունակ են աշխատել հետաքննական և տվյալների լրագրության ուղղություններով, որպեսզի ուժեղացվի վերահսկողությունը կառավարության գործողությունների նկատմամբ: Ընդ որում մեդիայի ներկայացուցիչները պետք է հստակ հասկանան, որ քննադատությունը չպետք է անցնի քննադատության սահմանները, դառնա կամ մեղադրանք, կամ վիրավորանք առանց որևէ հիմքի, ինչպես դա հաճախ է տեղի ունենում: «Մյուս կողմից, իսկապես կա այդ խնդիրը լրագրողների և խորհրդա-

րանականների միջև: Կարծում եմ, որ քննադատությունը պետք է հիմնված լինի փաստերի կամ տվյալների վրա, որոնք լրագրողները ստանում են ցանկացած աղբյուրից: Ի դեպ, մոտ մեկուկես տարի առաջ խորհրդարանականները փոխեցին լրագրողներին տեղեկատվություն տրամադրելու մասին օրենքը, փոխեցին տեղեկատվության ազատության մասին օրենքը, կատարեցին փոփոխություններ, որոնք բարդացրեցին լրագրողների աշխատանքը, այսինքն այժմ կառավարական մարմինները հնարավորություն ունեն մերժել լրագրողներին և ոչ միայն նրանց տեղեկատվություն տրամադրելը՝ պատճառաբանելով, որ այդ տեղեկատվությունը ծառայողական է և չբացատրելով, թե ինչու այն կարելի է կամ պետք է համարել այդպիսին: Եվ դրանից օգտվում են շատ պետական կառույցներ, ինչը շատ վատ է երկրի համար, այդ թվում՝ ժողովրդավարական զարգացման տեսանկյունից: Եվ շատ ցավալի է, որ հենց այս իշխանության օրոք, մի իշխանության օրոք, որի կազմում շատ լրագրողներ կան, այդ թվում՝ վարչապետը, նրա կինը, կառավարության շատ ներկայացուցիչներ, այսինքն՝ նախկին լրագրողների և հասարակական գործիչների օրոք, այս օրենքը փոխվեց, և հիմա իրենք են դրանով քողարկվում՝ համապատասխան տվյալներ չտրամադրելով», - ասաց մեդիափորձագետը՝ մեկնաբանելով այս հարցում հայկական փորձը:

Արամ Աբրահամյանի կողմից գլխավոր հանձնարարականը ևս վերաբերվում էր պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացմանը: Որպես բացասական փորձ, որը պահանջում է ուշադրություն և շտկում, նա նշել է, որ հաճախ խորհրդարանական լրագրողները հետաքրքրվում են սոցցանցերում շրջանառվող «սկանդալային թեմաներով»՝ շատ քիչ ուշադրություն դարձնելով բուն օրենսդրությանը:

Կնյազ Սարոյանը նշել է, որ օրենսդիր մարմնի և պետական այլ գերատեսչությունների նկատմամբ մամուլի ինստիտուտի վերահսկողությունն ուժեղացնելու համար մեդիա և բլոգոսֆերայի ներկայացուցիչներն առաջին հերթին պետք է ունենան երկու կարևորագույն կոմպետենցիա՝ քննադատական և վերլուծական մտածողություն, ինչպես նաև հետաքննական լուսաբանում իրականացնելու հմտություններ: Մասնագետը կարծում է, որ այլ, ավելի արդյունավետ, գործիքներ գոյություն չունեն: «Սյուս կողմից **կարևորվում է նաև լրատվամիջոցների ֆինանսական անկախությունը, որը հանդիսանում է բացառապես պարտադիր պայման օբյեկտիվ լուսաբանման համար: Այսինքն՝ վերոնշյալ երկու վերահսկողական գործառույթներ**

ըը կարող են արդյունավետ իրականացվել միայն այն ժամանակ, երբ մեզիան կունենա դիվերսիֆիկացված ֆինանսական միջոցներ և կախված չի լինի այս կամ այն քաղաքական իրողություններից», - ընդգծեց մասնագետը:

Արմեն Մինասյանը, անդրադառնալով մամուլի և բլոգոսֆերայի ներկայացուցիչների համար տրված հանձնարարականներին, նշեց նաև, որ այստեղ կարևոր է աշխատել պրոֆեսիոնալիզմի վրա, կատարելագործել գիտելիքներն ու հմտությունները, իսկ առաջին հերթին հասկանալ խորհրդարանի դերը հասարակության և քաղաքական համակարգում, որպեսզի լուսաբանումը լինի իմաստալից: Նրա խոսքով, հաճախ հետխորհրդային երկրներում նկատվում է մեդիա ոլորտի ներկայացուցիչների մոտ իշխանության տարանջատման իմաստի, գործադիր և օրենսդիր իշխանությունների գործառույթների, խորհրդարանի լիազորությունների, այդ լիազորությունների իրականացման կարգի խորքային ընկալման բացակայություն, իսկ դա անհրաժեշտ է որոշումների կայացման գործընթացի գրագետ լուսաբանման, այդ գործընթացի վրա ազդեցության գործիքների կիրառման համար: «Այստեղ լրագրողների և հատկապես բլոգերների մոտ առկա է գիտելիքների և կոմպետենցիաների բավականին ցածր մակարդակ, և նրանք արդյունքում անկարող են լինում ճիշտ կողմնորոշել հանրությանը: Ուստի չափազանց կարևոր է աշխատել կոմպետենցիաների զարգացման, մասնագիտական գիտելիքների խորացման ուղղությամբ», - ասաց փորձագետը:

Վահագն Սարոյանը իր հանձնարարականներում բավականին էական հանգամանք է մատնանշել: Նրա խոսքով՝ ***ամենից առաջ պետք է աշխատել նորովի քաղաքական մշակույթ ձևավորելու ուղղությամբ, մասնավորապես՝ խորհրդարանական մշակույթ, որի շրջանակներում պոպուլիստական բովանդակությունը կհասցվի նվազագույնի:*** «Ընդ որում, խորհրդարանը չպետք է սահմանափակումներ մտցնի լրատվամիջոցների գործունեության վրա, չպետք է ընդունված օրինագծերն ու փոփոխությունները մահակ դարձնի և թափ տա լրատվամիջոցների և բլոգոսֆերայի ներկայացուցիչների գլխին, այլ պետք է փորձի համագործակցության ուղիներ գտնել: Մի կողմից խոսվում է ժողովրդավարության և խոսքի ազատության մասին, մյուս կողմից՝ ատելության խոսքն ու վիրավորանքն արգելելու պատրվակով քրեականացվում են խոսքի և կարծիքի արտահայտման ազատությունը ապահովող գործողությունները: Այս պայման-

ներում *մեդիայի ներկայացուցիչներին անհրաժեշտ է ճնշել պոպուլիստական և կեղծ լուրերը, ինչպես նաև արհեստական օրակարգը՝ շատ ավելի լայն իրական փաստարկների և մուլտիպլիկացիոն տարածման էֆեկտի ապահովման միջոցով: Բսկ խորհրդարանն իր հերթին պետք է շահագրգռված լինի հանրության աչքում կառուցողական իմիջ ձևավորելու մեջ», - նշեց մասնագետը:*

Փորձագետ Տաթևիկ Գալստյանը կարծում է, որ *ՉԼՄ-ների վերահսկողական գործառույթն իրականացնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հստակ իմանալ մասնագիտական գործունեության ընթացքում լրագրողի իրավունքներն ու պարտականությունները և գոյիս հանել իրավական պրակտիկայից, դատարանների որոշումներից, որոնք առանցքային նշանակություն ունեն մամուլի ինստիտուտի գործունեության համար:* «Այսօրվա դրությամբ սոցիալական մեդիան կատաղի արագությամբ ներխուժում է հասարակական կյանք, և, ցավոք, համացանցում տեղեկատվական աղբյուրները և հաղորդակցությունները վնաս պատճառելու ավելի մեծ սպառնալիք են պարունակում, քան մյուս զանգվածային լրատվամիջոցները: Օպերատիվության սկզբունքի իրացման համատեքստում հաճախ տեղի է ունենում չստուգված տեղեկատվության արտահոսք, իհարկե, երբեմն դա արվում է միտումնավոր, ինչը հանգեցնում է լուրջ հետևանքների և կարող է խաթարել մամուլի համար կենսական կարևորություն ունեցող «հանրային պահապանի» գործառույթի իրականացումը, ինչպես նաև կարող է ինքնին առաջացնել չարդարացված միջամտություն մամուլի ազատությամբ: Բսկ որպեսզի նման բան տեղի չունենա, լրագրողական գործառույթ իրականացնող յուրաքանչյուր անձ կամ կազմակերպություն պետք է իմանա այս կամ այն հայտարարությունը զրպարտություն համարելու չափանիշները, որոնց մանրամասն անդրադարձել է, օրինակ, ՀՀ Վճռաբեկ դատարանը.

ա) պետք է ներկայացվեն անձի վերաբերյալ փաստական տվյալներ, այսինքն՝ ներկայացումը պետք է պարունակի կոնկրետ, ճշգրիտ տեղեկատվություն որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական,

բ) անձի վերաբերյալ փաստական տվյալները պետք է ներկայացվեն հրապարակայնորեն,

գ) ներկայացված փաստական տվյալները չպետք է համապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն կեղծ, անհիմն, անհավաստի,

դ) ներկայացված փաստական տվյալները պետք է փաստացի արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը (տես ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 11-ի № ՄԴՈ-997 որոշում, Վճռաբեկ դատարանի № ЕКД որոշում/2293/02/10 2012թ.)», - նշեց փորձագետը:

Փաստաբանը կատարեց դատարանի որոշումների և համապատասխան չափանիշների մանրամասն վերլուծություն: Ստորև կներկայացնենք փորձագետի կողմից իրականացված հայաստանյան և եվրոպական օրենսդրության վերլուծությունը, որի իմացությունը հնարավորություն կտա մեղիային առավել արդյունավետ իրականացնել իրենց գործառնությունները: Տաթևիկ Գալստյանը վստահ է, որ եթե լրագրողական գործունեությունն իրականացվի ներքոհիշյալ նորմերն ու չափանիշները հաշվի առնելով, անգամ ամենամեծ ցանկության դեպքում շահագրգիռ անձինք չեն կարող ճնշել կամ վախեցնել լրատվամիջոցներին դատական հետապնդման սպառնալիքներով և ստիպված կլինեն մտածել համագործակցության ամրապնդման մասին:

Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով արտահայտության արատավորող լինելու բնույթին, նշել է, *որ արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացում, նսեմացում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը* (ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործերով որոշումներ №ԵԿԴ/2293/02/10, ԼԴ/0749/02/10 և ԵԿԴ/0807/02/11): Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով փաստական տվյալները հրապարակային ներկայացնելու առանձնահատկությունը, նշել է, որ հայտարարությունը (կամ ներկայացված փաստերը) հրապարակային է, եթե դա ար-

վել է առնվազն երրորդ անձի ներկայությամբ, և եթե հայտարարությունն արվել է ռադիոյով, հեռուստատեսությամբ, համացանցի և կապի ու լրատվության այլ միջոցներով, ապա երրորդ անձին հաղորդակից դարձնելով (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումը № ԵԿԴ/2293/02/10):

Արատավորող է համարվում այն արտահայտությունը, որը, հասարակության անդամների կարծիքով, հրապարակայնորեն նսեմացնում է մարդու արժանիքները, նրան ծաղրի է ենթարկում, կարող է տվյալ անձին վերածել ատելության կամ արհամարհանքի օբյեկտի, կամ մարդու մոտ ամոթի զգացում է առաջացնում կամ ստիպում է ուրիշներին խուսափել նրա հետ շփվելուց (ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական գործով որոշում № ԱՎԴ/0179/02/13):

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադարձել է այն հանգամանքներին, որոնց համաձայն *փաստական տվյալների հրապարակային ներկայացումը պետք է պայմանավորված լինի գերակա հանրային շահով, իսկ դրանց ճշմարտացիությունն ու հիմնավորվածությունը պարզելու ուղղությամբ գործադրվող ջանքերը պետք է լինեն ողջամիտ, բացի այդ տեղեկատվությունը պետք է ներկայացվի հավասարակշռված և բարեխղճորեն*: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք տվյալ իրավիճակում ներկայացված փաստական տվյալներն ու դրանց բովանդակությունը բխում են «հանրային գերակա շահից», որն անմիջականորեն առնչվում է հանրության տեղեկատվություն ստանալու իրավունքին, արդյոք այդ տեղեկատվությունը կարևոր է հանրության համար, արդյոք անհրաժեշտություն կար, որ հասարակությունը հետևեր այդ տեղեկատվության տարածմանը և սպասեր դրա հետագա հրապարակմանը (տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշում №ԵԿԴ/2293)/10.02.2012):

Մեկ այլ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը շեշտել է, որ *«գերակա հանրային շահ» եզրույթում օգտագործվող «գերակա» ածականը բնութագրում է հրապարակվող տեղեկատվության հրատապությունը, դրա սոցիալական անհրաժեշտությունը*, բացի այդ, նշված իրավագործության մեջ գերակա հանրային շահի հետ կապված պայմանն ունի գերակշռող ազդեցություն, իսկ մնացած պայմանները՝ ճշմարտության և հիմնավորվածության հաստատումը, հավասարակշռված և բարեխիղճ շարադրանքը, կրում են լրացուցիչ բնույթ, և

այդ պայմանները միասին հիմք են ստեղծում տեղեկատվությունը վարկաբեկող չճանաչելու համար (տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.07.2013 թ. քաղաքացիական գործով որոշումը № ԵԿԴ/0807/02/11):

Անդրադառնալով նաև տեղեկատվության ճշմարտացիությունն ու հիմնավորվածությունը պարզելու ուղղությամբ ողջամիտ ջանքեր գործադրելու, այն հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացնելու հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստերի առկայություն: Մասնավորապես, փաստական տվյալներ հրապարակող անձը պետք է ապացուցի, որ հրապարակումից առաջ իր կողմից ձեռնարկվել են այնպիսի միջոցներ, որոնք թույլ են տվել նրան հանգել այն եզրակացության, որ այդ փաստական տվյալները որոշվում են հանրային շահով և կարող են համապատասխանել իրականությանը: Բացի այդ, տեղեկատվություն հրապարակող անձը պետք է այն շարադրի բարեխղճորեն և հավասարակշռված: Այս դեպքում բարեխղճությունը ենթադրում է տեղեկատվության (փաստացի տվյալների) ամբողջական ներկայացում՝ առանց էական փաստերի փոփոխության: Ինչ վերաբերում է կշռադատվածության մասին սահմանմանը, ապա վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել. պետք է ապահովվի հավասարակշռություն ներկայացված փաստական տվյալների և գերակա հանրային շահի հարաբերակցության տեսանկյունից: Հանրային գերակա շահով պայմանավորված փաստական տվյալների հրապարակումը չպետք է պարունակի տվյալ հարցի հետ առնչություն չունեցող այլ արատավորող տեղեկատվություն (տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.04.2012 քաղաքացիական գործով որոշումը № ԼԴ/0749/02/10):

Եվրոպական դատարանը Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանման համատեքստում հայտարարել է, որ թեև զազվածային լրատվամիջոցները չպետք է գերազանցեն այն սահմանները, որոնք որոշվել են ի շահ մասնավոր անձանց հեղինակության պաշտպանության, նրանք պարտավոր են հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն և գաղափարներ տարածել: ***Մամուլը ոչ միայն կոչված է տեղեկատվություն և գաղափարներ տարածելու, այլև հանրությունն իրավունք ունի ստանալու դրանք: Ուստի, որոշելու համար, թե արդյոք միջամտությունը եղել է բավարար, հիմնավորված և, հետևաբար, «անհրաժեշտ», պետք է հաշվի առնել գործի հասարակական նշանակության հան-***

գամսևքը (Bladet Tromso and Stensaas v. Norway 1999 թ. մայիսի 20-ի վճիռ, կետ 62): Եվրադատարանը բազմաթիվ գործերով անդրադարձել է Լրագրողների պաշտպանության և նրանց իրավունքների ընդլայնման հարցին՝ խոսքի ազատության իրավունքի պաշտպանության համատեքստում (խոսքն այնպիսի գործերի մասին է, ինչպիսիք են (Bladet Tromso and Stensaas v. Norway, Prager and Oberschlik v. Austria, Shabanov and Tren v. Russian Federation, Pedersen and Baadsgaard v. Denmark, McVicar v. The United Kingdom, Lingens v. Austria, De Haes and Gijssels v. Belgium, Chemodurov v. Russian Federation և այլ նմանատիպ գործերում):

ՀՀ Սահմանադրական դատարանը, քննարկման առարկա դարձնելով ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության և օրենքով պաշտպանվող այլ շահերի միջև հավասարակշռության խնդիրը, ընդգծել է, որ հիշյալ ազատությունը միշտ պետք է գերակայի այն դեպքում, երբ տեղեկատվության բացահայտումն անհիմն չի եղել, հետապնդել է իրավաչափ նպատակ և տվյալ տեղեկատվությունը վերաբերում է հասարակական հետաքրքրություն ներկայացնող պետական գործերի և անձանց: ՀՀ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ հանրային շահի գերակայության տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը: Այսպիսով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյոք հասարակության տեղեկացված լինելու շահը գերակա է եղել տեղեկություն հայտնաձև անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ **այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» («watchdog») իր գործառնությունը և տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ:** Ըստ Դատարանի դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի «անհետաձգելի հասարակական պահանջի» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը հավասարակշռված և բարեխղճ:

րեն՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության (տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2011.11.15 թիվ ՍԴՈ-997 որոշում):

Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով պաշտպանվում է բացասական կարծիքի կամ գնահատող դատողության արտահայտումը այնքանով, որքանով այն հիմնված է հաստատված կամ ընդունված փաստերի վրա: Ի տարբերություն փաստերի, որոնք կարող են ներկայացվել և հիմնավորվել, գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել: Գնահատող դատողության ապացուցման պարտականությունն անհնար է իրականացնել և ինքնին խախտում է կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածում ամրագրված իրավունքի հիմնարար մասն է կազմում: Այնուամենայնիվ, երբ հայտարարությունը որակվում է որպես գնահատող դատողություն, անհրաժեշտ է, որ վերջինս հիմնվի բավարար փաստական կազմի վրա (տե՛ս Պեդերսենը և Բաադսգաարդն ընդդեմ Դանիայի գործով Եվրոպական դատարանի 17.12.2004 թվականի վճիռը, կետ 76): Գնահատողական դատողությունը կարող է անընդունելի համարվել, քանի որ այն առանց փաստական հիմքի կարող է չափազանցված համարվել (տե՛ս Ռիզոսը և Դասկասն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 27.05.2004 թվականի վճիռը, կետ 45):

Այսպիսով, վերլուծությունն ամփոփում է Տաթևիկ Գալստյանը, ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով կոնկրետ արտահայտությունը որպես վիրավորանք ճանաչելու չափանիշներին, հարկ է համարել նշել հետևյալը.

«1. Արված հայտարարությունը պետք է փաստացի արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, իսկ դրա ապացուցման բեռը կրում է հայցվորը:

2. Արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես՝ նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է ի-

մանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

3. Արտահայտությունը պետք է կատարված լինի հրապարակային ձևով, փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը): Նման դեպքերում առկա է վնասի համատեղ փոխհատուցում» (տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.04.2012 թ. № ԼԴ /0749/02/10 քաղաքացիական գործով որոշումը):

Այսպիսով, *որպես ՉԼՄ-ների, բլոգերների, թվային բովանդակության հեղինակների համար հանձնարարական, որն ուղղված է խորհրդարանի և այլ պետական կառույցների նկատմամբ լրատվամիջոցների վերահսկողության ուժեղացմանը, փորձագետն առաջին հերթին ընդգծում է նրանց օրենսդրության (ազգային և միջազգային), մասնավորապես, վերը ներկայացված իրավական առանձնահատկությունների, նորմերի և չափանիշների խնացությունը:*

Ինչ վերաբերում է խորհրդարանական լրագրության ուղղությունը հատուկ զարգացնելու անհրաժեշտությանը՝ հանրային կարծիքի ձևավորման գործընթացում մեդիայի աճող դերի պայմաններում, ապա այստեղ փորձագետների կարծիքները որոշակիորեն տարանջատվել են: *Հարցմանը մասնակցած փորձագետների մի մասը շատ ավելի կարևոր են համարում հետաքննական լրագրության ուղղության զարգացումը՝ խորհրդարանական լրագրության փոխարեն, մյուսները նշեցին բուհերում հատուկ կրթական ծրագրերի ներդրման և ՉԼՄ-ների գործող ներկայացուցիչների համար հատուկ դասընթացների մշակման անհրաժեշտությունը՝ խորհրդարանականների և մեծ փորձ ունեցող մեդիամասնագետների ներգրավմամբ, իսկ մյուսները կարծում են, որ բավական է լրագրողների մասնագիտական կոմպետենցիաների ընդհանուր մակարդակի բարձրացումը:*

Տիգրան Արբահամյանը խորհրդարանական լրագրության զարգացման տեսանկյունից շատ կարևոր է համարում *մեդիայի կոնկրետ ներկայացուցիչների ոչ միայն մասնագիտական, այլև քաղաքական պատրաստվածության բարձր մակարդակի ապահովումը*, որը պետք է թույլ տա հստակ և օբյեկտիվ հանրությանը ներկայացնել ստեղծված իրողություններն ու դրանց առանձնահատկությունները: Դա ենթադրում է այդ ուղղությամբ աշխատող մեդիայի ներկայացուցիչների շարունակական աճի ապահովում որակական, մասնագիտական առումով, որպեսզի նրանք հնարավորություն ունենան հետ չմնալ իրադարձությունների զարգացումներից, մշտապես բարձրաձայնեն և առաջ տանեն հանրության համար կարևոր թեմաներն ու դրանց նրբությունները:

Իր հերթին բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Ալավերդյանը, ով ավելի քան 20 տարվա փորձ ունի Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում, անհրաժեշտություն չի համարում հատուկ զարգացնել «խորհրդարանական լրագրություն» ուղղությունը, օրինակ, մագիստրոսական կամ ինչ-որ այլ հատուկ ծրագրերի տեսքով: *«Մակայն դա կարող է դառնալ պարտադիր առարկաներից մեկը, օրինակ, մեր երկրների բուհերի ժուռնալիստիկայի ֆակուլտետներում, քանի որ խորհրդարանական գործունեության լուսաբանումն ունի իր առանձնահատկությունները, կան շատ նրբություններ: Ընդ որում, այս նրբությունները տարբերվում են յուրաքանչյուր երկրում և, կարծում եմ՝ շատ օգտակար կլինեն, եթե ժուռնալիստիկայի ֆակուլտետներում ուսանողներն այդ առարկան ուսումնասիրեյին: Օգտակար կլինեն նաև, եթե նրանք առաջին ձեռքից տեղեկատվություն ստանային, եթե այդ դասընթացներին ներկայանային գործող խորհրդարանականներ և խորհրդարանական գործունեության լուսաբանման մեծ փորձ ունեցող լրագրողներ: Այս ամենը չափազանց օգտակար կլինեն: Բացի այդ, ոչ միայն ուսանողների, այլև ՉԼՄ-ների գործող աշխատակիցների համար կարելի է անցկացնել հատուկ սեմինարներ, կյոք սեղաններ, որոնց ժամանակ նրանց կսովորեցնեն, թե ինչպես կարդալ խորհրդարանական փաստաթղթերը: Չէ որ իրականում դրանք բավականին ձանձրալի են, երկար, բայց կան հետաքրքիր նրբություններ, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնել: Այ դա շատ կարևոր է, և կարծում եմ՝ նման բան կարելի է անել»*, - նշեց փորձագետը:

Արամ Աբրահամյանն իր հերթին նշեց, որ իշխանության չարաշահումներ կարող են լինել նաև բուն օրենսդրության մեջ, իսկ դրանց բացահայտման համար անհրաժեշտ է մանրակրկիտ աշխատանք և օրենսդրական տեխնիկայի որոշակի գիտելիքներ: Այդ իսկ պատճառով կարևոր և ցանկալի է, որ խորհրդարանական լրագրողները վերապատրաստվեն այդ ուղղությամբ, ընդգծեց փորձագետը:

Միանշանակ «խորհրդարանական լրագրություն» ուղղության զարգացման օգտին արտահայտվեցին Կնյազ Սարոյանը և Արմեն Մինասյանը: Կ. Սարոյանը դա բացատրեց նրանով, **որ օրենսդիր մարմնի աշխատանքը բավականին բազմապլան է և բազմափուլ, ուստի պրոֆեսիոնալ լրագրողական համայնքի ձևավորումն անհրաժեշտություն է:** Արմեն Մինասյանը նաև անվերապահ անհրաժեշտություն է համարում պրոֆիլային լրագրության զարգացումը բոլոր ուղղություններով, ճիշտ է՝ մեկ էական վերապահումով: «Բնականաբար, խորհրդարանական երկրներում անհրաժեշտ է զարգացնել խորհրդարանական լրագրությունը, այդ թվում՝ լրատվամիջոցների, լրագրողների ներուժի, հնարավորությունների զարգացման միջոցով: Բայց այստեղ մի հիմնարար հարց կա. արդյո՞ք պառլամենտարիզմը հետխորհրդային երկրներում այնպիսին է, ինչպիսին պետք է լինի դասական խորհրդարանական պետություններում քաղաքագիտության տեսանկյունից: Այստեղ շատ հիմնարար խնդիր կա: Թեև եթե մենք տանելու ենք պառլամենտարիզմի իրական զարգացմանը, ապա առաջընթաց ապահովելու, այդ բաղադրիչն ապահովելու համար, անշուշտ, կարևոր է խորհրդարանական լրագրության կայացումը: Չի կարելի ասել, որ դա տեղի չի ունենում և Հայաստանում, և Ռուսաստանում, և այլ երկրներում իսկապես խորհրդարանական լրագրություն կա, բայց այն լուրջ զարգացման կարիք ունի», - նշեց մեդիափորձագետը:

Վահագն Սարոյանը նաև այն կարծիքին է, որ **խորհրդարանական լրագրության զարգացումը կարող է ժամանակի և տարածության մեջ բազմաթիվ խնդիրների լավագույն լուծումը լինել, քանի որ խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում օրենսդիր մարմնի գործունեության լուսաբանումը և այդ գործընթացի արդյունավետության աստիճանը պետք է ունենան կարևոր և առանցքային նշանակություն: Փորձագետն այս ամենի կապակցությամբ անհրաժեշտ է համարում հետևյալ քայլերի իրականացումը:**

1. խորհրդարանական լրագրության՝ որպես սոցիալապես նշանակալի մասնագիտացման գաղափարի ձևավորում

2. քաղաքական լրագրության շրջանակներում խորհրդարանական լրագրության ուղղության առանձնացումը

3. ժուռնալիստիկայի ֆակուլտետներում համալսարանական համակարգում անհրաժեշտ է ունենալ խորհրդարանական լրագրության ուսումնասիրությանն ուղղված ծրագրեր:

Փորձագետ Մերի Թադևոսյանը կարծում է, որ նախքան «խորհրդարանական լրագրություն» ուղղության ուսումնասիրությանը անցնելը, **անհրաժեշտ է առաջին հերթին գրադվել մեդիագրագիտության ծրագրերի համակարգված և հետևողական ներառման հարցերով կրթական համակարգի բոլոր մակարդակներում:** Այս քննարկումը, նրա կարծիքով, պետք է տեղափոխվի համապատասխան ազգային քաղաքականության մշակման, ինչպես նաև մեդիա և տեղեկատվական գրագետ ուսուցիչների և աշակերտների/ուսանողների պատրաստման համաշխարհային առանցքային միտումների և հեռանկարների վերլուծության հարթություն: Լրատվամիջոցների և տեղեկատվական գրագիտության դասընթացը ուսուցիչների համար լայն հնարավորություններ կտա, առաջին հերթին՝ կրթել իրագել և մտածող քաղաքացիներին, և, երկրորդ, դա կլինի պատասխան այն փոփոխությունների և վերափոխումների, որոնց ենթարկվում է նրանց դաստիարակչական և կրթական գործունեությունը, քանի որ ուսումնական գործընթացում ուսուցիչների կողմնորոշումը փոխափնվում է սովորողների կողմնորոշմամբ:

Խորհրդարանական լրագրության ուղղության զարգացումը ներկայումս քիչ հավանական է թվում փորձագետ Հասմիկ Երիցյանին, իսկ ահա Տաթևիկ Գալստյանն իրականում կարևոր է համարում հետաքննական լրագրության զարգացումը: Մասնագետի կարծիքով՝ այն առավել օգտակար գործիքն է, և մի շարք երկրներում պետական հովանավորչության պայմաններում հատուկ լիցենզավորված կազմակերպություններն այդ գործառույթն իրականացնելիս բացահայտում են հասարակության համար գերնշանակության խնդիրներ և կոռուպցիոն սխեմաներ: «Իսկ խորհրդարանական լրագրության զարգացման համար, անշուշտ, կարելի է հետևել եվրոպական մի շարք երկրների փորձին և հնարավորություններ ու միջոցներ տրամադրել այդ ուղղության զարգացման համար», - ընդգծել է նա:

Անդրադառնալով խորհրդարանական լրագրության առանցքային գործառնություններին՝ փորձագետներն առանձնացրել են դրանցից առավել կարևորները և շատ դեպքերում դասավորել հետևյալ հաջորդականությամբ՝ տեղեկատվական, ներկայացուցչական, իրավական: Նման հաջորդականություն, մասնավորապես, առաջարկել են ինը փորձագետներից յոթը՝ Արամ Աբրահամյանը, Կնյազ Սարոյանը, Տաթևիկ Գալստյանը, Արմեն Մինասյանը, Վահագն Սարոյանը, Մերի Թադևոսյանը, Հասմիկ Երիցյանը: Ընդ որում, Արամ Աբրահամյանը փաստեց, որ սա ցանկալի սցենար է, սակայն իրականում հաճախ գերիշխում են հենց մնացած գործառնությունները՝ գովազդային, քարոզչական և այլն:

Մի փոքր այլ կարգ մատնանշեց Տիգրան Աբրահամյանը՝ տեղեկատվական, իրավական, ներկայացուցչական: Անդրադառնալով այս հարցին՝ նա նշեց, որ մեղիայի և, համապատասխանաբար, կարևոր նյութերի լուսաբանման տեսանկյունից անհրաժեշտ է կոնկրետ թեմայի վերաբերյալ ճիշտ խոսնակ ընտրել, ճշգրիտ և խորքային հարցեր կազմել, ինչպես նաև նյութում հաշվի առնել ռիսկի գործոնը, հատկապես, եթե թեման վերաբերվում է անվտանգությանը կամ երրորդ երկրի հետ հարաբերություններին:

Դավիթ Ալավերդյանն էլ ամենակարևորը համարում է առաջին հերթին իրավական գործառնությունը, քանի որ հենց դա է թույլ տալիս ապահովել վոթեդոգի սկզբունքը: «Երկրորդ՝ տեղեկատվական գործառնությունը, այսինքն՝ հայտնել, թե ինչ օրենքներ են քննարկվում, ինչ նախաձեռնություններ կան, և երրորդը՝ ներկայացուցչական, որպեսզի իմանան, թե ինչ է կատարվում և այլն: Մյուսը՝ երեք ամենակարևոր գործառնություններն են: Ես կավելացնեի նաև հետևողականության գործառնությունը, երբ ՀՀ-ները հետևում են, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել հասարակ մարդկանց և հասարակության կյանքում այս կամ այն օրենքների ընդունումից հետո, այսինքն՝ ինչ հետևանքներ է ունեցել այդ օրենքը և լուծում է արդյոք այն կենսական խնդիրներ, թե այն ընդունվել է տարբեր էմոցիոնալ պահերի ազդեցության տակ», - պարզաբանել է նա:

Ամփոփելով փորձագիտական հարցման արդյունքները՝ կարելի է փաստել, որ *մասնագիտական հանրությունում խորապես գիտակցում են մեղիա-խորհրդարան կապի ապահովման և ընդլայնման կարևորությունը, լրագրության պրոֆիլային ուղղությունների զարգացումը, որոնք թույլ կտան իրականացնել ՀՀ-ների ա-*

ռանցքային գործառույթները և երաշխավորել պատրամենտարիզմի ավանդույթների կայացումը, ժողովրդավարական հասարակության առաջընթացը: Ընդ որում, այդ գործընթացների շահագրգիռ կողմ են հանդես գալիս ոչ միայն մեղիա և բյուզոսֆերայի ներկայացուցիչները, հասարակությունն ընդհանուր առմամբ, այլ առաջին հերթին պետությունը, մասնավորապես՝ գործադիր և օրենսդիր իշխանությունը, քանի որ հենց այդ օղակների ներդաշնակ միասնության մեջ է հնարավոր գտնել երկրում էվոյուցիոն փոփոխությունների, կայունության ապահովման և սոցիալ-քաղաքական ցնցումների կանխարգելման բանալին:

**ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

***3.1. Պետական կառավարման ձևը և երկրի պաշտպանության
ու անվտանգության հիմնահարցերը***

Պետության կառավարման ձևը և երկրի պաշտպանության ու անվտանգության խնդիրը տարբեր մակարդակի երևույթներ, հետևաբար նաև պետականագիտական հասկացություններ են, որոնց միջև ուղղակի փոխկապակցվածություն չկա: Դրանց շաղկապողը պետական իշխանությունն է: Պետական կառավարման ձևը բնութագրում է պետական իշխանության կազմակերպական կառույցը, իսկ երկրի պաշտպանության և անվտանգության ապահովումը պետական իշխանության գլխավոր գործառնություն է: Անշուշտ գոյություն ունի որոշակի կապ իշխանության կազմակերպական կառույցի և դրա գործառնությամբ միջև, սակայն այդ կապը խիստ դետերմինավորված չէ:

Պետական իշխանության մարմինների կազմակերպական ձևը, տարածքի կառուցվածքային առանձնահատկությունները, իշխանության իրականացման մեթոդները, պետության էական բնութագրերից են, որոնք արահայտվում են կարևոր գործնական քաղաքական նշանակություն ունեցող «պետության ձև» հասկացությամբ: Գործնականում պետության ձևից է կախված պետական կառավարման արդյունավետությունը, իշխանության և հասարակության կառուցվածքները, քանի որ պետության ձևը նաև քաղաքական ուժերի փոխզիջմամբ որոշվող խնդիր է:

Պետության և իրավունքի պատմական զարգացման ընթացքում էականորեն փոխվել են պետության ձևի վերաբերյալ պատկերացումները: Առաջարկվել են զանազան մոտեցումներ և տարբերակներ: Օրինակ՝ հույն մտածող Պլիքիոսը պետականության ծագման և հետագա փոփոխման պատմությունը (վկայակոչելով Պլատոնին, Արիստոտելին և մի քանի այլ նախորդների) պատկերում է որպես

«բնության օրենքով» ընթացող գործընթաց: Պոլիբիոսի կարծիքով պետության ձևերն, ըստ իրենց բնական ծագման և հերթափոխման կարգի, զբաղեցնում են հետևյալ տեղերը լրիվ փուլի շրջանակում՝ թագավորություն, բոնապետություն, արիստոկրատիա, օլիգարխիա, դեմոկրատիա, օխոկրատիա: Քանի որ յուրաքանչյուր առանձին հասարակ ձևին հատուկ է անկայունությունը, Պոլիբիոսը առաջարկում է «կատարյալ ճանաչել այն ձևը, որում միավորվում են բոլորի առանձնահատկությունները», այսինքն՝ թագավորության, արիստոկրատիայի և դեմոկրատիայի: Այդպիսի **խառը կառավարման** գլխավոր առավելությունը Պոլիբիոսը համարում էր կառավարման խեղաթուրված ձևերին անցման կանխումը և պետության պատշաճ կայունության ապահովումը: Այդ տեսանկյունից Պոլիբիոսը, որպես ամենալավ կառույց, առանձնացնում էր հռոմական պետությունը, որում «երեք իշխանությունների լիազորությունները՝ կոնսուլների, սենատի և ժողովրդի», համապատասխանաբար արտահայտում են թագավորական, արիստոկրատական և դեմոկրատական սկզբունքները:

Արդի պետականագիտությունը համարում է, որ պետության ձևը ներառում է իշխանության կազմակերպման երեք փոխկապակցված բաղադրատարրերը՝ 1) պետական կառավարման ձևը, 2) պետական կառուցվածքի ձևը, 3) պետաիրավական ռեժիմը, որոնք անմիջականորեն կապված են իշխանության և միմյանց հետ:

Պետության ձևը միանգամից, ինքնաբերաբար չի կազմավորվում, այլ պայմանավորված է պետության առաջացման և գոյության կոնկրետ-պատմական պայմաններով ու գործոններով: Պետության ձևի վերջնական ձևավորման գործոններն իրենց բույրով լինում են օբյեկտիվ և սուբյեկտիվ: Որպես պետության ձևի կազմավորման վրա ազդող **օբյեկտիվ գործոններ** կարելի է նշել՝ 1) տնտեսության բնույթը (կենտրոնացված, պլանային, ապակենտրոնացված, շուկայական և այլն) և վիճակը. 2) հասարակության ընդհանուր զարգացման մակարդակը. 3) հասարակության քաղաքական և իրավական մշակույթի մակարդակը. 4) պետության պատմական տիպը. 5) հասարակության մեջ սոցիալ-դասակարգային ուժերի հարաբերակցությունը. 6) պատմական, ազգային, մշակութային և այլ ավանդույթները, կրոնը, 7) երկրի ազգային կազմը և տարածքի չափերը, 8) միջազգային իրադրությունը, 9) աշխարհագրական դիրքը և աշխար-

հաքաղաքական գործոնները, 10) ներքաղաքական իրադրությունը և այլն:

Օբյեկտիվ բնույթ ունեցող գործոնների հետ միասին պետության ձևի, հատկապես պետաիրավական որոշակի ռեժիմի ձևավորման վրա էական ազդեցություն են թողնում նաև **սուբյեկտիվ գործոնները**¹¹⁵՝ իշխանության տեր քաղաքական ընտրանու /էլիտայի/ տիպը և դիրքորոշումները, միապետի կամ քաղաքական առաջնորդի անձնական որակները, անձնիշխանության և անհատի պաշտամունքի գաղափարախոսությունը և այլն: Սուբյեկտիվ գործոնների մեջ շատ կարևոր տեղ և դեր է խաղում «ազգի կամ ժողովրդի ոգին և կամքը»¹¹⁵: Ժողովրդի ոգու և կամքի ու պետականության միջև կապի կողմնակիցները ելնում են երկետային թեզիսից, որը կարելի է ձևակերպել այսպես. ինչպիսին հասարակությունը, ժողովուրդը, ազգն են, այնպիսին էլ նրանց ոգին և կամքը, և վերջին հաշվով այդպիսին կլինի նրանց ստեղծած պետությունը և դրա ձևը:

Երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման գործառնությունը պետության արտաքին գործունեության հիմնական ուղղություններից մեկն է և խնդիր ունի պաշտպանելու երկրի անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը՝ դիվանագիտական, տնտեսական, ռազմական և այլ միջոցառումների իրականացմամբ:

Պետական կառավարման ձևը քարացած չէ, այն ենթակա է փոփոխության բազմաթիվ գործոնների ազդեցությամբ և դա, ըստ էության

¹¹⁵ Տեսաբաններն առաջ են քաշել ժողովրդի ոգու և կամքի ու պետականության բնույթի միջև կապի բազմաթիվ վարկածներ, օրինակ՝ Մոնտեսքիոյի աշխարհագրական տեսությունը, իրավունքի պատմական տեսությունը և այլն: Ժողովրդի ոգին և կամքը կարող են ուղղված լինել պետական կարգի ամրապնդմանը՝ շնորհիվ իրենց ակտիվ, նպատակամղված պաշտպանությանը, և ընդհակառակը, դրանք իրենց պասիվ, անտարբեր վերաբերմունքով կամա թե ակամա նպաստում են պետականության թուլացմանը: XIX դարի վերջին, գերմանացի իրավաբան Ռ. Հերինգն իր «Հռոմեական իրավունքի ոգին նրա զարգացման տարբեր աստիճաններում» աշխատության մեջ բարձրացրեց հիմնահարց, թե որն էր հռոմեական ժողովրդի ոգին և կամքը, և ինչ կապ կար դրանց ու պետության միջև: Նա հիմնավորեց, որ բացի կայսրերի, պաշտոնատար անձանց կամքից պետական կարգերը պայմանավորված են նաև սուբյեկտիվ այլ գործոններով, որոնցից էր «հռոմեական ժողովրդի ոգին ու կամքը» (տե՛ս՝ Марченко М.Н., Проблемы теории государства и права. М., 2005, էջ 209):

յան, բնապատմական գործընթաց է: Հետևաբար, պետական իշխանության կազմակերպման կառույցի հիմնահարցը հարաբերական խնդիր է, սակայն երկրի պաշտպանության ու անվտանգության ապահովման խնդիրները, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմությունը (իրավահեղինակությունը)¹¹⁶ բացարձակ:

Իշխանության կազմակերպական կառույցները կարող են լինել ամենատարբեր ձևերի: Գլխավորը պետության ձևը չէ, այլ պետության առջև կանգնած խնդիրների իրականացումը, ներառյալ երկրի պաշտպանության ու անվտանգության ապահովման արդյունավետությունը, դրանով իսկ պետական իշխանության իրավահեղինակության, ինչպես նաև գոյության իմաստի ապահովումը: **Երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման մի կողմից, ու պետական կառավարման ձևի տեսակի, մյուս կողմից, միջև հստակ կապ և փոխադայմանավորվածություն չկա:** Միևնույն կառավարման ձևի պետությունները կարող են ունենալ լրիվ տարբեր աստիճանների պաշտպանունակություն և անվտանգություն: Օրինակ, Աթենք և Սպարտա քաղաք հանրապետությունները Հին Հունաստանում, ունենալով միևնույն՝ հանրապետական կառավարման ձևը, պետության պաշտպանության գործառույթի կազմակերպման և իրականացման տեսակետից էականորեն իրարից տարբերվում էին:

Պետության ձևը պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների շրջանակը ևս քարացած չէ և ամեն անգամ որոշակի պա-

¹¹⁶ Տեսության մեջ կան պետական իշխանությունը բնութագրող երկու հասկացություն՝ լեգիտիմություն և լեգալություն: Երկուսի հիմքում էլ ընկած է նույն արմատը՝ (lex – օրենք, օրինական), սակայն իմաստով դրանք տարբեր են: Պետական իշխանության լեգալությունը դրա ծագման, կազմակերպման, գործունեության իրավաչափության ճանաչումն է: Լեգալությունն իրավաբանական կատեգորիա է, որովհետև իշխանության և նրա լիազորությունների հիմնավորումը արմատավորված է իրավական ակտերում և ընթացակարգերում, իրավահարաբերություններում: Լեգիտիմությունը ոչ թե ձևական, այլ այն փաստական գործընթացներն են, որոնց օգնությամբ արտահայտվում են իշխանության ճշմարտացիությունը, արդարացվածությունը, գործունեության համապատասխանությունն անհատի, հասարակական խմբերի, ժողովրդի հոգեբանական դիրքորոշումներին, ակնկալիքներին: Պետական իշխանության լեգիտիմության հետևանքը նրա իրավահեղինակությունն է բնակչության մեծամասնության աչքում (տես Վադարյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010, էջ 80-81):

տահական պայման կարող է վերածվել կառավարման ձևի փոփոխման էական գործոնի: Այսպիսով պետության կառավարման ձևը պայմանավորող գործոններին ժամանակի ընթացքում կարող են ավելանալ նորերը, իսկ համամիասնական աշխարհի ու միջազգային ասպարեզում պետությունների սերտ ինտեգրման պայմաններում, դրանցից ազդեցիկ դառան հատկապես արտաքին կամ արտատարածքային գործոնները:

Արդի աշխարհում երկրի պաշտպանության և անվտանգության համակարգերին սպառնացող վտանգների հիմնական մասը, մեր տարածաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված, արտաքին գործոններն են: Այդ գործոնները կարող են վտանգել, մեր կարծիքով, բացարձակ արժեքները՝ երկրի պաշտպանությունը և անվտանգությունը, ազգային շահերը՝ նաև կառավարման համակարգի միջոցով, եթե այն չունի ներքին կազմակերպական անընդհատ իմունիտետ: Այդպիսի վտանգավոր գործոններից է, օրինակ՝ այսպես կոչված, «փափուկ կամ ճկուն ուժը»¹¹⁷:

«Փափուկ ուժը» (soft power) դիվանագիտության մեջ կիրառվող նորագույն միջոցներից է, երբ որևէ պետություն կարողանում է ազդել այլ պետության, նրա բնակչության որոշակի զանգվածի վրա և այդ ազդեցությունն օգտագործում է ներքաղաքական գործընթացներում, իշխանության համար պայքարում: Ազդված զանգվածը գալով իշխանության, կենսագործում է այն, ինչ-որ ցանկանում է ազդեցություն գործած պետությունը: Եթե մեծ տարածք և բնակչություն ունե-

¹¹⁷ «Փափուկ ուժի» հայեցակարգը զարգացրել է ամերիկացի հեղինակ Ջոն Նայը: Նրա կարծիքով ինչ-որ պետության ազդեցությունն արտաքին աշխարհի վրա «փափուկ ուժի» միջոցով կարող է լինել ոչ պակաս, եթե ոչ ավելի, քան ռազմական կամ տնտեսական միջոցները: «Փափուկ ուժը», ըստ նրա, ընդունակությունն է համոզել ուրիշների անել այն, ինչ ուզում եք դուք (տե՛ս Nye J. The Paradox of American Power: Why the Worlds Onlu Super Power Cant. GOIT Alone. N 5, 2002): Որպեսզի դա արվի անհրաժեշտ է գործընկերոջ համար առաջարկությունը դարձնել գրավիչ, նրան ընդգրկել համատեղ գործունեության մեջ: Իշխանության այդ տիպը հիմնվում է ոչ նյութական ռեսուրսների օգտագործման վրա, ինչպես մշակույթը, գաղափարախոսությունը, կրթությունը, հաստատությունները: «Փափուկ ուժի» ռեսուրսային բազայի մեջ Ջ. Նայը ներառում է արտաքին քաղաքականությունը, այն դեպքում, եթե այլ պետությունները դա դիտարկում են որպես լեգիտիմ և բարոյապես արդարացված (տե՛ս Nye J. Public Diplomacy and soft power // The Annals of the American Academy of Political and Social Science. 2008):

ցող պետության համար որոշ հեղինակներ այդ գնահատում են որպես դրական գործընթաց, դրանից, սպասում են բարենպաստ արդյունքներ¹¹⁸, ապա փոքր երկրների համար «փափուկ ուժի» քաղաքականությունը կարող է վերածվել նաև բացասական գործոնի:

Պատմությունն իսկապես կրկնվում է: Ցավոք սրտի, ինչպես Վադ և Միջնադարյան Հայոց աշխարհի քաղաքական-տնտեսական ընտրանին, այնպես էլ այսօրվա Հայաստանի և՛ ընտրանին, և՛ բնակչությունը բաժանված են արտաքին քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող խմբերի, ինչպես նաև «հայասերների» ու ապակողմնորոշված ամորֆ զանգվածի: Այդպիսի իրավիճակում բնակչության և ընտրագանգվածի որոշակի մասը կամա թե ակամա վերածվում է «փափուկ ուժի» գործոնի, որին կողմնորոշող լծակները գտնվում են արտաքին աշխարհում:

Կառավարման մենիշխանական, ավտորիտար նախագահական կամ կիսանախագահական համակարգի պայմաններում «փափուկ ուժի» գործոնը կարող է իշխանության բերել դրսի ուժերի ազդեցության տակ գտնվող անձի: Արդի իրողությունների պայմաններում դա հնարավոր է, քանի որ իշխանությունը չունի կայուն իրավահեղինակություն բնակչության աչքում, իսկ ընտրական գործընթացներին բնորոշ են ոչ բանական, ամբոխավարական և մի շարք այլ բացասական միտումներ:

Այսպիսին է հայ ժողովրդին «բաժին հասած դաժան իրողությունը» և այս պայմաններում երկրի կառավարման համակարգի փոփոխությունը՝ կիսանախագահական մենիշխանությունից խորհրդարանական համակարգին անցնելը համարվեց երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման, ազգային շահերի իրացման ապահովման միջոց:

Այսպիսով, **պետության ձևը, ինչպես և կառավարման ձևը, քարացած չեն, այլ փոփոխվում ու զարգանում են՝ բազմաթիվ տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական և այլ գործոնների ազդեցությամբ:** Պետք է նկատի ունենալ, որ պետականագիտության մեջ մշակված է նաև «պետական կառավարման ռեժիմ»

¹¹⁸ Стів Петр Касаткин Болонская система образования в контексте политического развития ЕС. / Право и управление-XXI век, N 4(29), 2013, էջ 70-76:

հասկացությունը: Այդ հասկացությունը բնութագրում է պետական կառավարման ձևի գործողության ընթացքում այս կամ այն պետական մարմնի իրական տեղը պետության տվյալ կառավարման ձևի կառուցակարգում: Օրինակ՝ պետությունների կառավարման ձևը կարող է լինել միևնույնը՝ պառլամենտական միապետություն, սակայն պետական կառավարման ռեժիմը տարբեր է՝ կախված նրանից, թե որ մարմինն է գերակայում պետության կառուցակարգում՝ խորհրդարանը, թե՛ կառավարությունը:

Այս մոտեցման համաձայն, օրինակ՝ խորհրդարանական հանրապետությունում կարող են լինել ա) խորհրդարանական կառավարման ռեժիմ, բ) մոնիստական խորհրդարանականության ռեժիմ, գ) դուալիստական խորհրդարանականության ռեժիմ, դ) կաբինետային կառավարման ռեժիմ¹¹⁹: Դա նշանակում է, որ, օրինակ՝ կառավարման ձևի պայմաններում կարող է տեղի ունենալ կամ գործադիր իշխանության կամ օրենսդիր իշխանության ուժեղացում: Ռեժիմային փոփոխության պատճառները կարող են լինել բազմաթիվ, թեկուզ հենց իշխանության ամեն մի ճյուղի գլխի անձնական-կամային որակները, խարիզմը և այլն: Արդյունքում, օրինակ՝ վարչապետի «ուժեղության» պատճառով երկրում կարող է հաստատվել կաբինետային իշխանության ռեժիմ:

Այսպիսով, երկրի պաշտպանության և անվտանգության գլխավոր երաշխիքը կառավարման որևէ ձևը չէ: Կառավարման ձևը կարող է կատարել ընդամենը միջոցի, նպաստող գործոնի դեր: Բայց այն որոշակի պայմաններում կարող է վերածվել փոսանգի, հետևաբար դրան չի կարելի մոտենալ կամ վերաբերվել դոգմատիկորեն, համարել անձեռնմխելի, ուստի և անփոփոխելի: Գլխավորը, անկախ կառավարման ձևից, պետական կառավարման համակարգի, կառուցակարգի (ապարատի) այնպիսի կազմակերպումն է, որ այն ունակ լինի պաշտպանության և անվտանգության ապա-

¹¹⁹ Նախագահական, նաև կիսանախագահական հանրապետությունում կարող են լինել՝ ա) նախագահական ձևի դուալիստական պետական կառավարման ռեժիմը, բ) նախագահական մենիշխանական պետական կառավարման ռեժիմը: Դա նշանակում է, որ, օրինակ՝ նախագահական կառավարման ձևի պայմաններում կարող է տեղի ունենալ կամ գործադիր իշխանության, կամ օրենսդիր իշխանության ուժեղացում:

հովման: Պետության կառուցակարգի այդպիսի հատկությունը հնարավոր է ձևավորել, եթե պետական կառուցակարգի (ապարատի) կազմակերպման և գործունեության հիմքում դրվի պաշտպանունակության սկզբունքը: Այդ հրամայական անհրաժեշտությունը հաստատում է ինչպես Առաջին հանրապետությունում երկրի պաշտպանության իրավական ապահովման փորձը¹²⁰, այնպես էլ Հայաստանի երրորդ հանրապետության բոլոր «պատերազմների» փորձը:

3.2. Պաշտպանունակությունը որպես պետական ապարատի կազմակերպագործառնության սկզբունք

Արդի պետականագիտության, սահմանադրական իրավունքի տեսության մեջ երկրի պաշտպանության խնդրի լուծման տեսակա-նը մեծամասամբ կառուցված է գործառնության մոտեցման հիման վրա, այսինքն՝ պետությունն իրականացնում է մի շարք արտաքին ու ներքին գործառնություններ, ներառյալ՝ առաջնային նշանակություն ունեցող և երկրի պաշտպանությանն ուղղված գործունեությունը: Սա-կայն պատմական փորձը հաստատում է, որ ավանդական գործառնության տեսամեթոդական հիմքերով կառուցված պաշտպանական համակարգերը միշտ չէ որ արդարացնում են իրենց կամ հաջողությամբ են կատարում իրենց առջև դրված խնդիրը: Դրա վառ օրինակն են Հայաստանի առաջին հանրապետության պաշտպանական քաղաքականության դասերը¹²¹: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Գեորմանիայի ռազմական հարվածներին չկարողացան դիմակայել եվրոպական երկրները, նույնիսկ ռազմականացված կառավարման գծեր ունեցող խորհրդային պետությունը: Պարտության պատճառներից մեկն էլ տեսության թերություններն էին: Այս փորձը հաստատում է, որ երկրի պաշտպանության գործառնության տեսական մո-

¹²⁰ Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում, Հայկական բանակ, Երևան, թիվ 2-3 (56-57), 2008, 118-139 էջեր:

¹²¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ.,- ԵՊՀ, 2012, էջ 231-241:

տեցումը չի ստեղծում գործուն սահմանադրական կազմակերպական ձևեր և ինստիտուտներ: Այն կառավարող սուբյեկտի համար առաջացնում է ընդամենը գործելու ընդհանուր պարտավորություն, իսկ ընդհանուր պարտավորության պատշաճ, որակյալ, արդյունավետ կատարումը շատ քիչ երաշխիքներ ունի: Մյուս կողմից, ինքը՝ սուբյեկտն իր կազմակերպական կողմերի և իշխանությանը լիակատար տիրապետելու տեսակյունից կարող է լինել գործելուն անընդունակ կամ իրավականորեն կաշկանդված, որովհետև օբյեկտիվ պայմանները կամ օբյեկտիվ իրավունքը նրան հնարավորություն չեն տալիս ծավալվելու, գործելու, իր հնարավոր ունակությունները ցուցադրելու՝ չնայած իր ցանկություններին և ներքին մղումներին:

Քաղաքական իրականության մեջ հնարավոր է նույնիսկ գործելու ցանկության և մղումների բացակայությունը կառավարող սուբյեկտի մոտ, լինի դա արքա (միապետություն), պետության ընտրովի գլուխ (հանրապետություն): Անգործության արմատները կարող են լինել նաև սուբյեկտիվ-հոգեբանական: Կառավարող սուբյեկտի նման անընդունակության իդեալական օրինակը կարող ենք վերցնել հենց մեր պատմությունից, ի դեմս Արշակունյանց թագավորության, որում թագավորը միգրացե ուներ ցանկություն գործելու, սակայն օբյեկտիվորեն ծավալված հանգամանքների ու կառավարման նախարարական համակարգի պայմաններում չէր կարող ծավալվել: Մեկ այլ օրինակ է Հայաստանի առաջին հանրապետությունը, որում կար քաղաքական ընտրանու երկիրը պաշտպանելու նվիրվածության հասնելու ցանկությունը, մղումը, սակայն առաջնահերթությունների սխալ կառուցման, ինչպես նաև պաշտպանական խնդիրների լուծման սովորական գործառնության մոտեցման կիրառման հետևանքով, կառավարման սուբյեկտը՝ հանրային իշխանական ապարատը ցուցադրեց իր պաշտպանական ունակությունների բացակայությունը:

Ասվածը կարելի է ընդունել որպես ևս մեկ լրացուցիչ կռվան ի վնաս պաշտպանության կազմակերպման գործառնության մոտեցման: Այստեղից հետևում է, որ գիտությունը խորքային հետազոտության միջոցով պետք է կատարի բացահայտում, առաջարկի նոր, այլընտրանքային լուծում հանդիսացող հայեցակարգ, երկրի կառուցման կազմակերպական-գործառնության նոր սկզբունք, որոշի դրա նորմատիվ իրավական բովանդակությունը, պահանջները, կանոնները:

Որպես երկրի պաշտպանության գործի կազմակերպման գործառնություն մոտեցման այլընտրանք, մեր կողմից առաջարկվում է այդ առաջնահերթ խնդիր-նպատակի իրականացման կառուցակարգ, որի հիմքում ընկած է պաշտպանունակության սկզբունքը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մարդկությունն իր գոյության ընթացքում առաջ է քաշել բազմաթիվ գաղափարներ, սակայն դրանցից կիրառվել են միայն արդյունավետ, հասարակության, պետության, մարդու շահերի հավասարակշռությանը համահունչ գաղափարները:

Որն է «պաշտպանունակություն» եզրույթի իմաստը և ծագումնաբանությունը: Եթե պետության և իրավունքի տեսության կամ սահմանադրական իրավունքի գիտության համար այդ եզրույթն, ինչ-որ տեղ, արտառոց է, ապա ռազմագիտության և անվտանգաբանության մեջ այն լայնորեն օգտագործվում է: Ռազմագիտության մեջ օգտագործվող պետության «պաշտպանունակություն» հասկացությունը ռազմագիտական հանրագիտարանները բնորոշում են որպես «ազդեցիկից պաշտպանվելու պետության պատրաստավածության աստիճան, որը բնութագրվում է ռազմական, տնտեսական, գիտական, սոցիալական և բարոյաքաղաքական ունակություններով»:

Մեկ այլ բնորոշման համաձայն «պաշտպանունակությունը պետության ընդունակությունն է հակահարված տալ արտաքին ռազմական ազդեցիկի իր տնօրինության տակ եղած ուժերի, միջոցների և ռեսուրսների ամբողջ համակցությամբ»¹²²: Պաշտպանությունը բուն պաշտպանական գործունեությունն է՝ ուղղված ազդեցիկներին հակահարված տալուն պետության նախապատրաստմանը և անհրաժեշտության դեպքում զինված պաշտպանությանը: Այս իմաստով «պաշտպանությունը» համընկնում է պետականագիտության մեջ օգտագործվող «երկրի արտաքին պաշտպանության գործառնություն» հասկացության հետ: Ռազմական անվտանգության առարկան՝ դրա նպատակները, խնդիրները և գործառնություններն են՝ ուղղված ցանկացած ռազմական վտանգի նախականիմանը, կանխմանը և չեզոքացմանը:

Ռազմագիտական տեսանկյունից պաշտպանունակությունը նշանակում է, թե ինչքանով է պետությունը ռազմական, տնտեսա-

¹²² Ст'и Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н. и др. Военное право. Серия “Право в вооруженных силах - консультант”. М., За права военнослужащих, 2004.

կան, գիտական, սոցիալական և բարոյա-քաղաքական տեսանկյուններից նախապատրաստված ագրեսիայից պաշտպանվելուն կամ զինված գործողություններին (պատերազմին): Այս իմաստով, զլխավորը ոչ թե պաշտպանունակության սուբյեկտն է, այլ նրա կուտակած ունակությունները՝ տնտեսական, ռազմական (բանակ ունի, թե ոչ, ե-թե այո, ապա ինչպիսին է նրա մարտունակությունը), սոցիալական, բարոյաքաղաքական ոլորտներում: Այլ կերպ ասած այս իմաստով պաշտպանունակությունը մատնանշում է պետության կողմից պաշտպանական գործառույթի իրականացման արդյունավետությունը, դրա բովանդակության մեջ մտնող բաղադրիչների որակական կողմը, որոնց հանրագումարը կոչվում է պաշտպանունակություն:

Մինչդեռ, մեր կողմից առաջարկվող պաշտպանունակության հասկացության մեջ առաջին հերթին կարևորվում է հենց պաշտպանունակության սուբյեկտը, ընդհանուր առմամբ պետությունը, դրա և դրա բաղադրիչների (պետական մարմիններ, ծառայողներ և այլն) կազմակերպակառուցվածքային որակական կողմերը, որոնք ի վերջո պետությանը վերածում են պաշտպանական գործունեությանն ընդունակ, նպատակամղված կազմակերպական-կառույցի, արդյունավետ գործելու ունակ սուբյեկտի: Թե ի՞նչ ուղղություններով, ի՞նչ բովանդակությամբ գործունեություն է իրականացնելու այդ «ունակ» սուբյեկտը, մնում է անվտանգաբանության և ռազմական գիտությունների հետազոտման (հետաքրքրության) տիրույթում, դրանց ուսումնասիրության առարկայի մեջ: Իրավագիտությանը, մասնավորապես սահմանադրագիտությանն այս ոլորտում հետաքրքրում է հիմնադրվող կառույցի կազմակերպական գծերը, դրա բաղադրատարրերի հարմարեցվածությունն իր առջև դրված նպատակ-խնդրի կենսագործմանն, ինչի առկայության դեպքում առաջ է գալիս նրա գործելու, պաշտպանվելու հատկությունը, որն անվանում ենք պաշտպանունակություն:

«Պաշտպանունակությունը պետական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է, ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման հատկություն, այլ ոչ թե մերկ պաշտպանվածություն: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը՝ արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը, դրվի սովորական իրադրությունների համար ստեղծված պետա-

կան մարմինների ու իրավական ինստիտուտների էության մեջ»¹²³: Այս կապակցությամբ տեղին են պետական կառավարման տեսաբաններից մեկի՝ Գ.Վ. Ատամանչուկի հետևյալ մտքերը, որոնք նա արտահայտել է մարդկային արարքների շուրջ, սակայն լիովին վերաբերելի են նաև պետությանը. «Հանրահայտ է, որ ամեն մի արարք սկսվում է ինչ-որ բան անելու ցանկությունից: Միաժամանակ հանրահայտ է, որ քիչ է ցանկանալ, պետք է իմանալ, քիչ է իմանալ, պետք է կարողանալ, քիչ է կարողանալ, պետք է լինել ունակ (ունենալ ուժ, ռեսուրսներ), քիչ է ունակ լինել, անհրաժեշտ է իրապես անել, կենսագործել ցանկությունը, հետևաբար՝ խնդիրը հանգում է կառավարմանը, նաև պետական կառավարմանը»¹²⁴:

Պաշտպանունակության սկզբունքի վերը բերված ընդհանուր գաղափարն անհրաժեշտ է վերածել նորմատիվ բովանդակություն ունեցող պահանջների, որոնց իրավական ամրագրումը պետք է կյանք տա սկզբունքին: Ցանկացած սկզբունք, լինի դա պետական, թե իրավական համակարգի, իր կարգավորիչ դերը կատարում է, ոչ թե որպես գաղափար, քարոզչական նշանակություն ունեցող դրույթ, այլ որպես սկզբունքի ընդհանուր բովանդակությունից, բանաձևից բխեցվող նորմատիվ-պարտադիր պահանջների, կանոնների համակցություն: Եթե իրավական պետության սկզբունքից բխում են մի շարք հիմնարար պահանջներ, որոնք ունեն սահմանադրական ու օրենսդրական ամրագրում ու կենսագործվում են պետության իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան գործունեության ընթացքում, ապա տեսության խնդիրն է՝ պաշտպանունակության սկզբունքի բովանդակությունից ելնելով ձևակերպել հասկանալի, կատարելի, արդյունավետ պահանջներ և փորձել դրանց տալ իրավական ամրագրում:

Անշուշտ, պետական կառավարման տեսությունն ունի արդեն մշակված հայեցակարգ պետական կառավարման բազմաթիվ կողմե-

¹²³ Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 206:

¹²⁴ Տե՛ս Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 7:

րի վերաբերյալ:¹²⁵ Սակայն այս հիմնահարցերը մշակվել են ընդհանրապես պետական կառավարման համար՝ հիմնականում դրա գործադիր բաղադրիչի սահմանադրական-համակարգային էական հատկանիշներից ու գործառնություններից ելնելով: Հետևաբար, պետական կառավարման տեսության կողմից առաջ քաշված բոլոր պահանջները և կանոններն ունեն ընդհանուր նշանակություն և բխում են պետական ապարատի կազմակերպման ու գործունեության հիմնարար և ընդհանուր սկզբունքներից: Մանսափորապես՝ ըստ Գ.Վ. Ատամանչուկի պետական մարմնի ներքին կառուցվածքը պետք է կերտվի որոշակի պահանջների ու կանոնների հիման վրա և հատկապես՝

ա) **շարժունակությունը.** պետական մարմնի ներքին ստորաբաժանումների թվային կազմը և քանակը պետք է սահմանվեն կառավարելիության օպտիմալ չափանիշներով,

բ) **օպերատիվությունը.** պետական մարմնի ներքին և արտաքին կապերի բարդության պայաններում կառավարչական տեղեկույթի մուտքի և ելքի արագությունը և պահպանումը, ժամանակին որոշում ընդունելը և դրա կատարման կազմակերպումը,

գ) **խնայողականությունը.** կառավարման ապարատը պահելու արժեքի (գնի) և դրա աշխատակիցների կողմից կառավարչական գործունեության իրականացման ծախսերը պետք է լինեն հաշվարկված¹²⁶:

Որպես պետական համակարգի պաշտպանունակության հիմքով կառուցման չափանիշներ կարելի է առաջադրել նաև հետևյալ պահանջները.

¹²⁵ Այդ հիմնահարցերից են՝ պետական կառավարման կազմակերպական կառուցվածքը, դրա էական գծերը, պետական մարմինը՝ որպես պետական կառավարման կազմակերպական կառույցի համակարգակազմող տարր, պետականա-կերտության և պետական կառավարման կառուցման գործոնները, պետական մարմինների հնարավոր կառույցների հիմքերը, պետական մարմնի՝ որպես պետական կառավարման հիմնական օղակի ներքին և արտաքին կապերի համակարգվածությունը, պետական (հանրային) մարմինների կազմակերպման պահանջները և կանոնները (տե՛ս Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 129-146):

¹²⁶ Ст'я Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекции.-М. Юрид. лит., 1997, էջ 144:

ա) պետական իշխանության և տեղական կառավարման համակարգն արդյունավետ և հստակ է այնքան, որ ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական չի առաջացնում որևէ կազմակերպական-կառուցվածքային վակուում:

բ) հանրային իշխանական բոլոր կառույցները հստակ տիրապետում են իրենց իրավասությանը և ընդունակ են իրացնելու այն ցանկացած արտակարգ կամ պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց հանրային-իշխանական առաքելությունից:

գ) հանրային իշխանական համակարգն իր ծառայական և աշխատանքային անձնակազմով տոգորված է կարգապահության, հայրենիքի պաշտպանության ոգով, արտակարգ պայմաններում ընդունակ է կարգապահության ու ինքնակազմակերպման, պատրաստակամ է անձնագոհության: Այս պահանջը վերաբերում է նաև ողջ հանրությանը:

Օրենքով հիմնադրված պետական մարմինը, մարմինների համակարգը պետք է կառուցված լինի այնպես, որ կարողանա հասնել իր առջև դրված նպատակին, կատարել իր գործառնությունները, իրացնել իր իրավասությունը, լիազորությունները: Կառավարման համակարգը պետք է մտածված լինի այնպես, որ կարողանա ինքնաբավ կերպով երաշխավորել հանձնարարված ոլորտի կառավարման պատշաճ մակարդակը: Դրա համար անհրաժեշտ է ճշգրտորեն և հստակ կառուցել կառավարման համակարգի տարրերի միջև իրավասության ու լիազորությունների տեղաբաշխումը, դրանց ստորակարգությունը, համագործակցությունը և լրացումը:

Պաշտպանունակության սկզբունքի վերը բերված պահանջներից երևում է, որ սկզբունքի ճանաչման և կենսագործման համար պահանջվում է նոր տեսական մտածողություն՝ մի կողմ թողնելով քարացած, ավանդական, դասագրքային մոտեցումները և մեկնաբանությունները:

Պաշտպանունակության սկզբունքից բխող **առաջին հրամայական խնդիրը** պահանջում է. պետականակերտության ընթացքում կառավարման համակարգը՝ սկսած ընդհանուր ձևից մինչև ամեն մի պետական մարմին ու դրա իրավասություն, պետք է ենթարկվի յուրահատուկ միասնական, ինչպես նաև տարբերակված կարգավորման: Այդ կարգավորման արդյունքը պետք է լինի այնպիսի իրական

հետևանքը, ինչպիսին է պետական կառավարման համակարգի ընդունակությունը գործելու անընդհատ, հաջողության ու նպատակին հասնելու անդադար մղումով: Միասնական կարգավորումը ենթադրում է պետական կառավարման համակարգի կառուցում սահմանադրական հիմունքներին ու պետական կառուցակարգի կազմակերպման ու գործողության հիմնարար, ընդհանուր, ճյուղային և կոնկրետ սկզբունքներին, դրանցից բխող պահանջներին ու կանոններին համապատասխան: Սակայն նույնիսկ այս դեպքում ստեղծվող հանրային կառավարման համակարգի և նրա առանձին ճյուղերի (հիմնականում գործադիր) և մարմինների տեսականը կառուցելիս պետք է կիրառել մշտադիտարկում՝ ելնելով պաշտպանունակության սկզբունքի պահանջներից: Օրինակ, ընդունակ է արդյո՞ք իշխանական համակարգի ինչ-որ մի տարր առաջացնել վակուում ինչ-ինչ հանգամանքների դեպքում: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, հենց թեկուզ մեր հանրապետությունից: Պատկերացնենք, թե ինչպիսին կլինեն << կառավարման համակարգի կացությունը 1998 թ. << նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականի հետ կապված, եթե Սահմանադրությունը չսահմաներ իշխանության փոխանցման մի քանի հերթ: Իշխանական վակուումը կարող էր առաջացնել քաղաքական խորը ճգնաժամ: Եթե սովորական պայմաններում և սովորական հանգամանքը՝ նախագահի հրաժարականը կարող է առաջացնել բարդ ու վակուումային իրավիճակ անկանխատեսելի հետևանքներով, ապա ո՞րն էր լինելու դրա հետևանքն արտակարգ կամ ռազմական իրադրություններում: Մեր օրերի թավշյա հեղաշրջման գործընթացը ևս մեկ անգամ հաստատում է իշխանական վակուումի, հակապես ռազմաքաղաքական ոլորտում, վտանգավորությունը:

Երկրորդ խնդիրը, որ բխում է պաշտպանունակության սկզբունքից, դա, այսպես կոչված, տարբերակված կարգավորումն է: Պետական (հանրային) մարմինը (իրավական ինստիտուտը) պետք է ունենա կարգավիճակային (իրավական ինստիտուտի դեպքում կարգավորման բովանդակության) երկակիություն: Առաձին՝ պետական մարմնի իրավասությունը կամ իրավական ինստիտուտի բովանդակությունը խաղաղ, սովորական պայմաններում, երկրորդ՝ պետական մարմնի իրավասությունը, ինչպես նաև ինստիտուտի նորմատիվ կարգավորման բովանդակությունն արտակարգ, պատերազմական

իրավիճակում: Ընդ որում, նման մոտեցման տարրեր առկա են ՀՀ Սահմանադրության դրույթներում: Օրինակ՝ պատերազմի պայմաններում ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման արգելքը: Պետական մարմինների դեպքում, այս խնդրի լուծումն այն է, որ Սահմանադրությունը կամ օրենքները պարունակում են դրույթներ՝ կոնկրետ մարմնի կամ մարմինների համակարգի կազմակերպման յուրահատուկ պահանջներ և իրավասություն, որոնք վերաբերում են արտակարգ և պատերազմական իրավիճակին: Նման կարգավորումը կոչված է ապահովելու կենտրոնացումը և կոնցենտրացումը հանրային կառավարման համակարգում: Ընդ որում այդ յուրահատուկ կարգավորումները կարող են շեղվել, վերապահումներ անել ընդհանուր այլ սկզբունքներից և դրանում չկա որևէ արգելք ոչ տեսական, ոչ էլ միջազգային իրավական:

Պաշտպանունակության սկզբունքը պահանջում է այնպես կառուցել պետական ապարատը, որ այն ունակ լինի արտակարգ և պատերազմական պայմաններում իրականացնել իր առջև դրված խնդիրները, արժանի հակահարված տալ հակառակորդին: **Այդ ունակությունը մեքենայական հատկություն չէ, այլ պետք է դրսևորվի հատուկ պետաիրավական ինստիտուտների հիմնադրմամբ և կայացմամբ, որոնք էլ արդյունքում պետք է ունակ դարձնեն Հանրապետությանը ռազմական վիճակում արագ, օպերատիվ և արդյունավետ կատարելու կառավարչական բոլոր խնդիրները:** Այդպիսի համակարգի ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ ընդունակությամբ պահպանել իր հիմնական բնութագրերը և կատարել իր առջև դրված խնդիրները, չնայած տարբեր տեսակի քայքայիչ ներգործությունների:

Պաշտպանունակությունը որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք համարելու առաջարկը չի նշանակում, որ տեղի է ունեցել «պաշտպանական գործառույթ» կատեգորիայի սովորական վերանվանում: Դրանք էականորեն տարբեր են: Պետության գործառույթները՝ հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների կենսագործման հիմնական ուղղություններն, իսկ **պաշտպանական գործառույթ կատարում է ցանկացած պետություն, որը սակայն կարող է չլինել պաշտպանունակ**, որովհետև գործառույթը ընդհամենը գործունեության ուղ-

դություն է, որով գործողը կարող է լինել ոչ ունակ: Մինչդեռ պաշտպանունակությունը՝ որպես սկզբունք այլ սկզբունքների հետ միասին ղեկավար, երկեստային դրույթ է և պայմանավորում է պետական ապարատի կազմակերպումը և գործունեությունը, առաքելությունը և մնացած բոլոր հարցերը: Ընդ որում, այն համահունչ է պետական ապարատի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների հետ, որովհետև խոսքը գնում է ոչ թե արտասովոր ինչ-որ երևույթի, այլ ղեկավար գաղափարն իրավական միջոցներով օրենսդրության մեջ կենսագործելու մասին¹²⁷:

Պաշտպանունակության սկզբունքի մասնավոր դրսևորումներ որոշակի պետաիրավական ինստիտուտներում առկա են, օրինակ՝ պատերազմ հայտարարելու և զինված ուժերի օգտագործման կարգում, Նախագահի և Ազգային Ժողովի ընտրությունների, կառավարությանն անվստահություն հայտնելու և այլն: Սակայն, մանրագին հետազոտությունը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, պաշտպանունակության սկզբունքի տեսանկյունից անհրաժեշտ է անցկացնել ողջ օրենսդրության ուսումնասիրություն և արդյունքում՝ պատշաճ փոփոխություններ:

3.3. Պաշտպանության ոլորտի սահմանադրական կարգավորման առանձնահատկությունները սահմանադրական կարգի հիմունքների համակարգում

Իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության սկզբունքները կազմելով միասնական համակարգ՝ ներքուստ գտնվում են բարդ համակարգային փոխհամաձայնեցված և փոխ-

¹²⁷ Դա չի հակասում միջազգային իրավունքի նորմերին: Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիան (հոդ. 15) սահմանում է, որ «պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որն սպառնում է ազգի կյանքին, ցանկացած բարձր պայմանավորվող կողմ կարող է կիրառել միջոցներ, որոնք նահանջում են սույն կոնվենցիայի պարտավորություններից միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության սրությունը, պայմանով, որ այդպիսի միջոցները չեն համարվում անհամեմատելի՝ կողմի մյուս միջազգային պարտավորությունների հետ: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է լրիվ ծավալով տեղեկացնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին նրա կողմից մտցված միջոցների և դրանց ընդունման պատճառների մասին»:

պայմանավորված կապերի մեջ, ունեն կարգավորման զանազան մակարդակներ, ինչպես նաև իրավաբանական ուժ: Այս հիմքով դրանք ենթարկվում են դասակարգման մի քանի չափանիշներով: Օրինակ՝ ըստ մակարդակի պետության կազմակերպման ու գործունեության սկզբունքները լինում են՝ հիմնարար սկզբունքներ, ընդհանուր սկզբունքներ, պետական իշխանության ամեն մի ճյուղին բնորոշ սկզբունքներ, կոնկրետ պետական մարմնին բնորոշ սկզբունքներ¹²⁸:

Այս մոտեցման մեջ պաշտպանունակության սկզբունքի տեղը հանրային իշխանության կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքների շարքում է: Պաշտպանունակությունը որպես սկզբունք չի կարող վերաբերվել իշխանության միայն մեկ ճյուղին, միայն մեկ, կոնկրետ պետական մարմնին: Պաշտպանունակությունը պետք է դառնա ամբողջ պետության հատկություն, վերաբերվի նրա համակարգի բոլոր տարրերին, հետևաբար այն պետք է լինի առնվազն պետական ապարատի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունք:

Պաշտպանունակության սկզբունքի տեղը և իրավական կարգավորման հաջորդական շղթայում դրա դերը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ և՛ հանրային իշխանության, և՛ իրավական համակարգի կազմակերպման ու գործունեության սկզբունքներն ունեն ամրագրման տարբեր աղբյուրներ (ձևեր): Այս դեպքում առաջ է գալիս սկզբունքների դասակարգման նոր չափանիշ, այն է սկզբունքն ամրագրող իրավական ձևի՝ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժը, նրա տեղը նորմատիվ ակտերի ստորակարգության մեջ: Այս չափանիշով դասակարգման պարագայում հնարավոր են Սահմանադրությամբ ամրագրված (սահմանադրական) և այլ նորմատիվ ակտերով, ներառյալ օրենքներով ամրագրված (ենթասահմանադրական) սկզբունքներ: Ակնհայտ է, որ մեզ համար պաշտպանական ոլորտի կարևորությունը նկատի ունենալով պաշտպանունակությանը պետք է վերագրել սահմանադրական իրավական սկզբունքի կարգավիճակ, իրավաբանական ուժ: Դրանով պաշտպանունակության սկզբունքից բխող պահանջներին կհաղորդենք բարձրագույնություն, գերակայություն, այլ՝ օրենսդարկան և ենթաօրենսդրական

¹²⁸ Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 192:

սկզբունքների նկատմամբ անպայման առաջնայնություն: Այդպիսի իրավական ուժը դրա կենսագործման-կիրառման բարձրագույն իրավական երաշխիքն է:

Այսպիսով, առաջարկվող պաշտպանունակության սկզբունքի ամրագրումն անհրաժեշտ է հենց այն պատճառով, որ, ի վերջո, դրա իրավական կարգավորման երկարատև շղթայում կենսագործմամբ պետությունը ձեռք բերի նոր որակ՝ պաշտպանունակություն, և դրանով իսկ այն լինի ոչ միայն իրավական, սոցիալական, ժողովրդավարական, այլ նաև պաշտպանունակ: Սահմանադրական ամրագրումը երաշխիք է, որ սկզբունքը կկարողանա հարթել իր ճանապարհին իրավաքաղաքական հարաբերությունների ողջ հորձանուտում, անկախ քաղաքական ուժերի ցանկությունից և այլ սուբյեկտիվ գործոններից, որոնք բավականին ազդեցիկ են կառավարման գործընթացում:

Ցանկացած իրավական սկզբունքի, դրույթի կենսագործումն իրավական կարգավորման կառուցակարգում՝ սկսած իրավաստեղծագործությունից մինչև լայն իմաստով իրավակիրառումը, ունի ոչ միայն իրավական ակտի ուժի արդյունքով սահմանված երաշխիքների (իրավական երաշխիքների), այլ նաև ընդհանուր հասարակական ու անհատական-մարդկային կամ գիտակցական երաշխիքների կարիք: Մյուս կողմից պաշտպանունակության սկզբունքից բխող պահանջները վերաբերում են ոչ միայն հանրային իշխանության համակարգին, այլև հավասարապես նաև հասարակությանը և քաղաքացիներին: Ոչ միայն հայոց պետությունն, այլև հայաստանյան ժողովուրդը և քաղաքացիները պետք է լինեն պաշտպանունակ: Այս պահանջն այնքան ակնհայտ է, որ դրա հիմնավորման կարիքը չենք տեսնում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական սկզբունքները կարող են լինել մի քանի տեսակի. առաջին տեղում կանգնած են «սահմանադրական կարգի հիմունքները», այնուհետև՝ առանձին սահմանադրական իրավական ինստիտուտներին վերաբերող սկզբունքները: Որպեսզի պաշտպանունակության սկզբունքից բխող իրավական պահանջների իրավական գործողությունը կարողանանք տարածել և՛ հանրային իշխանության կառույցի, և՛ հասարակության (ժողովրդի) և՛ քաղաքացիների վրա, սկզբունքը պետք է ունենա «սահմանադրական կարգի հիմունքի» իրավական ուժ: Այսպիսի հանգուցալուծմանը չկա ո՛չ իրավատեխնիկական, ո՛չ իրավաբանական, ո՛չ էլ միջազգային իրավական խոչընդոտ: Հարցի նման լուծումը ՀՀ

ինքնիշխանության դրսևորումն է, իսկ անհրաժեշտ հիմքերը ՀՀ աշխարհաքաղաքական և այլ առանձնահատկությունները:

Ընդդիմախոսները կարող են պնդել, որ պաշտպանունակության և պետական կառուցակարգի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների միջև առկա են բովանդակային հակասություններ: Փորձենք համադրել այդ սկզբունքները, նման դատողությունները կանխելու համար:

Պաշտպանունակության սկզբունքի վերը բերված նորմատիվ բովանդակությունն արդյո՞ք հակասում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքին: Վերջինս պահանջում է իշխանությունների կառուցվածքային, գործառնության, անձնական տարանջատում, լավ մտածված արդյունավետ հակակշիռների ու զսպիչների համակարգով: Պաշտպանունակության սկզբունքն էլ ավելի հստակ է դարձնում իշխանությունների իրավասության բաժանման հարցը երկրի պաշտպանության ոլորտում, ինչպես նաև պահանջում է, որ այդ ոլորտի կառավարումը լինի խիստ կենտրոնացված գործադիր իշխանության համակարգում (ցանկացած մոդելի դեպքում)՝ ուժեղ խորհրդարանական օրենսդրմամբ ու վերահսկողությամբ ապահովված, լրացված: Պետական յուրաքանչյուր մարմին պետք է զգա իրեն որպես հայրենիքի պաշտպանության գործի մասնակից և պատասխանատու՝ հստակ լիազորություններով: Այս պահանջների և իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման սկզբունքից բխող պահանջների միջև չենք տեսնում որևէ տեսական և գործնական հակասություն:

Պետական ապարատի կազմակերպման ու գործունեության հաջորդ հիմնարար սկզբունքը ժողովրդավարությունը կամ ժողովրդաիշխանությունն է: Պաշտպանունակությունը չի մերժում ժողովրդավարությունը, չի նշանակում ռազմականացված պետություն ու հասարակություն: Այն ընդամենը պնդում և պահանջում է, որ ժողովրդավարական պետության կառույցները, հաստատությունները, իրավական ինստիտուտները համապատասխանեն պաշտպանունակության սկզբունքի նորմատիվ պահանջներին, որ ժողովրդավարական պետությունը լինի նաև պաշտպանունակ, որ հայրենիքի պաշտպանության գործը ողջ ժողովրդի գործն է ու նաև պարտականությունը: Պաշտպանունակությունը ենթադրում է ժողովրդական նախաձեռնություն և ակտիվ մասնակցություն: Հնարավոր ընդդիմախոսներին բերում ենք ԱՄՆ-ի օրինակը: Եթե դատենք, այսպես

կոչված, արդի ժողովրդավարության չափանիշներով, դժվար թե ինչ-որ մեկը կարողանա մեզ համոզել ու հիմնավորել, որ ԱՄՆ-ն ժողովրդավարական երկիր ու պետություն չէ: Սակայն ԱՄՆ-ի որպես պետության ժողովրդավարական բնութագրի հետ միասին հեղինակներից շատերն այն բնորոշում են որպես վերին աստիճանի անվտանգունակ և պաշտպանունակ: Այսպես, ամերիկյան հեղինակ Ա. Շլեզինգեր-կրտսերը, հետազոտելով ԱՄՆ-ի ողջ պատմությունը և համեմատելով այն այլ երկրների հետ, հանգել է շատ հետաքրքիր եզրակացության. «Պետության հիմքերը¹²⁹, այլ ոչ թե կապիտալիզմի զարգացման դինամիկան, բերեցին նրան ձգտման՝ ունենալ ազդեցություն աշխարհում... Քաղաքական և ռազմավարական շարժառիթներն, ազգային հզորությունը և ազգային անվտանգությունն օժտված են իրենց սեփական կենսունակությամբ և ուժով, անկախ գաղափարախոսական համակարգից ու սեփականությունից»¹³⁰:

Ասվածն արդեն հիմք է տալիս պնդելու, որ պաշտպանունակության սկզբունքն իր բնույթով և առաջադրված նորմատիվ բովանդակությամբ (պահանջներով) չի հակասում և չի կարող հակասել պետական ապարատի կազմակերպման ու գործունեության արդի սկզբունքներից և ոչ մեկին, որովհետև բոլոր պահանջների կենսագործման ձևը սահմանադրական ուղին է՝ արդի հասարակության սահմանադրական կարգի այլ հիմունքներին համահունչ՝ իշխանությունների բաժանման հիմնարար սկզբունքի գլխավոր պահանջների անպայման պահպանման պայմանով:

Անշուշտ, սոցիալական և իրավական պետության հայեցակարգը եվրոպական ժողովուրդների պատմամշակութային նվաճումն է, նրանց՝ հազարամյակից ավելի տևած քաղաքական-իրավական կյանքի բազմաչարչար փորձի արտացոլանքը: Եվրոպայի ժողովուրդների կյանքում բազմաչարչար փորձն ուներ ներքին առում, ներքին խնդիր էր, այլ ոչ թե արտաքին: Ներքին ոլորտում անհավասարու-

¹²⁹ Արթուր Շլեզինգերն օգտագործում է «Raisons d'état» ձևակերպումը, որի ամենահարմար թարգմանությունն է «պետության հիմքերը»: Պետության հիմքերն իրենց բովանդակությամբ շատ մոտ են պետության կառուցման ու գործունեության սկզբունքներին, ուստի կարող ենք պնդել, որ ԱՄՆ-ին այդպիսի որակ հաղորդել են նաև նրա կերտման ու գործունեության տարամակարդակ սկզբունքները:

¹³⁰ Տե՛ս Шлезингер-младший Артур М. Циклы американской истории. Пер. с англ. М., 1992, էջ 688:

յան ու ազատության պայքարի արդյունքը հանդիսացան պետության երեք հայեցակարգերը, որոնք փոխանցվեցին սահմանադրական կարգավորման ոլորտ՝ որպես պետության հիմնարար սկզբունքներ: Հայաստանի և հայ ժողովրդի համար բազմաչարչարությունն ուներ արտաքին կողմ. նրա բոլոր պատմական դժբախտություններն օտարների անընդհատ հարձակումներն ու պատերազմներն էին, որ հետո վերածվում էր օտարի լծի, կեղեքման: **Հետևաբար մեր իրականության արտացոլանքը պետք է դառնա պաշտպանունակ պետության հայեցակարգը, վերածվի մեր Սահմանադրության սկզբունքի, և դրանով իսկ, իրենից բխող համապատասխան որակներ հաղորդի Եվրոպայից որդեգրված սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետությանը:**

***3.4. Ազգային անվտանգության հայեցակարգի իրավական կարգավորման ու կառավարման հիմնահարցերը
Հայաստանի Հանրապետության անկախացումից
հետո և առաջիկա անելիքները***

Պետության գործառական կողմերը նշելու համար պետականագիտության մեջ օգտագործում են հիմնականում «պետության գործառույթ» (խորհրդային և հետխորհրդային տարածքում), ինչպես նաև «պետության խնդիրներ (կամ նպատակներ)» հասկացությունները: Վերջինն ավելի շատ տարածված է արևմտաեվրոպական պետաիրավական ուսմունքներում: Հայաստանյան պետականագիտության մեջ հասարակության և պետության առջև եղած խնդիրների տեսական իմաստավորումը կատարվում է խնդրի լուծմանն ուղղված գործառույթ, գործառույթի իրականացման ձևեր և մեթոդներ կատեգորիաների համակցության միջոցով: Բացի այդ, եթե խորհրդային և հետխորհրդային պետականագիտության մեջ պետության գործառույթները բաժանվում են ներքինի և արտաքինի, ապա Եվրոպականում «պետության գործառույթների հարցը գործնականում չի քննարկվում: Որպես կանոն, այստեղ խոսքը պետության խնդիրների ու նպատակների մասին է»¹³¹:

¹³¹ Տե՛ս «Общая теория права и государства» /под ред. В.В. Лазарева.- М.: Юрист, 1994, էջ 239-240:

Ե՛վ «պետության գործառնություն», և՛ «պետության նպատակ-խնդիր» հասկացությունները ցույց են տալիս, թե ինչով է զբաղված պետությունը, ինչ նպատակներ է նա հետապնդում, ինչ քայլեր է ձեռնարկում դրանց հասնելու համար: Ընդունված է պետության գործառնությունները բնորոշել որպես դրա գործունեության հիմնական ուղղություններ, որոնք արտահայտում են պետության էությունը և սոցիալական նշանակությունը, ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը¹³²:

Պետության առջև կանգնած խնդիրներից են երկրի անվտանգության ռազմավարական պլանավորումը, դրա իրավական ամրագրումն ու կառավարումը: Պետաիշխանական պրակտիկայում պետական կառավարումը արդեն վաղուց լուծում է նաև ազգային անվտանգության ապահովման խնդիրները, որի համար գործում են բազմաթիվ ընդհանուր ու մասնագիտացված պետական մարմիններ: Այդ հարաբերությունների բարդ համակարգն առաջ բերեց դրանց տեսական հետազոտության պահանջմունք, և հիմա արդեն առկա է անվտանգաբանությունը (սեկյուրիտիլոգիան) որպես իմացության կայացած ոլորտ¹³³: Անվտանգաբանությունը օգտագործում է «ազգային շահեր» «ազգային անվտանգություն», «վտանգ», «սպառնալիք», «անվտանգության սպառնալիք», «ռազմական անվտանգություն», պաշտպանական և բազմաթիվ այլ տեսակների անվտանգություններ հասկացություններ, որոնք ունեն նաև իրենց նորմատիվ բովանդակությունը (բնորոշումը): Որպես կանոն, անվտանգության ապահովման գործունեությունը հիմնվում է պետության կողմից մշակված և ընդունված ազգային անվտանգության դոկտրինի կամ ռազմավարության վրա:

¹³² Տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 115: Այլ տեսաբանների՝ պետության գործառնություններին տրվող բնորոշումները հիմնական գծերով համընկնում են վերը բերված սահմանմանը: Օրինակ՝ Ս. Ա. Կոմարովը պետության գործառնությունները բնորոշում է որպես «պետության առջև կանգնած խնդիրների կենսագործմանն ուղղված գործունեության հիմնական (գլխավոր) ուղղություններ (կողմեր, տեսակներ), որոնք միտված են հասնելու որոշակի նպատակների, պայմանավորված են պետության էությամբ և սոցիալական առաքելությամբ» (Комаров С. А. Общая теория государства и права, М., 1997, էջ 81):

¹³³ Այդ մասին մանրամասն տե՛ս Халипов В. Ф., Энциклопедия власти. М., 2005, էջ 309-321:

Այս համատեքստում առաջանում է այդ խնդիր-նպատակը պետության ավանդական գործառնությունների համակարգում տեսականորեն իմաստավորելու, ինչպես նաև դրա կենսագործման իրավական կառուցակարգի ձևավորումը ՀՀ-ում վեր հանելու անհրաժեշտություն:

Ի՞նչ է անվտանգության ապահովման խնդիրը՝ երկրի անվտանգության ռազմավարական պլանավորման, դրա իրավական ամրագրման ու կառավարման իմաստով. պետության՝ գործառնություն, իսկ եթե այն գործառնություն է, ապա՝ ինչպիսին՝ ներքին, թե՞ արտաքին: Գրականության մեջ առանձնացնում են պետության հետևյալ ներքին գործառնությունները. ա) տնտեսական, բ) սոցիալական, գ) ֆինանսական վերահսկողության և հարկման, դ) մշակութային, ե) իրավական (իրավապահական), զ) էկոլոգիական: Պետության արտաքին գործառնությունները ևս ըստ արտաքին հասարակական հարաբերությունների ոլորտի (գործունեության օբյեկտի) բաժանվում են տեսակների, օրինակ՝ ա) երկրի պաշտպանության, բ) դիվանագիտական, գ) միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման, դ) միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության, ե) միջպետական մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության, զ) միջպետական էկոլոգիական համագործակցության, է) համաշխարհային իրավակարգի պաշտպանության:

Ինչպես տեսնում ենք, այս դասակարգման մեջ չկա անվտանգության ապահովման գործառնություն: Եզակի հեղինակներ կան, որոնք այն համարում են պետության առանձին գործառնություն: Անվտանգության ապահովման այն մասը, որը կապված է իրավապահական գործունեության հետ, կլանվում է իրավական (իրավապահական) գործունեության կողմից: Եթե տեսականորեն ընդունենք, որ պետությունն իրականացնում է նման գործառնություն, ապա առաջանում են մեթոդաբանական որոշակի բարդություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ, նախ, շատ դժվար է առանձնացնել դրա օբյեկտը, և երկրորդ՝ այն արտաքին, թե՞ ներքին գործառնություն է:

Պետության գործառնությունների տեսության մեջ ընդունված է համարել, որ պետության յուրաքանչյուր գործառնություն իր առարկան (օբյեկտը) և բովանդակությունը: Առարկան հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտն է (տնտեսություն, երկրի պաշտպանություն), որին ուղղված է պետական ներգործությունը: Գործառնույ-

թի բովանդակությունը մատնանշում է, թե ինչ է անում պետությունը, ինչ կառավարչական գործողություններ է կատարում տվյալ ոլորտում, ինչով են զբաղվում նրա համապատասխան մարմինները¹³⁴։ Ոչ միայն պետության կոնկրետ գործառույթը, այլև դրա բովանդակությունը (ի՞նչ անել խնդիրը լուծելու համար), դրանց իրականացման ձևերն ու մեթոդները որոշվում են խնդրով¹³⁵։ Այդպիսով, եթե պետության ամեն մի գործառույթ միաօբյեկտ կամ միասեռ է, ապա անվտանգաբանության մեջ ընդունված է առանձնացնել դրա բազմաթիվ օբյեկտներ՝ միջազգային, պաշտպանական, ռազմական, տնտեսական, ներքաղաքական, սոցիալական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական, էկոլոգիական, էներգետիկ, պարենային, ժողովրդագրական և այլն։ Օրինակ՝ անվտանգության ապահովման խնդիրը նույն հաջողությամբ վերաբերում է նաև ներքին տնտեսական և մնացած բոլոր գործառույթներին։ Անվտանգությունն ունի ներքին ու արտաքին վտանգներ, սպառնալիքներ, դրանով պայմանավորված բաղադրատարրեր։ Այս համատեքստում դժվար է պնդել ու հիմնավորել, թե այն մաքուր արտաքին, թե՞ ներքին գործառույթ է։

Թվում է, թե պետության բոլոր գործառույթներից անվտանգության ապահովումը սերտորեն կապված է երկրի պաշտպանության հետ։ Սակայն, տեսական հետևողական մոտեցման դեպքում նկատում ենք, որ դրանք լուծում են էականորեն տարբերվող խնդիրներ։ Վ. Ն. Խրոպանյուկի մեկնաբանմամբ՝ «Երկրի պաշտպանության գործառույթն իրականացվում է տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և ռազմական միջոցներով։ Խաղաղ ժամանակներում դա երկրի բազմակողմանի պատրաստվելն է դրսի հնարավոր հարձակումներին դիմագրավելու համար։ Պատերազմի ժամանակ այդ գործառույթն ընդունում է հակառակորդի դեմ զինված պայքարի ձև,

¹³⁴ Տե՛ս Վաղարշյան Ա., նշվ. աշխ., էջ 115։

¹³⁵ Պետության գործառույթների իրականացման ձևերը լինում են իրավական և կազմակերպական։ Իրավական հիմնական ձևերն են՝ իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, հսկիչ-վերահսկողական և այլն։ Ամեն մի ձևին համապատասխանում են իրեն բնորոշ մեթոդները։ Իրավական մեթոդներն են՝ օրինականությունը, տեղեկությամբությունը, համոզումը, խթանումը, խորհրդատվությունը, անմիջական կառավարումը, օրինական հարկադրանքը, իսկ կազմակերպական են՝ սոցիոլոգիական հետազոտությունը, ծրագրավորումը, կանխատեսումը, ընթացիկ վերլուծությունը, արդյունքների ամփոփումը, ինչպես նաև գաղափարադաստիարակչական մեթոդները (ավելի մանրամասն տե՛ս Վաղարշյան Ա., նշվ. աշխ., էջ 123-126)։

որի ընթացքում տեղի է ունեւում երկրի բոլոր ուժերի միավորում՝ հաղթանակի հասնելու համար... Երկրի պաշտպանության գործառույթը տարողունակ է և բազմակողմ: Այն ընդգրկում է պետության միջոցառումների ամբողջ համակարգը երկրի պաշտպանունակության ամրապնդման, ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ զինված ուժերի ռազմական հզորության ապահովման գործում»¹³⁶: Ըստ Վ.Ն. Խրոպանյուկի՝ պետության պաշտպանական գործունեությունը հիմնվում է նրա ռազմական դոկտրինի (ուսմունքի) վրա և բաղկացած է մի քանի հիմնական ուղղություններից: Այդ ուղղություններն են՝ 1) երկրի պաշտպանական հզորության ամրապնդումը, որի երաշխիքը զարգացած, արդյունավետ, գիտահենք տնտեսությունն է, 2) զինված ուժերի կատարելագործումը, նրանց մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացումը, 3) պետական սահմանների պաշտպանությունը, 4) քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, 5) զինված ուժերի պահեստայինների ռազմական ուսուցումը:

Անվտանգության ապահովման խնդրի և պաշտպանության գործառույթի տարբերությունը հասկանալու համար քննարկենք անվտանգաբանության և ռազմագիտության բառապաշարում առկա «ազգային անվտանգություն», «ռազմական անվտանգություն», «պաշտպանություն» հասկացությունները: «Ազգային անվտանգությունը» ավել լայն է պետության «պաշտպանություն» հասկացությունից, իսկ «ռազմական անվտանգությունը»՝ «պետության պաշտպանունակությունից»: «Պաշտպանունակությունը» համարվում է «ռազմական անվտանգության առանձին բաղադրիչ»: Այս երեք հասկացությունները կապող օղակը «պաշտպանություն» հասկացությունն է: «Պաշտպանությունը քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համակարգ է՝ ուղղված հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովմանը»¹³⁷:

Այսպիսով, «անվտանգությունն» իր բոլոր տարատեսակներով և «պաշտպանությունը» նույնական հասկացություններ չեն: Պաշտ-

¹³⁶ Տե՛ս Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997, էջ 199-200:

¹³⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը:

պանությունը բուն պաշտպանական գործունեությունն է՝ ուղղված ագրեսիաներին հակահարված տալու համար պետության նախապատրաստմանը և անհրաժեշտության դեպքում զինված պաշտպանությանը: Այս իմաստով «պաշտպանությունը» նույնանում է պետականագիտության մեջ օգտագործվող «երկրի արտաքին պաշտպանության գործառույթ» հասկացությանը: Ազգային անվտանգության առարկան նրա նպատակները, խնդիրները և գործառույթներն են՝ ուղղված ներքին և արտաքին ցանկացած տեսակի վտանգների նախականիմանը, կանխմանը և չեզոքացմանը, իսկ դրանք կարող են վերաբերել պետության այլ գործառույթներից ցանկացածի օբյեկտին:

Արված տեսական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ ազգային անվտանգության ապահովումը ոչ միայն պետության առանձին գործառույթ է, այլ նաև միջգործառույթային կարևոր խնդիր, որը վերաբերում է պետության բոլոր գործառույթների օբյեկտներին, դրանց առարկաներին, ունի ներքին ու արտաքին բաղադրատարրեր:

Անվտանգության ապահովման գործունեությունը հիմնվում է պետության կողմից մշակված և ընդունված ազգային անվտանգության դոկտրինի կամ ռազմավարության վրա: Սովորաբար նման բնույթի փաստաթղթերը ունենում են իրավական բնույթ, այսինքն՝ դրանք ընդունվում են պետության համապատասխան իրավասու մարմնի կողմից՝ սահմանված ընթացակարգով, և ենթակա են պարտադիր կատարման: Այս բնույթի փաստաթուղթն իրավական էր համարում նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ արդեն չգործող օրենքը, որի 9 հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետը սահմանում է, որ միմիայն օրենքով պետք է սահմանվեն ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգային դրույթները: **Այսպիսով, անվտանգության հայեցակարգերը, բացի կազմակերպական, տեղեկատվական և այլ գործառույթներից, կատարում են նաև կարգավորիչ-նորմատիվային գործառույթ, այսինքն՝ դրա դրույթներն ունեն նորմատիվ-իրավական բնույթ, պարտադիր պետք է կատարվեն պետական այն բոլոր մարմինների կողմից, որոնք այս կամ այն կերպ մասնակցում են ազգային անվտանգության ապահովման գործին:**

Հայաստանի երրորդ հանրապետության հիմնադրման սկիզբն ազդարարեց 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը: Այն՝ որպես քաղաքական-իրավա-

կան փաստաթուղթ ժողովրդավարական, իրավական հասարակությու-
նը սահմանում էր որպես Հայաստանի զարգացման ռազմավա-
րություն և նախորշում էր իրավական բարեփոխումների հիմնական
ուղղությունները: Հռչակագիրը, հայտարարելով հայկական պետությ-
յան անկախության գործընթացի սկիզբ, ամրագրում էր նաև այն հիմ-
քերը, ռազմավարական խնդիրները, պատմաքաղաքական նախադր-
յալները, որոնք ընկած էին անկախության քաղաքական-իրավական
սկզբնավորման հիմքում:

Հռչակագիրը 5-րդ հոդվածում սահմանում էր երկրի անվտան-
գության ու պաշտպանության համար կարևոր խնդիրներ. «Հայաս-
տանի Հանրապետությունն իր անվտանգությունը և սահմանների
անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերա-
գույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին գորքեր,
պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաս-
տանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ապառազինության իր մաս-
նաբաժնի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունն ինքն է որո-
շում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկրների գորամիավորումները, նրանց ռազմական բազանե-
րը և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրա-
պետության տարածքում Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարող են օգ-
տագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ»:

Հռչակագրի ընդունմամբ երկրի անվտանգության հետ կապված
հարաբերությունների հիմնադիր իրավական կարգավորման համա-
կարգը 1990 թ. դրությամբ բացի «անկախության գործընթացի
սկիզբն» ազդարարող Հռչակագրից, ներառում էր ՀԽՍՀ 1978 թ. Սահ-
մանադրությունը, որն ուներ հիմնական օրենքի ուժ մինչև 1995 թ.:

Փորձենք վերլուծել այդ փաստաթղթերի իրավակարգավորում-
ները երկրի անվտանգության ռազմավարական պլանավորման և
դրա կառավարման պետական կարևոր խնդրի տեսանկյունից:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 4-րդ՝ «Արտաքին քաղաքա-
կան գործունեությունը և սոցիալիստական հայրենիքի պաշտպա-
նությունը» գլխի 29 և 30 հոդվածները նվիրված էին հայրենիքի անվ-
տանգության ու պաշտպանության հարաբերությունների կարգա-
վորմանը, որը գրեթե բառացիորեն կրկնում էր դաշնային Սահմա-

նադրության դրույթները¹³⁸։ Երկրի պաշտպանության խնդիրը ՀԽՍՀ Սահմանադրությունը դիտում էր «պետության կարևորագույն ֆունկցիա և ամբողջ ժողովրդի գործ»¹³⁹։ Սահմանադրությունը, բացի արտաքին հիմնական գործառույթի այդ ամրագրումից, սահմանում էր, որ պետությունն ապահովում է նաև երկրի անվտանգությունը։ Սահմանադրության 30 հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ երկրի անվտանգության ապահովման և դրա պաշտպանունակության ամրապնդման ասպարեզում պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների պարտականությունները որոշվում են ՍՍՀ միության օրենսդրությամբ¹⁴⁰։

Այսպիսով, խորհրդային սահմանադրական կարգավորումը երկրի պաշտպանության խնդիրը համարում էր պետության գործունեության հիմնական և շատ կարևոր ուղղություն (գործառույթ)։ Բայց դրա հետ միասին այն հասարակական-պետական կարևոր խնդիր էր համարում նաև երկրի անվտանգության ապահովումը՝ որպես պետության պարտականություն, որից բխում էր, որ երկրի զարգացման ռազմավարական և մարտավարական պլանավորման ու կառավարման գործընթացում անվտանգության հարցերը կարևոր գործոններ էին, որոնց հետ պետք է հաշվի նստեին պետական մարմինները։ Հետաքրքիր է, որ երկրի անվտանգության ապահովման գործում Սահմանադրությունը պարտավոր սուրյեկտ էր համարում նաև հասարակական կազմակերպություններին ու քաղաքացիներին։ Այսպիսով, երկրի անվտանգության ապահովման խնդրի կենսա-

¹³⁸ Քանի որ երկրի պաշտպանությունը դաշնության իրավասության ոլորտ էր, ապա 29 հոդվածը սկսվում էր «ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան ...» ձևակերպումով, իսկ 30 հոդվածը՝ «Հայկական ԽՍՀ-ն մասնակցում է...» երկրի անվտանգության ու պաշտպանունակության ապահովմանը։ ԽՍՀՄ Սահմանադրության դրան համապատասխանող 32 հոդվածը սկսվում էր «Պետությունը ապահովում է...» բանաձևով (տե՛ս «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք)», Եր., 1989, էջ՝ 14, ինչպես նաև «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք)», ընդունված է 1978 թ. ապրիլի 14-ին, Եր., Հայաստան, 1987, էջ 14-15)։

¹³⁹ Տե՛ս «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք)», ընդունված է 1978 թ. ապրիլի 14-ին, Եր., Հայաստան, 1987, էջ 15։

¹⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 15-16։

գործման սահմանադրական-իրավական երաշխիք էր ծառայում Սահմանադրության 30 հոդվածի 2-րդ մասը, որը սահմանում էր, որ երկրի անվտանգության ապահովման ոլորտում պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների պարտականությունները որոշվում են օրենսդրությամբ:

Այս համատեքստում «Անկախության հռչակագրի» պաշտպանությանը նվիրված 5-րդ հոդվածում լուծվում էին երկրի պաշտպանության գործառույթի իրավական ապահովման հարցերը, իսկ դրանում «անվտանգություն» հասկացությունն օգտագործված էր նեղ՝ ռազմական կամ պաշտպանական իմաստներով: Այս հանգամանքը պայմանավորված էր Հռչակագրի ընդունման պահի պատմական ժամանակաշրջանի առանձնահատկություններով, առաջին հերթին այն հանգամանքով, որ դեռևս կար խորհրդային դաշնությունը: Առանց այդ էլ Հռչակագիրը ՀՀ-ին վերապահում էր իրավունքներ երկրի պաշտպանության հարցերում, որոնք դաշնության բացառիկ իրավասության ոլորտն էին: Այդ իրավագործությունները պետք է իրավաբանորեն նպաստեին սեփական գորամիավորումների անհապաղ ստեղծմանը՝ պայմանավորված դարաբաղյան ազատագրական պատերազմով: Ազգային անվտանգության վտանգների ու սպառնալիքների խնդիրները դեռևս սրված չէին:

Իրական անկախություն ձեռք բերելուց հետո միայն դրանք դարձան հրատապ ու արդիական: Նոր իրավիճակում առաջանում էր արդեն բուն հայաստանյան ազգային անվտանգության հայեցակարգի ռազմավարական պլանավորման ու դրա կենսագործման անհրաժեշտությունը: Այդ շատ կարևոր ու օբյեկտիվ խնդիրն ուներ ընթացիկ իրավական կարգավորման ու կառավարման կարիք, հատկապես որ անկախության պայմաններում ՀՀ-ն ձեռք բերեց իր ինքնիշխանությունից բխող բոլոր իրավագործությունները նաև երկրի անվտանգության ապահովման ոլորտում:

Փորձենք վեր հանել և պարզաբանել, թե ինչ փոփոխություններ կատարվեցին երկրի անվտանգության ապահովման քաղաքականության օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման մեջ մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը:

Անկախություն ձեռք բերելուց հետո օրենդիրն ընդունել է հիմնարար՝ սահմանադրական մի քանի օրենքներ՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օ-

րենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը (1990 թ. դեկ. 10), «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը (1991 թ. սեպ. 25), 1 «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը» (995 թ. մարտի 27)¹⁴¹: Դրանցից անվտանգության ապահովման ոլորտի կարգավորմանը վերաբերող դրույթներ պարունակում էր միայն «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը: Դրա 12 հոդվածը սահմանում էր, որ ՀՀ պաշտպանությունը և ազգային անվտանգության ապահովումը պետության և ժողովրդի հիմնական խնդիրներից են, և դրա իրականացման նպատակով ՀՀ-ն կազմակերպում է զինված ուժեր, ազգային անվտանգության մարմիններ և հայտարարում է ընդհանուր զինապարտություն:

Եթե այս դրույթները համեմատենք նախորդ՝ խորհրդային իրավակարգավորումների հետ, ապա կնկատենք, որ դրանում չկար իրավական բովանդակային նորամուծություն: Օրենքի հիմքում ընկած էր խորհրդային մոտեցումը, որը պաշտպանությունը և անվտանգության ապահովումը համարում էր պետության ու հասարակության (ժողովրդի) հիմնական խնդիր: Ընդ որում, հոդվածի բովանդակությունը հիմնականում վերաբերում էր պաշտպանության գործառույթին և ռազմական անվտանգության որոշակի կողմերին: Վերը նշեցինք, որ 1978 թ. սահմանադրական կարգավորումը անվտանգության ապահովման հարցում ուներ զոնե մեկ երաշխիք: Սահմանադրական օրենքը հրաժարվել էր դրանից:

Այսպիսով, անկախության ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր աշխարհաքաղաքական, արտաքին և ներքին բավականին բարդ և խճճված իրավիճակում: Դրան գումարվել էին չհայտարարված պատերազմը և տնտեսական շրջափակումը: Այս իրավիճակում անհրաժեշտ էր զարգացման ռազմավարության մեջ ամրագրված նպատակների՝ ժողովրդավարության ու իրավականության կողքին ավելացնել նաև անվտանգությունը, կատարել ռազմավարական նպատակների վերադասավորում և դրանց տեղայնացում ընթացիկ օրենսդրության մեջ, ինչը, սակայն, տեղի չունեցավ:

¹⁴¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքներիս ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ)», ՀՀ Գերագույն Խորհուրդ, Եր., 1995 թ., էջ 50, 177-179, 838:

1991 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. հուլիս օրենսդրական արմատական բարեփոխումների հիմնական ուղղություններն էին իշխանությունների տարանջատման սկզբունքի որոշ տարրերի կենսագործումը, սեփականության և ձեռնարկատիրական գործունեության ոլորտի ազատական օրենսդրության ընդունումը, ՉԼՄ-ների ազատության օրենսդրական կարգավորումը, պետական իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի օրենսդրական կարգավորումը, սոցիալական ոլորտի նոր օրենսդրության սահմանումը: Օրենքների այդ զանգվածից պաշտպանական ոլորտի հարաբերությունների կարգավորմանն ուղղակիորեն առնչվում են ընդհամենը 5 օրենք¹⁴², իսկ անվտանգության ապահովման ռազմավարական պլանավորումն ու դրա կառավարումը ընդհանրապես չունեին օրենսդրական ամրագրում: Այս փուլում ընդունված օրենքներից անուղղակիորեն անվտանգության ապահովման ոլորտին էին վերաբերում միայն երեքը՝

1) «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» ՀՀ օրենքը (1 օգոստոսի, 1991 թ.), որի համաձայն՝ նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն էր և գլխավորում էր հանրապետության գործադիր իշխանությունը: Այս կարգավիճակին համապատասխան՝ նախագահը ճանաչվում էր զինվորական ուժերի գլխավոր հրամանատար, նշանակում էր զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, նախագահում անվտանգության խորհուրդը (հոդված 8),

2) «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» ՀՀ օրենքը (19 նոյեմբերի 1991 թ.), որի համաձայն՝ Գերագույն խորհրդի իրավասությունն այդ ոլորտում օրենսդիր ու վերահսկողա-

¹⁴² Դրանք են՝ «ՀՀ Զինապարտության մասին» ՀՀ օրենքը (9 դեկ. 1991թ.), «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների մասին» ՀՀ օրենքը (23 մարտի, 1992 թ.), «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում զինվորական դատախազություն ստեղծելու մասին» ՀՀ օրենքը (10 օգոստոսի 1992 թ.), «Հայաստանի Հանրապետության դատական համակարգում զինվորական դատարան ստեղծելու մասին» ՀՀ օրենքը (10 օգոստոսի 1992 թ.), «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը (7 հունվարի 1993 թ.) (տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.)», ՀՀ Գերագույն խորհուրդ, Երևան, 1995 թ., էջ 196, 341, 396, 397, 453):

կան էր: Սույն օրենքի հոդված 10-ի 2-րդ կետի համաձայն՝ այն պետք է իրականացներ ազգային անվտանգության ապահովման հարաբերությունների օրենսդրական կարգավորումը: Սակայն Գերագույն խորհուրդն իր գործունեության ընթացքում նման բովանդակության որևէ օրենք չի ընդունել,

3) «Հայաստանի Հանրապետության կառավարության կազմի և կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը (4 դեկտեմբերի, 1991 թ.) առնչվում էր անվտանգության ապահովման ոլորտին, որովհետև կառավարության կառուցվածքի մեջ նախատեսում էր ազգային անվտանգության նախարարություն¹⁴³:

Այսպիսով, անկախություն ձեռք բերած իրավական և ժողովրդավարական պետության կառավարման ձևը դարձավ նախագահական հանրապետությունը, որը պետության այլ՝ ավանդական գործառույթների հետ միասին պետք է ապահովեր նաև երկրի անվտանգությունը: Կառավարման նման ձևում անվտանգության ապահովման ոլորտի հարաբերությունների կարգավորման և վիճակի ողջ պատասխանատվությունը մնում էր ՀՀ նախագահի վրա, այսինքն՝ նշված հարաբերությունների կարգավորման բեռը մնացել էր ենթաօրենսդրական մակարդակում՝ գործադիր իշխանության իրավասության ոլորտում: Սակայն այս շրջանում գործադիր իշխանության գործունեության ուսումնասիրությունը ևս վկայում է, որ ստեղծված ներքին ու արտաքին բարդ պայմաններում այն չկառուցեց ազգային անվտանգության կուռ ռազմավարություն և դրա հիմքով պետական կառավարման ու իրավական կարգավորման համակարգ, բացի Ազգային անվտանգության առաջին հայեցակարգի ընդունումից՝ 2007 թ.: Եթե դեռևս այն ժամանակ կատարվեր ոլորտի պատշաճ իրավական կարգավորում ու կառավարում, ապա մենք չէինք ունենա ազգային անվտանգության այսքան շատ սրված սպառնալիքներ ու վտանգներ:

Արված տեսական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ պետության առջև կանգնած կարևորագույն խնդիրներից են երկրի անվտանգության ռազմավարական պլանավորումը, դրա իրավական ամրագրումն ու կառավարումը: Ազգային անվտանգության

¹⁴³ Այդ օրենքները տե՛ս «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.)», ՀՀ Գերագույն խորհուրդ, Եր., 1995, էջ 158-162, 189-194, 194-195:

ապահովումը պետության գործառնությունների համակարգում ոչ միայն առանձին գործառնությո՛ւթ է, այլ միջգործառնությո՛ւթային, առանցքային նշանակության կարևոր խնդիր, որը վերաբերում է պետության բոլոր գործառնությունների օբյեկտներին, ունի ներքին ու արտաքին բաղադրատարրեր:

«Հանկախացումից հետո՝ իրավական քաղաքականության վերլուծությունը հաստատում է, որ ո՛չ սահմանադրական, ոչ օրենսդրական, ո՛չ ենթօրենսդրական մակարդակներում չկատարվեց անվտանգության հիմքերով պետաիրավական համակարգի նորմատիվ կարգավորում: Կառավարման նախագահական, իսկ այնուհետև կիսանախագահական ձևն ապահովեց կառավարման ընթացիկ խնդիրների հարաբերականորեն արագ ու օպերատիվ լուծումները, սակայն չկարողացավ վերածվել անվտանգության հայեցակարգի վրա կառուցված, օրենքներով կարգավորված ռազմավարական պլանավորման և կառավարման համակարգի: Դրությունը ամրատապես չփոխվեց նաև 2015 թ. սահմանադրական բերքի խումների արդյունքում, ինչը նշանակում է, որ ապագա սահմանադրական բերեփոխումների առջև կանգնած կարևորագույն խնդիրներից են երկրի անվտանգության ռազմավարական պլանավորման, դրա իրավական ամրագրման ու կառավարման սահմանադրական հիմքերի մշակումն ու ընդունումը:

**3.5 Երկրի պաշտպանության սահմանադրական
կարգավորման առանձնահատկությունները Հայաստանի
Հանրապետությունում՝ խորհրդարանական կառավարման
համաշխարհային փորձի համատեքստում**

3.5.1 Հայաստանի Հանրապետության ռազմաստրատեգիական կառավարման վերին մակարդակի ընդհանուր պատկերը:

Արդի շրջանում ազատական կառավարման տեսլական որդեգրած երկրներում ռազմական կառավարման վերին մակարդակը կառուցված է իշխանությունների բաժանման սկզբունքի հիմքով՝ երկրի պաշտպանության ոլորտի լիազորությունները բաշխված են օրենսդիր ու գործադիր մարմինների միջև: Այդ կառավարումը միատեսակ չէ, այլ գոյություն ունի կարգավորման տարբերակում՝ նախատեսված ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական վիճակի համար: Բացի

այդ համաշխարհային մասշտաբով այն միասնական չէ, այլ ունի ան-
ռանձնահատկություններ՝ պայմանավորված առանձին երկրների յու-
րահատկություններով, առաջին հերթին կառավարման ձևով: Բոլոր
դեպքերում, անկախ ամեն ինչից, որևէ երկրի ռազմաստրատեգիա-
կան կառավարման համակարգը կառուցելիս անհրաժեշտ է հաշվի
առնել ռազմական արվեստի (տեսության) սկզբունքները:

Նշյալ հարաբերությունների սահմանադրական կարգավորման
հայաստանյան տեսլականը և դրա առանձնահատկությունները
պարզելու համար փորձենք վեր հանել Սահմանադրությամբ նախա-
տեսված ռազմաստրատեգիական կառավարման մարմինները: Գոր-
ծող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը որդեգրելով խորհր-
դարանական կառավարման ձևը, զինված ուժերի ռազմավարական
կառավարման խաղաղ ժամանակաշրջանի համար նախատեսել է
հետևյալ հիմնական մարմինները:

1. Գործադիր իշխանության մակարդակում այդ մարմիններն
են՝ Կառավարությունը, որն իրականացնում է պաշտպանության քա-
ղաքականությունը¹⁴⁴, Անվտանգության խորհուրդը, որ սահմանում է
պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունները
(ՀՀ Սահմանադրություն, 155 հոդ.)¹⁴⁵, գլխավոր շտաբը որպես զին-
ված ուժերի օպերատիվ կառավարման բարձրագույն մարմին:

Սահմանադրական և օրենսդրական դրույթների վերլուծությու-
նը ցույց է տալիս, որ ՀՀ վարչապետը խաղաղ ժամանակ տիրապե-
տում է կարևոր լիազորությունների: Լինելով կառավարության դե-
կավարը վարչապետը միայն դրա ուժով պաշտպանական քաղաքա-

¹⁴⁴ Պաշտպանության ոլորտում Կառավարության լիազորություններն են՝ 1) հայ-
տարարում է ռազմական դրություն, ընդհանուր կամ մասնակի զորահավաք, 2)
ընդունում է որոշում զինված ուժերի կիրառման մասին, 3) Ազգային Ժողովին ա-
ռաջարկություն է ներկայացնում պատերազմ հայտարարելու մասին, իսկ Ազգա-
յին Ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում լուծում է պատերազմ
հայտարարելու հարցը, 4) իրականացնում է պաշտպանության ոլորտում այլ
լիազորություններ՝ սահմանված Սահմանադրությամբ, «Պաշտպանության մա-
սին» և այլ օրենքներով:

¹⁴⁵ Համաձայն «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 3-
րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «Պաշտպանական քաղաքականությունը՝ ՀՀ
պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումն ու իրակա-
նացումն է, այդ թվում պաշտպանության ռազմավարական պլանավորման և
պաշտպանության ռազմավարական վերանայման, ռազմավարական առաջնոր-
դող փաստաթղթերի ընդունման միջոցով»:

կանության մշակման ու իրականացման գործում կատարում է համակարգողի դերակատարում: Վարչապետը լինելով կառավարության ղեկավարը, միաժամանակ նախագահում է Անվտանգության խորհրդում, Հանրապետությանը սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում լիազորված է, մասնավորապես՝

ա) հրավիրել Անվտանգության խորհրդի նիստ,

բ) քննարկել պետությունն անհրաժեշտ պատրաստականության աստիճանների բերելու, ռազմական դրություն կամ պատերազմ հայտարարելու, զինված ուժերի կիրառման պլանը գործողության դնելու, ընդհանուր կամ մասնակի զորահավաք հայտարարելու նպատակահարմարության հետ կապված հարցերը,

գ) Կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում, պաշտպանության նախարարի առաջարկությամբ, որոշել զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Կառավարության անդամներին,

դ) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով իրավիճակի մասին իրազեկել դաշնակից և գործընկեր պետություններին,

ե) իրականացնել սպառնալից իրավիճակից բխող այլ անհրաժեշտ գործողություններ:

2. Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 133 հոդվածում ամրագրված լիազորությունների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ նա պաշտպանության ոլորտի կառավարման հարցում կատարում է ընհամենը վավերացնող սուբյեկտի դեր և նույնիսկ Անվտանգության խորհրդի անդամ չէ:

3. Օրենսդիր իշխանությունը՝ Ազգային Ժողովն ինչպես բոլոր, այնպես էլ ռազմաստրատեգիական կառավարման ոլորտում ապահովում է պաշտպանության օրենսդրական կարգավորումը, իրականացնում խորհրդարանական վերահսկողություն ոլորտի նկատմամբ: Այս ընդհանուր բնույթի գործառնության պարտականություններից բացի օրենսդիրը պաշտպանության ոլորտում լիազորված է ընդունելու որոշում Կառավարության առաջարկությամբ ընդունել պատերազմ հայտարարելու (կամ) խաղաղություն հաստատելու մասին (Սահմանադրություն, հոդ. 118, մաս 1-ին), ինչպես նաև օրենքով

սահմանված կարգով վավերացնել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել ռազմական բնության միջազգային պայմանագրերը (Սահմանադրություն, 116 հոդ. մաս 1-ին, 2-րդ կետ):

Ռազմական կառավարման վերին մակարդակի հարաբերությունների սահմանադրական կարգավորման հայաստանյան առանձնահատկությունները գնահատելու լավագույն միջոցը դրանց համադրումն է աշխարհի մի շարք խորհրդարանական հանրապետությունների հետ, ելնելով այն բանից, որ դրանցում ամփոփված է ինչպես ոլորտի կառավարման ազատական տեսականը, այնպես էլ ռազմագիտության մշակված սկզբունքները:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշման համաձայն «Ձինված ուժերի և զորամիավորումների գործառնությունների սկզբունքներ են համարվում մշտական բարձր մարտական պատրաստվածությունը, բարձր ակտիվությունը, զորքերի մարտունակության մշտական պահպանումը և ժամանակին վերականգնումը, անընդհատ ու անշեղ կառավարումը, նպատակների ու դրված խնդիրների նվաճման անշեղ ձգտումը և այլն, որոնց համապատասխանում են զինված ուժերի կառավարմանը ներկայացվող պահանջները՝ անընդհատություն, օպերատիվություն, կայունություն և զաղտնիություն և այլն: Այդ պահանջներին համապատասխանող զինված ուժերի և զորամիավորումների կառավարման սկզբունքներ են միանձնությունը, կառավարման կենտրոնացումը, բարձր կարգապահությունն ու կազմակերպվածությունը, հրամանատարի անհատական պատասխանատվությունը, իրադրության իմացությունը, խորը վերլուծությունը, կանխատեսումը, համառությունը և այլն: Թվարկված սկզբունքները ռազմական գործունեության ընդհանուր կանոններ են, որոնք որոշում են զինված ուժերի սոցիալական էությունը, դրանց կազմակերպման և գործունեության հիմնական հարցերը (գործառնությունները, կառուցվածքը, լիազորությունները և այլն), արտացոլվում են ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերում, հետևաբար՝ ընկած են պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, և՛ մարտավարական, և՛ բարձրագույն պետական կառավարման մակարդակում: Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ ռազմական կառավարման համակարգի բոլոր մակարդակների կառուցման նորմատիվ հիմքերը սահմանված են պաշտպանական ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ: Միևնույն ժամանակ Սահմա-

նադրական դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ սկզբունքները երկետային են ոչ միայն երկրի պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական նորմերի համախումբը սահմանելու, այլև դրանք մեկնաբանելու և կիրառելու ընթացքում»¹⁴⁶:

Շատ կարևոր է նկատի ունենալ, որ աշխարհի խորհրդարանական հանրապետություններից շատերի պաշտպանության կառավարման համակարգերի սահմանադրական հիմունքները կառուցված են նաև սեփական պատերազմական փորձի վրա:

Գերմանիայի Գաշնության, որպես խորհրդարանական հանրապետության, Սահմանադրության համաձայն պաշտպանության նախարարն ունի զինված ուժերի հրամանատարության իրավունք, իսկ երկրի վրա հարձակման մասին հայտարարություն անելու պահից զինված ուժերի հրամանատարությունն անցնում է կանցլերին: Սակայն Գերմանիայում նախատեսված են պատերազմական պայմաններում կառավարման համակարգի պաշտպանունակության ուժեղացման ինստիտուտներ, մասնավորապես՝ Բունդեսթագի նաև քննչական իրավունքներ ունեցող պաշտպանության կոմիտեն, պառլամենտի պալատների կողմից ստեղծվող Միավորված կոմիտե, որը տեղեկացվում և վերահսկում է պաշտպանության վերաբերյալ կառավարության պլանների մասին: Գերմանիայում գործում է Բունդեսթագի կողմից նշանակվող պաշտպանության գծով լիազոր, որը ոլորտում պառլամենտական վերահսկողության օժանդակ մարմին է: Բացի այդ Գերմանիայի Սահմանադրությունը նախատեսում է Նախագահի, Միավորված կոմիտեի արձանագրմամբ կամ հայտարարությամբ կիրառվող պետական կառավարման օպերատիվ ու անկանգամ իրականացմանն ուղղված մի շարք կարգավորումներ: Գերմանիայում առկա են պառլամենտի, Նախագահի, սահմանադրական

¹⁴⁶ Տե՛ս «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 2 նոյեմբերի 2021 թվականի ՄԴՈ-1616 որոշումը:

դատարանի անդամի, կանցլերի լիազորությունների անընդհատության ապահովման ինստիտուտներ:

Դասական խորհրդրանական հանրապետություններ են համարվում Իտալիան և Հունգարիան: Իտալիայում զինված ուժերի գլխավոր հրամանատարը Նախագահն է, որը նաև գլխավորում է Պաշտպանության գերագույն խորհրդը, հայտարարում է պատերազմական դրություն՝ հիմք ընդունելով խորհրդարանի պալատների որոշումը: **Հունգարիայի** Սահմանադրության համաձայն ռազմական կառավարման վերին մակարդակի լիազորությունների հիմնական մասը վերապահված է խորհրդարանին, մասամբ էլ հանրապետության նախագահին: Նախագահը գերագույն գլխավոր հրամանատարն է և պատերազմի դեպքում գլխավորում է Պաշտպանության պետական խորհուրդը, որը համարվում է ռազմաստրատեգիական բարձրագույն մարմին:

Շվեյցարիական Կոնֆեդերացիայում պաշտպանական ոլորտի կառավարումը յուրօրինակ է, սակայն դրա հիմնական գիծը և՛ պատերազմական, և՛ խաղաղ ժամանակներում կենտրոնացվածությունն է խորհրդարանի ձեռքում: Առանձնահատուկ է նաև **Լեհաստանի** փորձը, որտեղ խաղաղ ժամանակ գերագույն գլխավոր հրամանատարը նախագահն է, սակայն պատերազմ հայտարարելու պահից նա կառավարության ներկայացմամբ նշանակում է «բարձրագույն հրամանատար», որի կարգավիճակը՝ իրավասությունը, ենթակայությունը այլ մարմիններին սահմանվում են օրենքով:

Լատվիայի Սահմանադրությամբ սահմանված է, որ պետության զինված ուժերի գլխավոր հրամանատարը նախագահն է, որը պատերազմի ժամանակ նշանակում է Գերագույն գլխավոր հրամանատարին: **Լիտվայում** զինված ուժերի գլխավոր հրամանատարը Հանրապետության նախագահն է: Բացի այդ Սահմանադրությունը նախատեսում է Պաշտպանության պետական խորհրդի ստեղծում՝ ամրագրելով դրա կազմը և կարգավիճակը:

Արված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրո առարկա հարաբերությունների սահմանադրական կարգավորման հարցում խորհրդարանական կառավարման երկրները որդեգրել են նախագահակենտրոն կամ խառը՝ խորհրդարանախաղաղական տեսլականը: ՀՀ-ում կառավարման այդ համակարգը կարելի է բնութագրել կառավարակենտրոն, որը առավելապես նաև վարչա-

պետականություն է: Երկրներից միայն Գերմանիայում է, որ պատերազմի ժամանակ հրամանատար է դառնում կանցլերը, սակայն այստեղ պաշտպանական ոլորտի կառավարմանը բավականին լայն մասնակցություն ունի խորհրդարանը, նախատեսված են ռազմական կառավարման մի քանի կարգեր, որոնց կիրառման դեպքում վերակառուցվում են օրենսդիր մարմինը, և՛ ոլորտում գործող գործադիր մարմինները:

3.5.2. Պատերազմական իրավիճակում պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման ձևափոխումները Հայաստանի Հանրապետությունում:

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռազմաստրատեգիական պետական կառավարումը տարբերակված է երկու տեսակների՝ խաղաղ և պատերազմական վիճակների: Որպես կանոն, խաղաղ ժամանակ ռազմական կառավարման կարգերը հարմարեցված են իրավական պետության ժողովրդավարական սկզբունքներին: Պատերազմական վիճակում պետական կառավարման ընդհանուր կարգը առավելապես վերակառուցվում է ռազմական կառավարման սկզբունքներով, կիրառելով պատերազմելու արվեստից բխող կառավարման ձևեր, ինստիտուտներ, ընթացակարգեր, ինչը խիստ անհրաժեշտ է պատերազմական գործողություններում հաջողությունները երաշխավորելու համար:

Նշված տեսանկյունից Սահմանադրության առաջին երեք գլուխներում պատերազմական վիճակում կառավարման փոխակերպման որևէ ինստիտուտ չի նախատեսված: Բացառություն է Սահմանադրության 76-րդ հոդվածը, որը սակայն սահմանում է միայն սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումներն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ, ինչը չի կարելի որակել որպես ռազմավարական կառավարման կարգի կամ մարմինների լիազորությունների փոփոխություն:

Ազգային ժողովին նվիրված իրավադրոյթներում առկա է կառավարման (օրենսդրման, որոշման ընդունման) անընդհատության ու օպերատիվության ապահովմանն ուղղված երկու կարգավորում, մասնավորապես՝

ա) արգելվում է Ազգային ժողովի ընտրություն անցկացնել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ (Սահմանադրության 91-րդ հոդ. 2-րդ մաս),

բ) Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում: Եթե Ազգային ժողովի նիստ գումարելն անհնարին է, ապա պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Կառավարությունը, որն ունակ է ավելի արագ լուծել այդ հարցը (Սահմանադրության 118-րդ հոդ. 1-ին մաս):

Սահմանադրական կարգավորման տիրույթում անորոշ են պատերազմի ժամանակ ռազմական կառավարման ոլորտում Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների գործողության հարցը: Այս ուղղությամբ Սահմանադրության 157-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը նախատեսում են առաջին հայացքից բնականոն, սակայն որոշակի իրավիճակներում արդյունավետության տեսանկյունից խնդրահարույց լուծում: Կառավարությունը չի կարող դնել իր վստահության հարցը Ազգային ժողովում ռազմական դրության ժամանակ և, հետևաբար, այդ ժամանակ վարչապետին անվստահություն հայտնելու մասին խորհրդարանի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել: Այս իրավակարգավորումը ևս իր լուծումների արդյունավետությամբ կասկածանքների տեղիք է տալիս:

Պետական մարմիններին պաշտպանական լիազորությունների պատերազմական պայմաններին համարեցման Կառավարությանը վերաբերող սահմանադրական իրավակարգավորումներից են՝

ա) խաղաղ ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին (Սահմանադրության 155-րդ հոդ. 3-րդ և 4-րդ մասեր): Տրամաբանորեն ենթադրվում է, որ պատերազմական շրջանում գլխավոր շտաբի պետը չի ենթարկվում պաշտպանության նախարարին, բայց այդ դեպքում չի նախատեսված թե ու՞մ:

բ) պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է (Սահմանադրության 155-րդ հոդ. 4-րդ մաս): «Պաշտպանության մասին» 2017թ. նոյեմբերի 15-ի օրենքը 9 հոդվածի 5-րդ կետը այս կապակցությամբ սահմանում է, որ պատերազմ հայտարարվելու դեպքում վարչապետը ընդունում է պատերազմա-

կան ժամանակի քաղաքական և ռազմական բնույթի որոշումներ: Սակայն այս կարգավորումները նախ շատ ընդհանուր են, այնուհետև չեն նախատեսում, թե ով է զինված ուժերի հրամանատարը խաղաղության պայմաններում: «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ զինված ուժերի ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը, իսկ գլխավոր շտաբի պետը զինված ուժերի անմիջական հրամանատարն է, որը խաղաղ պայմաններում ենթակա է պաշտպանության նախարարին, իսկ պատերազմի դեպքում՝ Գերագույն հրամանատար համարվող վարչապետին¹⁴⁷:

գ) Պատերազմական գործողությունների ռազմաստրատեգիական կառավարման հարցում անորոշ է Անվտանգության խորհրդի դերը: «Պաշտպանության մասին» օրենքի 8 հոդվածում թվարկված են դրա միայն խաղաղ ժամանակի լիազորությունները:

Գործող խմբագրությամբ Սահմանադրության դրույթների վերլուծությունը ռազմական կառավարմանը բնորոշ պետական մարմինների վերափոխումների և լիազորությունների վերաբաշխման տեսանկյունից ցույց է տալիս, որ դրանք նախատեսված չեն և՛ Հանրապետության նախագահին, և՛ դատական իշխանությանը նվիրված իրավակարգավորումներում: Այդպիսի միակ իրավակարգավորումը Սահմանադրության 208-րդ հոդվածում նախատեսված ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե անցկացնելու արգելքն է:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ գործող խմբագրությամբ Սահմանադրությունն ու ռազմական օրենսդրությունը չեն նախատեսում պատերազմական պայմաններում կառավարման համակարգի վերակառուցումների ու լիազորությունների վերաբաշխման պաշտպանունակության սկզբունքից բխող լուծումներ: Այնինչ, խորհրդրանական կառավարման ձև ունեցող երկրների սահմանադրական կարգավորումների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ պատերազմական պայմաններում նախատեսված են պետական կառավարման կարգերի զանազան վերակառու-

¹⁴⁷ Տե՛ս «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի 16 հոդվածը: //ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348):

ցումներ, լիազորությունների վերաբաշխումներ, որոնք ունակ են պետական կառավարման ընդհանուր համակարգը դարձնել առավել պաշտպանունակ:

3.5.3. Խորհրդրանական հանրապետություններում պատերազմական իրավիճակում պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման ձևափոխումները կենտրոնացման ու արագացման ուղղություններով:

Պետության ցանկացած գործառույթի իրականցումը ենթադրում է իրավական ապահովում՝ իրավաստեղծագործության, իրավակիրառման, իրավապահպանության միջոցով: Իրավական ապահովման հիմնական միջոցներից է իրավաստեղծագործությունը, որ կատարվում է օրենսդրման և ենթաօրենսդրական իրավաստեղծագործության միջոցով: Ի տարբերություն ենթաօրենսդրական իրավաստեղծագործության, օրինաստեղծագործությունը դանդաղաշարժ և ձևականացված վարույթ է, որը սովորական պայմաններում կատարում է դրա որակի ապահովման երաշխիքի դեր: Պատերազմի ժամանակ օրենսդրման այդ դրական երաշխիքային նշանակությունը կարող է վերածվել խոչընդոտի, որովհետև ունակ է դանդաղեցնել գործընթացը, իսկ պատերազմելու սկզբունքներն են արագությունը, հանկարծակիությունը և այլն: Հետևաբար, պատերազմական վիճակում սահմանադրական կարգավորումը պետք է երաշխավորի արագացված օրենսդրումը: Այս իրավիճակը Հունաստանի Սահմանադրությունը որակում է «խորհրդարանի բացակայություն կամ դրա ժամանակին գումարման օբյեկտիվ անհնարինություն»¹⁴⁸: Մյուս խնդիրը կառավարման սովորական համակարգի կենտրոնացման հարցն է, որն անհրաժեշտ է պետական համակարգի պաշտպանունակության սկզբունքից բխող պահանջներին համապատասխան գործառութավորման համար¹⁴⁹:

Վերը նշված խնդիրները լուծելու համար արդի սահմանադրությունները սահմանել են իրավական ինստիտուտներ և ընթացակար-

¹⁴⁸ Ст'а Конституция Греции, 1975 г., հոդված 48, մաս 2:

¹⁴⁹ Ռազմական կառավարման սկզբունքները պահանջում են գործողությունների հանկարծակիություն, արագություն, վճռականություն, անընդհատություն. զինված ուժերի անշեղ և չընդհատվող ղեկավարում, ռազմավարական գործողությունների բազմակողմանի նախապատրաստում և այլն:

գեր, որոնք գործողության մեջ են դրվում միայն ռազմական դրության ժամանակ և նպատակամղված են օրենդրման կառուցակարգի արագացմանը, կառավարման օպտիմալացմանը և կենտրոնացմանը:

Այսպես, **Գերմանիայի և Ավստրիայի** Սահմանդրությունները, նախ պաշտպանական հարաբերությունները կարգավորում է բավականին մանրամասն, բացի այդ նախատեսում են պատերազմական պայմաններում կիրառվող զանազան ինստիտուցիոնալ վերափոխումներ: Եթե Գերմանիայի խորհրդարանի երկու պալատների համատեղ կոմիտեն արձանագրի, որ խորհրդարանի գործունեության և նիստերի գումարման համար կան անհաղթահարելի արգելքներ, ապա նա որպես միասնական մարմին կարող է փոխարինել երկու պալատներին: Համատեղ կոմիտեի անդամների 2/3 կազմում են Բունդեսթագի պատգամավորները՝ նշանակված խորհրդարանի խմբակցությունների համամասնության հիման վրա, 1/3-ը՝ Բունդեսթագի անդամները՝ մեկ ներկայացուցիչ ամեն մի հողից: Կառավարությունը պարտավոր է Համատեղ կոմիտեին տեղեկացնել «երկրի պաշտպանության վիճակին վերաբերող պլանների մասին»: Կոմիտեն ձայների բացարձակ, իսկ անհրաժեշտության դեպքում սովորական մեծամասնությամբ կարող է արձանագրել, որ անհաղթահարելի արգելքները խոչընդոտում են Բունդեսթագի գումարմանը կամ այն ընդունակ չէ որոշումներ կայացնելու, ինչի հետևանքով խորհրդարանին փոխարինում է Համատեղ կոմիտեն: Այն ձայների մեծամասնությամբ կարող է ընտրել կանցլեր կամ նրան անվստահություն քվե հայտնել, սակայն իրավունք չունի կատարել դաշնային տարածքների փոփոխություն, իշխանությունը հանձնել միջպետական ինստիտուտների, փոխել կամ վերացնել օրենքը, կասեցնել Սահմանադրության գործողությունը: Բացի թվարկվածները, Գերմանիայում նախատեսված է Բունդեսթագի արձակման արգելք, պատերազմի ժամանակ խորհրդարանի պալատների, նախագահի, սահմանադրական դատարանի անդամի, դաշնային կանցլերի լիազորությունների շարունակման ընթացակարգեր:

Հունգարիայի Սահմանադրությամբ զինված ուժերի օգտագործման բոլոր լիազորությունները կենտրոնացված են Պետական ժողովում, սակայն եթե հայտնվեն այդ լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ, ապա դրանք իրացնելու հնա-

րավորություն ունի Նախագահը, որի գլխավորած Պաշտպանության պետական խորհուրդն ունի հատուկ կարգավիճակ և բավականին լայն կամ գրեթե չսահմանափակված արտակարգ լիազորություններ: Պետական ժողովը կարող է իր լիազորությունները փոխանցել խորհրդին: Խորհուրդը իրավասու է՝ իրականացնել Հանրապետության նախագահի և կառավարության լիազորությունները, կասեցնել օրենքների կիրառումը, բացի Սահմանադրությունից, ընդունել օրենքներից շեղվող որոշումներ: Խորհրդի անդամներ են՝ Պետական ժողովի նախագահը, խորհրդարանում ներկայացված կուսակցությունների խմբակցությունների ղեկավարները, պրեմիեր-մինիստրը, մինիստրները, Հունգարական բանակի հրամանատարը և գլխավոր շտաբի պետը:

Իտալիայի և Շվեդիայի Սահմանադրություններով նախատեսված է իրավաստեղծագործության արագացման և կենտրոնացման պատվիրակված օրենսդրման ընթացակարգերը: Իտալիայում պատերազմի ժամանակ օրենքին համապատասխան ստեղծվում է Պաշտպանության գերագույն խորհուրդ, որը որպես զինված ուժերի հրամանատար գլխավորում է Հանրապետության նախագահը: **Շվեդիայում**, ամեն տարի ընտրվում է հատուկ մարմին՝ ռազմական 50 պատգամավորից կազմված պատվիրակություն, խորհրդարանի նախագահի գլխավորությամբ: Ըստ ստեղծված իրադրության այն որպես փոքր խորհրդարան փոխարինում է խորհրդարանին:

Խորհրդարանական այն հանրապետությունները, որոնց սահմանադրություններում չեն նախատեսված ռազմական դրության ժամանակ կիրառվող հատուկ ինստիտուտներ, ի տարբերություն ՀՀ-ի, բավականին մանրամասն ու հավասարակշռված կենտրոնացվածության սկզբունքով են կարգավորում պաշտպանության կառավարման հարաբերությունները: Լիտվայի Հանրապետության Սահմանադրությունն առանձին գլուխում այլ հարաբերությունների հետ միասին սահմանում է հայրենիքի պաշտպանության պարտականությունը և իրավունքը, Նախագահը որպես զինված ուժերի գլխավոր հրամանատար, ռազմական ու արտակարգ դրության ռեժիմների հիմունքները, Պաշտպանության պետական խորհրդի կազմը և կարգավիճակը: Միայն վերջինիս առկայությունը բավականին բարձր երաշխիք է ռազմական կառավարման սկզբունքների իրացման համար:

3.5.4. Պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման հատուկ մարմինները խորհրդարանական հանրապետություններում. համաշխարհային փորձի և ՀՀ սահմանադրական կարգավորումների համեմատական ուսումնասիրություն:

Պաշտպանության ոլորտի ռազմաստրատեգիական կառավարման հատուկ մարմիններից է **Անվտանգության խորհուրդը**, որը գլխավորում է վարչապետը¹⁵⁰: Անվտանգության խորհուրդը պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ իր իրավասության մեջ մտնող այլ հարցերով խորհրդատվական որոշումներ: Անվտանգության խորհրդի անդամներ են՝ վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետները, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ոստիկանության պետը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Ըստ էության սա փոքր կառավարության կազմ է իրենից ներկայացնում:

Արդեն իրականացված հետազոտությունները ցույց տվեցին, որ գործող Սահմանադրությամբ կատարված շատ ընդհանուր իրավակարգավորման հետևանքով համաշխարհային համատեքստում հիմնախնդիրային են անվտանգության խորհրդի կազմը, նրա լիազորությունների անորոշությունները, և՛ պաշտպանական, և՛ անվտանգային իրավասության զուգակցումը, ինչի արդյունքում ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսել պաշտպանական խորհրդի ստեղծումը: Անվտանգության խորհրդի խնդրահարույց կազմի պատճառով այն, ըստ էության, չի կարող հակակշռել վարչապետին, որովհետև դրանում գերակշռում են կառավարության անդամները կամ կառավարությանը կից հանրային-իրավական սուբյեկտները:

Գլխավոր շտաբը և նրա պետը բարձրագույն ռազմաստրատեգիական և օպերատիվ կառավարման հիմնական և հատուկ մարմինն է, որի կառուցվածքը և գործառույթները սահմանվում են օրեն-

¹⁵⁰ Անվտանգության խորհրդի կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում է 2018 թ. մարտի 1-ի «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով (տե՛ս ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդված 311, ՀՕ-145-ն):

քով¹⁵¹: Սահմանադրության 155 հոդ. 3-րդ մասի համաձայն գլխավոր շտաբի պետը զինված ուժերի ամենաբարձր պաշտոնատար անձն է, որին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ օրենքով սահմանված ժամկետով: «Պաշտպանության մասին» օրենքը սահմանում էր, որ այդ ժամկետը հինգը տարի է, առանց կոնկրետացնելու դրա նշանակությունը, այսինքն՝ դա անփոփոխելիության, թե պաշտոնավարման առավելագույն ժամկետ է: Այդ անորոշության հետևանքը եղավ այն, որ 2021 թ. Հանրապետության նախագահը դիմեց Սահմանադրական դատարան և վիճարկեց օրենքի այն դրույթը, որով սահմանված էր այդ ժամկետը:

Սահմանադրական դատարանին դիմողի գնահատմամբ Հանրապետության նախագահի՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման լիազորությունը բարարար չափով որոշակի, հստակ, հասանելի և կանխատեսելի չէ, քանզի չի ամրագրում հիշյալ պաշտոնատար անձին պաշտոնից ազատման կոնկրետ դեպքերը, իսկ Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասը, սահմանելով, որ գլխավոր շտաբի պետին վարչապետի առաջարկությամբ նշանակում է Հանրապետության նախագահը՝ «օրենքով սահմանված ժամկետով», չի նախատեսում պաշտոնավարման այդ ժամկետը չլրացած պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորություն:

Սահմանադրական դատարանը որդեգրեց պաշտպանության կազմակերպման ու կառավարման հիմքում, և՛ մարտավարական, և՛ բարձրագույն պետական կառավարման մակարդակում ընկած սկզբունքների հայեցակարգը և մի շարք այլ պատճառաբանություններ և եկավ եզրակացության, որ դիմողի կողմից բերված պատճառաբանությունը, որ Պաշտպանության մասին օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը հակասահմանադրական է և կիրառելի չէ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատման դեպքում՝ առարկայագուրկ է, իսկ սույն գործով վիճարկվող դրույթը չի հակասում Սահմանադրության 57-րդ հոդվածի 2-րդ մասին, 133-րդ հոդվածի 1-ին մասին և 155-րդ հոդվածի 3-րդ մասին: Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությամբ ամ-

¹⁵¹ Ст'ю Мигачев Ю.И., Тихомиров С.В., Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, с. 60:

րագրված «օրենքով սահմանված ժամկետը» պետք է հասկանալ որպես պաշտոնավարման օրենքով սահմանված առավելագույն ժամկետ, ինչը չի բացառում այդ ժամկետի լրանալուց ավելի վաղ գլխավոր շտաբի պետին պաշտոնից ազատելու իրավական հնարավորությունը¹⁵²:

Այսպիսով, սահմանադրական բարեփոխումների հրատապ խնդիր է վերը բարձարացված հիմնախնդիրների խորքային իմաստավորումը և համաշխարհային սահմանադրական կարգավորման փորձին հետևելով ընտրել և ամրագրել երկրի պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման արդյունավետ համակարգ, որը կապահովի ռազմաստրատեգիական, օպերատիվ և տակտիկական կառավարման սկզբունքներին համապատասխանող երկրի պաշտպանությունը, չի առաջացնի հակաժողովրդավարական ռեժիմի կամ տարատեսակ չարաշահումների սպառնալիքներ ու վտանգներ:

¹⁵² Տե՛ս «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 2 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1616 որոշումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1

1. Քաղաքական տեսության տեսանկյունից պառլամենտարիզմը ներկայացուցչական ժողովրդավարության ձև է, որը նույնացվում է ժողովրդավարական արժեքների հետ, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում, ինչպիսիք են՝ իրավական մշակույթի բարձր աստիճանն ունեցող քաղաքացիական հասարակությունը, իրավունքի գերակայության գաղափարի հաստատումը, օրենքի գերակայությունը, անհատի իրավունքների առաջնահերթությունը պետության հետ հարաբերություններում (պետական ինստիտուտների ձևավորման գործում որոշիչ է ժողովրդի կամքը), արժեքների համապատասխան սանդղակի ստեղծումը, որը կրացառի հանրային և անձնական շահերի հակասությունը պետական իշխանության իրականացման ժամանակ:

2. Պառլամենտարիզմը հիմնված է կառուցողական երկխոսության վրա, ինչպես նաև ընդհանուր ժողովրդավարական, համամարդկային արժեքների համակարգ է, որը նախատեսված է ապահովելու ժողովրդի ուղղակի մասնակցությունը պետական և հասարակական կյանքի կարևորագույն խնդիրների վերհանման և լուծման գործում: Այստեղ պառլամենտարիզմը հիմնականում դիտարկվում է որպես պետական կառավարման ձև, որի գոյությունն ու զարգացումը կապվում են հասարակության մեջ առկա այնպիսի ինստիտուցիոնալ բաղադրիչների հետ, ինչպիսիք են խորհրդարանը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, զսպումների և հակակշիռների համակարգը, կուսակցական համակարգը և այլն:

3. Պառլամենտարիզմի կայացումն ու զարգացումը հետխորհրդային տարածության երկրներում տեղի է ունենում ոչ թե կայուն, այլ փոխակերպվող քաղաքական գործընթացի պայմաններում, որին հատուկ է անկայունությունն ու անսպասելիությունը, իսկ երբեմն էլ ռազմական գործողությունների առկայությունը: Ավելին, քաղաքական գիտակցության ցածր մակարդակի պայմաններում կարճ ժամանակահատվածում ժողովրդավարանալու ձգտումը հաճախ հակառակ ազդեցության է հանգեցրել: Պառլամենտարիզմը զարգանում է այնտեղ, որտեղ կայուն ժողովրդավարական, իրավական, մշակութային ավանդույթներ և սոցիալ-տնտեսական ու քաղաքական նպաստավոր պայմաններ կան: Հետևաբար՝ պատահական չէ, որ

թուլացած խորհրդային կառուցակարգերի և երբեմն սկզբունքորեն դրանց հակասող արևմտյան մոդելների միախառնումից ձևավորվել են հիբրիդային համակարգեր:

4. Պառլամենտարիզմը ծագում և գոյություն է ունենում այն ժամանակ, երբ խորհրդարանն օժտվում է օրինաստեղծ լիազորություններով, կառավարության ձևավորման և վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մեխանիզմներով:

5. Պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող խնդիրների լուծումը հնարավոր է միայն իշխանության, ընդդիմության և քաղաքացիական հասարակության համատեղ աշխատանքի ու ջանքերի շնորհիվ: Նշված կողմերը պետք է պատրաստ լինեն համագործակցել միմյանց հետ և գիտակցել հասարակության զարգացման գործում ունեցած պատասխանատվությունը: Բացի դրանից՝ անհրաժեշտ է զսպումների և հակակշիռների այնպիսի համակարգ, որի պայմաններում իշխանության ճյուղերից և ոչ մեկը չի կարողանա իր կամքը թելադրել մյուսին: Այս դեպքում անցում կկատարվի որակապես նոր քաղաքական համակարգի, քաղաքական վարքի և մշակույթի:

6. Ժամանակակից հայկական պառլամենտարիզմի էվոլյուցիայի վերլուծության արդյունքում վեր ենք հանել հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խոչընդոտող որոշ գործոններ, ինչպես նաև դրական միտումները: Առաջինի թվում կարելի է նշել ուժեղ կենտրոնացված իշխանության ձգտումը, քաղաքական մշակույթի և գիտակցության ոչ բարձր մակարդակը, հայրիշխանական մշակույթի արմատավորվածությունը: Հետխորհրդային շրջանում հայկական պառլամենտարիզմի զարգացմանը խանգարող գործոններից են եղել նաև խորհրդարանական ուժեղ ընդդիմության բացակայությունը, ձևական կոալիցիաների ձևավորումը, ընդդիմադիր կուսակցությունների միջև կոնսենսուսի բացակայությունը, բնակչության վստահության ոչ բարձր մակարդակը ներկայացուցչական իշխանության նկատմամբ: Հայկական պառլամենտարիզմի զարգացման վրա ազդել է խորհրդարանականների՝ իրենց աշխատանքին ոչ որպես մասնագիտության վերաբերվելը: Չնայած 2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում առաջին հայաքից նկատելի էր, որ ԱԺ-ի առանձին պատգամավորներ սովորել են համագործակցել զանգվածային լրատվության միջոցների հետ, այնուամենայնիվ վերջին տարիներին արձանագրվել է իշխող ուժի պատգամավորների կողմից լրագրողների նկատմամբ ճնշումների դեպքեր: Մեկ այլ խնդիր է

պառլամենտարիզմին հակասող գործադիր իշխանության ղեկավարի միանձնյա որոշումների կայացման պրակտիկան, որի ընթացքում շրջանցվում են սահմանադրորեն խորհրդարանին վերապահված լիազորությունները:

7. Դրական գործոնների թվում կարելի է նշել խորհրդարանականների երիտասարդացման, միջին դասի ներկայացուցիչների ավելացման միտում՝ բացառելով փորձառության պակասն ու պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակը: Միևնույն ժամանակ պառլամենտարիզմի զարգացումը ՀՀ-ում որոշակիորեն եվրոպական միտումներ ունի:

8. Հասարակության քաղաքական համակարգում պառլամենտարիզմի գոյության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ խորհրդարանը՝ օրենսդիր և ներկայացուցչական մարմինը, ձևավորված է քաղաքական կուսակցությունների միջև մրցակցային պայքարի հիման վրա, ուստի շատ կարևոր է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանն ուղղված գործողությունների իրականացումը:

9. Խորհրդարանի լեգիտիմության բարձրացմանը կարող է ծառայել երկրում հասուն քաղաքացիական հասարակության առկայությունը: Քաղաքացիների քաղաքական մասնակցությունը, վերջիններիս ընտրական ակտիվությունը խթանելու համար անհրաժեշտ է աշխատանք տանել նրանց քաղաքական գիտակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

10. Ինչպես արդեն նշվել է, 2015 թ. ՀՀ սահմանադրական փոփոխությունների կարևորագույն ուղղություններից է անցումը կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականի: ՀՀ-ում մասնագետներն առավելություն են տալիս խորհրդարանական կառավարման ձևին՝ համարելով այն պետական իշխանության ավելի կատարյալ տիպ, քան նախագահականը և կիսանախագահականը: Խորհրդարանական կառավարմանն անցնելու անհրաժեշտություններից է համարվել խորհրդարանի քաղաքական դերի բարձրացումը, կուսակցությունների կողմից իրենց բուն գործունեության իրականացման, կառավարության կայունության ապահովումը: Այս դեպքում խորհրդարանական կառավարման համակարգում մեծանում է կուսակցությունների դերը, և փոքրանում է այն վտանգը, որը կա կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգում, այսինքն՝ անձնավորված կամ գերանձնավորված քաղաքականության չեզոքացում: Խորհրդարանական կառավարման համակար-

գին անցում կատարելու դեպքում առավելություն է համարվում նաև կառավարության կայունության ապահովումը: Մասնավորապես նշվում է, որ եթե զարգացած երկրներն իրենց երկարատև խորհրդարանական ավանդույթներով և ձևավորված կուսակցական համակարգով իրենց կարող են հաճախակի թույլ տալ կառավարությունների փոփոխություն, ապա Հայաստանի դեպքում դա կարող է խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Փորձելով խորհրդարանական կառավարման ձևով ստեղծել կայուն ժողովրդավարական համակարգ՝ միևնույն ժամանակ չի կարելի ընկնել մեկ այլ ծայրահեղության՝ այն է անարխիայի մեջ: Կառավարության կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի փորձը, կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք հաջողության են հասել միջազգային պրակտիկայում, որոնք ամրագրված են սահմանադրության մեջ՝ կոնստրուկտիվ անվտանգության քվեն, վարչապետի ընդգծված ղեկավար դերը կառավարության մեջ, խորհրդարանի արձակման բարդեցումը:

11. Պյուրալիստական ժողովրդավարության պայմաններում ժամանակակից խորհրդարանի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ուժեղ և հեղինակավոր կուսակցություններով: ՀՀ կուսակցական համակարգն արդիականացման կարիք ունի:

12. ՀՀ-ում զարգացած պառլամենտարիզմի մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ խորհրդարանը՝ օրենսդիր և ներկայացուցչական մարմինը, ձևավորված կլինի քաղաքական կուսակցությունների միջև մրցակցային պայքարի հիման վրա, իշխանության ճյուղերը հստակ տարանջատված կլինեն, պյուրալիզմի պայմաններում կերպափոխվել են անհատի իրավունքներն ու ազատությունները:

13. Այսօր առավել քան արդիական է անվտանգության ոլորտի նկատմամբ օբյեկտիվ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության դերը, որը դառնում է ավելի ու ավելի ազդեցիկ: Ընդ որում, քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմները բավականին զարգացած են, և այդ մեխանիզմների արդյունավետությունն առայժմ տեսանելի է: Չնայած դրան դեռևս արդիական է պետական կառավարման համակարգի՝ գործունեության թափանցիկության բարձրացումը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության գործուն մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև այդ կազմակերպությունների կարողությունների զարգացումն ու քաղաքացիական հա-

սարակության, ինչպես նաև անվտանգության ոլորտի ներկայացուցիչների իրավագիտակցության բարձրացումը:

14. Ամփոփելով կարելի է արձանագրել, որ քաղաքացիական վերահսկողությունը լայն հասկացություն է և ներառում է անվտանգության ոլորտի նկատմամբ, մի կողմից, ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների, այն է՝ խորհրդարանի ու նրանց նշանակված պաշտոնատար անձանց (այսպես կոչված «պետական-քաղաքական վերահսկողություն»), մյուս կողմից՝ հասարակական կառույցների՝ միավորումների, իրավապաշտպան կազմակերպությունների, լրատվամիջոցների, անհատ քաղաքացիների վերահսկողությունը: Դրանք կոչվում են անվտանգության ոլորտի նկատմամբ, համապատասխանաբար, քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողություն և քաղաքացիական հասարակական վերահսկողություն:

15. Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օգնությամբ է քաղաքացիական հասարակությունն իր ներգրավվածությունն ապահովում անվտանգության ոլորտի նկատմամբ: Ոլորտի առանձնահատկությամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր երկրում այդ հարաբերությունը ձևավորվում է՝ հաշվի առնելով տվյալ երկրի պատմական փորձը, ժողովրդավարության ավանդույթները, քաղաքական համակարգը, քաղաքացիական հասարակության զարգացվածության աստիճանը և այլ գործոններ:

Գլուխ 2

1. Երկու այնպիսի հասարակական-քաղաքական ինստիտուտների զարգացումը, ինչպիսիք են ազատ մեդիան և պառլամենտարիզմի մարմինները, անհրաժեշտ և որոշիչ չափանիշ է ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման համար: Իսկ պառլամենտարիզմի բուն ինստիտուտի զարգացումն անքակտելիորեն կապված է մեդիադաշտի կատարելագործման, մամուլի գործունեության առավել իմաստավորված և չբարդացված պայմանների ապահովման, ինչպես նաև խոսքի ազատության հիմնարար սկզբունքների ապահովման հետ:

2. Լրատվամիջոցների՝ որպես «Չորրորդ իշխանության» ցանկացած սահմանափակում, XXI-րդ դարում ձևավորվող տեղեկատվական/թվային հասարակության խոսքի և կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակումները պետք է իրականացվեն բացառապես օրենքի շրջանակներում: Միևնույն ժամանակ,

ժողովրդավարական պետություններում խոսքի ազատության սահմանափակումները, հատկապես պառլամենտարիզմի զարգացման պայմաններում, կարող են թելադրվել բացառապես օրինական նպատակներով, ազգային և պետական անվտանգության պահանջներով, լուրջ հասարակական պահանջներով և սոցիալական անհրաժեշտությամբ: Բայց ամեն դեպքում, նման գրաքննության նորմերը, խոսքի և կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումները պետք է նվազագույնի հասցվեն, քանի որ մեդիայի նկատմամբ արտակարգ միջոցների ձեռնարկումն ի վերջո կհանգեցնի հետընթացի, կդանդաղեցնի ժողովրդավարական պետության զարգացումը ընդհանուր առմամբ և պառլամենտարիզմի ավանդույթները մասնավորապես:

3. Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման դարաշրջանում առկա է ժամանակակից մեդիայի (ինչպես ավանդական ՉԼՄ-ների, այնպես էլ ընդհանուր առմամբ բլոգոսֆերայի՝ մեսենջերների, սոցցանցերի) աճող դերը ամբողջ աշխարհում ժողովրդավարության և պառլամենտարիզմի ավանդույթների կայացման գործում: Հետազոտություններն ապացուցում են, որ մեդիան կարող է լուրջ ազդեցություն ունենալ պետության որոշումների կայացման գործընթացների վրա՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով: Որպես առանձնահատուկ խնդիր այսօր հանդես է գալիս պոպուլիստական երևույթների աճը՝ մեդիայի ազդեցության ուժեղացման ֆոնին:

4. Առաջատար փորձագետները համակարծիք են այն հարցում, որ գործադիր իշխանության նկատմամբ մեդիայի վերահսկողական գործառույթի իրականացումը կարևոր է, ընդ որում, նրանք դա համարում են ոչ միայն պառլամենտարիզմի զարգացման, այլև, ընդհանուր առմամբ, խորհրդարանի գոյության ժողովրդավարական հիմքերի պահպանման գլխավոր պայմաններից մեկը: ՉԼՄ-ների այս գործառույթի ուժեղացումն ուղղակիորեն կապված է նաև խորհրդարանի կողմից իր վերահսկողական գործունեության իրականացման հետ: Այս ջանքերի միավորումը թույլ կտա կանխել խոսքի և մամուլի ազատության սահմանափակման փորձերը, շտկել պաշտոնյաների և ընդհանրապես պետական կառույցների վարքագծի մոդելը: Այս գործառույթի զարգացման գործում շատ մասնագետներ կարևորում են հետաքննական լրագրության դերը:

5. Խորհրդարան-մեդիա-հասարակություն համագործակցության հարցում առկա է ՉԼՄ-ների հետ աշխատանքի ակտիվացման, հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմի հաստատման և ռազմավարական նշանակության տեղեկատվական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև հանրային հաղորդակցության գործընթացներում թվային գործիքների մեծացում, մուլտիմեդիա հարթակների գործարկում: Անհրաժեշտ է նաև պառլամենտարիզմի, տեղեկատվական անվտանգության բնագավառում հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների զարգացումը; պառլամենտարիզմի, տեղեկատվական քաղաքականության, տեղեկատվական անվտանգության ոլորտում կադրերի պատրաստման համակարգի զարգացումը և կատարելագործումը; լրագրողների համար դասընթացների անցկացումը; տեղեկատվական և մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված պարտադիր ծրագրերի տարածումը և ներդրումը կրթական համակարգում:

6. Պառլամենտարիզմի զարգացման համար կարևոր է նաև մեդիայի ֆինանսական անկախությունը, որը բացառապես պարտադիր պայման է օրենսդիր մարմինների գործունեության օբյեկտիվ լուսաբանման համար: Վերահսկողական գործառնությունները կարող են արդյունավետ իրականացվել միայն այն դեպքում, երբ մեդիան ունենա դիվերսիֆիկացված ֆինանսական միջոցներ և կախված չլինի այս կամ այն քաղաքական իրողություններից:

7. Այժմ առաջին հերթին անհրաժեշտ է աշխատել քաղաքական նոր մշակույթի ձևավորման վրա, մասնավորապես՝ խորհրդարանական, որի շրջանակներում պոպուլիստական բովանդակությունը նվազագույնի կհասցվի: Մեդիայի ներկայացուցիչներին անհրաժեշտ է ճնշել պոպուլիստական և կեղծ լուրերը, ինչպես նաև արհեստական օրակարգը՝ շատ ավելի լայն իրական փաստարկների և մուլտիպլիկացիոն տարածման էֆեկտի ապահովման միջոցով: Իսկ խորհրդարանն իր հերթին պետք է շահագրգռված լինի հանրության աչքում կառուցողական իմիջ ձևավորելու մեջ:

8. Լրատվամիջոցների ներկայացուցիչները, բլոգերները, թվային բովանդակության հեղինակները, որոնք ուղղված են խորհրդարանի և այլ պետական կառույցների նկատմամբ լրատվամիջոցների վերահսկողության ուժեղացմանը, պետք է հստակ իմանան օրենսդրական նորմերը (ազգային և միջազգային), հասկանան մամուլի ինստիտուտի գործունեության համար առանցքային նշանակություն ունե-

ցող իրավական պրակտիկան, դատարանների որոշումները; ապահովեն ոչ միայն մասնագիտական, այլև քաղաքական պատրաստվածության բարձր մակարդակ:

9. Լրագրողական պրոֆեսիոնալ հանրության ձևավորումը և խորհրդարանական լրագրության ուղղության զարգացումը կարող են արդյունավետ լուծում դառնալ խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրներում առկա բազմաթիվ խնդիրների համար: Ընդ որում, արդիական է հանդիսանում մեդիայի և խորհրդարանի կապերի ապահովումն ու ընդլայնումը, լրագրության պրոֆիլային ուղղությունների զարգացումը, որոնք թույլ կտան իրականացնել ՉԼՄ-ների առանցքային գործառնությունները և երաշխավորել պառլամենտարիզմի ավանդույթների կայացումը, ժողովրդավարական հասարակության առաջընթացը: Այդ գործընթացների շահագրգիռ կողմ են հանդես գալիս ոչ միայն մեդիա- և բլոգոսֆերայի ներկայացուցիչները, հասարակությունն ընդհանուր առմամբ, այլ առաջին հերթին պետությունը, մասնավորապես՝ գործադիր և օրենսդիր իշխանությունը, քանի որ հենց այդ օղակների ներդաշնակ միասնության մեջ է հնարավոր գտնել երկրում էվոլյուցիոն փոփոխությունների, կայունության ապահովման և սոցիալ-քաղաքական ցնցումների կանխարգելման բանալին:

Գլուխ 3.

1. Երկրի պաշտպանության և անվտանգության գլխավոր երաշխիքը կառավարման որևէ ձևը չէ: Կառավարման ձևը կարող է կատարել ընդամենը միջոցի, նպաստող գործոնի դեր: Բայց այն որոշակի պայմաններում կարող է վերածվել վտանգի, հետևաբար դրան չի կարելի մոտենալ կամ վերաբերվել դոգմատիկորեն, համարել անձեռնմխելի, ուստի և անփոփոխելի: Գլխավորը, անկախ կառավարման ձևից, պետական կառավարման համակարգի, կառուցակարգի (ապարատի) այնպիսի կազմակերպումն է, որ այն ունակ լինի պաշտպանության և անվտանգության ապահովման: Պետության կառուցակարգի այդպիսի հատկությունը հնարավոր է ձևավորել, եթե պետական կառուցակարգի (ապարատի) կազմակերպման և գործունեության հիմքում դրվի պաշտպանունակության սկզբունքը: Այդ հրամայական անհրաժեշտությունը հաստատում է ինչպես Առաջին հանրապետությունում երկրի պաշտպանության իրավական ապա-

հովման փորձը, այնպես էլ Հայաստանի երրորդ հանրապետության բոլոր պատերազմների փորձը:

2. Պետական մեխանիզմի պաշտպանունակության սկզբունքը, որպես նոր տեսաիրավական կատեգորիա, ենթադրում է ոչ միայն անվտանգություն կամ պետության պաշտպանության գործառնության իրականացում, այլ պետական մեխանիզմի այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ինքնապահպանումը, ինքնավերարտադրումը և ինքնավերականգնումը: Այդ սկզբունքից բխող խնդիրն է արտակարգ և ռազմական իրավիճակներում գործելու կարողությունը ներառել նորմալ պայմանների համար ստեղծված պետական մարմինների և իրավական ինստիտուտների էության մեջ: Պետական մեխանիզմի այս կարողությունը «բնածին» և ավտոմատ չէ, այլ պետք է ներդրվի հատուկ պետական ինստիտուտների ստեղծման միջոցով, որոնց ձևավորումը պետությունն ունակ կդարձնի իր կառավարման գործառնություններն իրականացնել արտակարգ և ռազմական իրավիճակներում:

Պաշտպանունակության սկզբունքն իր բնույթով և առաջադրված նորմատիվ բովանդակությամբ (պահանջներով) չի հակասում և չի կարող հակասել պետական ապարատի կազմակերպման ու գործունեության արդի սկզբունքներից և ոչ մեկին, որովհետև բոլոր պահանջների կենսագործման ձևը սահմանադրական ուղին է՝ արդի հասարակության սահմանադրական կարգի այլ հիմունքներին համահունչ՝ իշխանությունների բաժանման հիմնարար սկզբունքի գլխավոր պահանջների անպայման պահպանման պայմանով:

3. ՀՀ անկախացումից հետո՝ իրավական քաղաքականության վերլուծությունը հաստատում է, որ ո՛չ սահմանադրական, ոչ օրենսդրական, ո՛չ ենթօրենսդրական մակարդակներում չկատարվեց ազգային անվտանգության հիմքերով պետաիրավական համակարգի նորմատիվ կարգավորում: Կառավարման նախագահական, իսկ այնուհետև կիսանախագահական ձևն ապահովեց կառավարման ընթացիկ խնդիրների հարաբերականորեն արագ ու օպերատիվ լուծումները, սակայն չկարողացավ վերածվել անվտանգության հայեցակարգի վրա կառուցված, օրենքներով կարգավորված ռազմավարական պլանավորման և կառավարման համակարգի: Դրությունը ամրատապես չփոխվեց նաև 2015 թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ինչը նշանակում է, որ ապագա սահմանադրական բարեփոխումների առջև կանգնած կարևորագույն խնդիրներից են երկրի

անվտանգության ռազմավարական պլանավորման, դրա իրավական ամրագրման ու կառավարման սահմանադրական հիմքերի մշակումն ու ընդունումը:

4. Արված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ երկրի պաշտպանության հարաբերությունների սահմանադրական կարգավորման հարցում խորհրդարանական կառավարման երկրները որդեգրել են նախագահակենտրոն կամ խառը՝ խորհրդարանախագահական տեսականը: ՀՀ-ում կառավարման այդ համակարգը կարելի է բնութագրել կառավարակենտրոն, որը առավելապես նաև վարչապետակենտրոն է: Երկրներից միայն Գերմանիայում է, որ պատերազմի ժամանակ հրամանատար է դառնում կանցլերը, սակայն այստեղ պաշտպանական ոլորտի կառավարմանը բավականին լայն մասնակցություն ունի խորհրդարանը, նախատեսված են ռազմական կառավարման մի քանի կարգեր, որոնց կիրառման դեպքում վերակառուցվում են օրենսդիր մարմինը, և՛ ոլորտում գործող գործադիր մարմինները:

5. ՀՀ գործող խմբագրությամբ Սահմանադրությունն ու ռազմական օրենսդրությունը չեն նախատեսում պատերազմական պայմաններում կառավարման համակարգի վերակառուցումների ու լիազորությունների վերաբաշխման պաշտպանունակության սկզբունքից բխող լուծումներ: Այնինչ, խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների սահմանադրական կարգավորումների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ պատերազմական պայմաններում նախատեսված են պետական կառավարման կարգերի զանազան վերակառուցումներ, լիազորությունների վերաբաշխումներ, որոնք ունակ են պետական կառավարման ընդհանուր համակարգը դարձնել առավել պաշտպանունակ:

6. Սահմանադրական բարեփոխումների հրատապ խնդիր է վերը բարձարացված հիմնախնդիրների խորքային իմաստավորումը և համաշխարհային սահմանադրական կարգավորման փորձին հետևելով ընտրել և ամրագրել երկրի պաշտպանության ռազմաստրատեգիական կառավարման արդյունավետ համակարգ, որը կապահովի ռազմաստրատեգիական, օպերատիվ և տակտիկական կառավարման սկզբունքներին համապատասխանող երկրի պաշտպանությունը, չի առաջացնի հակաժողովրդավարական ռեժիմի կամ տարատեսակ չարաշահումների սպառնալիքներ ու վտանգներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿ

1. Գևորգյան Ա., Պետությունն ազգային անվտանգության համակարգային կառուցվածքում (ազգային առանձնահատկությունների տեսաիրավական վերլուծություն), ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2019

2. Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Եր., 1997

3. Հարությունյան Հ., Պետության կառավարման ձևի արդի հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում: ԺԲ.00.01 մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2018

4. Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-1, Դասախոսություններ, Եր., 2010:

5. Վաղարշյան Ա., «Հայրենիքի պաշտպանության խնդիրը և պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքների համակարգի վերաիմաստավորման անհրաժեշտությունը», ԼՂՀ դատական իշխանություն, ԼՂՀ դատավորներ ՀԿ, Ստեփանակերտ, 2012, թիվ 1/5/

6. Վաղարշյան Ա., «Պետության կառավարման ձևը և նրա պաշտպանության ու անվտանգության պրոբլեմը», Հայկական բանակ, Եր., 2016, թիվ 2(88)

7. Վաղարշյան Ա., Բարսեղյան Լ., «Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. Նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, թիվ 1-2(95-96). 2018

8. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016

9. Վաղարշյան Ա.Գ. Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում, Հայկական բանակ, Երևան, թիվ 2-3 (56-57), 2008

10. Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ.,- ԵՊՀ, 2012

11. Ազատյան Խ., «Պառլամենտարիզմ» հասկացության ըմբռնման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի: Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, Երևան, 2018

12. Ազատյան Խ., Պառլամենտարիզմի առանձնահատկություններն ու միտումները փոխակերպվող հասարակություններում, Ատենախոսություն, Երևանի պետական համալսարան, Երևան, 2022թ.

13. Ազատյան Խ., Պառլամենտարիզմի տեսահայեցակարգային հիմքերի ձևավորումն ու զարգացումը, Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 6(11)/2020

14. «Ազատություն» TV-ի լրատվական կենտրոն, 04-ը փետրվարի, 2022թ., <https://www.youtube.com/watch?v=onBt1SnP7GU>

15. Ավետիսյան Ա. «Ժողովրդավարությունն ու Չինված ուժերի քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողությունը», Երևան, 2013

16. Հակոբյան Հ., Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007,

17. Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն, ուս. ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2006,

18. Սարգսյան Ա., Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում, Ե., 2019,

19. Հարությունյան Ա, Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ատենախոսություն, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2016, https://etd.nla.am/4403/1/Atenaxosutyun_Alexander_Harutyunyan.pdf 15.11.2023

20. Կետյան Հ, Պետական կառավարման ձևի ընտրության (փոփոխության) հիմնախնդիրը անցումային փուլում գտնվող պետություններում, https://www.old.yasu.am/files/04H_Kesoyan-1593417144-.pdf, 07.11.2023

21. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների նախագիծ, հոդ 109 կետ 4

22. Ռ՛րն Է «ՀԱՅԱՔՎԵ» նախաձեռնության Էությունը, «Հրապարակ օրաթերթ» <https://hraparak.am/post/6dee043123d3b4ae4f667df832e18a6b>, հասանելի 10.11.2023

23. «Քաղաքացիական հասարակությունը և համագործակցությունը պետական կառույցների հետ» խորհրդատվական փաստաթուղթ, ԵՄ խորհրդատվական խումբ Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2012,

24. Քոչարյան Տ. «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումն ազգային անվտանգության համատեքստում», ԵԴՀ, Երևան, 2012,

25. «2013թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին», Տարեկան զեկույց, Երևան, 2014, էջ 358, http://www.parliament.am/draft_docs5/481.pdf

26. Մախմուդյան Ռ. «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Չինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում», «Հայկական Բանակ», թիվ 2 (64), Երևան, 2010,

27. Քոչարյան Տ. «Ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտները ՀՀ զինված ուժերում», «Լրաբեր հասարակական գիտությունների» քառամյա հանդես, Երևան, 2013, էջ 100

28. Աթանեսյան Ա. «Բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում», Երևան, 2013, էջ 277

29. Մարգարյան Տ., Հակոբյան Ա. «ԲՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ», Երևան, 2015,

30. Հարությունյան Գ., Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական

31. ՀՀ իրավական անվտանգության հայեցակարգի նախագիծ /տեղադրված 2017թ.-ին/, <https://www.e-draft.am/projects/259/about>, հասանելի 15.10.2023

32. Горылев А. И., Правовая природа современного парламентаризма, "Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского". Выпуск 1 (5): 2002

33. Сэмюэль. П. Хантингтон "Вооруженные силы и демократия: реформирование военно-гражданских отношений", "Русский журнал", 29/04/1999, http://old.russ.ru/ist_sovr/99-04-29/hantin.htm

34. Гранкин И. В., Парламент России, https://www.studmed.ru/view/grankin-iv-parlament-rossii_34751dc8bad.html

35. Ревина С., Суркова О., Виленский Н., Парламентаризм в России: проблемы истории, современности, перспектив развития, Вестник Волжского университета имени В.Н. Татищева № 1, том 2, 2017

36. Айзенштат М., Западноевропейский парламентаризм XVIII-XIX вв.: этапы становления и развития, М., 2011
37. Штокмар В., История Англии в Средние века, СПб., 2000
38. Е.Л. Сысолятина, современный парламентаризм: институционально-правовая парадигма. <https://cyberleninka.ru/article/n/sovremennyy-parlamentarizm-institutsionalno-pravovaya-paradigma/viewer/>
39. Локк Дж. Два трактата о правлении, Электронная библиотека Гражданское общество в России, https://www.civisbook.ru/files/File/Lokk_Traktaty_2.pdf
40. Монтескье Ш. О духе законов, Электронная библиотека Гражданское общество в России, https://www.civisbook.ru/files/File/Monteskye_O%20dukhe.pdf
41. Хубнер Е., Парламентаризм и представительная система, «Полис», 1992, №3,
42. Леше П., Опыт парламентаризма в Германии, "Роль парламента в демократическом государстве", материалы науч.-практ. конф. Барнаул, 1999,
43. Локк Дж. Два трактата о правлении, Электронная библиотека Гражданское общество в России, https://www.civisbook.ru/files/File/Lokk_Traktaty_2.pdf
44. Монтескье Ш. О духе законов, Электронная библиотека Гражданское общество в России, https://www.civisbook.ru/files/File/Monteskye_O%20dukhe.pdf
45. Современный парламент: теория, мировой опыт, российская практика / под общ. ред. О.Н. Булакова, М.: Эксмо, 2005.
46. Дайси А. Основы государственного права Англии. М., 1905
47. Романов Р. М. Парламентаризм: теория, история и современность. М., 2002,
48. Избирательная система в России: История и современность, <https://www.prilib.ru/collections/467235>, 24.05.2020:
49. Геннадиевна К., Роль Президента Украины в политических процессах, file:///C:/Users/Novo/Downloads/32-31-1-PB.pdf
50. 19 лет скитаний Конституции, https://www.bbc.com/ukrainian/ukraine_in_russian/2015/06/150628_ru_s_constitution_ukraine_history
51. Абашин С., Культурные процессы и транскультурные влияния в современной Центральной Азии,

https://www.opensocietyfoundations.org/uploads/9b2d81a4-074e-4ef9-a086-31b972bc79bc/russian_20090515_0.pdf

52. Государственность и безопасность: Грузия после "революции роз", Редакторы Карл Кейзен, Джон Стейнбрюнер и Мартин Б. Мейлин, https://carnegieendowment.org/files/9601statehood_russian.pdf

53. Доклад «О роли оппозиции в демократическом парламенте», [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdf=C-DL-AD\(2010\)025-rus](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdf=C-DL-AD(2010)025-rus)

54. Костаки Г., Мишин С., Парламентаризм в Республике Молдова: условия и особенности становления, https://ibn.idsi.md/sites/default/files/imag_file/Parlamentarizm%20v%20RM_uslovia%20i%20osobennosti%20stanovlenia.pdf, 14.11.2023

55. Чотаев З. Д., Парламентская форма правления в Кыргызстане: проблемы и перспективы, Баку, 2012,

56. Шайо А. Самоограничение власти: краткий курс конституционализма. М., 2001,

57. Сунгуров А. “Модели взаимодействия структур гражданского общества и органов власти: российский опыт”, В сб. Модернизация экономики и глобализации/ Отв.ред. Е.Г.Ясин. В 3-х кн. Книга 3. - М., Изд.дом ГУ-ВШЭ, 2009,

58. Гацко М. “Гражданский контроль над вооруженными силами России”, Обозреватель. 1-2007 http://observer.materik.ru/observer/N1_2007/014_021.pdf

59. Трумпель К. Б. “Уполномоченный Бундестага ФРГ по обороне как пример деятельности военного омбудсмена”, Правоведение, № 4, 1998, <http://www.law.edu.ru/article/article.asp?articleID=147043>

60. «Энциклопедический юридический словарь», изд. 2, Москва, 1998,

61. Шабуров А.С. "Правовая безопасность в системе национальной безопасности." Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Право 15, NO. 3, 2015,

62. Галузин, А.Ф. "Правовая безопасность как самостоятельный вид безопасности." Право и политика 2, 2008, <http://www.center-bereg.ru/m2964.html>

63. Корконосенко С.Г. Основы журналистики. Москва, 2006.

64. Корконосенко С.Г. Журналистика в системе демократии:

структурно-функциональные связи // Социально-политическое функционирование журналистики / Под ред. В.А. Сидорова. СПб., 2005.

65. Т.В. Науменко. «Четвертая власть» как социологическая категория. ИНТЕЛРОС, №2, 2007. http://www.intelros.ru/2007/07/06/print:page,1.tv_naumenko_chetvertaja_vlast_kak_sociologicheskaja_kategorija.html

66. Дэннис Э., Мэррил Д. Беседы о масс-медиа. М., 1997.

67. Хлопков К.А. Значение средств массовой коммуникации в процессе манипуляции массовым сознанием. // Вестник Красноярского государственного педагогического университета им. В. П. Астафьева, 2009.

68. М.В. Алесян, М.Р. Тадевосян. Современный медиатекст: от информационных потоков к созданию контента. Учебно-методическое пособие. Ереван, 2023.

69. Прохоров Е. П. Введение в теорию журналистики, М., 1995.

70. Деннис Э. Беседы о масс-медиа. М.: Вагриус, 1997.

71. Всеобщая декларация прав человека (10 декабря 1948) (рус.). // <https://www.un.org/ru/about-us/universal-declaration-of-human-rights>

72. Конвенция о защите прав человека и основных свобод (ETS N 005) (рус., англ.). Конвенция от 04 ноября 1950 года №005. Редакция, действующая с 1 февраля 2022 года. Действие настоящего документа прекращено в отношении Российской Федерации с 16 марта 2022 года - Федеральный закон от 28 февраля 2023 года N 43-ФЗ. // <https://docs.cntd.ru/document/1000003045>

73. Международный пакт о гражданских и политических правах. Принят резолюцией 2200 А (XXI) Генеральной Ассамблеи от 16 декабря 1966 года. // https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pactpol.shtml

74. Джон Мильтон. Ареопагитика. Речь о свободе печати от цензуры, обращенная к парламенту Англии (1644). // Современные проблемы. Выпуск № 1. Москва — Новосибирск, 1997.

75. Левченко И. Е. Проблема цензуры в истории зарубежной общественно-политической мысли // Социально-политический журнал. М., 1996. Вып. 6.

76. Экумаев А.Б. Свобода слова в решениях Европейского суда по правам человека. Вестник Пермского университета, 2011. Юридические науки Выпуск 3(13).

77. Реестр иностранных средств массовой информации,

выполняющих функции иностранного агента, можно посмотреть на сайте Министерства юстиции Российской Федерации // minjust.gov.ru

78. Прохоров Е.П. Журналистика и демократия: Учебное пособие / Е.П. Прохоров. – 2-е изд., перераб. и доп. – М.: Аспект Пресс, 2004.

79. Ковалева М.М. Журналистика как социально-политический институт // Журналистика и политика. Сборник статей. / Екатеринбург, 2004.

80. Вершинин М.С. Политическая коммуникация в информационном обществе. СПб., 2001.

81. Засурский И.И. Реконструкция России. Масс-медиа и политика в 90-е годы. М., 2001.

82. Кин Д. Демократия и гражданское общество / Д. Кин. – М. : Прогресс – Традиция, 2001

83. А. А. Керимов. Современный парламентаризм: особенности и проблемы развития. // Известия Иркутского государственного университета. Серия «Политология. Религиоведение». 2015. Т. 11.

84. Тимофеева Л.Н. Парламентская журналистика как вид политической журналистики // Журналистика в 2005 году: трансформация моделей СМИ в постсоветском информационном пространстве. – М., 2006.

85. «Парламентская журналистика: ретроспектива, теория, практика». Отв. ред. И.Н. Тхагушев. Учебное пособие, М., 2000.

86. Лисовский С.А. Региональные особенности парламентской журналистики // Журналистика в 2005 году: трансформация моделей СМИ в постсоветском информационном пространстве. – М., 2006.

87. Шлосберг Л.М. Псковская парламентская журналистика как зеркало современного регионального парламентаризма // Псковская парламентская журналистика 2001–2007. – Псков, 2008.

88. Акаёмов П.И. История и роль парламентской журналистики во взаимодействии Государственной Думы и средств массовой информации. // Журнал «Преподаватель XXI век», Филологические науки, 2009.

89. Энциклопедия мировой индустрии СМИ. // Учебное пособие под ред. Е.Л. Вартановой, М., 2019.

90. Беглов С.И. Четвертая власть: Британская модель. М., 2002.

91. Любимов Б.И. Семьдесят лет британского вещания: Краткая история радиовещания и телевидения Великобритании. М., 1995.

92. «Запрос Левесона: культура, практика и этика прессы». Материалы Национального архива. https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/229039/0779.pdf

93. Н.А. Сахаров. Конгресс США: практика парламентаризма. // «Зарубежное военное обозрение», №8, 1989 // http://war1960.ru/usa/congress_usa.shtml

94. Журбей Е.В. Мозговые центры и внешнеполитический процесс Канады: современное состояние и перспективы. // Ойкумена. 2016. № 4.

95. Google закрывает пользователям Канады доступ к местным новостям. // ТАСС, 30.06.2023 // <https://tass.ru/ekonomika/18156965>

96. Власть и пресса в России: К истории правового регулирования отношений: (1700-1917): Хрестоматия. – М., 1999.

97. Соколова Е.П. Пресса и парламентаризм в политическом процессе России. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук. // Уральский государственный университет им. А.М. Горького. Екатеринбург, 2005 г.

98. Конституция Российской Федерации // <http://duma.gov.ru/news/55446/>

99. Средства массовой информации постсоветской России: Учебное пособие / Я.Н. Засурский, Е.Л. Вартанова, И.И. Засурский и др.; Под ред. Я.Н. Засурского. – М., 2002.

100. Р. М. Романов. Перспективы развития российского парламентаризма. // Сайт Законодательной Думы Томской области // https://duma.tomsk.ru/content/9_perspektivy_razvitija_rossijskogo_parlamentarizma#org

101. Российский парламентаризм: постоянное развитие. Интервью В. Матвиенко «Российской газете» // <http://www.council.gov.ru/events/chairman/144527/>

102. Общая теория права и государства» /под ред. В.В. Лазарева.- М.: Юрист, 1994

103. Атаманчук Г.В., Теория государственного управления. Курс лекций.-М. Юрид. лит., 1997

104. Белов В.К., Воронов А.Ф., Голенко Е.Н., Военное право, под ред д.ю.н., профессора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” - М., “За права военнослужащих”, 2004

105. Вагаршян А.Г., «Обороноспособность как принцип организации и деятельности государственного аппарата». Евразийский юридический журнал, № 12 (55), М., 2012
106. Военная стратегия / Под редакцией Маршала Советского Союза Соколовского В. Д. - Издание второе, исправленное и дополненное. - М.: Воениздат, 1963
107. Военное право. Под ред засл. деятеля науки РФ, академика Кузнецова Н.И.- М.: издательство Военный университет МО РФ – Всеармейский издательский центр гуманитарной учебной литературы, 1996
108. Комаров С. А. Общая теория государства и права., М., 1997
109. Марченко М.Н., Проблемы теории государства и права. М., 2005
110. Мигачев Ю.И., Тихомиров С.В., Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002:
111. Петр Касаткин Болонская система образования в контексте политического развития ЕС. / Право и управление-XXI век, N 4(29), 2013
112. Фомин С.А., Обеспечение национальной безопасности. М., Флита: МПСИ, 2007,
113. Халипов В.Ф., Энциклопедия власти. М.: Академический Проект. 2005.
114. Шлезингер-младший Артур М. Циклы американской истории. Пер. с англ. М., 1992:
115. Nye J. Public Diplomacy and soft power // The Annals of the American Academy of Political and Social Science. 2008:
116. Nye J. The Paradox of American Power: Why the Worlds Onlu Super Power Cant. GOIT Alone. N 5, 2002:
117. Couldry N., Hepp A. The Mediated Construction of Reality. 2016, Cambridge: Polity.
118. Berger P.L., Luckmann T. The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge. 1966, New York: Doubleday & Company.
119. Jennings I., Cabinet Government. Cambridge: Cambridge University Press, 1959
120. Anjum T. “From Confrontation to Collaboration: Contemporary Discourse on the State-Civil Society Relational Models”, Journal of Political Studies, p. 95 <http://pu.edu.pk/images/journal/pols/Currentissue->

pdf/State%20Relational%20Models.pdf

121. Edmunds T., Cottey A., Forste A. “Civil-Military Relations in Post-Communist Europe: Reviewing the Transition”, USA, 2006, p. 52 <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/harutyunya-n-02-2017.pdf>

122. IRI Armenia Poll, <https://www.iri.org/news/iri-armenia-poll-increasing-negative-views-of-russia/>, 12.04.2024-ավելացնել

123. Հայաստանի Հանրապետության օրենքը միջազգային պայմանագրերի մասին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120816>, 10.03.2024-ավելացնել

124. «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ՉԼՄ-ների իրավունքների 2022թ.խախտումների մասին» զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, էջ 14-20-ավելացնել

125. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», հաստատված է ՀՀ նախագահի 25.12.2007 ՆՀ-308-Ն հրամանագրով: Սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2008.01.07/1 (591), (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=41116>)

126. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2017 թ. նոյ. 15-ին (ՀՕ-196-Ն) //ՀՀ ՊՏ, 2017.12.06/73(1348), Հոդ.1210 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121627> 1/18),

127. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը ընդունված 2008 թ. նոյ. 27-ին (ՀՕ-198-Ն) //ՀՀ ՊՏ 2008.12.24/73 (663), հոդված 1319,

128. «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով ընդուն. 2018 թ. մարտի 1-ին (ՀՕ-145-ն) //ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդ. 311,

129. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, հաստատված ՀՀ նախագահի ՆՀ-37-Ն 07.02.2007 հրամանագրով, սկզբնաղբյուրը՝ ՀՀ ՊՏ 2007.02.15/11(535), Հոդ. 228,

130. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է հանրաքվեով 1995 թ. հուլիսի 5-ին: Եր.: Մխիթար Գոշ, 1997, 48 էջ:

131. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2005 թ. նոյեմբերի 27-ին - Եր., «Բավիղ» ՍՊԸ տպարան, 2005, 64 էջ (ՀՀ ՊՏ 05.12.05, հատուկ թողարկում):

132. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

(փոփոխություններով): Փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2015 թ. դեկտեմբերի 6-ին - Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015, 94 էջ (ՀՀ ՊՏ 21.12.2015, հատուկ թողարկում):

133. «Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.)», ՀՀ Գերագույն Խորհուրդ, Եր., 1995 թ.:

134. «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» 2 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1616 որոշումը:

135. «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով (տե՛ս ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդված 311, ՀՕ-145-ն):

136. Конституция Греции, 1975 г., //հղումն ըստ http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/greece/greece-r.htm

137. Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1974 г. //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.-М.: издательство «Юрлитинформ», 2008,

138. Конституция Литовской Республики (принятая 25 октября 1992 г., с изменениями от 20 июня 1996 г. и 12 декабря 1996 г.) //Конституции стран СНГ и Балтии /Сост. Г.Н. Андреева.- М.: Юрист, 1999,


139. Конституция Республики Польша 1997 г., //հղումն ըստ <https://worldconstitutions.ru/?p=112>

140. Конституция Швеции (Королевства Швеция) от 27 февраля 1974 г. http://www.sweden4rus.ru/rus/info/juridisk/konstytucija_shvecii

141. Федеральная Конституция Швейцарской Конфедерации 1999 г. //Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин.- М.: изд. «Юрлитинформ», 2008, էջ 93-127

Չափսը՝ 60x84¹/₁₆:
Ծավալը՝ 13 տպ. մամուլ:
Հանձնվել է տպագրության 2.05.2024:
Քանակը՝ 100 օրինակ:

ISBN 978-9939-887-42-5



9 789939 887425